

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: info@artsakhlis.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱՐՅԱՆ

ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴԸ

633(26)

16 38

ԲԱԳՐԱՏ ՌԻԼՈՒԹԱՔՅԱՆ

**ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻ
ԽՈՐՃՈՒՐԴԸ**

42.023

ԱՐՑՈՒՐԻ ՀԻԼՈՎԱՅՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒ»
Ստեփանակերտ-2010

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՐԾԱՑՑ ՂԱՐԵ

«Թերեւս անհավատալի թվա, եթե ասեմ, որ Յայաստանն Ասիայի ամենանշանավոր ակադեմիան է եղել... 9-13-րդ դարերում Յայաստանը կարող էր այս աշխարհանասի մեծագույն մասի ուսուցիչը լիմել,- գրել է 18-րդ դարի Փրանսիացի հայագետ Գիյում դը Վիլֆրաուն: Այդ անքորդ ժամանակամիջոցը նա հարստացրել է բոլոր գիտությունների մեջ հմտւած մարդկանցով՝ աստվածաբաններ, հոետորներ, քերականներ, փիլիսոփաններ, եկեղեցական նաև տեղագիրներ, պատմաբաններ, աստղագետներ, ասորերենին, արաբերենին, պարսկերենին, լատիներենին գերազանց տիրապետող թարգմանիչներ»¹:

Յակալան մշակույթի Արժաք դարի սկիզբը ողեք Բագրատունյաց թագավորությունը: Եկ շինարարական հանճա՞ղն իր ետեւից տարավ մնացած քնագավառները. Ախրամարի տաճարն ու վանքը երգելու համար թովմա պատմիչ եր պետք... Նետո Զաքարյանների ռազմական ու շինարարական սիրանաքնները թղթին հանձնող Կիրակոս, Վարդան, Տաթևիկն՝ Ստ. Օքբեյան, որը հենց փակողը դարձավ Արժաք դարի... հայ ճարտարապետությունը:

Բայց Ուկեղարի սկիզբն ու ազդարարը գիրն ու նրանով ստղծված դպրությունն էին... ճարտարապետությունը գիտության հետ միասին, եկավ վերջում, իրեն եղանակիչ գործոն (Ամանիա Շիրակացին և Զվարթնոցը): Խև այստեղ ճարտարապետությունն էր խթանն ու ազդարարաց: Ավելի ճիշտ՝ քաղաքական ու տնտեսական վերելով պայմանավորված ճարտարապետությունը:

Նետաքքիք է, որ մեր ազգային ամենացայտուն զծերն ստեղծվեցին մեր սեփական թագավորության կրթասի վասանգի իրական պատկերը տեսնելուց հետո (մեր գիրը ու դպրությունը) եւ թագավորության կորստից հետո (մեր ճարտարապետության 5-6-րդ դդ.-ուն եւ հատկապես 7-րդ դարում, երբ թվում էր, թե մենք կործանված ենք իրեն ամբողջություն պարսկներին ու բյուզանդացիներին գումարվել էր արար, հեղեղ, որն իր առաջ քշած տանում էր ամեն լավ բան: Մենք հենց այդ ժամանակ Զվարթնոց էինք կառուցել եւ նրա նմանակները կանգնեցրինք Եշվանում, Շաքիում, Գարդմանքում, ու հետո էլ, արաբների լուծը բորափելով, կառուցենք Ամիում, - մենք նյուի ետեւից, 1001 եկեղեցի:

1001-ը հեթիարի՝ թիվ է: Բայց չէ՝ որ մենք նաև մեր երազներն ենք իյուսում հեթիաթի պես, ապա կառուցում նրանք՝ մեր երազ-հեթիաթներից առնելով զծերն ու գոյսերը, ինչպես մի Տրդատ ճարտարապետ, մի Մոմիկ, մի Սարգիս Պիծակ կամ...

Արժաք դարի

Այդ ժամ Եվրոպայում եւ Բյուզանդիայում ախտի կառուցեին վիթխարածավալ շինություններ, որոնց փարթամությունն ու մեծությունը պայմանավորված էին նվաճումներով, նոր երկրների ու ժողովուրդների նյութական հարստու-

բյունների կլանումներով... Խայաստանում մի Պող իշխան մի ծերեն սուր ասպատակիչներից էր փրկում իր հայրենի ոստանները, մյուսով հովանակիրում էր Մոթիկին, որ կառուցում էր, Գեղարդի վիճակիրն էր զնում ժայրի մեջ, որպեսզի չտեսնի թշնամին, չավերի երկրի վրա... կամ կերտում էր փորբածավալ, բայց միասնական ու ավարտում այն հորինվածքները, որոնք, ինչ տեղից էլ նայես, մի ծաղիկ թվամ, հողից դուրս ժայթած, հողի վրա բարձրացած կուռ ու միասնական ծաղկի պես: Այն ծաղկի, որ թառամել չունի ժամանակի եւ տարածության մեջ...

Վ դարում Աստվածաշունչ էինք թարգմանել, սուրբ գրքերի մեկնաբանություններ ու փիլիսոփայական երկեր. մեր պատմության առանձին դրվագներն էինք նատյաններ դարձրել...

Բայց անհրաժեշտ էր ունենալ մեր սեփական աստվածաշունչը, որ լինի մեր կենսագրության պատկեր եւ ապրելու կերպի ուղենիշը, թեմական ու բննապատմական, անխսալ ու վեհաթրիչ... Եվ դրա համար ծնվեց Սովոս Խորենացին, նա, որը պիտի դառնար մեր Պատմահայրը, պիտի գրեր մեր սեփական աստվածաշունչը որպեսզի դար ու դարեր լինի դասագիրը, շունչ տա մեր քաղաքական անշունչ մարմնին, արյուն ներարկի, գաղափարներով կննապորի եւ ազգին պահի:

Դիմեցերորդ դարում համաշխարհային նքնուրութիւն ապագայինացած օդը շնչած Քերթողահայր հային ազգայնացրեց, ազգային գիտակցություն եւ գգացմունը ներարկեց... Մի աներեւակայելի երեւույթ...

Բայց այստեղ իր վեհությամբ մեր առաջ կանգնում է նաև Սմբատ Բագրատունի ասպետը: Բագրատունիները թագաղիր ասպետներն ին անցյալ դարերից...

Դիմա թագավորություն չունենք, որպեսզի նրա ժառանգորդների գլուխմերը զարդարեն թագերությունը...

Եվ նա եկավ թագ դմելու մտավորականի գլխին, գտավ իր ժամանակի մեծագույն եթերողին, ծեր ու անպարապ, գտավ եւ հանճնարարնց գրել ազգի պատմությունը: Ուրիշ պատմիքատուններ էլ ենք ումեցել, որոնք հովանակորներ են եղել, որ գրվի այս կամ այն անձի, այս կամ այն տոհմի պատմությունը, շատ անհրաժեշտ գործ, երախտալից, բայց սա ուրիշ էր, սա պատմիքեց գրել ազգի ամբողջական պատմությունը նրա ծննդյան օրից սկսած...

Նուրեք չկամ, - ասում էր նա, - օգտվիր ժող. իշխողությունից, նրա հյուսած հիմ-հին պատմությունների պատահիկներից, նույնիսկ առասպելներից... Եվ ցույց էր տալիս առասպելներն ու գրուցմերը, մատմանշում նրանց մեջ եղած իրական-պատմական հատիկները, որոնք պետք է ծլարձակեին Քերթողահոր հանճարեղ գրչի տակ, կազմենին շարունակական պատմությունը, մեր կենսագրության ասքն ու կապուստը... Այն 1500 տարեկան է. 482-ին սկսվել է պատերազմը...

ԾԱՌԱՋՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Սովոտական Հայաստան», 1983, հմ. 10:

ՊԱՏՄԱԿԱՆ ՃԵՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆՈՐ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Մեր օրերում հետզհետև ատվարանում են շարքերն այն հետազոտողների, որոնք համոզված են, թե հայ ժողովրդի արձատներն ու ակունքները պիտի փնտրել բնորբանում ։ Յայկական բարձրավանդակութ: Այս տեսության համաձայն հայոց լեզուն, սկզբնապես տեղաբնակ հայկական նախացեղին պատկանելով, աստիճանաբար իր ազդեցության տակ է առել հարեւան տեղաբնակ եւ եկվոր ցեղերին, ջարձել Յայկական բարձրավանդակի բնակչության լեզուն, այն միակն ու ընդհանրականը, որի մասին, արդեն իբրեւ վաղուց ի վեր գոյություն ունեցող իրողության, վկայել է հույն մեծ պատմաբան Ստրաբոնը մեր բակալավրյան արշավոյսին:

Հայախոս ցեղի «Եկվորության» վարկածի կողմնակիցները ջանում են իրենց ընթրողողներին համոզել, թե, իբր, այս տեսակետոց նոր երեւույթ է, միայն վերջին ժամանակների ծնունդ եւ հատկապես պատմագիտական նյութերին անտեսելու կամ սիսա նեկարաններու արդյունը:

Սակայն իրականությունը միանգամայն ուրիշ պատկեր ունի: Յայ ժողովրդի եւ նրա լեզվի անդրենածին լինելու մասին տեսությունն այնքան հիմն է, որ բան հետաքրքրությունը հայ ժողովրդի պատմության ու նրա լեզվի ծագման հարցերի նկատմամբ: Եվ, ծիշու հակառակը, «Եկվորության» տեսակետն է, որ հորինվել է ետին ժամանակներում, փարտանորեն ուռացել վերջին տասնամյակներում իր հիմքում ունենալով աղբյուրագիտական տեղեկությունների խեղաթյուր պատկերացումն ու ճշճարիտ գիտության հետ կապ չունեցող տրամադրությունների:

Բավական է ասել, որ հայկական պահանջնությունը, մեր ամբողջ մատենագությունը սկսած 5-րդ դարի պատմիչներից, եւ նոր ժամանակների ուսումնակիրությունները հայ ժողովրդի պատմության վաղագույն շրջանների եւ Յայկական բարձրավանդակի հետ: Դին աշխարհի գրավոր աղբյուրների շտեմարանները սեպագիր ալերի դիվաններն ու վիճագրերը հետեւ իրենց գաղտնիքները չեն բացել գիտության առաջ, եւ, այսպես կոչված, նախապատճական ժամանակների իրողություններին տեղեկանալու համար կար միայն մեկ եղանակ ժիմել ժողովրդի հիշողությանը:

Անեն մի ժողովուրդ շատ ավելի հիմն է, քան նրա մասին խոսող աղբյուրները: Թերեւս՝ նաև նրա հիշողության մեծ պահպանված դրվագները... Եվ այս դեպքում ուսումնակիրությունը փորձում էին հայոց ինքնակենագրական առասպելների ու զանազան գրուցների մեջ տեսնել իրական պատմության վհաստերը:

Բայց 19-րդ դարի կեսին գիտությանը հայտնի դարձան ասուրաբարելական սեպագրերն ու նրանց վերածնման զարդարելութը: Դամարյա միաժամանակ ասպարեզ եկան նաև պատմական Հայաստանի տարածքում սփռված սեպագրերը, որոնց վերծանումը հնարավոր դարձավ միայն դարի վերջին քառորդում: Եվ այս բնագավառի առաջին գիտականներից մեկն էր բազմահմուտ հա-

յագետ, հայոց իին պատմության ու հայերենի հանրածանաչ հետազոտող թերովեր Պատկանյանը:

Մեզ հետաքրքրող հարցի իր պատասխանն անվանի հայագետը բավականին ընդարձակ շարադրել է Կանի սեպագրերին նվիրված շատ ուսանելի հետազոտության մեջ իրեն, ասորեստանյան վիճագրերի եւ այն ժամանակ արդեն իրենց առաջին տվյալները գիտությանը տրամադրած Կանի սեպագրերի հետազոտության արգասիք:

Պատկանյանը, հայ բանավոր ու գրավոր աղբյուրների խոր ուսումնասիրության եւ նորահայտ սեպագրերի տվյալների իհմքի վրա, գտնում էր, որ հայ ժողովուրդը կազմագրվել է Յայկական բարձրավանդակում, եւ նրա լեզուն էլ անդենածին է:

Պատկանյանը համոզված էր, որ աղբյուրներից կատարելիք միակ եղանակությունը կարող է լինել միայն եւ միայն հայերի տեղաբնիկության նաևին: Նա համոզված էր, որ հայերը, արիացիներն ու հոկները միասին են բաժանվել նախամայր հնդիկոպական լեզվից, ապա տարածվել իրենց երկրներուն: Թեսալիայում, թրակիայում ու Հունաստանում հանրիպոր հայկական կամ նման հասուկ անուններն էլ ապացուց են, որ այդ վայրերի ժողովուրդներն իմշ-որ ժամանակ ապրել են Յայաստանուն կամ անցել են Յայաստանով: Յետագայի հույն հետինակները սխալվում էին հակառակը պնդելով:

Ըստք մեկ դար հետո այս կարծիքը տեղ պիտի գտներ հնդեվրոպական նախալեզվի տեղադրության առթիվ S. Վ. Գամկրելիծնի ու Վ. Վ. Իվանովի հրապարակած հայտնի տեսության իհմքում:

Յայտնի է, որ Զ. Պատկանյանը Յայաստանի տարածքում հայտնաբերված սեպագրերի առաջին հմուտ վերջանողներից ու մեկնաբաններից մեկն է: Ըստ կարեւոր է նրա կարծիքն ու նրա հեղինակը հանդիսացած ժողովորդի առնչակցությունների մասին:

Ըստք մեկ դար առաջ Պատկանյանը համոզված էր, որ ուրարտական հայտարարող Յայաստանի սեպագրերի հեղինակը հայ ժողովուրդն է. «Մենք իհմք ունենք նշաններ», - գրել է գիտնականը, - թե հայերն այն ժողովուրդն են, որը փորագրել է արծանագրությունները, իսկ լեզուն արդեն այն չէ, որով նա խոսում էր այն ժամանակը»:

Ժողովուրդին այն է, լեզուն այն չէ: Եթու դեպքում էլ Պատկանյանը հակադրվում էր այն օրերում արտահայտված անտրամաբանական տեսակետների: Չէ որ «Ուրարտու» անվանը մոլորված որոշ հետազոտողներ արդեն նշանում էին, թե դա ոչ մի նմանություն չունի «Յայաստան» եւ «հայ» անունների հետ, ինտեսակետների հայերին Յայաստանում տեղադրելու համար պետք է սպասել, որ Ուրարտու անունը չքվի այնպես, ինչպես հայտնվել էր: Իսկ լեզուն: Կանյան վիճագրերի լեզուն այնքան ուսումնասիրված չէր, որպեսզի պարզ պատկերացում լիներ նրա բառապաշարի, քերականական ծեսերի եւ ընդհանուր դրակի նաևին: Այդ պատճառով եւ նույնիսկ զարմանալի չէր, որ համարյա միաժամանակ (1870-ականների սկզբին) գերմանացի արեւելագետ Ա. Մորդմանն այդ սեպագրերի լեզուն համարում էր հայերենը, իսկ ֆրանսիացի Ֆ. Լենորժանը վրացեցինը:

Պատկանյանը գիտեր, որ տվյալ վիճագրերի լեզուն չի կարող վճռական իեր խաղալ այդ վիճագրերը փորագրողի ինքնությունը որոշելու հարցում նաև, այն պատճառով, որ դարերն իրենց վերափոխիչ կնիքն են դրել նոյն ժողովորդի լեզվի վրա («իսկ լեզուն արդեն այն չէ»), ապա մի ժողովուրդ կարող է օգտագործել նեկ ուրիշի գիրն ու լեզուն: Նա գիտեր, որ Արեմենյան իրամում գրել են ոչ միայն իին պարսկերեն, այլև եւամերեն, արամետերեն եւ ասուրերեն:

«Ուրարտացի» հորորդաված բնակչությունը հայ չհամարող գիտնականների իմ եւնելով՝ Պատկանյանը գրել է. «Այսպիսով, այն պնդումը, թե իին ուրարտացիներն երնիկորեն տարբերվել են հետազայի հայերից՝ դեռևս ապացուցված չէ: Մինչեւ ավելի շատ իհմքեր կամ դասնալու հակառակ կածիցին, այս միմքն ընդունելու ուրարտացիների եւ հայերի նույնությունը»: Եվ իրեն իհմք այստեղ նա վկայակոչում էր վերջին ժամանակներս հանդիրավի այն տվյալները, որ գիտության է ընձեռում Դարեն ա-ի Բեհիստունյան տարբերությունը: «Դայտնի է, - գրել է Պատկանյանը, - որ Արեմենյանների արծանագրությունները մեծ մասամբ ներկայացնում են սեպագրերի խնդեր» երեք լեզուներով... Դարեն Վշտասպանի արծանագրություններ առաջին երկու հայերի ամունը համդես է զալիս այն ծեւով, ինչ ծեւով հանդիպում է մինչեւ այժմ Արմինա, Արմինիա, Հարմինիյարա, երբ որ երրորդ խնդրում, այսինքն ասուրական բարզմանության մեջ, այն տրված է իրեն Ուրաստու, այսինքն՝ հնագույն Ուրարտուի թերեւակի ծեւակությամբ: Դրանից եթեաւում է, որ Արեմենյանների շրջանի ասուրները շարունակում էին Յայաստանի բնակչութերին կոչել համարյա այնպես, ինչպես իրենց նախնիները, եւ որ ժամանակակից պարսկեների ու մարերի կողմից հայ կոչված ժողովուրդը նրանց համար նոյն Ուրարտուն է, ինչպես որ առավել հնագույն ժամանակներում:

Բեհիստույան տարբերությունը հզոր կրպան է Յայաստան-Արմենիայի եւ Ուրարտուի նոյնությունն ապացուցելու համար: Յակառակը պնդողները պարտավոր են առնվազն դրան համազոր մեկ վկայություն ցույց տալ, այսինքն վկայակոչել որեւէ աղբյուր, որն ասի սխալվել են Բեհիստունյան սեպագրերի հեղինակները. Ուրարտուն Յայաստան չէ:

Պատկանյանի ժամանակ դեռ լույս չել սփրաված այն վկայությունների վրա, որոնցում Արմինա-կրմինիա (Արմեն, Ուրմեն, Ռւրումն եւ այլ ծեւերի հետ միասին) անունը գոյություն է ունեցել Ուրարտուից էլ շատ առաջ մ.թ.ա. 3-2-րդ հազարյակներում: Դրա համար էլ նա գիտական կարգապահության ասպետը, գրել է. «Զայայած ամբողջ վերջոշարադրյալին, ես այս հոդվածում Յայաստանի հնագույն բնակչութերին կոչում են ոչ թե հայեր, այլ ուրարտացիներ, եւ դա ոչ թե այն պատճառով, որ չկան տվյալներ, որոնք համարտեն, թե հայերի պատճառական անունը ժամանակակից էր ասուրերենի Ուրարտուին: Իբրեւ հայ ժողովորդի բոլոր ցեղերի համար ընդհանուր ազգային անուն այն կարող էր առաջանալ նաև հետազայում»:

Պատկանյանը երեւի թե տեսնում էր իր ապագա ընդդիմախոսներին, որոնք պնդելու են, թե Ուրարտուն պետք էր կործանվեր, որպեսզի նրա վլատակների վրա հայտնիքին հայերը: Այս թե նա ինչ է գրել այդպիսի ընդդիմախոսների ուսաբար: «Ճեռոյ տալով այսախտի կարծիքը, իբրեւ ենթադրություն, նենք իրա-

վունք ունենք հարցմելու, թե այդ ո՞ր ժամանակ հայերը կարող էին հայտնվել ուրարտացիներին փոխարիմնելու համար...»: Եվ այս հարցին հետեւում է խորագիտ քննությունը իրեն հայտնի այն տվյալների, որոնք պացուցում են, որ հայակոս ցեղը Հայկական բարձրավանդակի բնակչին ու տերն է հնուց ի վեր, եւ նրա «Եկվորության» մասին խոսող ոչ մի տեղեկություն չկա այն պարզ պատճառով, որ «այդպիսի բան առհասարակ չի եղել»:

Ահա այսպես, հայ կամ արմեն անունով ժողովրդի «Եկվորության» մասին պատճությունը ոչ մի տեղեկություն չի պահպանել ոչ թե նրա նկատմամբ տածած սիրաշիրությունից, այլ որովհետեւ պատմական ոչ մի ժամանակաշրջանում այդպիսի բան տեղի չի ունեցել: Էսկ երե գալու մասին տեղեկություն չկա, եւ նա էլ իր երկուում էր գտնվում դեռևս մ.թ.ա. առաջին հազարամյակում, նշանակում է դրանից առաջ էլ այնտեղ է եղել: Նա ծնունդն ու տերն է եղել այդ երկուի, եւ պատմականությունից գորեք, հակագիտական ու անհերեթ է նրան դրսից թթելու մասին ամեն տեսակ հայտարարություն:

Հանգիտության նոր հայտնագործություններն ապացուցում են, որ ճշմարիտ է եղել ականավոր գիտնականի կրակում:

Հին Միջագետքի նշանավոր հենավայրերից մի քանիք նոր-նոր իրենց գրավոր հուշարձանները բացում են աշխարհի առաջ՝ դրանով իսկ հնարավոր դարձուած ճշգրիտ ու հիմնավոր պատասխաններն այնպիսի հարցերի, որոնք մինչ այդ առեղջպածային կամ պարզապես անլուծելի էին թվում: ճիշտ է, Աշշուրի միայն վերջերս ռուս արեւելագետ Վյաչեսլավ Իվանովը նրանց մեջ ուշադրություն դարձրեց այն տեղեկությունների վրա, որոնք անմիջապես վերաբերում են հայ ժողովրդի հնագոյն պատմությանը¹: Կապադովիանում հայտնաբերված մի սալիկ, որի սեպագիրը թվագրվում է 3-րդ ու 2-րդ հազարամյակների սահմանագլխի ժամանակով, պարունակում է «Հայ» անունը ինչպես ցեղանվան առօնով, այնպես էլ իրեն տեղանուն: Ընդ որում Վերջին հմատով այն հիշատակված է Արմին հատուկ անվան կամ Կապադովիական կոչված այդ սալիկի արձանագրությունը: «Այդ երկու ամսաները [նախատեսակած են] ուրումիացիների շուկայի համար: Աշշուր-Ենանի թաշմեթ [լաստու] հնգոյա շարաթվա ընթացքում լուսամուտ բացվածքը Հայի որդին (Հայրի բնակիչը) պատրաստեց...»: Անշուշտ, այս նշանակում է միանգաման իրավացի էին այն գիտնականները, որոնց կարծիքով պարն արմենութեան ուղղումն եւ ննան ծեւերը հայկական ցեղային միության անվան տարրերակներն են:

Վյաչեսլավ Իվանովին ենք պարտական նաեւ «հայ» կամ «հայա» անվանը վերաբերող առավել հին վեհայությունների համար, որոնք նա քաղել է արդեն վերջերս արեւերես երլայի սեպագիրից:

Երլամ կամ Երլան այժմյան Հալեախց 70 կմ հարավ գտնվող քաղաք-պետություն է եղել, որի ծաղկումը տեղի է ունեցել մ.թ.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսին:

Ահա այս երլայի վերջին տասնամյակներում կատարվող պեղումներից հայտնաբերվել են մեծարանակ սեպագիր նյութեր, որոնցից դեռևս քիչ բան է հրատարակվել, եւ, սակայն, այդ քիչ մեջ էլ բազմից հիշատակվում են

«հայ»-ը իրեն ցեղանուն, եւ Հայքը իրեն տեղանուն:

Այստեղ ես մեջ եմ թերում այդ աքքաղական սեպագիրի վկայությունները թաղելով Վյաչեսլավ Իվանովի հիշյալ հրապարակումից:

Արծանագրություններն ըստ էլության գործնական բնույթ ու մեն, թվարկվում են գործվածքների տեսակներ, որոնք երդում արքայի ժամանակ բաժանվել են տարրեր մարդկանց: «1 գործվածք հրաշալի որակի, 1 նուրբ գործվածք, 1 բազմերանգ հագուստ՝ Հայի միջնորդին [իշագորիմ]»: Ապա (նույն արծանագրության մեջ), «20 սկզբունք [արծողությամբ] 1 թիթեղիկ՝ Հային»:

Վյաչեսլավ Իվանովը շատ եական է համարում այն հանգամանքը, որ Վիճակի մեջ այս հայ մարդու եւ գործակիցների հիշատակությունները կապված են «Արմին քաղաքի նահանգի հետ» («1 քուսիտ գործվածք՝ Արմինի (Արմին բնակիչ) Մուլի համար», «1 քուսիտ գործվածք, 1 աքքում գործվածք, 1 երփնեանգ հագուստ բարձր որակի Արմինի Մալումի համար»):

Ահա եւ սույն արծանագրությունների հիմնան վրա Իվանովի կատարած եղուակացությունը՝ «Սեծ հավանականությամբ երլայի թնագործում հիշատակվող Արմին (նախանական արծանագրություններում՝ իրեն քաղաք, որ ունի իր առանձին քագակործ, ուշ շրջանում՝ երլայի կուսակալը) նույնանում է Արմանումին հետ, որը հիշատակվում է երլայի հետ՝ Նարամ-Մուլեն Աքքաղացու արծանագրություններում»:

Այսանց վկայակոչելուց հետո է, որ Վյաչեսլավ Իվանովը եղուակացնում է, թե միանգամայն իրավացի են եղել այն հետազոտողները, որոնց կարծիքով հայ ժողովուրդը ծնվել ու պատմական իր գարգացումն ապրել է Հայկական բարձրավանդակում:

ԾԱԼՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. Վյա. Յշ. Իվանով, *Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры гимна Ва(х)агну*, ՊԲՀ, 1987, հ.4, стр. 30-31.

Երեւի արեւելյան Անդրկովկասի աշխարհագրական կետերից ոչ մեկն այսքան փորձությունների ու աղավաղումների չի ենթարկվել, որքան Ուտիդիք այս հայունի Գիս ավանը, որն ըստ ավանդության Յայոց արեւելից կողմանց բրիստոնեական առաջին քարոզավայրն է Եղել, ներծծել է առաջին նահատակ-քառոզի արյունը եւ իր գրկում պահել այս նահատակ-Եղիշեի կառուցած առաջին Եկեղեցին: Ակսված Սարգիս Զալայանից հետազոտողները Գիսը նույնացնում են Նուխուց մի քանի կիլոմետր հյուսիսի գտնվող Գիշ գյուղի հետ¹: Խոկ Ա. Ե. Կրիմսկին նախկին Գիս է ճանաչում հենց Շաքի-Նուխիկին²:

Գիսի տեղադրության մի փորձ է պատկանում է պրոֆ. Աշ. Գ. Արքահամյանին, որը Կուրիք ծախ ասին ասին ալեքված Սուտագրված քաղաքն է համարում Գիս, քաղաքի բրիստոնեական Եկեղեցին Գիսի Եղիշեի վանք եւ այս վանքը՝ կարողիկոսանիսան³:

Նախ, նշենք, որ պատմական ոչ մի առյունը չի ասել, թե Եղիշեի վանքը կաթողիկոսանիսան է Եղել, ապա պրոֆ. Ա. Գ. Արքահամյանը հաստատում է, որ Սուտագրվածի վանքը կառուցվել է VII դարում, իսկ Գիսի Եկեղեցին, ասացինք, որ բրիստոնեական առաջին շենքն է Եղել արեւելյան Անդրկովկասում, կառուցված Եղիշե առաքյալի կողմից, ն.թ. 1 դարում⁴:

Եղել է Գիսը տեղադրելու ուրիշ փորձ եւս, օրինակ Զ. Ի. Յանձնուկու կողմից: Սակայն որովհետեւ սա ավելի շատ պատմությունից ու սկզբնադրյուրներից ամստեղյակ մարդու գուր նարգանք է հաստատելու այնպիսի քանի թամեր, որոնք հակապատճական լինելով հանդիր նաև հակատրամաբանական են, այդ պատճառով էլ մենք անմապատճակ ենք համարում քաղաքի նրանց քննությամբ:

Վերը նշված տեղեկություններից ոչ մեկն է ծիչու չեւ, որովհետեւ նրանց հեղինակեան են ընդունել ոչ թե Գիսի մասին խոսող սկզբնադրյուրը, այլ մի պատահական, բայց գայթակիշ նամանահնչուություն Գիս-Գիշ-Քիշ: Այս սկզբունքով Դ. Ալիշանը էլ Գիսը նույնացնում էր Ղիզակի Գոտիշ կամ Քերիշ վանք հետո⁵:

Հետազոտողներից ոչ մեկը փորձ չի արել ուշադրություն դարձնելու Գիսի մասին վկայությունները պարունակող միակն պատճական աղբյուրի «Անվանից աշխարհի պատմության» տվյալներին: Ապա թե ոչ, պարզ կդառնար, որ Գիսը ոչ միայն կովկասան լեռնաշղթայի փեշին գտնվող Քերիշ չեւ, այլև առհասարակ, չեւ կարող լինել Կուրիք ծախ ասին:

Մեա այդ վկայությունները.

«Խոկ սուրբ հայրապետն Եղելալ ի Գիս, կամ նեաց գեկենեցի եւ մատոյց գանարին պատարագն»⁶: Այս կատարվել էր «Ուտիշ գալաք»:

«Մի ոճն նախեղելոց վարդապետաց... ճանապարի առնէ հասնել ի սահման Արեւելից ի գաւառն Ուտիական եւ մտեալ բնակել ի ճաղճաղուտ տաղին եւ ի լոռաբոյ մօրս, առ տեղեալ որում Գիսն կոչեն»⁸:

«...Գիշակիրը Աղուանից ազգաշաղախ աղօճապիհծ Եղեն (թվարկում է տոնմերն ու տեղերը, ապա) «Ուտիշ գալաքի ի Գիսն Վարզաքրոժի տունն»⁹, «Չազդումն ցանկութեան յոյժ ուներ սուրբ Երեցն խմբել գիտակգելի խաչն զծածկեալն սրբոյն Սաշտոցի ի Գիս անուանել գիտն, որ յւտի խաչն զծածկեալն սրբոյն Սաշտոցի ի Գիս անուանել գիտն, որ յւտի գալաք»¹⁰:

Այս տեղեկություններից որն էլ ուշադրություն առնվեր, պարզ կդառնա, որ Գիսը գտնվելիս է Եղել Ուտիշը սահմանը, որը ես ոչ մի դժվարություն չեմ ներկայացնի:

Ահա Ուտիշի հյուսիսային սահմանին վերաբերող տեղեկությունները. «Թագաւոր Ուտիսուքեան իւրով օրորօ... եանց յայսկոյս կուրական գետոյն, տարածեալ յւտիշացոց գալաքն»¹¹:

Սի այլ անգամ այս նույն հյուսիսային վայրենարարո ցեղերը «Երթեալ համեալ յւտիշ գալաքն՝ իջեալ քանակեին առ ափն Կուրական գետոյն»¹²:

«Աշխարհացոյց»-ն է նույնն է հաստատում որ Ուտիշը «առ մտից Երասխայ ընդ մեջ Արցախս եւ Կուր գետոյ»¹³: «Ընդ մեջ Արցախս եւ Կուր գետոյ»: սա ապահովապես նշանակում է Ուտիշի հյուսիսային սահմանն է Կուր գետը: Խոկ Երեւ Ուտիշը Կուրից հարավ է, Գիսն է Ուտիշում, պարզ է, որ Գիսը ես Կուրից հարավ պիտի փնտրել:

Գիսում թաղված սուրբ գյուտն ու նրա հետ կապված արարողությունները նկարգրելիս պատմնը հաղորդում է կոնկրետ այնպիսի տեղեկություններ, որոնք վերաբերում են Գիսի անմիջական հարեան աշխարհագրական կետերին: Գլխու վանքին (Դոռեկ այժմ Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի նոտ), Մեծկողմանը գավառին (Թարթառի միջին հոսանքն ու շրջական), Մեծառնը (Թարթառի աջ ափը, Խաչենագետի ավագանը) եւն¹⁴: Այս բոլորը հիմք են Գիսը տեղադրելու Կուրի եւ Թարթառի միջագետում, Պարտավից արեւմուտք:

ԾԱՌԱՄՎՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ս. Զալայեանց, ճանապարհորդութիւն ի Սեծն Յայատան, մասն Բ, էջ 369: Ս. Բարխուղարեանց, Սորումնից Երկիր եւ դրացիք, էջ 269, Ս. Տրեմյան, Յայատանը սկս «Աշխարհացոյց»-ի, էջ 48, տես նաև նրա քարտեզը:

2. А. Е. Кримский, «Странники из истории северного или кавказского Азербайджана (классический Албания). Сборник в честь С. Ф. Ольденбурга», Л., 1934, стр. 302.

3. Проф. А. Г. Абрамян, «Дешифровка надписей кавказских агван», Ереван, 1964, стр. 48, 49, 68 и слд.

Դարձելի գիտնականն այսուղեան, առանց անունները տալուու, քննադրատում է հետազոտողներից ոճանց, որոնք Գիսը սկզբանք տեղադրում են հարաբաղյան «Գիսի» տեղում, որ միանգամայն անհիմն է, իսկ Գիսը գտնվում է Ենենային Ղարաբաղի Ինընալսար մարդ Մարտունու շրջանու եւ, իրը, կոչվել է «Ձքչոտիկ» (նույն տեղը, էջ 49):

Այսուղեան շիփորված կամ Մարտունու շրջանի Գիտի գյուղը Մարտունի շրջանի Եղել է: Ետու էլ, որպան մեզ հայտնի է, ոչ ոք դեռեւս չի նոյնացնել Ուտիշի վանքին կամ Արցախի մասին:

4. Կաղանակուուացի, «Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 17:

5. Տես նրա տեղագիր Յայոլ Սեծաց, Կենեսիկ, 1855, էջ 90-91:

6. Կաղանկատուացի, էջ 17:

7. Անը:

8. Անը, էջ 104:

9. Կաղանկատուացի, էջ 244:

10. Անը, էջ 246:

11. Անը, էջ 108:

12. Անը, էջ 113:

13. Ս. Տրեմյան, Յայատանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 109:

14. Կաղանկատուացի, գիրք Բ, գիրք Ի՛մ:

ԽԱՅԱՏԱՐԻ ԱՐՑԱԽԱՅԱՆ ԴՊՐՈՅԵ

Մեր խաչքարի արվեստի նույնիսկ թրուցիկ ուսումնահրությունից չի կարելի չնկատել նրա գեղարվեստական ու գաղափարական կերպարի բազմազանությունը, ոճական բաժանումը ըստ տարածքային որոշակի շրջանակների, նաև հանգների, երբեմն՝ ավելի նեղ սահմանների: Դավանարար՝ այս բաժանումների մեջ վճռական դեր են խաղացել ոչ միայն խաչքարն ստեղծողը քարդործ վարպետներն ու վարպետաց խմբերը, այլև տեղական ավանդույթները, ստեղծագործության նյութը համոլիսացած քարտահանակները, միջավայրը որի համար նախատեսվում էր խաչքարը: Չե՞ որ միջնադարյան հայկական ճարտարապետական հուշարձանների ամենանշանակալից արժանիքներից մեկն է նրանց կազմ էր շրջակա միջավայրի, տեղի, բնույթյան հետ: Խևկ խաչքարը ճարտարապետության փոքրածավալ արտահայտությունն է, ավելի ճիշտ՝ մեր ճարտարապետական ժառանգության լավագույն արժանապիրությունների համատեղումը:

Դին Արցախը, որ ուշ միջնադարում կոչվում էր մաեւ Փոքր Այլունիք, Խաչեն, Ղարաբաղ, մեկն է պատմական Դայաստանի այն նահանգներից, ուր հնագույն ժամանակներից ի վեր զրադում են քարի մշակմամբ, կառուցում են մեծ ու փորդ շենքեր, ապարաններ ու բերդեր, որոնցում քարը ոչ միայն շինանյութը, այլև՝ հարդարանքի հիմնական միջոց: Արցախի զանազան մասերում կատարված պատահական պեղումների, շինարարական ու հողագործական աշխատանքների ընթացքում քացված հնավայրերում հայտնաբերվել են շինությունների առանձին նասերի համար մշակված քարարեկորներ, որոնք վկայությունն են հիմ արցախիների քարարեկորների պարագաների մասին: Վերօքս Սարտունու շրջանի ճարտար գյուղի նշակույթի պալատի համար հիմք փորելիս գտնվել է հերթանական մի խոյակ, որի չորս կողմերը զարդարում են երկրաչափական ու բուսական հարթաքանչեր, իսկ չորրորդը՝ հավատարարեն մի խաչ կլոր շրջանակի մեջ:

Արցախի առաջին հև քրիստոնեական հուշարձաններում խաչքանդակը հարդարանքի լայնորեն տարածված մանրամասն է եղի: Դագույն արբյուրները տեղեկություններ են հաղորդում այն խաչքարերի մասին, որ կանգնեցված են ինչպես հոգեւոր կենտրոններում, այնպես է՝ նրանց շրջակայքում, իրապարակներում, աղբյուրների մոտ, ճանապարհների խաչմերուկներում, բնույթյան մեջ ակնառու վայրերում: Այդ առաջին կոթողային հուշարձաններից հաճարյա ոչինչ չի պահպանվել, քանի որ 7-րդ դարի երկրորդ կեսից պարերական դարձած մահմեդական արաբների ասպատակություններն ու պատժարշավմներն իրենց ճանապարհին բնաշնորվում էին առաջին հերթին քրիստոնեական հավատի սրբությունները: Ղետոնդ պատմիչը, Սովուս Կաղանկատվացին եւ ուրիշ նատնագիրներ պատմում են, թե նոլենան բռնագրավիշներն ինչպես են ավետում հայկական եկեղեցները, ջարդում խաչքարերը, ոչ միայն ջարդում, այլև փշրում, մանրում, որպեսզի անհար լինի վերականգնելո:

850-ական թվականների սկզբին Սաստուն, Արցախում եւ այլ նահանգներում բռնկված հակարարական հուշեր ապատացրությունից հետո մահմեդական բռնագորներն այլևս չի անարձակիցնեն կամայականություններ կատարել:

Դայաստանում: Եվ հենց այդ ժամանակից էլ պահպանվում են խաչքարերը: Արցախի Մարտակերտի շրջանի Սուլը Դակորա վանքում է գտնվում ամբողջ հայ հողի վրա առաջմ հայոնի ամենահին խաչքարը որ ունի արձանագրություն եւ ստեղծման թվական: Խաչքարը կանգնեցրել է Արցախի Մեծառանք գավառի առաջնորդ Սողոմոնն եպիսկոպոսը, որի վիմագիրն ասում է ես Սողոմոնն եպիսկոպոս, կանգնեցի խաչ 853 թվականին հայոց, ի ժամանակս Յովհաննես իշխանի: Սողոմոնն եպիսկոպոսից շուրջ երեք տասնամյակ հետո Արցախի և Սյունիքի հյուսիս-արեւելյան մասի տեր Գրիգոր Աւորներսեհյանը Դովհաննես իշխանի ողին, կանգնեցրեց իր կորող-խաչքարը Մեծ-Մագրայում որպես օգնական հաւատացելոց: Ենիջիայլոց, սա եւս վիմագրով ու թվականով մեզ հասած հնագույն խաչքարերից է եւ աչքի է ընկնում զարդարանդակների նախնական, քայլ հետաքրքիր լուծումով. խաչի վարի թեւից աջ ու ծան արձավենու տերեւներ են քանդակված, իսկ վերին թեւից ելած կախվել են խաղողի ողկյուզերը: Բարդ նախշազարդներ չկան: Սակայն գուաս ու պարզ հորինվածքը, ներդաշնակ համաշափություններն այս կոթողին տալիս են մի վեհություն, որը, համանան ու համաժամանակյա հուշարձանների հետ միասին, դաշնալու էր խաչքարի կերպարի անշեղ զարգացման ու ծաղկումի առողջ հիմքերից մեկը:

Դետագ դարերում բուռն զարգացում ապենց խաչքարի արշեսոր: Արցախի բոլոր զավաններում, հոգեւոր կենտրոններում, հատկապես՝ տապանատներում ու գերեզմանոցներում կանգնեցին հազարակոր խաչքարեր, որոնցից շատ շատերը բացառիկ են իրենց արվեստով, հարդարանքի մանրամասներով, թեմատիկ լուծումներով: Այս խաչքարերից, իհարկե, ամենափառակոր տեղը գրավում են Ղարիկանքի զանազանա որմնախորչի երկու գեղարանդակ խաչքարերը 1283 թվականից: Նրանց հետ կարող են համենատվել միայն Գոշավանքի, Ամաղուի, Նորավանքի եւ Գեղարդի անծեռակերտները:

Սակայն Արցախ-Ղարաբաղի խաչքարերին հատուկ են ոչ միայն հարդարանքի վարպետությունն ու գեղարվեստական-զարդափառական բարձր արժանիքները: Նրանք խաչքարի համագույն արվեստի մեջ աչքի են ընկնում իրենց մի առանձնահատուկ հատկանիշով, որը վախոց նկատվել է հայագիտության մեջ եւ համարվում է նահանգի քաղաքություն արվեստի ինքնահատուկ առանձնաշնորհը: Դա աշխարհիկ թեմաների, կենցաղային մանրամասների թափանցումն է խաչքարի հարդարանքի ամբողջ ոլորտի մեջ: Ծուրզ 70 տարի առաջ անվանի հայացետը կատարում է Օքբելին գրել է. «Դայաստանի այն մարզեղում, որոնք վերջին ժամանակներս առավել կամ պակաս չափով սիստեմատիկորեն հետազոտության են ենթարկվում, խաչքարի բարձրաքանդակ տեսարանները ներկայանում են իրենց առաջին բոլորովին չնկատված երեւուրը: Իհարկե, կամ խաչքարեր ավեստագանքական տեսարանների, Փրկչի, Աստվածամոր, զանազան սրբերի, այդ թվում առուր գիմնորներ Սարգսի, Գետրդի եւ այլց պատկերներով: Բայց բուն իմաստով՝ կյանքից Վերցորած մարդկանց պատկերներ չեն հանդիպում:

Մարդկանց պատկերներով խաչքարեր առաջին անգամ հայտնաբերվել են Դայաստանի այն մասում, հատկապես խաչենում, ուր, առհասարակ, միրված է քանդակներով հարդարենքի պատերին, Փրկչի, Աստվածամոր, զանազան սրբերին, այդ թվում գիմնորներ Սարգսի, Գետրդի եւ այլց պատկերներով: Բայց բուն իմաստով՝ կյանքից Վերցորած մարդկանց պատկերներ չեն հանդիպում:

հանդիպում են բարձրագանդակված բավական խոշոր տեսարաններ»:

Հովսեփ Օքթելու օրենքից շատ ժամանակ է անցել: Յետազոտողները Արցախում հայտնաբերել են խաչքարեր, որոնց բամբակների մեջ բացառապես տիրապետող է ժողովրդական կյանքը: Օդինական, ճարտարի թիկունքուն գտնվող Եղիշա կույսի վանքի խաչքարերի հարդարանքը բաղկացած է վարուցանքի, գյուղատնտեսական տարրեր աշխատանքների տեսարաններից: Ասկերամի շրջանի Յարավ ու Քոասնի գյուղերի տարածքում կան լըված գերեզմանոցներ, որոնց խաչքարերի վրա քանդակված են գյուղական կյանքի մանրամասներ, գյուղատնտեսական գործիքների, հանգույցյալի գործունեության ու մասնագիտության հետ կապված առարկաների հարդարանդակ պատկերներ:

Ուշագրավ է, որ արցախական վարպետները նույնիսկ պամանդական ու կանոնացված թեմաների մեջ էլ մեծ մասամբ գերապատվություն են տվել իրենց շրջապատի ու առօրյայի հետ խոսող լուծումներին, բուսական գարդանախշերին, կենդանական աշխարհի այն ներկայացուցիչների պատկերներին, որոնք իրենց կողքին են գտնվում, կապված իրենց կյանքին ու ճակատագրին:

Մի՞նչ պատահական կամ կամոնական դրդումներով է, որ Գանձասարի 1238թ. ավարտված տաճարի արեւմտյան ճակատին, շքամուտքից վեր աճրող տարածությամբ ներ քանդակվել է խաչելության խաչքար, երբ մայմնեացի մեր ճարտարապետությունը զգիտեր նման բան: Ֆիշու է, Արցախ-Խաչեն բարար-մոնղոլական տիրապետության տակ պիտի ընկներ հաջորդ տարիներին: Սակայն Յայատան Երկիր մեծագույն մասն արդեն խաչքած էր նոր բռնակալների բերած անագորույն լին, եւ հայրենասեր ու բարեպաշտ պատվիրատու Յասան-Ձալալը չեր կարող կառուցի մեջ չնարմնապիրել այս օրերի ոգին: Սակայն նոր Քրիստոն այնպես վեհանձնորեն է տանում իր խաչը. այնպիսն հանգիստ ու ինքնավստակ, կարծես դժուողին զգուշացնելիս լինի, թե այս փորութիւնը էլ կանցնի անհետ, միայն թե Երկիր բնիկ տերերը դիմարդեն եւ դիմանան:

Յաջորդ տասնամյակներին մոնղոլ բռնակալների լուծը դարձել էր առավել դաժան, պարզապես անտանելի, եւ դա էլ իր կնիքը դրեց խաչեզրյան խաչքարի այն տեսակին, որի վրա տիրապետող է Թքիստոսի ծուռվիզ խենությունը:

Եվ, այսուհանդերձ, չի կարելի կարծել, թե ամենուրեք իշխող եղել է խաչելության կրավորական հոգեբանությունը: Խաչքարի վարպետները, հասկապես՝ Արցախում, աստվածաշնչյան պատկերների մեջ, ժողովրդական ավանդություններում մի առանձնակի սիրով ու գուրգուրանքով էին նշակում դիմադրության եւ հաղթանակի մոտիվները: Այդ պատճառով էլ նրանց համար սիրելի հերոս էին դարձել Սուլր Գեւորգ և Սուլր Սարգսի գորավարները:

Պահպանվել է Սուլր Գեւորգ գորավարի պատկերաբանակով մի փառահետ խաչքար 1246 թվականից: Այն գտնվել է հարավային Արցախի առաջնորդարան Գոչչավանքում եւ միայն Վերջերս է փոխադրվել Էջմիածին: Այս գործը զարդանախշելի թախնողի ճնշությամբ եւ պատկերաբաննակների թեմատիկ հարատությամբ մտնում է մեր ամենաընդուրի խաչքարերի առաջին տասնակի մեջ: Ապա, այստեղ, խաչքանդակը ծախից եղերող քառակուսի վարդակի մեջ, ներկայացված է խաչքարի համար գոնե առայժմ հայտնի հնագույն օրինակը Սուլր Գեւորգ գորավարի հաղթանակի:

Իուն վիշապն է, իսկ գորավարը նիզակի ծայրով շամփուել է նրա բաց երախս: Նիզակի ետին ծայրը պսակված է փորդիկ խաչով:

Եղել դար առաջ Աղթամարի այս նոյն պատկերաբանակով Մամուլի ճարտարապետող փառարանում եր հայ ժողովրդի հարժական պայքարն արաբական քոնակալության դիմ: Խակ 1246թ., երբ բովանդակ Յայատանին տիրել-քրակալ էին թարար-նոնդը հորդաները, Գտիշի քանդակագործը հերոսական պայքարի, չարի ղեն կովի եւ նահատակության կոչ էր անում հայրենակիցներին:

14-15-րդ դարերում նվազել էր քաղաքական պայքարի ոգին, ժողովրդող լորդներ հաշտվել եր իր վիճակի հետ եւ, ապավիճած լեռնային ամրություններին, անմռում տանում եր իր խաչը: Այն ժամանակներին կանգնեցված խաչքարի պատկերաբանակներում, -ոչ Արցախում, ոչ էլ ուրիշ որեւէ նահանգում, - պատկերաբանակներում, չեն համար պատկերաբանակներ չեն հանդիպում... Եվ մեկ էլ հասուրը զրջանում, 16-17-րդ դարերում, երբ վրանաբանակ բուրքմենական ցեղերը սորտիսի պատճենների աւել ծածկել էին Յայոց արտ ու արոտները, իսկ քաղաքալիան կյանքում փոխնիփոր տիրություն էին ամուն օնմանյան բուրքերն ու պարագաները, երբ բվում էր, թե հայ ժողովրդի Վաղված համար այլեւս չկա ոչ նի հետկները, դարձալ վարպետ ազատագրության տեխնջ: Յայկական գաղրավայրերում աւելացնություն, հետագայում բորբոքվելիք ազգային ազատագրական պայքարի համար: Այս անզամ արդեն համարյա ամենուրեք, Արցախում ու Սյունիքում, Յին Զուղայում ու Արաբատյան աշխարհի զավաներում, խաչքարի վրա տիրապետող դարձավ Սուլր Սարգսի Ուուր Գեւորգ գորավարի, չարի դաշտալող եւ ժողովուրդը բռնակալի Ծիրաններից փոկող հերոսի կեռպարը:

Գանձասարում կա մի փառահետ խաչքար, որ 16-րդ դարում Գրիգոր կաքրուկուն է կանգնեցրել իր հայ և նահանգի իշխան Միհրաբի հիշատակին: Խաչքարի վրա պատկերված է Սուլր Գեւորգ գորավարը, որն իր պամանդական հերոսակ նծոյագի վրա, նիզակը ծեղչին գնում է չար խորտակելու: Եվ նրա նիզակը ծայրին խաչ կա, որը հոլվանավորում է ժողովրդական ընդզումի գինվիրին:

Այս ընդզումի, չարի դեմ պայքարի եկենելու կոչը խորիք չէ Գանձասարի կաքրուկուններին եւ մանավանդ այս խաչքարը կանգնեցնող Գրիգորիսի ողուն: Խայտնի է, որ իր հուտ ազատադիրական տեխնիքը բորբոքելու համար Գրիգորիս կաքրողիկոսը վճարել է սեփական կյանքով, 1757թ. տարվել է Պարսից արունիք, եւ շահ Թահմազը նրան թլատել է տվել:

16-17-րդ դարերը նախապատրաստության շրջան էին 18-րդ դարի հայկական կամ ազատանարդերի համար: Մեր քարգործ Վարպետները եւս ջանում էին մողովորդական կյանքում սկսված քաղաքական վերելքից եւս չպահել իրենց արականական կյանքության դիմ: Յին Զուղայի կախարդական խաչքարերը նորատուսի ու Լոռու, Եղվարդի ու Եղեցնածորի, քազմարիկ ուրիշ վարդերի այդ շրջանի խաչքարերի վրա ամենացայտու պատկերաբանակը ներկայացնում է չար ուժերի դեմ ուստի գնացող տուրք գինվոր կամ գորավարը:

Եվ սա մեծագույն արժանիքն է հայ քարգործ վարպետի, որը հայրենակիցներին ոչ միայն գեղեցիկ արվեստի դասեր էր տալիս, այլեւ կոչում էր ազատագրական պայքարի:

ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՄՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՍՆԵՐԸ

Յայ ժողովրդի պատմական հայրենիքի բոլոր լայնություններում կանգնած են մեր պատմական հուշարձանները և վկայում են մեր հին ու նոր նախնիների ստեղծագործական մտքի Վիթսարի ոգորումների եւ հրաշք թոշքների մասին:

Եթենային Ղարաբաղի կամ պատմական Արցախի ճարտարապետական հուշարձանները մի առանձնահատուկ տեղ են գրավում հայ ժողովրդի մշակույթի մեջ ակասա Վանի թագավորության ժամանակների շինվածքներից մինչեւ միջնադարյան վանքերն ու խաչքարերը, քեր-ամրոցներն եւ մելիքական ապարանները, մինչեւ նորօրյա հուշակորողներն ու հպարտ «Մենք ենք մեր սարերը»:

Մ.թ.ա. հազարամյակի սկզբներից ընդգրկված լինելով քաղաքական ու մշակութային այն ոլոտների մեջ, որոնք բնորոշ էին Յայքական քարքարավանդակի ամբողջ տարածքին, ինն Արցախ նահանգն ապրել է հայ ժողովրդի կազմավորման եւ հայ պետականության ստեղծման ժամանակների վայրիներում ները: Եկ պատահական չե, որ այստեղ քրիստոնեական եկեղեցական առաջին շենքի կառուցումը կապված է Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Յայստանի նոր հավատի առաջնորդը 4-րդ դարի արշալույսին քարոզության էր գնացել իր երկիր հյուսիսային նահանգները եւ ահա այնտեղ Արցախի Յարան գավառի մմարաս գյուղաքաղաքում է հիմնավորեց առաջին եկեղեցին: Այդ շենքի կառուցումն ավարտել է Լուսավորիչ թոռը պատանի Գրիգորիսը, որը եպիսկոպոս էր նշանաված Արցախի եւ հարեւան Ուտիքի նահանգն ընդգրկող թենում: Այս փոքրիկ եկեղեցին, որ ավելի ծիշտ կոչենք մատուռ, այժմ էլ պահպանվում է նրա վրա հետագայում կառուցված վանքի ներսում, թեմի ներքո: Դա եռանակ նի շինություն է, որի վրա կամ ուշագրաւ քանդականախչեն: Շինությունն իր պահպանված վիճակով կարող է նոտավոր գաղափար տալ հայոց քրիստոնեական վաղագույն շրջանի ճարտարապետական պատկերացումների մասին:

Արցախի գեղաշուր հուշարձաններից են նաեւ Կատարո վանքը՝ այժմյան Յաղորությ շրջանի հարավում՝ Կիզաքայտ սարի գագաթին (4-րդ դ.), Բոյ Եղիշին Քաբանդում (12-րդ դ.), Ղազանչեցոց եկեղեցին Ծուշի քաղաքում (19-րդ դ.), Դադի վանքը, Զրվշտիկը կամ Գլուխվանքը Թարթարի հովուում (7-13-րդ դ.), Գանձասարն ու Յակորա վանքը Խաչենագետի ավերին եւ այլ վանական հանալիներ:

Արցախի տարածքում պահպանվում են նաեւ Գյուլիստանի թերդը, Գտիչի ու Շիկաբարի, Խոխանաբերդի, Զրաբերդի ու Կաչաղակաբերդի ամրակուռ շինությունների մնացորդները, որոնց մասունքները ցույց են տալիս, թէ արցախցիներն ինչպես տիրապետում էին ամրոցաշխմության քարծը արքեստին: Այժմ էլ կանգուն են երկրամասի քաջ մելիքներից մի քանիսի Տողի Սելիք-Եգանների, Ավետարանոցի Մելիք-Շահնազարյանների, Զրաբերդի Յասան-Զալայանների, Գյուլիստանի Մելիք Արքովի ապարանքները, որոնք հայ միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության եղակի եւ հետաքրքիր նմուշներից են:

Բայց ինչ էլ որ լինի, մեր միջնադարյան ճարտարապետության փառքն են լայնգույն վանական հանալիքները եւ նրանց մեջ է, որ իր բոլոր արժանիքներով ու փայլերով դրսեւրկել է հայ ճարտարապետների ու քարգործ վարպետների անգույքական հանճարը: Արցախ-Ղարաբաղը ժամկետաված է այդպիսի մեջ ու լինությունը կարգավորության մասնակին առ արտաքանական մի հոյակերտ, որի արժանիքները շատ եւ ակնառու, որպեսզի նրա հետ կապվի ոչ միայն Արցախի, այև շրջական նախնանքների մշակութային կյանքի մի որոշակի շրջանի հզր վերելքը: Ճարտարապետության ականավոր պատմաքան Անատոլի Յակոբոսոնը, բութագրելով 12-13-րդ դարերի հայ ճարտարապետության հաղբանակները, գտնում էր, որ «անձասարն իր մեջ «ընդգրկում էր այդ շրջանի ճարտարապետների բոլոր լայնագույն նվաճումները» եւ որ «մենք լիկաստար իրավունքով կարող ենք Գանձասարը կոչել 13-րդ դարի հայ ճարտարապետության հանրագիտարանը»:

Ուշագրավ պատմական հուշարձան է նաեւ Գանձասարին համարյա հասական կամքը Թարթարի ծախ ափին: Այստեղ ամենաբրարդ ժենքը լից Ղադիկեն եկեղեցին է կառուցված Յաքերի հշխանաց իշխան Վախթանգի կառուցարութիւնի կողմից 1214 թվականին: Այն հանանձան եւ համաժանակայա կառուցյներից տարբերվում է միջնադարյան մեր հուշարձաններում քիչ համեմիպող որմնանկարներով, որոնք, ինչպես ենթադրվում է իշխանուի Արդումաբուն ծեռքի գործեր են:

Կյ վանքի մյուս նշանակալից հորիվաքներից են զանգակատան որմնանորշում պահկող երկու անգույքական խաչքարերը, որոնց զարդարանքները հօաշերտ են եւ այդ պատճառով էլ քացարիկ մեր միջնադարյան քարգործ արվեստի մեջ:

Յարավային Արցախում այժմ էլ պահանվող հուշարձաններից չի կարելի չնշել Գտչա վանքը, որը հնում հանդիսացել է Ղիզակի նշանավոր իշխանության հոգներ Կենտրոն եւ խոշոր դեր է խաղացել Երկրամասի մշակութային զարգացման գործում: Այստեղ ստեղծված ծեռագիր մատյաններն աչքի են լրմկում գրչական ու մանրանկարչական արվեստի կատարելությամբ:

Ներկայացվածով չի սպառվում Լեռնային Ղարաբաղի պատմական հուշարձանների շարքը: Սակայն ավածից էլ կարելի է եզրակացնել, որ Ղարաբաղն այն երկրամասն է, ուր հայ ժողովրդի կառուցողական տաղանդը գործել է անընդեղ եւ թողել է անջնջելի քազմաքի հիշատակներ մեր ազգի նյութական մշակույթի ամբողջ պատմության մեջ:



ԳՈՅԱՊԱՅՔՐԱՐԻ ՎԱԿԵՐԱԳԻՐԸ

Հայաստանի ԳԱ հրատարակչությունը բոլորովին վերջերս լույս է ընծայել հետաքրքիր մի գիրք՝ «Լեռնային Ղարաբաղը 1918-1923թթ., փաստաթղթերի եւ նյութերի ժողովածուն» (ռուսերեն): Լույս է ընծայել շատ ուշացած: Այն իր ընթերցողներին, ճանավանդ՝ պաշտօնական շրջաններին պիտի հասած լիներ արցախյան պայքարի այս վերջին սկզբին, նույնիսկ դրանից էլ առաջ, որպեսզի աշխարհին իմանար, թե արցախահայությունը երթվանից է պայքարում իր ազատության ու քաղաքական ինքնուրույնության համար, եւ ադրբեյչանական կեղծարարներն էլ չհամարձակվելին հայտարարել, որոշող պետական ոյորուներին հավատացնել, թե Լեռնային Ղարաբաղի հայության ազատագրական այս շարժումը պատահական ու ապօրինի մի բան է՝ հրահրված դրաց...»

Նևկապես այս հետաքրքիր, վերին աստիճանի անհրաժեշտ գիրքը լույս է տեսել շատ ուշացած, եւ թթենս մենք պիտի հարենք փրկարար ասացվածքին՝ լավ է ուշ, քան երբեք:

Ֆիշտոն ասած, այս ժողովածուն միակ միմիթարական երեւույթը չէ մեր ընդուրմացած, գլուխները կորցրած հրատարակչությունների վերջին շրջանի գործունեության մեջ: «Լեւյս», օրինակ, ադրբեն հրատարակել եւ Սուրեն Զալյանի եւ Քրաչյկ Միրզոյանի կազմած «Լեռնային Ղարաբաղը եւ նրա շուրջը» անկախ դիտորդների աշբերով» հրաշալի ժողովածուն, եւ դարձայ բոլորովին վերջերս երեւանի համալսարանի հրատարակչությունն էլ հրապարակեց ԽՍՀՄ ժողովրական դեպուտատ, ակադեմիկոս Մերտուրի Դամբառումյանի դիտարկուները՝ ԽՍՀՄ ԳԱՆ-ի նստաշրջաններուն ու կենտրոնական մյուս քարձորագույն ոլորտներուն Ղարաբաղի հարցի բոլորանունների վերաբերյալ:

Առաջինում ոչ հայ մարդիկ, իմանականում գրչի սպասավորներ, ցույց են տալիս, թե ինչ բան է այդ «Ղարաբաղ» կոչվածը, որ ամենակարծ ժանանակուն դարձավ աշխարհի բնակչության մի հասարակ գործածական անուն՝ իր հետ կապելով անննատարբեր պատկերացումներ, ապրումներ ու արձագանքներ՝ նայած մարդուն, նրա քարոյական սկզբունքներին: Իսկ երկրորդո՛ գրչի արգասիքն է մի մարդու, որ սկզբից իսկ Տիգրոնում արքայից արքայի դաժան անարդարության դեմ ընդվզած հայ նախարարի կերպարով մտավ արցախյան հարցի մեջ եւ այնուհետեւ, քննությունների ու փորձությունների ամքող ընթացքում գտնվեց այդ կերպարին վայել քարծրության վրա... Հիմա էլ հրապարակեց իր դիտարկուներն ու խոհերը, որոնք ոչ միայն ծշմարիտ են, հարցի հետ կապված զանազան զաղտնիքների քացող, այլև աչքի են ընկնում նատուցնան ակնառու արժանիքներու:

Եվ իմա էլ ահա այս ժողովածուն, որ կազմված է բարեխիրդ հոգատարությանը, պարունակում է հարցին առնչվող քավական թվով (472 միավոր) նյութեր, իսկ սրանք էլ իրար են հյուսված այնպես հմտորեն, որ ընթերցելիս թվում է, թե թեզ տրամադրել են սյուժետային կուռ ու անխախտ ամրողություն ունեցող մի վեա:

Գիրքն են մտել համարյա բոլոր այն արժեքավոր նյութերը, որոնք պահպում

են Հայաստանի ու Մոսկվայի արխիվներում: Կստակությամբ ասում եմ՝ համարյա՝ բոլոր, որովհետեւ ինքս էլ ծանոր են եղածին եւ տեսնում են նյութերը հավաքող ժողովածուն կազմողների ցանկը՝ Օ.Ս.Բալիկյան, Վ.Ս. Եվլյան, Գ.Ա. Չակորյան, Ա.Ս. Վիրաբյան, բոլորն էլ՝ մեր համարական արխիվային գործի գիտակներ, տարիներ շարունակ այդ եւ նման ուրիշ նյութերի ընտրության ու հրատարակման մեջ վարպետացած: Մանավանդ, որ այս հմուտ արխիվիստների հետ է եղել եւ աշխատանքը գլխավորել է անվանի պատմաբան Վարդգես Միքայելյանը:

Գիրքը ուսւերեն է, նրա համար նյութերի մեծ մասը բարզմանքել է հայերեն և օտարալեզու բնագրերից: Թարգմանություններն ունեն պատշաճ մակարդակ, պահպանված են հատուկ ամունների ճշգրիտ տարրերակները:

Հասկանալի է, որ ժողովածուն կազմողները հարավորություն չեն ունեցել աշխատելու բարձի արխիվներում, որոնցում, ինչ խոսք, ամենից շատ կան, այսպես կոչված, ադրբեջանական կողմի դիրքն ու գործունեությունը ցույց տվող ամենատարբեր նյութեր: Չգիտեմ՝ ծերի տակ ունեցել են Բարվում 1989թ. հրապարակված ժողովածուն (Կ հիշումը օբրազումնական Հագործ-Կարախաչսկոյ ավտոնոմությ օբլաստի Ազրբայջանական ՀՀ 1918-1925, լուսականություն և մասնակիություն և առաջարկություն), որը, ինչքան էլ միակողմանիորեն կազմված, փաստաթղթերը նեկ-մեկ էլ իմբազիր Զ. Գուլիելմ թիմքին հարմարեցրած, ունի բազութիվ միավորներ, որոնք անպայման կօգնելի ժամանակաշրջանի ու հրողությունների պատկերներն են երկայացնելու:

Ամեն պարագայի նշված 472 փաստաթղթերն ու նյութերը հիմնականում վերաբերում են Արցախ-Ղարաբաղյան 1918-1923թթ. կյանքին (կան, իհարկե ստանձին կողորներ, որոնք թյուրիմացարա են ընկել այս գիրքը օրինակ, ԱՆ 34, 35, 379, 391, 402 եւ մի քանի ուրիշ փաստաթղթերը), ճշգրիտ պատկերացն են տալիս երկրամասի հայության նաքառումների, ինքնորոշման, մայր հայաստանի հետ միավորվելու համար մողավարդի ու կրած անհանար գրկանքների մասին: Գրի պարունակած նյութերի ճիշդ ու ընդգրկում ընությունը լավ է տվել ինքը՝ խճազիր, կազմողների խնդիր եկեավար Կ. Միքայելյանը (տես գրքի XIII-XX էջերը): Ես այստեղ մեջ կերպել XVIII էջում ասվածը, ու դա կլիներ ժողովածուի ընդգրկած ամբողջ նյութի սպառիչ ընությագրությունը: Կննար միայն Աղրեջանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո, մինչեւ 1923թ. հուլիս 7-ը՝ Լեռնային Ղարաբաղյուն մարզային ինքնավարություն հայտարարելն ընկած ժամանակին վերաբերող շուրջ 150 միավոր նյութերը, որոնք ադրբեն ցույց են տալիս արցախահայության ցավառանց վիճակի նոր որակը, եթե Թյուրիխայի ու մուսավարական Աղրեջանի միացյալ թշնամալիան ուժին գումարվել էն Ռուսաստանի նոր տերերի հեղափոխական ու դժոնական խաղերը եւ պետք է ջնջեն նախընթաց ավելի քան երեք տարվա անհայտապահ ու հերոսական մաքառումի արյունքը, վերցուն էլ ավանդական հայապահկան նախանգն իր հայ բնակչությամբ քաշեին նորաթուիս Աղրեջանի լոի տակ, ենթարկեն նրա տերերի անմարդկային կամայականությունների աղետին:

Ես այստեղ, լրագրական ելույթի սահմաններում, հնարակդուրսում չըւնեմ

ցույց տալու, թե ժամանակաշրջանի (1918-1923թ.) արցախյան իրականության որ կողմերով են ստացել առավել անբողջական ու լիակատար արտացոլությօթ: Բայց նշեմ, որ կազմովներն իրենց ուշադրությունը հիմնականում սեւեռով են ժողովրդական պայքարի կազմակերպման, թշնամու (թուրք, ադրբեջանցի, քուրդ ասպատակիչների միամնություն) խարդավաճրների բացահայտման ու վերացման հանգամանքների վրա: Բավկական ընդարձակ տեղ է տրված այն նյութերին, որոնք ներկայացնում են արցախահայության բոլոր տաս համագումարները՝ ազատագրական պայքարի գաղափարական ուժը կազմող այդ հզոր ազդակները: Նորահայտ շատ փաստաթղթեր մերկացնում են նույակարի ստոր գործարքները մեծ տերությունների ծախու ներկայացուցչների հետ: Անզիհացին է զախս, կաշառում են, ֆրանքիացին է հայտնվում, այնպես են գնում, այնպես իրենցը դարձնում, ասես մատև թվապատճել են: Անդրկովկասում երեւում են ուսւ բոյշենիկները, միանգանցից, մի գիշերում դառնում են բուշեիկ, իրենց բոլոր հարցերը լուծուն հայ ժողովրդի հաշվին:

Փաստարքերով ցույց է տրվում, հաստատվում այս ամքողը ընթացքը: Ներածական հոսքն է մեծապես օժանդակում է ընդգրկված հսկայական նյութը ճշշտ հասկանալուն:

Վ. Միքայելյանի հեղինակությամբ մի հոդվածանման նյութ է («1988-1992 ծանր փորձության տարիները») հաջորդում է «Ներածակամին» եւ, ինչպես վերագրից պիտի եղանականել, արցախահայության գոյապայքարի նորագույն շրջանն է ներկայացնում, բավկական ներ սահմաններում (ընդամենը 13 էջ) տալով նոր փորձության հիմնական բովանդակությունը, Գորբաչովի գիշավորած կենտրոնական ղեկավարության սադրալից քաղաքականությունը, շարժման առաջնորդների վարած քաղաքականության խոցելի կողմերը, մանավանդ այն անպատճ, ավելի ճիշտ՝ անհեռատես առօնակատումը գորբաչովյան պնդաճակատ քռապեսության դեմ, որի արդյունքը եղավ 1991թ. առաջին կեսի ողբերգությունը՝ սկսած Գետաշեն-Սարտունաշենից...»

Կերպուն չեմ կարող չիշել մի շարք բացքորումներ, որոնք, ամշուշտ բացասարա են ազդում այս շատ արժեքավոր ժողովածուի ընդհանուր որակի վրա:

Նախ. արցախյան գոյապայքարի առաջին շրջանը սերտորեն կապված է Հայաստանի համբակենության երկուս ու կես տարվա կենսագրությանը, ունի սկիզբ ու վերջ, եւ այդ ամբողջությունը մեկ-մեկ բաց է մնում, որովհետեւ բացակայում են համապատասխան նյութերը: Ավելացր համընկնում է Հայաստանի համբակենության ծննդին՝ տեղի ունեցած Բարումում, Թուրքիայի գլխավորած բանավարությունների ու ընդունված դաշինքների մեջ (1920թ. մայիս): Այնտեղ հայկական պատվիրակությունը (նախագահ՝ Ալ. Խատիսյան, անդամներ՝ Յ. Քաջազնունի, Միք. Պապաջանյան, խորհրդական Ա. Կրացյան) համաձայնել է, որ Ղարաբաղը դուրս մնա ճնունդ առնող Հայաստանի անկախ հանրապետության կազմից: Վրաց պատվիրակության անդամ Զ. Ավալովը հետագայում գրել է, թե «Հայեր հրամարվել են Գանձակի նահանգի նասերից «Ղարաբաղ...» (Յ. Ախոնօ, Հեզանիստություն Շրջան և մասնակիություն 1918-21թ., Փարիզ, 1924, էջ 5): Այս հրամարումն արտահայտություն է գտել անաեւ այն նյութերում, որոնք դուրս են եկել մեր պատվիրակության երկու ան-

դամների ծերքի տակից եւ գտնվում են իննոց Հայաստանի պետական արխիվում (Խատիսյանի նամակը Հայոց Ազգ Խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանին եւ Քաջազնունու օրագրերը):

Ցավալիորեն, Ղարաբաղի հանրդակ նույն վերաբերմունքն է տիրական նաեւ այս շրջանի վերջում. 1920թ. հկլուեմբերի 28-ին Լեւոն Շամբարձում Տերտերյան, Լեւոն Զարահյանը Ուլասատանի ներկայացուցիչ Բորիս Լեզրամի հետ կմքեցին համաձայնագիր, որի երկրորդ կետն սկսվում է այսպես. «Հայաստանի հանրապետության կառավարությունը իր կողմից անառարկելիորեն կիրաժարվի, այսպես կոչված, Ղարաբաղի մարզի նկատմամբ անեն տեսակ հավակնություններից...» (այս ժողովածուի էջ 597): Այստեղ երեխ ամքան է կարեւոր չէ հրականում ով էր հրաժարվում Ղարաբաղից, կառավարությունը, թե՝ Շամբի պատվիրակությունը: Խայտնի է, որ եւ Բարումում, եւ այստեղ գործի գլուխ կանգնած էին մարդիկ, որոնց համար Ղարաբաղն «այսպես կոչված» մի բան էր: Դա ճիշտ է մկատել հարցի համար վառվող Լեւոն («Անցյալից», Թիֆլիս, 1925, էջ 425. «Եվ ահա Քաջազնունին, Խատիսյանն ու Պապաջանյանը, մարդիկ, որոնք ոչինչ հասկացություն չունեին ոչ Ղարաբաղի, ոչ էլ Զանգեզուրի մասին, Բարումի չարադրիտ քանակցությունների միջոցին համաձայնություն են տալիս թյուրքերին, որ Ղարաբաղը պատկան Ալյութքանին...»):

Մրանցից է սկսվել գոյապայքարը, եւ չէր կարելի այս աղետին վերաբերող լույսերն անտեսել:

Ես համոզված են, որ Ղարաբաղի այս շրջանի համար ճակատագրական կամակություն է ունեցել նաև գորավար Անդրամիկի մի անվճռական քայլը՝ կատարված 1918թ. վերջին: Տեղի հայության աղերսանքին ունենալիքնելով՝ նա իր գորաբանական առած Զանգեզուրից մտել էր Ղարաբաղ, խորացել մինչեւ Տաս վերստ կոչված վայրը՝ Ավկալլար (հետագայի Լաշին)-Ծուշի ճանապարհին: Այստեղ հապատեց, հետո էլ ենթարկվեց անզիական գեներալ Թոնսոնի ստապանի խոստումներին, վերաբարձակ Զանգեզուր՝ արցախահայությանը բողնելով անօգնական, անհամար անլուծելի հարցերի դեմ-հանդիճան:

Անդրամիկի մոլուք Ղարաբաղ մեկրնիշտ կլուսեր նրա հիմնական խնդիրը հմաքն դա եղավ Զանգեզուրություն, եւ մարզին այլևս չէր կիճակվի այն ամբողջ ողբերգությունը, որ ծգկվում է ահա ավելի քան յոթ տասնամյակ:

Այս ամենի նախին խոսող փաստաթղթեր ու նյութեր կան արխիվներում ու պարբերական մամուլում: Օրինակ, ՀՀ հաշնակցության պարբերականները, մանավանդն «Հայերնիք» համեստը, հրապարակել են ականատեսների ու ժամանակակիցների բազմաթիվ վկայությունները (Եղիշե Իշխանյան, Շովակ Մտեփանյան, Սարու Եւլը): Մինչդեռ ժողովածուն տվյալ դեպքի մասին հայությունը է միայն կողմնակից մարդկանց ակնարկներ, որոնցից անհնար է որոշակի պատկերացում կազմել երած-չեղածի մասին (կա, իհարկե, նաեւ Էջմանյանի ստորագրած մի գրությունը, որի մեջ, սակայն, Անդրամիկի երրութաքի մասին խոսվում է իմիջիալոց: Ժողովածուի էջ 69, 71):

Ժողովածուի նյութերի երկրորդ մասը, որ ընդգրկում է խորհրդային կարգերի հաստատումից մինչեւ մարզին ինքնավարություն տալու ժամանակը, ունի

մի եական թերություն. դժվար է որոշել, թե ինչն էր պատճառը, որ 1921-ի հունիսին կուսակցության Անդրեյքովսի ընդունած որոշում (մարզին լայն ինքնակարգություն տալու մասին) երկու տարի հետո միայն իրավանացավ; Վերջ իիշեցի 1989-ին Բարքում տպագրված փաստաթրեթի ժողովածում: Այսուղեւ է նշեն, որ այնտեղ այս հարցին առնչվող շատ նյութեր կան, որոնք կօգնեն, որպեսզի մեր ժողովածուն այս տեսակետից անբերի լինի: Բարքում իրավարակվել է արդիվային մի նյութ եւս, որն արդեն նոր լոյս է սկսում այդ շքանի հոլոլուրունների վրա. դա այն ժամանակ երկրի Կենտգործկոմի նախագահ դարձած Նարիման Նարիմանովի մի, այսպես կոչված, գեկույցն է (իրականում՝ «Հղոնոս» Չիչերինի, Օրջոնիկիձեի, Կիրով, Միկոյանի, Սարգսի, Մերերովսկու, Միրզոյանի, Շուշիի մի նախկին գործակիցները և. Կարելի ու Մ. Դասանովի դեմ) հասցեագրված Մտալինին, Տրոցկուն ու Ուդեկին եւ բացատրում է, թե ինըն ինչու է ծգձեռ հարցի լուծումը՝ Վճռած լինելով այս թարել, որովհետեւ, իբր. 21-ի որոշումը կտրուկ սրել է «հայ գյուղացիների ու բուրք գյուղացիների հարաբերությունները», եւ, մանավանդ, այս ինքնակառավարությունից հրաժարվել են իրենք՝ հայ գյուղացիները (Ազգանձյան «Հարաբարերը, 1989, նոյեմբերի 5):

Ուրեմն, հարցի լուծան դեմ կանգնած է եղել Ադրբեյջանի տեր Նարիմանով՝ մերենայությունների իր շղարջով, եւ հանրապետությունից նրա հեռանալուց հետո միայն Կիրովը, Օրջոնիկիձեն, Միրզոյանն ու մյուսները կարողացան մարզին տալ խոստացած նվազագույն իրավունքը՝ ազգային ինքնակարությունը:

Նարիմանովի հակահայկական սարդանքների այս նորահայտ գեկույցը՝ Բարքի ժողովածուի համապատասխան նյութերի հետ միասին, կօգներ, որ 1920-23թթ. իրավանությունը եւս մերկայանար ըստ հնարավորին ամբողջական պատկերով:

Այսուհետեւ, շնորհակալ լինենք, որ այսքան էլ հրապարակվել է՝ գիրք տպագրելու համար ժամը ու դժվար մեր օրերում:

1992, նոյեմբեր, Եղվարդ

ԽՈԶԱՑՈՒՄ

Խոջալյուն, ինչպես ժողովուրդն է ասում, ինքը կերպ իր գլուխս: Կհարցնեն՝ ինչ կի, ինչպե՞ս: Ասեմ՝ մեկ նրանով, որ այդ գլուխս անքականորեն մեծացել էր, ուշակցի եւ սովորական ուսերի վրա չեղ պահպան: Մեկ էլ, որ խելքից դուրս բաներ ու անդամները մինչեւ 88-ը՝ այն, իբրեւ ոչնչայի չփայլող, սովորական փոքրիկ մի գլուխ, փուված էր Ստեփանակերտ-Աղդամ ավտոճանապարհի ձախ ափին, Կարեկա գետի Մեղրագետ-Բալուշա վուակի գլուխ առվերին: Տնտեսական մի առանձնակի առավելություն է չըսմեր, որովհետեւ շրջապատի մվազ բերքատու, քարաշատ հոդերը տարեկան մի չափ անգամ կարկուակարպություն է բնակչության ստիպելով գլուխ պահել ասեւտրով, հարեւան գյուղեւու, օրինակ՝ բավական հարուստ Նորագյուղի, Խանապատի կամ Յարավի տնտեսությունների հետ ամենատարեթ գործարքների մեջ մտնելով: Բայց ահա, 88-ի փուրքարդից սկսած՝ միանգամից բարձրացավ այս անշուք ու անհեռանկար գյուղի վարկը, դեռը, նշանակությունը: Աղրբեջանի ղեկավարությունն իր ազան անկանության համար պայքարի ելած արցախահայությանը խեղդելու օրականեր էր փնտության համար այսպարհ, որ այդպիսի դերի համար անենայն հնարավորություն ունի մարդ մի միակ բանուկ ու ամենակենսունակ ավտոճանապարհի վրա բուսած խոցալուն: Խոացին անգան այստեղ գրինեցին Երևանից-Ալղալին մտած ամուշարասյան վրա, այստեղ եղակ առաջին հայ մարդ:

Խոջալյից հյուսիս-արեւմուտք, Կարեկա իր հովիտ ծախսափյակում, առհասարակ՝ այս կղոյների միակ հարձար տափարակի վրա էր գլուխուն Ստեփանակերտի օդանավակայանը, մարզով արտաքին աշխատիկ հետ կապող օդային երրուղարձի միակ կետը: Աղրբեջանի ղեկավարությունը, որ արդեն շարքից հանելի էր մարզ մտնող երկարքիքը, վերացրել գազամատակարարությը, լեկուտրասնուցումը, որոշեց վերացնել նաեւ օդային կապը, եւ դրա համար չգտավ առավել հարձար միջոց, քան Խոջալյի ծավալումը, նրա կառուցապատման լուր, պարզապես հերիաթային ծրագրի իրականացումը: Դաշված օրերի ընթացքում զյուրը ծգվեց դեպի արեւելք, բնակելի ու հասարակական վիթխարի հնիքեր շարվեցին տափարակի ամբողջ տարածքում, ընդհուպ մինչեւ օդանավակայանի թուրքարաշուը: Կարելի է կարծել, թե Աղրբեջանի շիմարարական ամբողջ հզրությունը փոխադրվել է այստեղ, հանրապետությունն ուրիշ ոչ մի լորդ ու խնդիր չունի, բացի նրանից, որ պիտի աննշան հոցալուն ծգի, ծավալի, մեծացնի, տարածի Կարեկա ծախսափյակում, նրանով ծածկի այն, վերացնի օդանավակայանը, կլանի նորագույղի հզոր կոլտնտեսության դաշտերը, ինչ ու դեպի Ասկերան, այն եւս առնի իր փեշերի տակ.. կառուցված նոր բնակելի հնիքերում արդեն ապրում էին հանրապետության տարբեր շրջաններից այստեղ թշված մարդիկ, որոնք պետք է աշխատեին նորատունկ ֆաբրիկաներում ու գործարաններում: Նորաբնակների շարքերուն իին, իբր, Դայաստանից փախած աղրեջանցիները, որոնք, սակայն, միութենական կառավարության որոշական համաձայն, իրավունք չունենան տեղավորվելու ԼՂԻՄ-ում՝ մարզի ազգագրական պատկերը չփոխելու համար: Ըստա այստեղ բերվեցին նաեւ Ուզբեկստանից դրչական գործությունը թշված մեսիներից թուրքերը: Աղրբեջանցիների ցեղային-արյու-

ნაცვალი ქრისტე მოწიდებული იყო, ისინი აუგია თელავის მნიშვნელობის სისტემაზე და მას მიერ დაუკავშირდებოდა.

Գիշեր-ցերեկ խողալու էին ժամանում ժողովրդատնտեսական բեռներ, որոնցով կառուցվում ժամ առ ժամ ծավալվում էր քաղաքի իրավասությունը՝ ստացած գյուղը՝ 1989 թ. նոյեմբերին կենտրոնին հղած բողոքի գրի մեջ ԼՂԻՄ-ի մի շարք վարչական դեկապար աշխատողներ, վկայակոչելով «Վիշպա» բերքի հայտարարությունն այն մասին, որ ամեն օր միայն ուղղաթիռների միջոցով խողալու է հասցվում 48 տոննա թեր, հարց էին տալիս՝ «Ո՞վ կարող է պարզել, ինչ կա այդ թերան մեջ, «երբ ԽՍՀՄ ՆԳՆ ներկայացնեցի խոստովանությամբ, այս օրու մտնելու հոգմունք չի տրվում նույնիսկ գիննորականներին»։¹

Հիմա խոչըլու «քաղաքի» տեղը, ավելի ճիշտ՝ նրա հյուսված-արեւելյան սահմանը տարածությունը, զբաղեցնում է ԼՂՀ բանակի առաջին ուսումնական գումարը: 1994-ի ամառանձնաւուժին այցելեցի, տեսա նրա կառուցների հարուստ, սակայն անհրաժեշտ ամեն ինչով հագեցած շարքերը, ուսումնական, մարդական մշակութային պարապմունքների ամեն հարմարություններ ունեցող դաշինհները են, մանավանդ, պատանի մարտիկների կենսայինող, ռազմական ուսումնառությանը նվիրված ջոկատները, լցուցիքի այն անխառն ու աներեր հավատով, որ այստեղ ծննդում ու գորանում է մեր նորելուկ հանրապետության ապագա հզոր ությունը կամ հզոր ապագան: Այստեղ ամեն ինչ ստեղծվել է հանրապետության ուսումնական ավագի՝ ծեր գեներալ լեյտենանտ Նվանյանի հղացումներով դեկավարությամբ, աննիջական մասնակցությամբ: Նա է հյացել այս յուրահատուկ ակադեմիայի ստեղծման անհրաժեշտությունը, շինարարական ծրագիրը, կառուցման համագանձնմերը: Այս ամենին նա մասնակից է արեւ մարզի տնտեսական ու վարչական բոլոր այն մարմիններին, որոնք կարող են օգնել բարձրացնելու լեռնաստանի պաշտպանության առաջին դարբնոցը՝ իր բազմափորձ, երկարամյա ծառայության անքորդ ընթացքում տեսած համանակարգաբանական օրինակով:

ԾԱՆՈԹՎԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «ՀԱՅՈՒԹՈՂԱԿԻՆ ՂԱՐԱԲԱԴ» թերթ, 15 նոյեմբերի, 1989:

ԵՐԻՄ ԿԱԶՄՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վերջերս աղբբնացիները լույս աշխարհ հանցին Նարիման Նարիման-վի մի գրությունը՝ ուղղված Ատակինին, Տրոցկուն ու Ռադիկին (1923-1924թ.)¹: Այս, ըստ երթան, մի կեղտուն գրապարտչազիր է Ս. Օրջոնիկիձեի, Ա. Միկոյանի, և Ա. Խրազյանի եւ Բաբիկի պողովարիատի մի քանի ուրիշ դեկավարների դեմ: Իրապարակումից երեւում է, որ այս չի ուղարկվել հասցեատերերին եւ գտնվել է Նարիմանովի թողումերում: Չի ուղարկվել, որովհետեւ գրապարտությունների, առատ-փուտ հայտարարությունների եւ ինքնահնար մեղադրանքների համար ուժիգված կիյներ պատասխան տալ: Իսկ այս դեպքում արդեն գրության հերիւակը հրաժեշտ պիտի տար անարժանորեն ստացած բարձր պաշտոնին (Միութիւնական Կենտգրործկոմի նախագահներից մեկն էր 1922-ից): Օրջոնիկիձեն է կրաս այդ ապաշտունին երաշխավորել, եւ գրության մեջ այդ երաշխավորող հայտարարվում է շովիմիստ, ադրբեջանական ժողովրդի թշնամի, բռնակալ, իր գույափարական հակառակորդներին կոտորող: Միկոյանը, Մարկիսը, Լ. Սիրուանը մեղադրվում են Ադրբեջանում ծավալված դաշնակցական գործումեռուած մեջ («դաշնակցական աշխատանք է գնում» կոնունիզմի դրոշի ներքո»): Ու որ էր, թե նրանք իսկապես գոնե մի թիզ էլ դաշնակցական եղած լինեն եւ Ադրբեջանին հավատարմորեն ծառայելիս այնտեղ անպաշտպան հայության համար այն ամենին, ինչ որ վայել էր այդ կուսակցության անդամներին:

Սակայն մեզ համար կարեւոր է այս գրության երկրորդ լրացման մեջ (1924թ. մայիսի 27) տեղ գտնած մի խոստովանությունը, որից վերջապես հայտնի է դաշնություն, թե ինչու Արցախին հնքնավարություն տալը ձգձգվեց երեք տարի: Այստեղ ինչպես ասում են սեւով սպիտակի Վրա գրված է. «Աղրբեցանում կատարվող դաշնակցական աշխատանքի առթիվ ին կանխատեսումների մյուս լիևս է, ես կարծում եմ, կիայտնաբերվի այս տարի: Միրզոյանի ուժեղ ճնշման տակ Լեռնային Ղարաբաղը ինքնավար մարզ է հայտարարվել: Ին ներկայությամբ դա չէր հաջողպես ոչ թե այն պատճառով, որ ես դեմ էի այդ ինքնավարությանը, այլ պարզապես այն պատճառով, որ իրենք՝ հայ գյուղացիներն այդ լին ուզում: Միրզոյանն այդ ընթացքում դաշնակցական ուսուցիչների օգնությամբ հող պատրաստեց եւ հարցն անցկացրեց Աղրբեցկրկոնում: Այդ պահից հայ գյուղացիների ու բուրք գյուղացիների միջեւ հարաբերությունները կսորուկվեցին: Յետք է գնում է Գանձակի լեռնային մասի հարցն եւս: Աղրբեցանում դաշնակցական քաղաքականություն է գնում ամբողջ ուժով: Ինձ համար նվազագույն կասկած ինչ չկա, որ ՈԿԿ Կենտկոմը հանձին Սերգոյի ու Ստալինի չի կտահում մեզ՝ բուրքեիս, եւ Աղրբեցանի բախտը հանձնում են հայ դաշնակցականներին»²:

Նարիմանովի հրապարակած հոչակագիրն, ինչ խոսք, ենց իր Աղրբեջանում ուներ հակառակորդներ, որոնք չեն կարող հանգիստ մնալ, եւ սա էլ իր և ինքը այսի որոշակի դեր խաղար: Օրինակ, հայտնի է, որ համկարծակի բուժեկացած հայտնի նուսավաբական Բ. Շահթափինսկին Նարիմանովի հոչակագիրը հաճարել է նոր Աղրբեջանի դավանանությունը և ախիջենամի դեմ եւ իր

հայրենակից մուսուլմաններին կոչ է արել երես դարձնել Նարիմանովի համբարձությունից, ինչպես կապել միայն Թուրքիայի հետ: «Այժմ դուք հայացքներո դարձեք դեպի բուրքերը: - կոչ է արել Հակիմաշխինսկին: - Երանք են ծեր միակ փրկությունը: Անուր բռնեցնք երանցից»³:

Ռենկտեմբերի երկրորդ կեսին Հայաստանի հանրապետությունը հոչակագիր հրապարակեց Նախիջևանի մասին՝ նրա բնակչության ազատ ինքնորոշման հրավունք վերապահելով:

Նկատի առնելով ստեղծված իրադրությունը (թուրքերի ու աղքածանցիների վայրագությունների հետեւանքով երկրամասում հայերն արդեն փոքրանասություն էին կազմում, այնտեղ ոչ միայն Հակիմաշխինսկին ու իր դասակիցներն էին գործում, այլև թուրք էմիրարներն իրենց գրադրուկամներով, իսկ բոլշևիկ աղրեջանցիններն էլ բնակչության վրա ազդում էին նարիմանով-կարառելյան եղանակով⁴ այս հոչակագիրը փաստորեն պետք է նշանակեր Դայաստանի հրաժարականը Նախիջևանից: Եվ արդյունքը չուշացավ, ինչտեմբերի 30-ին Բ. Լեզրամը Գ. Չինդիմին հղած հեռագրով տագնապած հաղորդեց, թե Նախիջևանում մի ոճն Վերսալ-բեյ թուրք իրեն հայտարարել է երկրամասում Թուրքիայի ժամանակավոր արտակարգ կոնհսար եւ սպասում է իր երկրից հսկական տերերի ժամանելու⁵:

ԾԱՌԱՅՎԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ազերբայջան («Դարարադի օգնության ժողովրդական կոմիտեի լրատու թերթ»), 1989, նոյեմբեր 5:

2. Անո:
3. ՀՀ ԿոԱ, ֆ.114, գ.1, գ.45, թ. 13:
4. «Կոմունիստ» (հայ.), Երևան, 1920, 28 դեկտ.:
5. ՄԼԻ-ի ԿԱԱ, ֆ. 64, գ. 2, գ. 11, թ.281: Հնատ. Խարմանդարյան, էջ 100:

ՇՈՇ ԵՎ ՇՈՒՇԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Շոշ գյուղն ու իր անունը հետաքրքիր առանձնահատկություններ ունեն, որոնց վրա, որքան հայում է, քննական ոչադրություն դանող չի եղել: Բնակչությունը տեղաբնակ է, Սակար Քարխութարյանցի ասելով՝ «քննակացած փոքր մասն բնիկ, մեծ ճամաց տեղակիուված Մելիք Բաղրի հետ Մոքից, մի քանի ծուխ Զրաբերդից եւ մի ծուխ Պարսկաստանից»⁶:

Սակար վարդապետի խոսքը, թե բնակչացած փոքր մասն է բնիկ, որովհետեւ մեծ ճամաց եղած է Մոքից ու Զրաբերդից, մեր խորի համար եական նշանակություն չունի, քանի որ Մոքն ու Զրաբերդն էլ տեղական վայրեր են, ինեն այն գլխից Արցախի ամբողջության մեջ եղած ու գյատուած, ուրեմն եւ պիտի խոսենի իր բուն արցախական բարբառով, սակայն այս գյուղը, ինչպես եւ Դադրութի շրջանի որոշ գյուղեր խոսում են «Ս» ծյուղի բարբառով: Դետաքրքիր է, որ այս կամ խոսությունի լեզվի եւ բուն արցախան բարբառի տարրերությունը դեռքային մեջ է: Կյան ըս-կյամ ըս, ջիս ըս-քըրնում ըս: Մնացած բրոլոր դեպքերուն, ինչպես եւ անբողջ բառապաշարի մեջ ոչ մի տարրերություն չկա:

Կար Շոշ, աղբյուղներում նաեւ Շուշու, Շուշու կոչված, գյուղ: Եվ ահա ԺՇ հարի փաստաթրեկում հայտնվում եւ լայն տարածում է գտնում նաեւ այդ լուրի թիկունքում գտնվող մի թերդ, որ Շոշի դալա, Շոշվա դալա, Շոշի-Շուշ ցա թերդ, իսկ դրանից առաջ եւ դրա հետ միասին նա Քար, Քարագլուխ, Քարագլխի թերդ անուններով այս հայրութամյակի երկրորդ կեսին բարեկազգելով պետք է դառնար նշանավոր թերդաբաղաք, աստիճանաբար ծեռք թերեր տեղի հայ բնակչության տնտեսական ու նշակութային, իսկ այնտեղ բափանցած ու հիմնավորված թրքական ցեղային խմբավորման համար նաեւ վարչական կենտրոնի նշանակություն: Լեռն՝ այդ մեծ շուշեցին, որ քանի՝ անգամ անդրադարձ է երկու Շոշ-Շոշու գյուղի եւ Շուշի բնակավայրերի անուններին, ամենայն նանրամասնությամբ հյուտել նրանց պատմությունը այդ պատմության բոլոր հարցերին առնչվող համագանձներով հանդերձ, հայտնել է նաեւ այն կարծիքը, թե սկզբնապես գյուղերուն է ունեցել թերոք՝ իր անունով, ապա թերոյ անունով է կոչվել նաեւ նրա ստորոտում ստեղծված գյուղը: Նա, իհարկ է, գիտեր նաեւ հակառակ մի կարծիքի առկայությունը, որ ասում էր Շոշ քնող-Շուշին իր անունն ստացել է Շոշու անունով հայաբնակ փոքրիկ գյուղից: Սակայն, չընդունելով այս կարծիքը, գտել է. «...Մեզ անհավանական է քվլում այսպիսի համագանձնը, եւ նենը կարծում ենք, որ, ընդհակառակ, գյուղը թերոքից պիտի ստացած լինի իր անունը, իսկ թերոքը, հավանորեն, գյուղուն և ունեցել եւ հին ժամանակներուն»⁷:

Ես մի տեղ գրել եմ, որ անընդունելի է այս կարծիքը. որովհետեւ, նախ, անունները իրենց անհավանական են դարձնում այդ կարծիքի իմաստը, չ” որ ուկարմապես թերդանունը «Շոշի թերդ» է եղել, իսկ այդ նշանակում է եղել է «Շոշ», որն էլ ունեցել կամ ստեղծել է իր թերոք եւ, ապա, նորահայտ աղբյուղները հաստատում են, որ ավելի վաղ շրջանում գյուղուն է ունեցել Շոշ-Շոշու

անունով գյուղի, իսկ ԺՈ դարում էլ գոյացել է բերդը, որի անունն աստիճանաբար մշակվելով դարձել Ծոշի (գյուղի) բերդը:

Ուրիշ բան, որ բերդը, իբրև բնական ամրություն, պաշտպանական հարմագույն վայր, կարող էր հնուց ի վեր գոյություն ունեցած լինել եւ իսկապես էլ գոյություն է ունեցել, եւ հարկ է գտնել նրա վաղմաջական անունը:

Ծոշի դալա-Ծոշի բերդ (անկասակած սրանից էլ գոյացած Ծուշի) անունը ժանոր է 18-րդ դարի աղբյուրներից: Իսկ 15-րդ դարի մի ծեռագիրի հիշատակարանում հիշվում է Ծուշու գյուղը հետեւյալ կասակցության մեջ. «Գրեցաւ աստուածագիծ սուրբ աւետարանն ծեռամբ յոզնամեղ եւ ասիկար գրչի տեր Մանուելի ի քուականութեանն հայոց ՊՇ (1428) ի յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի գեղս Ծուշու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի կարողիկոսության տը Յոհանիսի...»³:

Ծուշը դար ու կես հետո ընդօրինակված մի ծեռագրի հիշատակարանում էլ նույն գյուղը հիշվում է այսպես. «...խնամաւը նորին կատարեցի զմաքրափայլ Աւետարանն ի Փոսա նիամկ գաւառս Կարբերոյ, ի գաւառս, որ կոչի Ծուշոյ, նոր հովանաւ սր. Աւեփանոսիս, ի հանգիստ սորս այրաւեր եւ ընդ հովանաւ սր. Աստուածածնին: Արդ գրեցաւ ի թվս ՈՒՇ (1575): Եւ զեթ արժան ի կարգս քահանայից Ովանաս երցս...»⁴:

Որ խոսքն իսկապես վերաբերվում է Ծոշ կամ Ծոշու գյուղին, հաստատվում է եկեղեցու Աստվածածին եւ Ստեփանոսու գյույգ անվանք: Մակար Բարխուդարյանցի վկայությամբ Ծոշ-Ծոշու գյուղի բնակիչները, իտք, իրենց եկեղեցին կոչել են եւ նեկ, եւ մյուս անուններով: Իբր, գյուղի բնակիչները եկած են եղել տարբեր վայրերից, «Երեսի թէ Սորից եւ Մազրայից եկած օտարբ հայերն շինած են եկեղեցիս Ամենափրկիչ անվանքը, բայց օծողն անվանած է սուրբ Ստեփանոսու»⁵:

Սեկ դար հետո էլ գյուղն իր Ամենափրկիչ եկեղեցիով հիշատակվել է «շինեցաք», որ սովորական է ննամ դեպքերի համար. «...Ծինեցաք գուրը ամենափրկիչ եկեղեցիս յիշատակ հոգոց մերոց եւ մնջեցելոց, ի հայրապետութեան Աղուանիցս տեառն երեմիայի... ԹՎ, ՈՒՇ (1655) էր»⁶:

Արվանից հայրապետությունը ներկայացնող Երեմիան Դասան-Զալյայան այս Երեմիա կաթողիկոսն էր, որի գահակալությունը, իբր տեսն է 1676-1700 թվականներին, սակայն այս արձանագրությամբ պարզվում է, որ նրա գահակալությունն սկսվել է ամենաուշը 1655-ին:

Այս ամենը հիմք ընդունելով՝ հաստատապես կարող ենք ասել, որ գոյն 17-րդ դարի սկզբից ի վեր գոյություն է ունեցել Ծոշ-Ծոշու-Ծուշու անունով գյուղ կարկա գետի աջափնյակում, հետագայի Ծուշի քաղաքից հարավ տարածված կիսաբեր ու յորդուրոդ դաշտուու: Այսօր էլ կան, գոյություն ունեն գյուղն ու իր Աստվածածին եւ Ստեփանոս գյույգ անուններով կոչված եկեղեցին:

Իսկ Ծուշի բե՞րդը: Աղբյուրներում այն սկսում է հիշատակվել շատ ուշ, 18-րդ դարի առաջին քառորդին եւ այն էլ միանգամից, այլ աստիճանաբար ծեւամորկելով, ընդգծված ամբողջ կերպարանք ստանալով: Կրցախական աշխարհի հակաթքական ազատագրական պայքարը 18-րդ դարում կազմակեր-

պել է ին մեջիբները մեծահամբավ Եսայի կաթողիկոսի գլխավորությամբ եւ նահանգի ամբողջ հայության ու հեռու-մոտիկի հայկական բնակավայրերից եկած դրագությամբ:

Տեսանք, որ Լեոյի կարծիքով Ծուշի քաղաքը կամ Ծոյի բերդն է, որ իր անունը տված պիտի լիներ հարեւան ցուոյին (Ծոյ): Մա թյուրիմացություն է թեկուզ միայն նրանով, որ «Ծոյի բերդ» նշանակում է «Ծոյ» անունով կոչված բնակավայրի բերդը: Իսկ բերդատեղը երբեք էլ Ծոյ չի կոչվել: «Ծոյը» բերդաքաղաքի հարեւանությամբ ավելի վաղ գոյություն ունեցած գյուղի անունն է, այն էլ մի-անգամայն բացատրելի նոր հայերնենվ. «Ծոյ» է նշանակում ծառի մաստաղ մրուց: Այսպես կարող էր կոչվել նաև մատաղ այգին, որպիսի անունով տեղական-գյուղանում սարքելը հայոց մեջ հմական տովորություն էր: Ճիշենք ինը նորատիք-նորատուուը (Այունիքում), որ եկպորներն աղավաղել, հարձելու են նորադրուզ, Նորքը մերօրյա Երեւանի շրջանակում, Մատաղիք-Մատաղին Արգախի Զբարերոյի շրջանում հիշված 12-րդ դարից ի վեր «մատաղիք» բարը իլա նոր հայկացայն բարգրուում, սակայն այդ չի նշանակում, թե այն չի եղել, դրություն չի ունեցել: Նրա գոյության ապացույցն է, թեկուզ ու «մատաղիք», լոր հար եւ նման ծեւերի առատությունն է կորեցն է: Այդպես է «Նորքք»:

Ծոշն, հիարկե, հայերեն ու հայկական միջավայրում ստեղծված անունն է եւ ի կարող առնչվել Պարսկաստանում եղած Ծոյ քաղաքանվան հետ: Մեր այս նոյն գյուղը, ինչպես տեսանք, հիշվում է 15-րդ դարի սկզբից ի վեր, եւ այն էլ մեր լեզվի համար փոփոխականներով Ծոշու, Ծոյի եւն: Այն է, որ իր անունն է տվել աղավաղ վաղ ժամանակներից հայստի բերդին, որը մինչ այս նոր տարբերակն իր վրա առնելը կոչվում էր որիշ անուններով եւ դա ապացուցվում է պատմական անառարկելի աղբյուրներով: Այդ անուններն էն Քար (բերդ, ամրություն իմաստով), Քարազլի, Քարազլիս բերդ, Քարազլիս տնմաս եւն:

Հիշատակւթյունները հիմնականում Արցախ նելիքների եւ հոգեւոր առաջնորդների այն դիմում-նամակներում են, որոնք հասցեագրված են Ուլուսաց արքունիքին: Արաշին այլափառ թթերում հիշվում է Ծոյցի իրեւու հնընապաշտպանական պայքարից եւած արցախահայության կենտրոններից մեկը Ծոյի սղնախ (ամրություն): Ըստ Երեւությունի, մինչեւ բերդի կարգավորումը սրմակի ունկավարները նասուում էր Ծոյ գյուղում: Դա Երեւում է բրանց զրածներից: «Թիւն փոկչին 1724 ամսին 2-ուն եղեւ Ծոյումն»⁹, «Ես Ծոյին սղնակի գիսաւորն ինձ բնեն ան»¹⁰, «Անք Ծոյի երեալ ուգրաշիբս»¹¹, նոյն մինչ 1726-ին էլ «Եկին Ծոյու...»¹² եւն:

Սակայն այս ժամանակներին ինքնապաշտպանությունն արդեն բերդն էր բարձրացել: Ավան եւ Օհան հայրութապետների անունից ուսւական գործի հիմնամաստարքանը հիվանդ թթերում ասված է թթերելու կան «Ծոյու Ավան ուղարշին եւ Ոյհան լալեն վերայ: Ը(8) օր կոհիկ արին թօփով եւ դրաբուու: Քարին մինչի կեսն կալան, եւ աւել չի կարացին գնալ»¹³:

Ուրեմն կոչվել սկսել են գյուղից, բարձրացել են բերդատեղին (Քարը), նրա կեսն էլ առել եւ դենը գնալ չեն կարողացել:

«Ես Զարայգլիխն սղմաղումն թարխան եւ Բաղի ուզբաշոնց քշտին ամ», - ռուսական հրամանատարությանը հյած գեկուցով տեղեկացնում էր Իվան Կարապետը: Սա 1724-ի հուլիսին էր¹⁴: Զիշ ժամանակ անց նույն Իվան Կարապետը հայտնում էր, թե իր նամակը «Գրավեցաւ Քարայգլիխ նոր շինած դալումն»¹⁵:

Սրանից հետո էր, որ նոր կառուցած բերդ-դալան պետք է կանոնավոր ու հաստատում անուն ստանար եւ ստացված, դարձավ «Ծոշի-դալա»:

Ուրեմն, այսպէս 1724 թվականից տեղեկություն ունենք այն ճամանակին, որ Քարայգլիխն արդեն բերդ է կառուցված («Նոր շինած»): Դասկանալի է, որ կառուցումը, հյկ ավելի ծիշու վերակառուցումը տեղի է ունեցել այս թվականի մայիսոր տարիներին: Շինարարական այս գործի կազմակերպիչն է համարվում Ավան յուզբաշին, որի այս գործունեությունը չէր կարող շատ ավելի վաղ սկսված լինել, քան Շախորդ տասնամյակի երկրորդ կեսն է, քանի որ ժամանակագրական տեղեկություն կա նաեւ այս առօրիվ: Մի հիշատակագիր նշել է, թե «Ավան յուզբաշին որ եկաւ, Ծոշվա քարըն մտաւ, սահբ խուրուց իլաւ, Ո՞նչ (1717) էր»¹⁶:

Ոգեւորված, խանդավառ «խուրուց իլած» Ավան յուզբաշին քարազլումը պարսպապատելով ամրացրել էր, դարձրել Արցախի հզոր բերդերից մեկը: Բայց ոչ միայն այսքան: Յնագետ ուսումնասիրողները ժողովրդական ավանդության հետքերով գնացել, հետազոտել են բերդամուցի հարավային պատի առանձին հատվածներում պահպանված կարաները եւ հայտնաբերել շինությունների մնացորդներ, որոնց մի մասը վկայում է, որ «կարաներից» մեկը, քավական մեծ տարածություն ունենալով, պահպանում է հետքերը ճարտարապետական այն շինությունների, որոնք ավանդության մեջ հորջորջվում են Ավան յուզբաշու պալատներ:

Քարերախտարար մեր ծեռքի տակ է այդ շինություններն ավելի վաղ ժամանակ, ուրեմն այդ շինություններն առավել քարվոր վիճակում տեսած Սարգիս Զալայանց արքավիշտկոպսի վկայությունը: Նրա տեսածի մկարագրությունից, որին հավատ չընծայելու ոչ մի հիմք չունենք, մեր առաջ հաւանում է ճարտարապետական շրեթ եւ ավարտուն կառուցման մի համալիր, որը պատիվ է բերում Արեւելից կողմանց հայության մշակույթին եւ պիտի ափսոսալ միայն, որ բնույան դաժան տարերքը, հյկ թերեւս նաեւ մեր ազգային մշակույթի նոլեռանդ թշնամիների ազդեցությամբ, պարզել, համարյա անհետացել են:

Ահա թե Զալայանցն ինչպիսին է տեսել համալիրը: Ասում է. «Այս պատի (վեմ է կոչվում Կարկառի ծորի վրա իշխող ժայռենին բարձրությունը.- Բ.Ռ.) դուրս ցցված մասում, դժվարին գոտուոց դեպի արեւելք է Մելիք Ավան մեծանուն իշխանի բազմաթենյականց ամրոցը կառուցված եռահարկ ամուր պարսպի ներս, անտաշ քարերով, որից (պարսպից) ներս, ասում էին, կան եռահակ պալատ՝ իր պարագաներով, առանձնարան, արգելանոց ու հյուրանոց: Ուզում էի անձամբ տեսնել նույն շինությունը, որի համար էլ մեծ դժվարությամբ հասաւ առաջին պարսպին, որ կոչվում է նախամարտկոց եւ այնտեղից էլ վերին, միանգանայն դժվարին բերդին... Ես, չնայած վախեցաւ եւ չի կամնենում նրանից անցնել, սակայն հոյակապ թերդի մերը եւ ուղեկիցներին հորդորներն

ինձ ատիպեցին առաջ գնալ: Արդարեւ, հոյակապ էր շինությունը եւ շքեր արժանի դիտումի ու հիացումի: Նրա բոլոր կառուցմերն ու սենյակները գննելուց հետո այնտեղից հյա գտնը...»¹⁷.

Այսպես, ուրեմն, Քարազլուկ Ծոշի բերդն իր պաշտպանական դերը կատարել է 18-րդ դարի սկզբնարին Ավան յուզբաշու գլխավորած հայրենապաշտպան մաքառություններում: Կատարել ոչ միայն բնությունից ստացած պաշտպանական դիրքով ու հարմարություններով, այլև որանց գումարված, Ավան յուզբաշու գլխավորությամբ նղածին գումարված («նոր շինած») բերդապարիսպներով ու մնացած շինություններով:

Բայց մի՞թ ենց այս էլ եղել է Ծոշու բերդի ծննումը կամ հիմնադրությունը: Վրացանում, որի տեղ հայեր դարեւ շարունակ իրենց ազգային ու հոգեւոր ինքնությունը համառորդեն պաշտպանելու համար բերդեր էին ստեղծել ամենուրեց լույնիսկ դրա համար ոչ մի հարմարություն չունեցող վայրում, բերդեր էին դարձրել նույնիսկ ենեթեցիները: Քիշենք Անարասն ու շատ ուրիշները: Դիզակի ծայր հարավ-արևելսյան գլուղերից մենց Խցարերորդ, որ «Եկեղեցաքրիոն» փոփոխակն է: Այս, աշխարհին ամրոցներով կնքած արցախահայն ինչպես կարող էր աշքարող արած լինել մի այնպիսի բերդատեղի, որպիսին Քարազլուկուն էր ողջ նահանգում եղած պաշտպանական կետերից ամենահարմարն ու ամենափոքը: Նման բան չէր կարող լինել: Այս Քարազլուկ-ամրոցատեղը ինը ժամանակներում էլ հր դերուն է եղել, մանավանի արարական տիրապետության շրջանում, հետազա դարերի խառնակ ու դժվար ժամանակներում, սեղուկ բուրքերի, մողոլների եւ սրանց հետքերով եղած սեւ ու սպիտակ բուրքերի, որութենիք դժմ իր ինքնապաշտպանական կրիվներն առած արցախահայի կյանքում:

Նման նեպերում բարձրանում է օրինական հարցը, իսկ ո՞ւ են հիմքերը, ինչպես կապացուցեք: Նետքերը չեն կորել անհետ. 1981թ. Ստեփանակերտի կենտրուատեհինիկան գործարանի համար օժանդակ տնտեսություն ատեղներու աշխատանքներ կատարելիս Ծուշվա բերդապարսպի կողքին հայտնաբերել են «խաչքարեր, տապանաքարեր, ...ին բնակավայրի հետքեր»¹⁸: Խաչքարերից մեկը նև (971) բվականից է, մյուսը ՉԱ (1252)-ից¹⁹. Եթե ծիշու է այս անենց, ապա անհերետիկում ապացուցված կարելի է համարել, որ Քարազլուկ բերդամուց է եղել հնագույն ժամանակներից ճ այդպիսին մնացել է ողջ միջնադարում²⁰: Կարեւոր չէ, որ հետագայում կառուցված քաղաքի ներսի տարածքից նման հուշարձաններ կամ նրանց հետքերը չունենք: Այս հետքերը ոչ ոք չի կմտուի մինչեւ այսօր, եթե նույնիսկ նոռանանք էլ, որ նրա բնակչության բուրք մասը, հակառակը, պետք է ջնջեր ամեն մի հետք փորձելով հավատացնել, թե քաղաքն ու նրա բերդը 1750-ականներից այնտեղ առաջին անգամ ուրց դրած Փանահ խանի ստեղծածն է, իսկ նրանից առաջ եղել է ամայի տարածություն:

Դիմա արդեն հնարավոր պիտի լինի կատարել բժախնդիր ուսումնասիրությունը: Քաղաքն ազատագրված է Փանահ խանի ժառանգներից, կարելի է հնավատական հետազոտություններով պարզել, թե ինչ է եղել Քարազլուկի ողջ տարածքում, չէ՞ որ պարսպապատերի տակ այս ու այնտեղ պահպանված խաչքա-

բերի թեկողներն ու ճարտարապետական հուշարձանների մնացորդները երկնքից չեն ընկել, այլ ինտերն են այն չընդիշված, շարունակական գոյության, որ բերդամբոցն է ունեցել այս վայրերում տիրություն արած Առաջահիկ տերերի շնորհիկ: Կերպերն երիտասարդ ուսումնասիրող Սլավա Սարգսյանը հրապարակել էր հոդված, որով փորձում էր պացուցել, որ միջնադարյան մեր գրավոր ադրբյուրմերում հիշատակվող Կարկառը նույն այս բերդամբոցն է եղել, ինտագայի Ծոշի-Բարագլուխը: Կիրակոս պատմիչը Յասան-Շալալ մեծ իշխանի հայրենի նշանավոր կետերից մեկն է համարում Կարկառը, ցավոք, առանց հիշելու, թե այն որտեղ է գտնվում: Սակայն անունն ինքնին հուչուն է, որ պետք է կապված լինի Կարկառ գետի հետ:

«Կարկառ» նշանակում է «քարակույտ», «քարեղեն» տարածություն», «քարակոփ պատվար»²¹: Այս անվան հաստատ տեղադրյանը մեծապես նպաստում է Կարկառ գետը, որն իր ակունքներից մինչև Ծոշի թերդը եւ նրանից էլ վար, իր անվան տարածան համար լուրջ հիմքեր է տալիս:

Տասնամյակմեր առօս ես ցույց էր տվել, որ իին Յասանամյանի տարբեր վայրերում, ինչպես և Արցախում եղել են Կարկառ անունը ունեցող կետեր, որոնց մեջ անունը կապված է եղել տեղանքի քարքարոտ, ճայռեղեն լինելու եւ ոչ մի դեպքում «Գարգար» ցեղանվան հետ²²: Ցույց եմ տվել, որ մոլորդույուն է Արցախի Կարկառ գետի, Կարկառ բնակավայրի եւ նման տեղանունները կապվել իին բուն Արցախի «Գարգար» ցեղանվան հետ եւ այս ճամապարհով սարքեր տեսություններ, որոնք գտնելուրեն աղավաղում են պատմական իրականությունը: Վերջին տեսակի թյուրատեսությունների շատ է տուրք տվել Մակար Բարյուտարարանցը: Մակայն, ցավոք, նույնը շարունակել են նաև նորերը, որոնց համար ոչ մի դժվարություն չեղ ենթակայացնում: այսպես կոչված, «Գարգարացոց դաշտը» տեղափորվել մեկ Ուտիքում, Պարտավի շրջակացուց²³, մեկ էլ Արցախի ծայրարեւելյան Մուշանք գավառում, Միջի-Մուտզանի տեղ²⁴: Նշան թյուրմացության համար իիմք է հարայեցվում Թուման Արծրունու հաղորդացմի տեղեկությունն այն նասին, որ իբր, Պարտավը գտնվում է Գարգարացոց դաշտում կամ Գարգարացոց երկրում²⁵: Մակայն տեղական կամ այս վայրերին իրապես ծանոթ որեւէ հեղինակ նման թյուրմացություն իրեն թույլ չէր տա: Առաջին անգամ Մովսես Խոյենացը Պատմության մեջ է հիշվում Գարգարացոց դաշտը (գիրք Բ, 85) այն էլ բուն-անդրկության Աղվանքում, ուր Յայոց Տրդատ քաջակիր կռվում էր հյուսիսային ցեղերի հետ եւ «միջակոտը արար գրագաւորն Բասլաց»:

Այս թյուրմացության էր հարում նաև Լեռն կարծելով, թե «Գարգարացոց» անունը համապատասխանում է Մեծ եւ Փոքր Սղնախների տեղին»²⁶:

ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արցախ, 15 131-132:

2. Պողո, էջ 60, նույնը նաև Լեռ, երկերի ժողովածու, երրորդ հատոր, գիրք Երկրորդ, Երեւան, 1973, էջ 267:

3. Մատենադարանի ծեր. № 8211, թ. 359թ-360ա: Հմմտ. «Ժե դարի հայերն

մատագրերի հիշատակարաններ, մասն առաջին, Երեւան, 1955, էջ 384:

4. Սատենադարանի ծեր. № 4375, թ. 264Ա, Բ: Հմմտ. Աշ. Յովհաննեսյան, Դրվագներ Խալ ազատագրական մտցի պատմության, գիրք Երկրորդ, Երեւան, 1959, էջ 24 (արտագրված է պակասավոր եւ սխալով. Վիշ. «Ի գալու որ կոչի Ծուշոյ» «Ի գաւառը որ կոչի Ծուշոյ»):

5. Ս. Բարխուտարյանց, Արցախ, էջ 132:

6. Անդ:

7. Այսպես են մտածում նաև սույնատիպ հարցերին խանճված ու խառնվող աղբեցնեցիք: Յշում եօ, որ բանաստեղծ, իրենց հսկրիդային հանրագիտարանների գլուխով խմբագիր Ռասուլ Ռազի թերթերից մեկում գրել էր, թե իրենց «Ծուշա» բանակը հարեւան ու եղրայր հայերը վերցրել, իրենց լեզվին հարմարացնելով, դարձրել են «Ծուշի» եւ «Ծոշ» եւ վերջինով էլ կնքել իրենց նորաստեղծ գյուղը: Լավ է չգիտեր Լեոնի կրտսերի տեղը, թե չէ, կպաշէր նրանց, կասեր իրենց հեղինակավոր գիտնական է կուլ:

8. Տես «Քա-ոլոսական հարաբերությունները 18-րդ դարի առաջին Երևանամյակում» (Խորություն՝ «Քա-ոլոս»), հ. II, մասն III, Երեւան, 1967, էջ 56, 57, 62:

9. Անդ, էջ 62:

10. Անդ, էջ 63:

11. Անդ, էջ 71:

12. Անդ, էջ 286:

13. Անդ:

14. Անդ, էջ 186:

15. Անդ, էջ 188:

16. Աշոտ Յովհաննեսյան, Դրվագներ..., Բ, էջ 609: «Խուրուց» թքը. «ոգեւորություն»:

17. Ս. Զալալյանց, Բ, էջ 247: Մեջ են բերում հեղինակի գրաբարի աշխարհաբար վերաշարադրմամբ (Բ. Ռւ.):

18. Ծահեծ Ակրոյշյան, Լեռնային Պարաբաղի պատմաճարտարապետական լույսարանները, Երեւան, 1985, էջ 209:

19. Անդ:

20. Արցախի միջնադարյան բերդամբոցներից մեկը Շիկաքարը, ինք ի՞ այստեղ պիտորեմ, որպիսի վարկածը կարիք ունի հիմնավոր ապացուցի (տես Բ. Ուլուբարյան, Ալուցարան, Երեւան, 1991, էջ 330):

21. Տես «Սոր բազիկը հայկացեան լեզուի», հ. առաջին, Վինետիկ, 1836, էջ 1071:

22. Բ. Ուլուբարյան, Յայոց լեզվի հյուսիս-արեւելյան եզրի, եզերապատ Արցախային լույսարի եւ հայակից հարցերի մասին. «Լ74», 1968, № 1, էջ 55-60:

23. Խ. Ածոնց, Արմենիա և Յուսուկ Յուսուկ, Երևան, 1951, ստ. 424.

24. Ս. Երեմյան, Յայոց լեզվի պատմաճարտարապետական լույսարի և պատմության, «Գարգարացոց» դաշտի տեղադրությունը. «Լրաբեր» 39, 1976, № 7, էջ 74-75 եւը:

25. Տես Թովման Արծրունի, Պատմություն տանն Արծրունեաց, 1887, էջ 177:

26. Լեռ, 4, գիրք Երկրորդ, էջ 140, ծան. 3: Սա էլ Կարկառի հովիտն էր ընդգրկում, արսիմեն գիտնականը խարկում էր «Կարկառ» եւ «Գարգար» բաների հեռավոր նույնությունից:

ԵՐԵ ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՈՍՔ

Վերջին տարիներին որոշ հետագույններ սկսել են մի առանձնակի (դժբախտաբար, գիտության տարրական կարգ ու կանոնը ուսուահարելու գնով) ռեվլոգիայի ենթարկել այն ամրող աղբյուրագիտական ու հայագիտական գրականությունը, որ գոյացել է հայոց, վրաց ու աղվանից գրեր ստեղծող Մեսրոս Մաշտոցի գրություններության շուրջը: Պերում են, թե սուս է Մաշտոցի կենսագիր Կորյունը, Մաշտոցը չէր կարող գիր ստեղծած լինել վրաց համար, քանի որ Վերը ըստիվական գիր է ունեցել Մաշտոցից դեռ շատ առաջ: Ոմն Վ. Դուկայանը է գտնում է, որ Կորյունին չպետք է նիմիտ վեր հավատապ. Մաշտոցը շատ-շատ կարող էր Աղվանքում վաղուց գոյություն ունեցող գիրը ճշակած լինել կամ էլ լավագույն զենքում, նրան ավելացրած լինել մի քանի բաղաձայն տառ:

Ըստ Երեսությին պետք է գոհանա նրանով, որ գրնե կասկածի տակ չի առնվուա հայոց գրերի ստեղծումը մեր մեծ վարդապետի կողմից եւ, այսուհանդեք, առաջ քաշել մի օրինական հարց, եթե սուս է Կորյունը, եւ առհասարակ չպետք է հավատան նրա հաղորդած տեսելություններին, ապա որտեղից՝ կամ ի՞նչ հնարքով պետք է իմանանք, որ ինձերորդ դարի սկզբին գիր են ունեցել նաև Վերքն ու Աղվանքը:

Հարցը հարց, բայց դեռ շարունակվում է Մաշտոցի գրությունների համարին, եւ ահա Ասրդիս Պետրոսյանն է նրան ծեռնարկել է իր մի հորմանում («Գարգարացու դաշտու» տեղադրությունը), որը տպագրվել է Հայկ, ՍՍԴ գիրո. Ակստենիայի «Լրաբեր համարակական գիտությունների» հանդեսի 1976թ. 7-րդ համարում (էջ 67-76):

Յովկածի անունն է «Գարգարացու դաշտու» տեղադրությունը», սակայն բայց ետք այն շատ ավելի կարենու հարցերի է անդրամասնում, որոնցից մեկն է՝ Մաշտոցի գրությունների պահպանի շրջամը: Թե չէ, ի՞նչ մեծ քան է «Գարգարացու դաշտու» տեղադրությունը: «Գարգարացու դաշտու» տեղանունը մեր միջնադարյան հեղանականության ներկայումս են հիշատակել Մովսես Խորենացին (մասն կրկնում է «Աղվանից աշխարհի պատմությունը») և թուվնա Արքունին: Եթե առաջինի երկում այն կոմիտեն տեղի հետ չի կասպահ, ապա երկրորդ իշխում է մի այնպիսի կապակցության մեջ, որից հեշտությամբ կարենի է կահանել նաև մոտավոր տեղը: Թուվնան տեղեկացնում է, որ 850-ամյան թթ. արարական գրաւակը Բուլան, Վիրքի հարեւանությամբ լեռների վրա բնակվող ծանարմներից ջարու կրելուց հետո, «իջան է դաշտ Գարգարացուց և երեալ նոտան ի քաղաքն մեծ Պարիա», որպեսզի այնտեղից էլ գնա Արագածի վրա նրա հարակային մասի տեր Արտ Մուսե Առանշահիկի դեմ կովելու:

Այստեղոց դմվար չէ եղբակացնել, որ «Գարգարացու դաշտու» գտնվել Շանարիայի ու Պարտավի միջև, այսինքն՝ Պարտավից կյուսիս-արևելուտը:

Բայց Ո. Պետրոսյանին ծեռք չի տակաւ այսպիսի տեղադրությունը: Նա ուզուու է հիշյալ դաշտը, նրա հետ էլ գարգարացիներին (այսինքն՝ աղվանական այն ցեղն, որի լեզուի հիմքի վրա Մեսրոս Մաշտոցն աղվանական գիր է ստեղծել), բռն աղվանական թագավորությունը եւ այլ տեղադրել Պարտավից արեւելք. Մեծ Հայքի Արցան նահանջի մուշանք զավակում. Այդ նպատակով էլ նա հայտարարում է, թե «Գարգարացուց դաշտու» հենց այժմյան Միջի հարթավայրն է որ կա:

Ս. Պետրոսյանի հոդվածում ոչ մի անգամ չի հիշում, որ Միջի հարթավայրը Սոյ-

լանի դաշտն է, սա էլ Սոյիսանը զավակուր, որ մտնուած էր Արցանի կազմի մեջ, Արցանին լի հայաստան էր իր հայ բնակչությամբ ու հայոցն նահարական հարսությամբ: Զի հիշում, որովհետեւ հակառակ դժբարուս պետք է պատասխան տար հայությունը կազմում է անկարելի կիններ փրկվել անարդյուր հայտարարություններով ու գուշակություններով: Նա պատմական արժանահավատ ադրբյունների տեղեկությունների կողրից վազանց կատարելով պնդում է, թե գարգարությունը բնակվում է իմ Սիյի հայրակայում, եւ Սաշտոցն էլ այնուել է գիր ատեղին Օրուց համար: «Աղվանա-մագրութական թաղումների նասոց գավառը, որտեղ բնակվում էին գարգարացիները, ցածրադի մի շրջան էր նոյնին Արարաւայան եւ Վրաց դաշտերի համեմատության»: Գուման է Ս. Դաշտոյանը հիշելով, որ մեր պատմիներն ասել են, թե Մաշտոցը «առեւա հօաներ խաչարին եւ հասաւ ի թագավորական տեղինան» (Կորյուն), կամ «Եւ ինքն յլուար առ Արավացն թագավոր Նորա» (Խորենացի): Ուրեմն, խոսք գուման է ցածրակի Արավանքի մասին..., իսկ Մեսրոս Մաշտոցը եղել էր վերջինիս այսրարաքսյան նաւու բռնող այժմյան Միջի հարթավայրում, քանի որ նա չէր կորել-անցել Անդրկովկասի տառ երևու մեծ գետերից եւ ոչ մեկը (Խակառակ դեպքում, այդ փաստը լուրջան չին սատնի հորենացին եւ, առավել եւս, Կորյունը), («Լրաբեր», 1976, № 7, էջ 75):

Այսօրինակ «տրամաբարանությամբ» առաջնորդմելով պետք է մտածենք. թե Խորենացին ասել է Մաշտոցը Մովսեսի (Արցանի) բնակիների համար աղվանական գիր ուղղեցին: Իսկ քանի որ Խորենացին, խոսելով Մեծ Հայքի միասնական թագավորութական կազմակերպման օրերի մասին (գրեին գոյստից շուրջ 600 տարի առաջկա իրություններ), ասել է նաև, թե այդ թագավորության սահմանները նաև հայոց երնի-լուկան սահմաններն են (գծված «օգեգերք հայկական խօսիցմ»), եւ այդպիսի սահման Արցան-Ստիրի կողմներում Կուր գիտն է եղել (Վաղարշակը «զարիելի հիւսիսոյ կողմանն էաբդէ»... առ մեծ գետում, որ հասան գրաշտն մեծ, որ անուանի Կոր...): Խոտեապես, դրսու է զայխ, որ Խորենացին պիտի սասա լինի, թե Մաշտոցը եկավ Մովսեսին և այնուել հայ բնակչության համար ստեղծու աղվանական գիր:

Մի կողմ թողնենք այս անհեթերթությունը եւ փորձենք պարգև, թե Խորենացին ու Կորյունն ինչպէս են «լուրջան մատնել» Մաշտոցը Կուրու անցնելը:

Քի առաջ Խորենանը, որ Մաշտոցի Հայաստանի Աղվանք կատարած երթի նաւուն Խոսելիս մեր պատմիներն հակառակ նշուու են Հայաստանից իջնելու համագնքը, որ այսուել, ուր զմացել է Մաշտոցը, մի ցածրադի շրջան է եղել, իսկ հմանքը տարբերակմերից ամենաածածրացիդը Մովսեսը մասնաւարդար է հանարկու այսինքն Ա. Պետրոսյանի կողմից: Իսկ սա էլ թագական է, որպեսզի նա «երալ-հօանելը» եւս ճանաչի անառարկելի մի փաստ իր վարկածի համար:

Աւենք, որ ադրբյունների հայկաստմամբ Աղվանա-մագրութական թագավորութեան աթոռանիստն է եղել Չողը կան հետագայի Ներքենդը: Եվ այս էլ ընդունված է իին պատմությանն իրազեկ մասնագետների կողմից: Սական Ս. Պետրոսյանին այս համգամանքը եւս ծեռ էր տալիս: Նա փնտրում-գտնում է նոր ցածրադի շրջան, որ իր կարծիքով Մովսեսն է:

Ըստ Երեսությին Ս. Պետրոսյանի պատկերացման՝ ցածրադինը ու բարձրադինը որոշվում է պատմին փակակած քարտեզից կամ այն աշխարհագրական կամու ընդունած վիճակով, այլապես նա կիրանար, որ Երե կուր կամ Երասխը լիշերը լիցելուց հետո պետք է հոսք անցնի հայ հորդացին եւ այսինքն Վար իշ-

ԱԵ-Ն-ՀՅՆԵ-Ն, որպեսզի հասնեն ու թափվեն Կասայից ծովը, ապա Չողջ կամ հետագայի Ներբենքը գտնվում է Կասայից ծովի անմիջական ափին (Չողջ կամ Դերբենդի պարիսարը մի ճայրով մխրճված է ծովի մեջ), իսկ Կասայից ծովը օվկիանոսի մակարդակից ցածր է 28,5 մետրով:

Մաշտոցի երի մասին խոսող մեր պատմչները, ճիշտ որ, ոչ մի խոսք չեն ասում մեր մեծ վարդապետի կողմից Կուրդ կամ Երասխը՝ Անդրկովկասի այս երկու մեծ գետերի ամնեներու մասին: Ավելի Շիշու միահան Կուրդը, քանի Երանք գիտեին, որ Արարատյան նահանգից Երասխն անցնողը կը մկներ հարավային Դայաստան կամ Պարսկաստան, քայլ ոչ Աղվանքը: Կուրդ մասին եւս որոշակի ոչինչ տես հաջորդել, Երևի մտաժելով, որ Կուրն անցնելով ոչ մի առանձնակի հերոսություն է, ոչ է գրեի գյուտն ու տարածում առաջ մղող հանգամանքը:

Բայց չէ՝ որ մեր այդ նույն պատմչներն աներկայորեն հայտնում են, որ Մաշտոցը զնաց Աղվանք, բուն Աղվանք, այն Երկիրը, որը դեռևս ուներ իր սեփական թագավորությունն ու Եկեղեցին: Իսկ այդ Աղվանքը, - նրանք հաստատ դիտեին, - մինչեւ մարզպանությամ հիմնադրումը (428 թ.) Դայաստանի հետ սահմանակից էր Կուր գետով: Եվ չէ՝ որ հենց ականատես Կորյունն է պատմում, որ Աղվանքի թագավորանիստ տեղում գործն ավարտելուց հետո «Զեննատու եւս եղեալ նոն (Մաշտոցին - Բ. Ու.) սրբամատոց վարդապետութեանն ի Բաղասական կողման սրբոյ Եպիսկոպոսին, որում անուն Մուշեղ կոչեին, հրաժարել ապա եւ ի թագաւորեն, եւ յեպիսկոպոսացն եւ յամենայն Եկեղեցւոյն Աղուանից»:

Այսքանն ասում է Կորյունը:

Իսկ Խորենացու տվյալներով՝ Մաշտոցը Բաղասականում քարոզությամբ էլ է զրադշուն եւ չարյաց Վարդապետներից «գրազում յուղդութիւն ած, եւ զսակաւսն անդարձն յիշխանութիւն Յոնաց հալածական առնե»:

Բաղասականը բուն Աղվանքի նահանգներից մեկն էր փրփած Կուրի ձախակինքով, Կասայից ծովի արեւմտյան ափին: Յոնաց իշխանությունն էր, ինչպես հայտնի է նաև Ս. Պետրոսյանին, տարածված էր Արվանքի ամենայիշտիսային կետը հանդիսացող Չող-Ներբենդի կապամից հյուսիս: Իսկ չարյաց Վարդապետներին մինչեւ Յոնաց իշխանություն հայլածելու համար Մաշտոցը ոչ միայն պետք է Կուրն անցած լիներ, այլև պիտի շարժմէի առնվազն մինչեւ Չող-Ներբենդ:

Այսպիսով պարզվում է, որ Մաշտոցն «Անդրկովկասի այս երկու մեծ գետերից» նեկը՝ Կուրը իրոք անցել է, իսկ «Խորենացին եւ, առավել եւս, Կորյունը» այսակի մի փաստը լուրիքամ մատնելով հանդերձ հանգամանորեն պատշում են Մաշտոցի անդրկուրյան գործունեությունը:

Դետեափս անուրդ գրադումը է այս տեղեկությունների առկայությամբ Մաշտոցի Սուլիանք տանեմ ու այնտեղ երեք չապրած ու գոյություն չունեցած զարդարական բնակչության համար աղյանական գիր ստեղծելու տալու վարկածը:

Ես այստեղ քննության առաջ Ս. Պետրոսյանի հոդվածում տեղ գտած վարկածների միայն մի մասը: Սակայն այնտեղ իմի են հակարված հայականության մեջ քննադատված ու մերժված մի շարք թյուրիմացություններ, որոնք, եթե առանձին առանձին վերցուած արտակարգ վտանգ չին ներկայացնում, ապա իրար կցնցվելով եւ ենթարկվելով հեղինակի քահանա մեկնարանություններին դուռ են բացում հակագիտական ու հակապատմական նորանոր մոլորությունների առաջ:

«ՄԱՇՏՈՑ» ԳՐՁԻ ԼՈՒՅՍ ՈՒ ՍՏՎԵՐՆԵՐԸ

«Ասում են՝ Արտ. Մարտիրոսյանի «Մաշտոց» գիրքը թարգմանվում է նույնություն ունեցող համար կամ ինստիտուտի գիրք. աշխատակից, զիմիական դիտությունների թեկնածու Յակոբ Մանասարյանը: - Մինչդեռ մեր կարծիքով, այդ գրքում կան թերություններ ու թյուրիմացություններ, որոնք անպայման մուրարության կմղեն հայագիտությունից եւ առհասարակ հեռավոր ժամանակների լիրականությունից անտեղյակ ընթերցողներին...»: Եվ իշխելով, որ գրի մասին մամուլում, այդ թվում նաև «Գրական թերություն» հրապարակվել են նաև գրախոսություններ, որոնք միակողմանիորեն դրվագնել են միայն նրա արժանիքները. Սանասարյանը կանգ է առնում այն հարցերի վրա, որոնց քննության մեջ, իր կարծիքով, տեղ են գտել թերություններ ու թյուրիմացություններ:

«Գրական թերթի» խճագրությունը խնդրեց գրող-պատմաբան Բագրատ Ալյուբարյանին մեկնարաններու ընկե. Սանասարյանի նամակը: Ստորեւ տպագրում նրա խոսքը:

Կերշին ժամանակներս բնական ու տեխնիկական գիտությունների շատ մասնագետներ բուռն հետաքրքրություն են ցուցաբերում մեր ժողովորի հին ու լոր պատմության եւ մեր Մշակույթի ամենատարեր բնագավառների նկատմամբ: Գրում են իրենց կարծիքները, մասնակցում զանազան հարցերի քննարկումներին: Դա հաճախ զայրացնում է «մաքրուր» գիտության բուրմերին, որոնք ուինմերով են ներդումուն «դրսի» ամեն միջամտություն՝ այն համարելով դիլետանական: Իբր, այս միջամտուները հին լեզուներ չգիտեն, բայց դառնում է ոչ այնքան որոշիչ հանգանակը: Լույս են տեսնում նորանոր թարգմանություններ՝ իրենց գիտական մեկնարանություններով, որոնք անպայման փոխարինում են բնագրերին, հակառակ դեպքում չին թարգմանվի:

Բայց, նախ ասեմ, որ դիլետանությունը միայն դրսեների չէ: «Իիետանմտներ լինում են նաև նեղ-մասնագիտության շրջանակներից մերս: Հարիներ ու տասնամյակներ շարունակ զբաղվում են նիեւնույն հարցով՝ միշտ նևալով նույն անձարակը, պատահաբար նեղ-մասնագիտական ասպարեց ընկածը: Իսկ հին լեզուների իմանալը քանի գնում, դառնում է ոչ այնքան որոշիչ հանգանակը: Լույս են տեսնում նորանոր թարգմանություններ՝ իրենց գիտական մեկնարանություններով, որոնք անպայման փոխարինում են բնագրերին, հակառակ դեպքում չին թարգմանվի:

Եվ, վերջապես, եթե բոլոր ժամանակներում էլ այդպիս ուղենիվակիչ կանգնեցրած լինեին մասնագիտական կրթություն ու կոչում չունեցողների հեմ, աշխատակից շատ գիտություններ չին ունենա այն մակարդակը, որ այժմ ունեն: Չէ՞ որ նևագույն քաղաքակրթությունների ուսումնասիրնան, ասենք հենց Միջագետքի կամի բնետագրերի հայտնարերման, նույնիսկ վերծանման հայտնագրությունները մի զգայի մասով կատարվել են «դիլետանությունների» ձեռքով:

Սա, իմիջիալյոց, բայց նաև ըստ եռթյան, քանի որ ինքը անձար անկարություն կոնկրետ հայագիտության հարցերին: Նրանց համար երկու անգամ երկու անդամական նորանոր մոլորությունների առաջ:

միշտ հավասեր է չորսի: Եվ երբ առաջարկում են իրենց այս չափանիշը, որանից նեղանալ կարող են միայն այն նեղ-մասնագետները, որոնք չեն խորշում՝ աղյուրագիտական տեղեկություններն ու պատմական փաստերը գուշակություններով ու ինքնարուխ ենթադրություններով պարուրած եւ, բնականաբար, նրանց խկական պատկերներն աղավաղ ներկայացնելուց:

Դաշնապետ Արտաշես Մարտիրոսյանի «Մաշտոց» գրքին, պետք է նշեմ, որ հեղինակն օգտվել է Մաշտոցի կյանքին ու գործին առնչվող վիրժարի գրականությունից ու աղյուրներից, նաև՝ ոչ մի կապ ու առնչություն չունեցող այլազան եւ այլալեզու նյութերից, ստեղծել մի գիրք, որն արժեքավորում է հայերեն գիրք իր ժամանակի եւ հայոց բազմադարյան դժվար ճակատագրի մեջ: Դետարքիր է հատկապես հեղինակի լեզուն՝ աշխույժ ու խաղացելուն:

Չեն կարծում, թե գրախոսներն այս գրքի արժանիքների մասին խոսեին չափը շատ են կորցրել: Ցավալին այն է, որ միայն գովարանությամբ տարված, շոշանցել են գրքի ակնհայտ, թվում է՝ նույնիսկ ոչ մասնագիտական աշբի համար տեսանելի մեջ ու փոքր թերությունները: Այդ պատճառով էլ ավելորդ է ասել, որ ըստ Սանասարյանի դիտողությունները միանգամայն տեղին են ու արդար:

Գրախոսները չեն նկատել «Մաշտոց» հետազոտության պակաս-պատճենաց այսօր մեր միջավայրում մինչեւ վերջ արդար ու ծշմարիտ խոսք շատ քիչ է ասվում: Կորպւել են գիտական ու գրական չափանիշները: Անջիղ ու ժանձար մի շարադրանք համարվում է գիտական սիրտան: Պարզապես անգրագետ մի վեա գնահատվում է որպես սովորակայ վիպագրության վերելքը խորհրդանշող երեսույթ: Զախողանքներն ու խոտանը նշավակող նյութըներ համարյա թէ չեն լինում, եթե նկատի չառնենք այն դեպքերը, որոնցում անպայման նկատելի են անձնական շահագրգության եւ ոչ թէ գրական կամ գիտական բարձր սկզբունքների թելադրած սկզբունքները, մղունները:

Բայց այս տրտունջը հեռուն կտանի:

Ինչ Յ. Սանասարյանի դիտողությունները գրքի շատ էցեր են ընդգրկում Նրանցից առաջինը վերաբերում է այն հատվածին, ուր խոսք է գնում հայոց հնագույն պատմության հարցերի շուրջ: Մարտիրոսյանը Հայաստանի ու հայերի նախին առաջին հիշատակությունն է համարել Ղարեն Ս-ի Քեհիստունյան արձանագրության տվյալները մ.թ.ա. 6-րդ դարի վերջից:

Սանասարյանը հայոց է տախի ինչո՞ւ, ինչ նախընթացի նյութե՞րը: Չէ՝ ու ասենք, հենց վերջերս լույս տեսած «Դայ ժողովրդի պատմության բրեստուած տիպայում» Նրանք գրադարձնում են ավելի քան հայոցու է:

Անդրադառնալով Ուրարտու-Հայաստան եւ ուրարտացի-հայ խնդրին, Մարտիրոսյանը գրել է: «Ուրարտացիների փոխարինելու եկան հայերը, որոնց ժառանգեցին նրանց երկիրն ու նշակութը» («Մաշտոց», էջ 27):

Ինչպես տեսնում եց դարձայ հայերի եկվորության հերթված, ամիհմն տեսակենտ է արծարձվում, - նշում է Սանասարյանը; - Եվ գրքի տարբեր փասերու հետեւղականորեն առաջ է նդկում այդ տեսակենտը: Ի՞նչ նպատակով:

«Ուրարտացիներին փոխարինելու եկան հայերը»:
Արտ. Մարտիրոսյանն այսպես է մտածում ոչ միայնակ: Գիտական շրջան

ենր կան, շրջանառության մեջ են մենագրություններ ու գանձան հրապարակումներ, որոնց համար նման հայտարարությունները դասագրքային ճշմարտություններ են: Բայց չկա նեկը, որ գաղտնիքը պարզի մինչեւ վերջ, թէ՝ եր են տեսնել այդ փոխարինելու, հանձնում-ընդունումի իրողությունը, կամ այն ո՞ր պատմական աղբյուրն է իրենց, միայն իրենց ականջներին փսփացել այդ շատ կարեւոր իրողության մասին, որ այսօր իրենք այդպես տեղյակ են, լուսավորված, իսկ մենք եւ բոլոր մնացած մահկանացուները խարիսխուն ենք անտեղյակության ու խավարի մեջ:

Մարտիրոսյանի գիրքը նվիրված է Մեսրոպ Մաշտոցի կյանքին ու մեծագործությանը: Կարելի էր սպասել, որ այնտեղ քննվեին միայն այդ թեմայի հետ ամփոփակն կամ գոնեն հեռավոր կերպով ամնչվոր հարցեր: Սակայն հեղինակը ուզ մատուցում է հարցակններ, որոնց ծայրերը հասնում են, ինչպես տեսանքը թիւ առաջ, հայ ժողովրդի ու նրա լեզվի ծագման ժամանակները, նաև՝ աշխարհի բազմաթիվ ժողովրդների ակունքները, նրանց լեզուների ու հավատալիքների, գրերի ու նշանակությանին աշխարհի ոլորտները:

Ցավիք թէ հարկ լինի ապացուցելու, որ այս բոլորն ավելորդ է, ծանրաբեռնող ու ղիսավոր մրագոնող: Մանավանոր, որ դրանց հարատարակումները կատարվում են ղիսավորի հաշվին կամ, համեմայն դեսպա, իբրև նրա վիրա գտնվող կարկատաններ:

«Թէ ինչ ծագում ունենի նրանք (հայե՞՞ր թէ՞՝ ուրարտացիները - Բ.Ռ.) հարկ յիւս այստեղ քննել միայն հայոց կազմավորման մեջ դեր խսլացնի բաղադրիչները»: Եվ անմիջապես հարցականի տակ հիշվում են հայերի, այսպես կոչված, բաղադրիչները՝ սակ-սկյութեմները, փոյուգացիները, արմենները, հայասացիները... «Հայաստացիները թերեւս այս օրքանն է, Արմե-Ծուարիա, - թերեւս այստեղ էին ապրում առաջին հայերը, իսկ հայ եւ հայ զուգորդությունը ինքնին յատ է հրապուրիչ: Ինչեւ, թող պատճարանները վշտեն...»:

Այս, իբր թէ, մանր ու անկարեւոր հարցերը հենց այնպես իրար կողքի շարուի-անցմելու, նրանց նկատմանը մի ինչ-որ ցուցադրական անտարբերություն խալալու կեցվածքը, դժբախտաբար, իշխում է գրքի շատ գլուխներում: Եվ դա համարյա այստեղ, ուր ընթերցողն սպասում է գիտական քննության, հիննական պոր ու կատարելիքած օգրահանգում: Օրինակ, ինչ արժ է հենց այդ բաղադրիչների պարզ միավորումից հայ ժողովուրդի եւ հայոց լեզու ստանալու խոհանուցային պատկերացումը, որ Մարտիրոսյանը փոխ է առել հայերի վաղնջական պատճության պարզունակ տեսության հեղինակներից:

«Ուրարտուի... գրքի մասին ասում է. «...նրանք թերեւս գրում էին սեփական և ուրիշ լեզուների նշաններով»... «Ուրարտում փոխ առավ իր մեջ թշնամու՝ Ասուրիստանի գիրը» և «նրա հետ ընկավ նրա գիրն ու մոռացության տրվեց»: Բայց ո՞ւ թէ կու պատկանում, այնուհետեր այդ գիրը:

Եվ, այսպես. Մարտիրոսյանի ուղեգործ խաղացկում ոճն սկսում է բոլորովին և ոչ գիտական խաղեր անել կարճառատությունը վեր է ածկում կցւուրության:

Ցայտնի է, որ ըստ Կորյունի՝ Մեսրոպ Մաշտոցը գրեր է ստեղծել նաև Վրացիների ու աղվանացիների համար: Ցայտնի է ու անարակեալ: Ուզ չի հավատում, թող Կորյունի վկայությունները մերժի մույնարժեք որեւէ աղբյուրի հեղինական պատճության պարզունակ տեսության հեղինակներից:

Նակությամբ: Կամ թող ասի, ապա ինքն էլ որտեղից իմացավ, որ վրացիներն ու աղվանցիներն ունեցել են գրեր:

Մարտիրոսյանն այստեղ կատարում է քննություն, բացում ու պարզում է քաղաքարի հանգույցներ... Եվ, կարծես հավասարակշռություն ստեղծելու համար, դարձյալ ստեղծում հարցեր, որոնք վաղուց այլեւ հարց չեն կամ անտեղյակների հանար հարց են եղել առաջներում: Եվ դրանց մեջ է հայ-աղվանական վարչական, թընիկական ու մշակութային փոխհարաբերությունների շուրջ ստեղծած շիփոր, որի հետ միանգամայն արդար է Հ. Սանասարյանի վրդովմունքը:

Մարտիրոսյանը ներկայացնում է հայոց խաղացած քաղաքակրթիչ դերը քուն Աղվանք երկիր ցեղախմբերի համար: Դայ քարոզիչներն էին, որ քրիստոնեություն տարածեցին քաղաքացին Աղվանքում: Սաշտոցը գիր ստեղծեց աղվանական ցեղերից մեկի գարգարների համար եւ այդ երկրում հիմք դրեց դպրության ու լուսավորչական եռուն կյանքի: Բացի դրանից մուծվող հայկական քաղաքակրթության, քուն Աղվանքի ցեղախմբերն անընդմեջ շփման մեջ էին հենց իրենց ներսի հայկական օջախների հետ, որոնք դեռ Ստրաբոնի ժամանակներից (մ.թ. արշալույսին) գոյություն ունենին եւ քիչնորի դեր էին խաղում: Այս բոլորը ծիշտ է, գործ է Հ. Սանասարյանը եւ շարունակում: «Կարծես հեղինակն իրավացիորեն ներկայացնում է հիմնգերորդ դարի բուն Աղվանքը, որտեղ իրոք ապրում էին տարբեր ազգացեղեր, որոնցից մեկի գարգարների համար Սեւրութ գիր ստեղծեց եւ իրոք կար հայկական տարր, քիչստոնեությունը որոշ ոլորտներ է թափանցել եւ այլն... Ենոտ է հիշում են գրքի այն էջերը, ուր ցույց են տրվում աղվանական մեկ ցեղի համար ստեղծված գիր չստարածվելը, մյուս ցեղախմբերի ոլորտներում, այս աշխարհում քրիստոնեության միարար ու միաձուլվ դերի բացակայությունը, ապա եւ նզրակացությունը. «Քրիստոնեությունը եւ գիրը աղվանական ցեղախմբերին ոչ թե միավորեցին եւ տարան ազգային ամրողացման, այլ, թերեւս ընդհակառակը... Ինչ-որ տեղ արագ եւ վարդամ ծեռոք թերված քաղաքակրթությունը կործանարար է»:

«Պարձյալ խոսքը պետք է որ Վերաբերք քուն Աղվանքին, - գրում է Սանասարյանը: - Բայց պարզվում է, որ Մարտիրոսյանը խոսում է բուն Դայաստանի Մեծ Դայի երկու երկրանասերի Ռւտիքի եւ Արցախի մասին: Այսպես 327-րդ էջում գրում է. «Եշանակում է հայոց համար Աղվանքն առանձին երկիր չեր, այլ Դայաստանի արեւելան կողմերը, որ ընդգրկում էր Զոհից հարավ Ռւտիքը եւ Արցախը»: Ոչ, այդպես չէ.- իրավացիորեն գրում է Սանասարյանը: - Այն Աղվանքը, որտեղ քրիստոնեությունը չկարողացաք հաստատվել մի շարք աղվանական ցեղերի մեջ եւ որտեղ՝ «Կճակների տակ տրորքեց քրիստոնյա աղվանից գիրը» (թ 327), բոլորովին տարբեր է Ռւտիքից ու Արցախից թե աշխարհագրական դիրքով, թե երմիկական կազմով: Այդ բուն Աղվանքն էր, որ գտնվում էր Մեծ Դայի սահմանը կազմող Զոհ գետից հյուսիս եւ բնակեցված էր մի շարք 126-աղվանական ցեղերով, ինչպես եւ հայկական զգայի տարրերով, իսկ Ռւտիքն եւ Արցախ ի վեր ունեցել են հայկական բնակչություն: Ասկած մասին կարելի է կարդալ Վերիշշալ հին ու ժամանակակից հեղինակների մոտ: Զարմանալի է, որ Մարտիրոսյանը անձանոր է քննարկվող երկրանասերին Վերաբերվող գրականությանը (իսկ

եթե ծանոթ է, բայց համաձայն չեն նրանց դրույթներին պնտոք է բանավիճեր)...

Ահա ճշմարտությունն այն հայացքի, որի համար երկու անգամ երկուսը հավասար է չըրսի:

Ի դեպ, Մարտիրոսյանի այս «պատմական» աշխարհագրությունն այն անվնաս բյուրինացույթուններից չէ, որոնք կարող են եւ ուշադրության չառնվել: Նա մի տեղ էլ նշում է «Գողբն եւ Սյունիք, որ սահմանակից են Աղվանքին» (թ 333): Եվ սա հայերն ենթերի ստեղծման ժամանակի առունուկ, եթե Դայաստանի և Աղվանքի միջեւ սահմանն անցնում էր Կուր գետով:

Խմկապես,- կարծես ոչ աղբյուրներ են եղել աշխարհում ոչ նրանք կարդացվել ու մեկնաբանվել են, ու Մարտիրոսյանը հասել է միայն վերջերս հրապարակված այն ծենանձություններին, որոնց նպատակն է ցուց տալ, թե Սովետական Դայաստանի տարածքն ամբողջովին ընդգրկված չի եղել պատմական Դայաստանի սահմանների մեջ:

Տասնամյակներ առաջ Կիեսնայի Միխթարյան հայր Ներսես Ալիխյանը, Կորյունի գրքի տեղեկությունը ծովով եւ ուռճացնելով, հորինել էր մի արտառոց վարկած, որի համաձայն իբր, Մաշտոցը Դայաստանի բյուզանդակատակ մասունք գրեթե է ստեղծել գործերի համար, եւ այս գրեթեն էլ ինչ վիթխարդի ծառայություն են մասուցել Եվորպական քաղաքակրթությանը: Արտ. Մարտիրոսյանը համոզում է, որ այդպիսի բան ոչ միայն չի եղել, այլև անհնար է պատուեացնել (տես էջ 332-344): Դամոգում է. եւ սակայն, մենք եւ հանկարծ ուղղակի Ալիխյանի վարկածի վրա տեղադրում իր սեփականը. «Աղպես եւ նա գիր տվեց ալաններին»: Խոկ այս ամենի համար հիմք է ծառայեցնում Կորյունի մի շատ որոշակի խոսքն այն մասին, որ Մաշտոցին հանդիպել է մի երեց մարդ, ազգով աղվան, անունը Բենամին: Եվ նա (Մաշտոցը) հարցեր եւ քննել է աղվաներն լեզվի բարբարոս խոսքերը... Նշանագրեր հորինել... Կշռայտել, հաստատել»:

Տ-ը դարի հայ հեղինակների համար աղվաններն ու ալաններն ու նույնքան անշփոթելի էին, որքան գործերն ու աղվանները: Մարտիրոսյանը հիշում է «Աղվանը պատմության» այն դեպքը, եթե Նվույս հորենացու ալանը դարձել է աղվան: Բայց սա 10-րդ դարի հեղինակն մեղքով եւ մանավանը՝ ալանա տիրամատությունը աղվաններին մերագրելու միամիտ սնապարծության մղունով:

Ասկում է նաև, թե «Բենիանին հաւաքածի կարծես չի կապվում աղվանից գրի պատմության հետ եւ ինքնակա բնույթ ունի» (թ 334): Բայց էլ ինչպես պատի կապվեր, եթե այս հաստվածն այն մասին է, թե ինչ դրույթով եւ որպիսի հանգանքներում ատեղջեց աղվանից գրիը, խոկ հետազոյում էզ պատմեթը, թե ինչպես այդ ստեղծածը համձնվեց Աղվանից տեղերին: Այս երկուրդ հաստվածում ոչ մի խոսք չի ասկում աղվանական գրի ստեղծման մասին: Միայն այնքանը, որ Մաշտոցը եկավ Աղվանք, նրան հարցերին նպատակը, նա էլ բացատրեց, եւ Աղվանքի թագավորն ու եպիսկոպոսը «երկու զուգակիցները հանձն առան ընդունել դայուություն»:

Ոչ մի խոսք աղվաններն գրեթե ստեղծման մասին, քանի որ այդ ամենը պատմվել էր ուսումնասիրողի կողմից «չկապվող եւ ինքնակա» համարված տողերով:

Ոչ, առկա աղբյուրագիտական նյութերով անհնար է ապացուցել, թե Մաշտոցը գրի է ստեղծել ալանաց համար: Եվ առհասարակ երա անհամատելին

նեթուրյունը նման ծառայության կարիք չունի:

Եվ վերջապես, հայոց գրի ստեղծման թվականի հարցը:

Մաշտոցյան գործին վերաբերող մեն ու միակ աղյուլը Կորյունի գիրքն է: Նրա ծննդագրերում է մեզ են հասել գրի ստեղծման տարին նշող երկու տվյալներ, որոնք անհարի են իրար: Տվյալներից մեկը գտնվում է գրի բնագրի մեջ հյուսված նրա շարադրանքին, սալուգովով ու տրամարանական: Մյուսը կցված է վերջին, ունի խառնակ մանրամասներ եւ ամբողջության մեջ էլ հակասում է առաջինն, հերթվում նրանով:

Ռւսումնասիրությունները ցույց են տվել, որ այս երկորոշը Կորյունի գրքում չի եղել մինչեւ 15-րդ դարը եւ, ամենայն հավանականությամբ նրան է կցվել մի ամենուա խճագրի կամ գրի ծեռքով:

Ավանդաբար հետազոտողներն ուշադրություն են դարձրել հիմնականում երկրորդ տվյալի վրա եւ քանի որ նրա մանրամասներն էլ հակասական են, ստացվել են տարբեր արդյունքներ:

Սարտիրոսյանի համար եւս ելակետը բնագրի վերջին հատվածն է: Սակայն ի տարբերություն նախորդ հետազոտողների, նա ամեն կերպ աշխատում է վերացնել անհամածայնությունների մանրամասներն ու հակասությունները եւ գրի ստեղծման տարի ընդունում 405 թվականը:

Իսկ բնագրի տվյալը, որի համաձայն, գիրն ստեղծվել է Վուամշապուի թագվորի գահակալության 5-րդ տարում:

5-րդ դարի երկու հայ հետինակներ Մովսես Խորենացին ու Պագար Փարավեցին, տեղեկացնում են, որ Վուամշապուի Արշակունում Հայաստանում թագավոր է կարգել Պարսից արքա Չապուի: Սա Չապուի Գ-ն է եւ գահակալել է 383-388 թթ., վեց տարի: Մարտիրոսյանը այս վեցը դարձնում է հինգ, բայց դա էական չէ, կարենորն այն է, որ Չապուին է թագարել Վուամշապուին, եւ վերջինիս գահակալության առաջին տարին 388 թվականն է:

Մարտիրոսյանի կարծիքով՝ 5-րդ դարի հայ պատմիչներ Ս. Խորենացին, Դ. Փարավեցին ու Եղիշեն սխալ պատկերացնում են ունեցել Չապուի անունով պարսիկ երեք թագավորների մասին, մեկի գործերը վերագրել են մյուսին, երրորդին համեմ են շարքից..., եւ այսպես նրանց տեղեկություններն անվստահելի են:

Սա անարդար դիտողություն է: Հայ հետինակները ոչինչ չեն շփոթել:

Մեր պատմիչները շապուհներին չեն շարուն Ա, Բ, Գ-ով, սակայն ստուգապահ գիտեն նրանց, տարբերում են իրարից, հաճախ տարբերակում են հայրանութերով, ոչ մի անգամ չեն խառնում ուրիշ անունների հետ: Իսկ մեր հարցի համար ամենակարենորը վերջինն է: Օրան Վուամշապուի թագավորությունը կապում են Չապուի արքայի հետ, իսկ սա էլ վերջին Չապուին է եւ չի կարող շփոթվել ոչ նախորդների, ոչ էլ հակասապես հաջորդների հետ:

Ուրեմն, ոչ մի հիմք չկա Խորենացու եւ Փարավեցու տեղեկությունների վրա կասկածելու: Եվ այդ տեղեկությունների համաձայն Վուամշապուի գահակալության առաջին տարին կարող է լինել ամենաուշը՝ 388 թվականը:

Կորյունն էլ Վկայում է, որ Մաշտոցը հայերեն գրեր է ստեղծել Վուամշապուի գահակալության հինգերորդ տարում, որ 393 թվականն է:

Մրանից էլ պարզ, վստահելի ու անառարկելի իրողություն, որը ելակետ այսին դաշնա մնացած բոլոր հաշվումների ու ժամանակագրական ծզգրտումների համար:

Ին խոսքը երկարեց, իսկ թերությունները դեռ շատ կան:

Ես չգիտեմ այս գիրքը թարգմանո՞ւ են նու ուսւերեն: Բայց համոզված եմ, որ նշված ու չնշված թերություններով այն ոուս ընթերցողներին ներկայացնելը կլինի վատ ժառայություն հայագիտությանը եւ հատկապես Մեսրոպ Մաշտոցի սուրբ ամփան ու հիշատակին:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ամեն մի ժողովուրդ շատ ավելի հին է, քան նրա ճամանակը խոսող աղբյուրները:

Դայ ժողովրդի կենսագրության վաղացոյն եւ վաղ շրջանների պատմությունը դարեր ի վեր հյուսվում է զստ աղբյուրների, որոնք գնալով շատանում են ու գուշակում: Եվ զարմանալի չէ, որ տասնամյակներ առաջ ամենաստույգ բվացող մի կարծիք կամ տեսակետ այսօր կարող է հիմնովին մերժվել. ենթադրությունը հաստատվել, մուլք ու անհայտ մի կետ՝ պարզել ու դառնալ ուղենիշ:

Կարուց է, ինչ մեր ընթերցողի սեղանին է «Դայ ժողովրդի պատմության քրեստոնատիայի» շատ սպասված եւ վերին աստիճանի օգտակար ժողովածուի առաջին հատորը², որի նաևին, ինչքան տեղյակ են, մինչեւ օրս մամուլում հանգամանալից քննական խոսք չի հրապարակվել: Սակայն այդ խոսքն անհրաժեշտ է եւ հրատարակության նախաձեռնությունների ու իրականացնողների ծառայությունը գնահատելու համար, եւ մեր ընթերցողներին, մանավանդ աղբյուններից օգտվելու փորձ չունեցողներին յուրովսանն օժանդակելու նպատակով: «Քրիստոնատիայի» սկզբուն իսկ հայտնվում է, թե նրա «կազմողները սիրահոժար կը բրումեն ընթերցողների դիտողություններն ու ցանկությունները, որոնք հաջի կառնեն հաջորդ հատորները հրատարակության պատրաստելիս եւ սույն հատորը վերահրատարակելիս»: Ուրեմն, նույնիսկ պետք է հուսալ, թե այս առաջինն էլ կը բրահրատարակվի:

Քրիստոնատիան լույս աշխարհ է հանել հայագետների մի ստավար խումբ, որի յուրաքանչյուր անհամը բարձր համարում ունի գիտական շրջաններում: Նյութեր ընտրողները, քարգնանշներն ու ծանոթագրողները, կազմողներն ու խմբագրողները վիթխարի աշխատանք են կատարել բազմաթիվ, բազմատեսակ աղբյուններից քաղելով եւ ի մի բերելով, դասդասելով ու շատ կարելովն ծանոթագրելով այն ամենը, որ վերաբերում է մեր ժողովրդի պատմության հնագույն, հին ու վաղ միջնադարյան շրջաններին: Ի նշ ասել կուզի, որ հաղթահարվել են բազմաթիվ դժվարություններ: Եվ առաջին անգամ ընթերցողին հասցեագրված այսօրինակ ժողովածուն իր շատ ու շատ արժանիքներով միացն գրիունակությամբ ու երախտագիտությամբ պիտի ընդունվեր:

Ժողովածուի ամենաբարձր արժանիքը, ըստ իս, նյութի բազմազան հարստություն է, ընդգրկումների ծավալը: Եվ ավելին ծգտողների համար էլ կանոնավոր ու ծանոթագրական նշումներ, որոնք ցույց են տալիս, թե որտեղ կարելի է սպառչ պատասխաններ ստանալ այս կամ այն հարցի առթիվ:

Ծանոթագրությունները են ընդհանուր առանձ լավ տպավորություն են բրոդում հեցած լինելով իմբնականում ՀՍՍՀ ԳԱ Պատմության իմստիտուտի կողմից վերթերու լույս ընծայված բազմահատորյա «Դայ ժողովրդի պատմության», Երևանի համալսարանի համանման հրատարակության եւ առհասարակ այժմ հայագիտության մեջ ընդունված կամ տարածում գտած տեսակետների վրա:

Առավելությունների ու արժանիքների համար գրիունակությունս հայտնելով հատորի մեջ իրենց ջամբարներն ու կարողությունները ներդրած մասնագետ-

ներին, ես կուզենայի արտահայտել նաեւ իմ դիտողություններն ու նկատառումները: Այստեղ ինձ ոգեւորում է հրատարակչության պատրաստակամությունը այդախսիք նկատի առնելու «առսն հատորը վերահրատարակելիս»:

Առաջինը, որ տարակուտանք է պատճառում, հայ ժողովրդի ծագմանը վերաբերող նյութերի ժամանակավորեց տեղադրությունն է: Դա չի կարելի բացատրել այլ կերպ, քան համառորդն դիմադրող հիվանդությամբ: Խեթական աղբյունները Դայաստանի նախին, ասուրական նորիւությական աղբյունները Ուրարտուի մասին, եւ արտանից հետո արդեն հայ ժողովրդի ծագումը: Ուրեմն, պիտի եղականներ, որ հայ ժողովրդի ծագումը տեղի է ունեցել Ուրարտու կոչված պետության կործանումից (մ.թ.ա. 7-րդ դարի վերջ) հետո:

Մի պահ անտես առնենք հինա նախագիտական գրականության մեջ հաճախ արտացոլվող այն պատկերացումը, թե հայ ժողովրդին իր լեզվով հանդերձ ծագել ամբողջի վրա, իր առանձնահատուկ համար ու հոտը բողել գոյացած հայ ժողովրդի ամբողջության համար եվված լեզու-ապաւորի մեջ: Այս, անտես առնելով նաև խոհանոցային պատկերացումը հայ ժողովրդի ու նրա լեզվի ծագման վերաբերյալ, ես զարմանում եմ, թե ինչո՞ւ մեր լեզվի պատմաբանները չեն փորձում ներթել այս շփոթը: Ձե՞ս որ հինա այլևս ո ոքի համար հարց չէ հայ ժողովրդի ու նրա լեզվի հներվուական ծագումը: Իսկ սա պարտադրում է ընդունել, որ հայերենն առաջացել, ծագել, գոյացել է հներվուական մայր լեզվի ճեղքումից ու ճյուղավորումից: Մի ժամանակ այս ճյուղավորման ժամանակ էր ընրունված մ.թ.ա. 5-4-րդ հազարամյանների ճիջոցը, իսկ հայերենի որպես առանձին լեզվի, կազմավորման ընթացքն ավարտված էր համարվում մ.թ.ա. 3-րդ հազարամյակում (տես, օրինակ, Գ. Բ. Ջայակյան, օւերքու ու հայությունների պատման մայր լեզվի ճեղքումից ու ճյուղավորումից): Այս ի՞նչ է պատահել, որ քրիստոնատիայի ընկերներ հայ ժողովրդի ծագումը դնում են մ.թ.ա. 7-րդ դարից հետո: Մշն պատճառով որ Դայաստանի ու Ուրարտուի պետական կազմավորումներին վերաբերող նյութերը հայերեն չեն: Բայց չէ որ հաջորդ դարերում էլ այդ նյութերը պիտի լինեին արամերեն ու լամերեն, հումարեն ու լատիներեն... մինչեւ մ.թ. 5-րդ դարը:

Դնագույն աղբյուրագիտական ամեն մի տեղեկություն, նույնիսկ ամեն մի փշրանք, բազմակողմանի եւ հնուտ ըննության ենթարկվելու դեպքում, դառնում է հրաշալի ուղեցոյց մեր վաղնջական պատմության ստույգ ընթացքը վերականգնելու համար: Այս պատճառով էլ ինձ վերին աստիճանի տարօրինակ է թվում այն անհոգությունը, որ ոմանք ցուցաբերում են, օրինակ, Աքքաղի ու Աշուրակությունների սեպագրերում հիշատակված Արմանի Երկրի նկատմամբ: Այս վկայությունները գիտությանը հայտնի են մեր դարի սկզբից: Բազմից բարգանվել են տարբեր լեզուներով, իսկ հայերեն մի շարք անգամներ (Թ. Գատամանիշյան, Ն. Աղբյոնց, Լ. Բարսեղյան եւ լր): Ամիդ-Դիարերիի նույն Դայական լեռաշխարհի վեցին, ինչպես և Արդունց երկարամատիքի կամ Նարամ-Սունի (մոտ 2236-2200 թթ.)

մ.թ.ա.) քարակորողը, որի սեպագիր արծանագրության մեջ «Արմանի երկիր» է հիշատաված Սիցագետքից հյուսիս ընկած տարածքի առումով։ Այնտեղ Նարանսինը բարկում է իր դեմ դաշնակցած 15 երկրներն ու նրանց թագավորներին, եւ սրանց շարքում է «Սաղակինան թագավոր Արմանի քաղաքի երկրի»։

Այս երկրանունը պատահական մի բան չի, որ ասուափ պես փայլատակեր ու անհետանար։ Հիշատակվել է նաև հետագա դարերում։ Աշշուրի արքա Սարգսն (մ.թ.ա. 1980-1948 թ.) իր արծանագրություններից մեկում պատմում է, թե ինչպես է նվաճել «Ստորին ծովից մինչեւ Արեւամուտի ծովը» սփորված երկրները, եւ նրանց մեջ է «Արմանի երկիր»։

Դենց միայն այս վկայությունները գումարած հայ-ազգական լեզվական փոխառություններին, որոնք անառարկելիորեն պացուցում են, թե հայ ժողովուրդն անպայման չմիջնորդված առնչություններ է ունեցել կենդանի աքքաղերենի կրողների հետ (մինչեւ մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջը), բավական էին ջնջելու այն հակագիտական ու հակապատճական վարկածը, որով հայոց ցեղը դայլական լեռնաշխարհ է նուժվում դրսից եւ այս էլ մ.թ.ա. 6-5-րդ դարերում։

Սակայն վերջերս հրապարակ եկան նաև նոր վաշքերագրեր, որոնք մեր պատմության հին ծշմարտությունը բացահայտում են նոր կողմերից, առավել հիմնավոր ու լայնահում։

Ականավոր արեւելագետ Վյաշեսլավ Վսեվոլոդովիչ Խվանովին ենք պարտական մի հրապարակման համար, որով հայ ընթերցողին են մատուցվում հայ ժողովորդի հին պատմության մութ ծալքերը բացող բանկարժեք վկայագրեր (տես «Պատմաբանասիրական հանդես», 1983, № 4, էջ 30 եւ հոդ.): Դրանք հարական-խեթական երկեզրված մեպագրերից (փորագրված մ.թ.ա. երկրորդ ու երկրորդ հազարամյակների սահմանագիտին) բաղված այն տեղեկություններն են, որոնք «Հայ» անուն են պարունակում իբրև հիմք եւ տեղանկան, եւ ցեղանկան։ Եվ, որ ամենակարենորն է, այդ հիմքը նիշտ է կապված է Արմի երկրի անվան հետ։

«Արմի» եւ «Արմանի» անունների տարբերությունը ոչ ոքի չափուի զարնացնի։ Սանականդ, որ նոյն անունը սեպագրերում առկա է նաև մի շարք ուրիշ տարբերակներով՝ «Արմե», «Ուրումե», «Ուրումեն» ևն։ Այսօրինակ տարբերակները բնական են, եթե նկատի առնենք, որ այն ժամանակներում չկային անունների գրության միահենական ծեւեր, եւ յուրաքանչյուր լեզու, (նոյնիսկ նոյն լեզվին հարող տարբեր «հեղինակներ») անունները հորդորում են իր ծեւեվ ու տառադրածությանը։ Յայսնի է, օրինակ, որ Տակիտոսը հայկական «Գարնին» ավանդել է իբրև «Գորնեա», արար Յակուտը «Զարնա»։ Իսկ Վանի թագավորության սեպագրերից էլ գիտենք, որ նոյն թագավորության մեջ գլխավոր աստծու անունն Ալդի էր գրվում հոգեւոր կննորոն Մուսասիրուն, Խալդի մյուս վայրերում, Ռուսա կամ Ռուչա թագավորի անունը Ռուսա է կամի սեպագրերում, Ուրսանա Մուսասիրում։

Եվ ահա «Արմանի»-ն որպես Հայկական բարձրավանդակի պետության ու երկրի անուն, իր մի շարք տարբերակներով հայտնվել է Կապաղովկիայից գտնված սեպագրի մեջ «Հայ(ը)» երկրանուն-ցեղանկան հետ միասին։

Վ. Կ. Խվանովին ենք պարտական նաև երլայի (մ.թ.ա. III հազարամյակի

քաղաք-պետություն) սեպագրերից բաղված բազմաթիվ այն տեղեկությունների հրապարակումնիվ, որոնց դարձյալ վերաբերում են Հայք-Արձի երկրին ու նրա հայ-արձ բնակչությանը (արծանագրությունների ուսւերեն բարզմանությունը տես նոյն տեղում, էջ 31-33)։

Աղյուրագիտական այս տեղեկությունների հիմքի վրա է, որ Վ. Կ. Խվանովը եզրակացնում է, թե Շշմարիխ ու հիմնավոր է Գր. Ղափանցյանի տեսակետու հայ ժողովորդի տեղական ծագման ու նրա հայ-արմեն ակունքի վերաբերյալ, եւ հիմնագործք ու կամայական են հայ ժողովորդի ծագումնաբանության շուրջ թիվակած այլազան բոլոր հորինվածքները։

Ուրեմն, այսպես Նարամ-Սուենի սեպագրերի «Արմանի երկիրը» (ուրիշ լեզուներով «Արմինա», «Արմեն» եւս) բացատրվեց ու լրացվեց բազմաթիվ ուրիշ աղյուրներով, որոնք բոլորը միասին վերաբերում են հայ ժողովորդին ու նրա հայրենիք «Հայք»-«Արմանի»-ին։

Դուսամք, որ այս շատ կարեւոր բացրդողումը կվերացվի «սույն հաստոր վերահասարակվելիս» եւ մեր որոշ ուսումնասիրողներն էլ կիրաժարվեն հայ ժողովորդի հնագույն պատմության իրենց միայն պատկերացումներից։ Սանականդ, որ այսպիսի պատկերացումներ տեղ են գտել հենց քննության ենթակա քրեստոմատիայի ծանրագրություններում։ Խոսելով հայ ժողովորդի ու նրա պատմության (Արմենիա) ծագման մասին հումնելի շրջանում գոյացած առասպելից, որը հյուսվել է մոտավորապես մ.թ.ա. XI-X դարերում, հայտնվում է, որ «Արմենիա» հասկացությունը... ավելի ուշ շրջանի (մոտ մ.թ.ա. VII-VI դ.) բովանդակությունն է արտահայտում (էջ 107)։

Այսպիս էլ «Արմանի»-«Արմենա» հասկացությունն առնվազն երկու հազար տարու քահելացվում է։ Ինչի՞ համար։ Մի՞նչ դարձյալ ոչ այն նպատակով, որպեսզի հայ ժողովորդի կազմակորումն ու նրա լեզվի ծագումը, հայկական պետական կազմակորումների ստեղծումը ներկայացվեն Ուրարտու կոչված պետությամ կործանումից հետո։

Այս բյուրիմացության դրսեւորումներից է նաև այն հայտարարությունը, թե «Արարատը» «Ուրարտուի» հին եղբայրական տառադարձումն է (էջ 106)։ Իսկ «Ուրարտուն» ի՞նչ է, ի՞նչ անվան տառադարձումը. չէ՝ որ այն հայկական բարձրավանդակի երկրանուն է հորդորչված միահեն աստծառանցիների կողմից։ Կերշիններս այն ո՞ր անունն էն դարձել «Ուրարտու»։

Արհասարակ լավ կլիներ, որ քրեստոմատիայի ընդգրկած է իր ու հնագույն, հատկապես սեպագրական շրջանի նյութերը հասկանալու բանակներ տրվեին։ Քիստոմատիան ոչ աղյուրների ընդարձակ մեկնաբանություն է, ոչ էլ պատմության սիստեմատիկ շարադրանք։ Սակայն նրա ընթերցողը, մանականդ դեռ լրիվ չկողմնորոշված, պատմության խորըությանը հիմնավորապես չծանոթացած ընթերցողը. որին ենս ուղղված է գիրքը. պետք է գետքին բանակներ ումենա աղյուրների գաղտնաբանները բացելու համար։ Այդպիսի բանակներից է, օրինակ, «Ուրարտու» տեղանվան մեկնաբանությունը, որն իսպար բացակայում է գրքում։ Մինչդեռ նրա առկայությունը շատ կօգներ հայկանալու. մի պարզ ծշմարտություն, որն այսօր էլ մեր շրջապատում դեռևս մթագնված է ինչ-ինչ պատճառներով։

Ի՞նչ բան է այդ Ուրարտու կոչվածքը: Դա Ասորեստանի թագավորութիւն է սեպագիր (ասուրերեն) արծանագրություններուն հիշատակված Երկրանուն է որ տրվել է Ասորեստանից հյուսիս, Կամա լի՛ շուրջը սփռված Երկրին: Երկիրն այդպես է կոչվել քացառապես հիշյալ արծանագրություններուն: Տեղում, այսինքն՝ բուն «Ուրարտու» Երկրում, նման տեղանուն չգիտեիմ: Այսուել քինդը իրենց Երկիրը կոչում էին Նայիրի, Բիայնիլի: Եվ հենց դա էլ արծանագրված է տեղացի թագավորութիւններում սեփական սեպագիր արծանագրություններում սկզբնապես ասուրերեն, ապա խորերեն: Այս, ե՛ ասուրերեն, ե՛ խուռերեն: Չնորանանք. Ասորեստանի թագավորութիւն ասուրերեն արծանագրություններում Ուրարտու է, իսկ Վամի թագավորութիւն իրենց Երկիրը սեփական նույնիսկ ասուրերեն արծանագրություններում ոչ մի անգամ Ուրարտու չեն կոչել, այլ սկզբնական շրջանում «Նայիրի», հետո «Բիայնիլի»: Սիայն այսպես է: Այս հանգամանքը հայտնի է մեր մասնագետներին, որոնցից ականավոր արեւելագետ, Վամի թագավորության սեպագիր արծանագրությունների լավագույն գիտակ Գ. Ա. Մելիքիշվիլին էր աշխատություններում քամից նշել է, որ ասորեստանյան Վիմագրուիր «Ուրարտու»-«Ուրաշոտու»-Ն դա նույն «Նայիրի»-«Բիայնիլի»-Ը է, որը կոչվել է նաև «Արարատյան թագավորություն» (տես, օրինակ, «Советская историческая энциклопедия», թ. 14, սրբ. 858, «Урарту-ассир, урартск.-Биайнили, библейск.-карство Арамат»):

Ուրեմն, կա պատճական տվյալ շրջանին վերաբերող աղբյուրները մեկնարանելու այսպիսի բանալի: «Ուրարտուն» օտար-ասուրերեն հորոդրումն է այն Երկրի, որի տերերն իրենց կոչել են «Նայիրի», «Բիայնիլի», «Արարատ» կամ «Արարատյան թագավորություն»: Եվ հենց որ ընթերցողը կամ մեկնարանողն ունենա այս բանալի: Ուրարտու-Նայիրի, Բիայնիլի-արարատ կամ Արարատյան թագավորություն նույնությունը մանավանդ՝ այն էլ հետո, որ այդ պետության տերերն իրենց Երկիրը Երբեք ասորեստանցիների անս չեն կոչել «Ուրարտու», նույնիսկ իրենց իսկ փորագրած ասուրերեն սեպագրելում, - ահա այն ժամանակ միանգամայն համականալի կրտանա, թե ինչո՞ւ շատ մասնագետներ չեն ուզում կառչել այդ «Ուրարտու» տեղանվանը եւ դրանից էլ հեռում գնացող եգորակացություններ ու հետազոտություններ չեն անում: Դիշենք, որ Լեռն, Բ. Բ. Պիտրովսկին այս պետությունը կոչել են «Վամի թագավորություն», և Կ. Քարությունյանը՝ Բիայնիլի:

Բայց կա նաև այս բանալիի շատ կարեւոր ճյուղը, այն, որ «Ուրարտու», «Նայիրի», «Բիայնիլի», «Արարատյան թագավորություն» ձեւերը սոսկ տեղանուններ են, եւ առ այսօր ոչ ոք դու չի ապացուցել, թե դրանցից որեւէ մեկը ավելին է, քան սովորական տեղանունը: Ուրեմն, այս տեղանվանական ձեւերոց եւ ոչ մեկը Երկրի բնակչության Երմիկական կազմը որոշելու համար ոչ մի նշանակություն չունի: Սահա այս ծշմարտությունն էլ որ ընդունվի եւ իբրև թանալի ընթերցողին, այն ժամանակ Վերջինս, որ Երբեք էլ Վերջինը չէ մեր գործուն, կիսականա, որ ուրարտական կամ ոչ ուրարտական ցեղեր, մանավանու ուրարտուներ իբրև ցեղ կամ ժողովուրդ ընդունելու անհեթեթություն է, ինչպես որ անհեթեթություն կլիմեր, ներ մեկը էլ վեր կենար ու պնդեր, թե եղել նայեր, բիայններ, արարատներ...

Կարող են հարց տալ, թե հետո ի՞նչ ուրեմն, այդ բազմանուն երկրում ոչ ոք չի բնակվել: Բնակվել է, ինչպես չէ: Այդ Երկիրն իր հզոր պետական ու ուազական լուսական ու մշակութային կյանքն է ունեցել, եւ այդ կյանքի հոլովույթի տերը մի ժողովուրդ էր կացնել առանց Երեւուրդը ընթերու: Այդ ժողովուրդը սեպագրերը մշաղության Սիրտաննի պետության խորհրդենով են փորագրված: Ունաճը, նրանց յիշից տարբերապետները նկատի առնելով, այս համարում են նորինութիւններ: Ուրիշներն էլ, զլուս պրծացնելու համար կոչում են ուրարտերեն: Բոլոր դեպքերում նույն սեպագրերն են մի լեզվով, որն այս սեպագրերի տիրոջ համար մայրենի կոչվել չի կարող, որովհետեւ տերը դրանից առաջ ասուրերեն էր գործ ու դրանից հետո էլ պիտի օգտագործե այրաներեն, լատիներեն, հունարեն...

Մինչեւ որ կունենար իր սեփականը:

Ծանոթագրողները սիսակում են, եթե «Աստվածաշնչի» տեղեկություններն Արարատյան թագավորության նամակն յարձնում են «Յայկական առաջին պետական կազմավորումների նամակ» (Եջ 115), եթե խոսքը վերաբերում է մ.թ.ա. Յ-րդ դարին: Զի կարելի ամսխալ համարել նաև «Յայկական առաջին պետական կազմավորումը ըստ Մովսես Խորենացու» (Եջ 118), եթե նկատի է առնվուը Արամի պետության ու Սկայորդու որդի Պարույրի թագավորության հանգանքները: Ոչ մի տեղ Պատմահայրը չի ասում, թե Արամի պետությունը հայկական առաջին պետական կազմավորումն է (նրա կարծիքով՝ հենց Յայկի սկզբանը ծերել էր կազմուն և ուներ իր ներին կյանքն ու փոխարաբերությունների հետ), ինչպես նաև չի ասում, թե Պարույրի հայկական առաջին պետության գլխավորն է: Սա Պարույրին ներկայացնում է որպես հայ առաջին պատկան թագավորի (նեղացի կարբակեսն է նրան թագավարել): Պարույրի պկսած հայ թագավորությունը՝ մինչեւ Արշակունիների գահակալությունը. Մովսես Խորենացու կողմից ճակացիւմ է որպես «քիմիկ նախնույն սերունդ», «որպան բնիկը եւ ինոյ արեան առուր (արյունակիցներ) եւ հաւասարի հարազատ»: Եվ միանգամայն իրավագի են այն հետազոտողները, որոնք մ.թ.ա. VI-րդ հայկական թագավորատոններ, ըստ Պատմահոր տեսակետի, համարում են Յայկացայն եւ ոչ թաժանում ևս Երվանդյան ու Կրտաշյան հարստությունների: Մանավանդ, որ Կրտաշյան համարված տոհմի առաջին ներկայացուցիչ Արտաշեն իր իսկ արծանագրության մեջ իրեն համարում է նախորդ տոհմի ժառանգը:

Ասացի, որ հնագույն աղբյուրագիտական տեղեկություններից յուրաքանչյուրն անգնահատելի արժեք ունի մեր պատմության ստույգ ընթացքը Վերականգնելու համար եւ այն պետք է ընելի ըստ հնարավորին անենայն մանրանակացությանը: Միայն այսպիս հնարավոր կլիմի յուրացնել նրա պարունակած բոլոր տվյալները: Եվ հարցին այս կերպ մոտենալով, ես չեմ հասկանում, թե, օրինակ, ինչո՞ւ լրեստամատիայից դրվագ է մնացել Շեհիստումյան եռալեզու սեպագրի տեղեկությունը Բարելունյան գահը նվաճված եւ Արտաշենյան մանրանակացությունների: Մինչեւ այժմ ուսումնասիրողներն այս տեղեկությունից միայն այսպիսի համարում են Երես արարատներ, թե Արտաշենյան բարձրագույն պատմական կառավագական կամաց առաջին պատմության մասին: Մինչեւ այժմ ուսումնասիրողներն այս տեղեկությունից միայն այսպիսի համարում են Երես արարատներ, թե Արտաշենյան բարձրագույն պատմական կամաց առաջին պատմության մասին...

տանը հանդես են եկել որպես դաշնակիցներ (հայ Արախան բռնությամբ տիրացել է Բարելոնի գահին, և այս պիտի նշանակեր Դայաստանն ու Ասորեստանը դաշնակցում էին): Իրենց գործն է, թող հիմա էլ այդպես հասկանան: Բայց ինչո՞ւ ուշադրություն չի սեւ եղանակում Արախայի անվան հետ առնչվող մյուս կարեւոր մանրամասնի վրա. «Արախա անոնով մի մարդ հայ, Խալիքին որդին...»:

«Խալիքի» (Խալիք-թեատ) նշանակում է «Մեծ Խալիք» Խալիքն է Վանի արքաների սեպագրերի մեջ Երկրի գլխավոր աստվածն է եղել, այս արքաների ռազմական, տնտեսական եւ ուրիշ ամեն տեսակ ձեռնարկումների հովանակիցներուոր: Խակ, ամենակարեւորը, Վանի թագավորներն ու նրանց հայրենակիցները իրենց հաճարուում էին «Խալիքի որդիներ»: Վանի-Ռւրարտուի-Արարատի թագավորները Խալիքի որդիներ էին: Մեծ Խալիքի որդի էր համարվում նաև հայ Արախան: Արդյոք այս հանգամանքը չի հուշում, որ հարազատ ու արյունակից էին, եթիկական նույն պատկանելիությունն ունենալ Խալիքի հին ու նոր որդիները Վանի արքաներն ու Բարելոնի գահը թշնագրաված Արախա հայը:

Կարեւի էր բացրորդներ ու վիրապակներ ցույց տալ նաև հացրոր շրջանի աղյուրագիտական նյութերի մեջ ու նրանց մասուցումներում: Սակայն դրանք էական նշանակություն չունեն, քանի որ այսուել կա ընդհանուր ծզգիս պատկերացումը, եւ ոչ մի սխալ չի կարող ճակատագրական նշանակություն ունենալ մեր ազգային պատմության անբողաքական ընթացքի ընթանման վրա: Ճնագույն շրջանի, սեպագրի աղյուրների նյութերն են, որ մինչեւ օրս չեն ստացել իրենց ծզգրտորեն սպառիչ մեկնաբանությունները: Քավական է ասել, որ Դայաստանին վերաբերող այդ սեպագրերի կորպուսներն առ այսօր հրապարակվել են շատ լեզուներով, իսկ հայերն չկան ու չկան, եւ հայտնի է չել, թե երբ պիտի լինեն:

ԾԱՄՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Հայ ժողովրդի պատմության քրիստոնատիա, հատոր 1, հնագույն ժամանակներից մինչեւ IX դարի կեսերը. Երեանի համալսարանի հրատարակություն, Ե... 1981, կազմել են Պ. Դ. Յովհաննիսյանն ու Ս. Գ. Արքահայրյանը ու Լ. Ա. Խուրշույսյանը:

«ԼՐԱԲԵՐ» ՂԱՆԴԵԱԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Ծանոթացա իմ հոդվածի (Զեր հանդեսի ս.թ. № 7) մասին եղած նյութին, որի առթիվ հայտնում են հետևյալը:

Ծայ Երեւույթին նյութի հեղինակն ուշադիր չի կարդացել իմ հոդվածը, այլաւեւ նա իր առաջարկած բոլոր հարցերի պատասխանները քաղած կլիներ այլտեղից եւ անպատճ կիծարանություն չէր բացի:

Ո՞րն է նյութի հեղինակին մտահոգող հոդվածին մեջ: Նա «սխաներ ու հայասկական մտքեր» և նկատել իմ ստորագրությամբ հրապարակի վրա գտնվող տաճեն ինչում, սակայն (առայժմ) կանգ է առնելու միայն «Դայոց Աղվանիքի թագավոր Ուսնայրին վերաբերող հաղորդումների վրա»: Ապա ամմիջապես գործի անցնում հայտարարելով, որ «Ուսնայրի մասին Բ. Ա. Ռուլութարյանի հաղորդագրությունը էլ սխալ են: Նա (Ես.- Ու. Բ.) գրել է: «Խորենացուն եւ Բյուզանդին հայտնի Ռումանիան անդրկուրյան Աղվանիքի թագավորն էր եւ չէր կարող ուստականել Աղվանիքի կամ Ուստիքի ու Արցախի իշխանական տաճը, քանի որ Ուսնայրի ժամանակ (IV դ.) Ուստիքի ու Արցախը գտնվում էին Մեծ Դայրի թագավորության կազմում» (նյութի էջ 1):

Այսպահի հետո Երկար-Բարակ (այս, եւ Երկար, եւ Բարակ) խոսելոց հետո կայութի հեղինակը հար է տալիս: «Ուսնայրին անդրկուրյան Աղվանիքի թագավոր հայտարարող Բ. Ա. Ռուլութարյանը նրա անդրկուրյան գործունեության հինգ փաստուություններուու է հանդես եկել Ուսնայրը Անդրկուրյան Աղվանիքում: Եթե իր պայտումների ընթացքում մկրնաղբյուրներուն նա հանդիպել է մանաւ հաղորդումների, ապա ինչո՞ւ է լուսն դրանց մասին են չի մերկայացնում ընթերցողին: Մենք մեր պայտումների ընթացքում Ուսնայրի անդրկուրյան գործունեության փաստի կամ հաղորդման շենք հանդիպել» (էջ 9):

Բայց մի՞թ թ. Բ. Ռուլութարյանն է մերկիոր, որ այս մարդը չի հանդիպել նման փաստի կամ հաղորդումների:

Ծիշտն ասած, իմ հոդվածի ծեռագրի մեջ հանգամանորեն ցույց տրված է կոյել այն, ինչ պահանջում է նյութի հեղինակը եւ ինչի որ ինքը համառորդն չի հանդիպում չի ուզում հանդիպել: Այն ընթելի է հոդվածից, սակայն նա, այսուանենայնիվ, էասական նշել եւ աղյուրները «Խորենացի, էջ 304, Բուզանդ, դպր. Ե. գլ. Դ» («Լրաբեր», էջ 57): Ննան դեպքերում բահմաց ընթերցողն աշխի կանցկացներ այսօրինակ հղումները եւ նոր միայն Ակատարեր իր դատողությունները: Եթե նյութի հեղինակը այդպես վարկած լինելի, կտեսներ, որ Խորենացին ու Բուզանդը Ուսնայրին հաճարում են Աղվանիքի թագավոր, ապա պատմում, թե ինչպես նա պատերազմի եր եկել Դայաստանի վրա, մարտի մեջ խայտակաբար պարտվեց ու ծանրի ներարկվելով զնաց իր Երկիրը: Այսպահ կատարվել է 363 թվականին: Նյութի հեղինակը հիշում է այսպիսի մի քամի պատերազմներ, որոնցում Աղվանիքի թագավորը Ուսնայրը կրվում էր հայոց դեմ (նյութ, էջ 16-19), եւ որոնց աղյուրները Խորենացու, ինչպես նաև Բուզանդի կրկերն են: Խակ չէ՝ որ մենք գիտենք, թե Խորենացին ու Բուզանդն ինչպես նայրի ու Աղվանիքի միջեւ սահման էին ճանաչում Կուր գետը: Այսպահ գիտե-

նույնիսկ նյութի հեղինակը և ընդգծելով մեջ է բերում իր նյութի 13-րդ էջում:

Իսկ եթե նա գիտե, որ Խորենացին ու Բուզանդն Աղվանք են ճամացում Կուրոյից հյուսիս ընկած երկիրը եւ Ուռնայրն է այդ Աղվանքի թագավոր են համարում, եւ ինչի՞ դեմ է վիճում: Չե՞ որ Բ. Ռուբեաբյանը կրկնել է մեր այդ դասականների արձանագրած փաստը:

Պարզվում է, որ նյութի հեղինակի համար ոչ մի նշանակություն չունեն Խորենացու և Բուզանդի տեղեկությունները, քանի որ նրա աշքում անտարկելի հեղինակություն է Կաղանակատվացին, որի պատմության մեջ եւ Ուռնայրը, եւ Եսվաղենը, եւ բուն Աղվանքի մյուս թագավորները Յայոց Աղվանքի տերեր են հայտարարված առանց որեւ պատճական իմբրի:

Բայց 10-րդ դ. պատմիչ Կաղանակատվացու տեղեկություններն ինչպէ՞ս են աղբյուր ընդունվում 4-րդ դարի հրոդությունները Ենթայացնելու համար: Եյութի հեղինակը մտածե՞լ է այս մասին, երբ վերցրել է Ուռնայրի մասին Կաղանակատվացու հյուսած հերթաքի մասերն արտագրել է որպես պատճական ճշմարտություններ:

Չորրորդ դարում Ուտիքը ու Արցախը մտնում էին Մեծ Յայքի թագավորության մեջ եւ չին կարող ունենալ իրենց առանձին թագավորը: Այդ հաստատում են Խորենացին, Բուզանդը: Ազանքեագեղոսը վկայում է, որ Արցախի (Ծաղկից) եւ Ուտիքի իշխաններն էին, որոնց Գրիգոր Լուսավորչից ըրիստոներյուն ընդունեցին եւ եկան իրենց նահանգներում էլ տարածեցին նոր հավատը (տես Ազաքանքեղայ պատմութիւն, 1914թ., էջ 404): Իսկ Կաղանակատվացին ասում է Ուռնայր թագավորն էր, որ Գրիգոր Լուսավորչից մկրտվեց ու եկավ Յայոց Աղվանքը լուսավորեց (Կաղանակատուացի, էջ 21):

Եթե հավատալու լինենց Կաղանակատվացուն, պիտի ընդունենք, որ Ուռնայրը 300 թվականին (հայոց ըրիստոներյան ընդունելու տարին) թագավոր էր եւ 370-ական թվականներին այնքան առողյա էր, որ կրվի գնաց հայոց դեմ, Մուշեն Մածիկոնյանն էր բռնեց նրան, զանցը ծեծեց նիզակի կորով ու ճանապարհ դրեց:

Նետաքրքիրն այն է, որ Կաղանակատվացին թագմից խոստովանում է, թե մեր դասական պատմիչներից քաջի ուրիշ աղբյուր չունի ինքը. որ այս բոլոր պատմությունները նրանցից է առել են:

Ո՞րն է այսօրվա պատճառամբ խնդիրը. Կաղանակատվացու հաղորդած տեղեկություններն ստուգել նրա իսկ վկայակողող աղբյուրներով, քննել ու պարզել պատճական ճշնարտությունը եւ նոր միայն հանել Վժիոներ:

Եյութի հեղինակը ի միջի այլոց անդրադարձում է նաեւ ուրիշ հառցերի, ակամա ցուց տալով, որ Կարդացել է Ետոյին, Աս. Մանացականյամին (նրա միջոցով Ա. Չամչյանին), սակայն տեղյակ չէ գոնե իին հայկական աղբյուրներին, մեր իին պատմության ու պատճական աշխարհագրության ամենատարածված տեղեկություններին: Թե չէ, Փայտակարանն ու Բայլականը չը նույնացմի (նյութ, էջ 21), կամ չէր հայտարարի, թե «387 թվականի պարսկա-հռոմեական պայմանագրով ստորդվում է Աղվանական վարչական միավորը կամ ընդհանուր (միասնական, նոր) Աղվանը»: Այդ ժամանակ էր, որ Յայաստանի հյուսիսային նահանգներ Ծոփքը, Աղճիքը, Կորդքը, Նուշիրականը, Գուգարքը, Ուտիքը, Արցախը եւ Բաղասականը հայտարարվուն են Մեծ Յայքից անջատված եւ մտց-

վում են ընդհանուր (միասնական, նոր) Աղվանքի կազմի մեջ» (նյութ, էջ 19-20): Այս եւ մյուս կետադրությունը, ուղղագրությունը նյութի հեղինակին են - Ու. Բ.):

Ուրեմն, Ծոփքը, Աղճիքը, Կորդքը, Նուշիրականը Յայստանի հյուսիսային և սահմաններն են և նույն Աղվանք մարդի մեջ, Բաղասականը հայկական նահագ է, եւ Աղվանը մարզն է ստորդվել է 387 թվականին: Տեսմո՞ւմ եք, հայագիտական իին նակարդակով է իմ ընդունակություն ասպարեզ մտե՞լ իր առաջ նպատակ դնելով իմ դաս տալ հայ ժողովոյի պատմությունից ու աշխարհագրությունից:

Եյութի սկզբում հեղինակը հիշում է, որ ես իմ դեսերտացիայում ենթադրաւար Ուռնայրին համարել են Փայտակարանի կուսակալ («Ուռնայրը թագավոր չէր. այլ... կուսակալ, որ հավանաբար նստում էր Փայտակարան թաղաքում» (նյութ, էջ 2)), ապա հիշյալ հոդվածում արդեն նրան ճանաչում եմ որպես բռն Աղվանքի թագավորից: Այսքանից հետո էլ հարց է տալիս. «Բ. Ա. Ուլուբարյանի ու Ենթադրությանը հավատալ Ուռնայրը անդրկուրյան Աղվանքի թագավորն է թ. Կուրի աջ ափի տերն ու տիրակալը, թէ» Փայտակարանում նստած կուսակալը: Եթե Բ. Ա. Ուլուբարյանը նոր ուսումնասիրությունների հետնաւճով փոխում է իր կարծիքը այս կամ այն դեմքի ու դեպքի կուրի վերաբերյալ, ինչո՞ւ չի ակնարկու մինչ այդ կատարած իր սխալի մասին» (նյութ, էջ 3):

Նախ ասն, որ ես ոչ մի տեղ Ուռնայրին չեմ համարել Կուրի աջակինյակի «տերն ու տիրակալը»: Նյութի հեղինակը խեղաքուրում է իմ կարծիքը:

Դիմուտացիային մեջ իսկապես ննթադրաւար (գրված է «հավանաբար») լուսն ճանաչել են Փայտակարանի կուսակալ, որովհետեւ Կաղանակատվացին շատ է խոսում այդ մասին: Բայց սա դեռևս այն ժամանակ արդեն հաստատ համոզված էի, որ Ուռնայրը ոչ մի կամ չունի Յայոց Աղվանքի (Արցախ, Ուտիք) նկատ: Սա ինքնին նոր մոտեցում էր մի սկսնակ պատճառամբ կողմից, որը կասկածի տակ էր առնում վայուց ի վեր կանոնացված ըմբռությունները: Դիմուտացիայում ես չի կարող լուծել Աղենելյան Աղեղովկանի իին պատճությանը վերաբերող բոլոր կմնածող հարցերը: Յնտաքա ուսումնասիրություններն են, որ ինձ թերին հոդվածում շարադրված եղրակացությունը: Իսկ վերջինում ես չի կարող անդրադարձու պիտիրացիայի մեջ արտահայտված ենթադրությանը, բանի որ այն հրապարակված չէ:

Դամառուտ այս է իմ ասելիքը խնքագրություն մտած նյութի մասին: Սնացած կա հոդվածի մեջ եւ չեմ ուզում վերաշարադրվել: Ես նկատի ունեմ հատկապես այն հանգամանքի բացադրությունը, թե ինչպես է պատճառ ու Կաղանակատվացին իրավունք ու պարտականությունը միավորը կամ ընդհանուր պարտական աղբյուրությունը է Աղվանական վարչական միավորը կամ ընդհանուր (միասնական, նոր) Աղվանը: Այլու աղանդական պատճությունը մեջ աղբյուրությունը է Աղվանական վարչական միավորը կամ ընդհանուր (միասնական, նոր) Աղվանը: Այս պարտականությունը մեջ աղբյուրությունը է Աղվանական վարչական միավորը կամ ընդհանուր (միասնական, նոր) Աղվանը:

19-11-1971, Երեւան

ՈՐՔԱՆ ԿԱՐԵՎՈՐ Է ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆՈՒՅՆՔԱՆ ՑԱՎԱԼԻ ԵՆ ՆՐԱ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

Լույս է տեսել Հայկական սովետական հանրագիտարանի առաջին հատուրը: Դա խոչը երեւութ է հայ ժողովրդի մշակութային կյանքում: Եթենքելով հայկական մշակութի ու գիտության զարգացման բազմադարյան փորձի վրա եւ օգտագործելով համաշխարհային, հատկապես ռուս սովետական հանրագրտական մտքի նվաճումները՝ Հանրագիտարանի բազմաճյուղ խճագրությունը, նրա պաշտոնական ու զ պաշտոնական բոլոր աշխատակիցները ստեղծել են մի կորող, որն անցյալուն չունի իր ննանակը եւ երկար ժամանակ պետք է օրինակ ծառայի ամեն առունով՝ գիտական խորության ու ընդգրկած նյութի հարստության, շարադրանքի մատչելիության եւ նույնիսկ պոլիգրաֆիական բարձր արժանիքների տեսակետից:

Կասկածից դուրս է, որ Հանրագիտարանի ուսկյա որակներից է նրա հայագիտական մասը: Եվ սա միանգամայն հասկանալի է. հայագիտությունն իր նախընթացով եւ հատկապես սովետական շրջանի բուռն զարգացմամբ հասել է մի մակարդակի. երբ նրա բոլոր հիմնական հարցերը կամ լուծված են, կամ գտնվում են բնական մի այնպիսի մեջնորդություն, որը սխալմերի ու թյուրիմացությունների հետարակորդությունը հասցնում է նվազագույնի: Այս պատճառով էլ ցավակի են հայագիտական առանձին հոդվածներում տեղ գտած այն սխալների ու հակապատճական պնդումները, որոնք գալիս են աղբյուրագիտական նյութի անբավարար իմացությունից եւ հատկապես հայագիտական փորձի նկատմամբ եղած անտարբերությունից: Այսպիսի կրկնակի ցավակի ու վնասակար են այս դեպքերում, երբ խոսքը վերաբերում է կովկասահության, հատկապես հայ-աղվանական պատճա-մշակութային առնչությունների մարդկան, ուր պատճության կենցարարները շատ ջուր են պղտորել եւ երբեք չեն ուշանում հայագիտության մեջ տեղ գտնող ամեն մի թյուրիմացություն անմիջական իրենց հակագիտական ու հակապատճական նկրտումներին հարմարեցնելու եւ հայագիտության դեմ համելու համար:

Հանրագիտարանի սույն հաստորում Աղվանքին են նրա ու պատճական Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգների (Շուշիք, Արցախ, Փայտակարան) առնչություններին նվիրված հոդվածներն ու քարտեզը ընդգրկում են միայն 4 տից պակաս տարածություն: Եվ այս 4 էջերում այնքան սխալներ կան, այնքան աղավաղումներ եւ հակապատճական պնդումներ ու հայտարարություններ, որ թվում է, թե այս էջերը հրապարակ հանողմերը հետապնդել են հատուկ նախատեսակ՝ ապացուցելու, թե գիտական աշխատանքն ինչպիսի անհեթերության է վերածվում, երբ արհանարհվում են պատճական աղբյուրները, եւ երբ մարդիկ անտեղյակ են լինում նախորդների փորձ ու գործից:

Հանրագիտարանի «Աղվանք» հոդվածում ու նրան կցված քարտեզում «բուն Աղվանքի երկիրը» տեղադրված է Կուրի ծախս ափին, ընդգրկում է մի տարրածություն, որը հյուսիսում հասնում է Կովկասյան լեռնաշղթային, իսկ արեւելքում չի էլ հասնում Շամախիին:

Այսպիսի տեղադրությունը հակասում է հայ եւ օտար աղբյուրների տեղեկություններին, որոնք տվյալ հարցում միշտ ել իրար հետ հաշտ են ու համերաշխ: Օրինակ, Ստրաբոնը՝ Աղվանքի պետական կազմավորման ու նրա ստույգ սահմանների մասին կոմկրետ վկայություններ հաղորդող առաջին հեղինակը, պատմում է, որ իր ժամանակ նոր միայն ստեղծվել է Աղվանք միասնական բազավորությունը, որի մեջ մտնում էին բոլոր 26 ցեղային տարավեցու միավորները, եւ նրանց սահմանը հարավում կուր գետն է, հյուսիսում՝ Կովկասյան լեռնաշղթան, արևմուտքում՝ Ալազան գետը, իսկ արեւելքում՝ Կասպից ծովը¹:

Ծիշտ նույն տեղեկություններն են նաև Պտղոմեոսի աշխատության մեջ, ուր Աղվանքի արեւելյան սահմանը նշված է առավել մանրամասն: Եթե Ստրաբոնը Աղվանքի սահման է համարում կասպից ծովն առհասարակ, ապա Պտղոմեոսը նշում է նաև այդ սահմանի սկիզբն ու վերջը, սկիզբը՝ «Կուրի գետաբերանը» (քանի որ այն հարավային սահմանն էր նաև)², ապա տարածվելով «Վրլանից ծովի մի մասով», հասնում է «մինչեւ Սոնան գետը»³:

«Վրկանից ծովը» նույն Կասպից ծովի անվանումներից մեկն է, իսկ Սոնան Սամուր գետն է, որը հոսում է Ղերենողից հարավ: Ուրեմն, այստեղ Աղվանքի արեւելյան սահմանը ծովեցերքով հասնում էր Մինչեւ Ղերենող:

Հայկական «Աշխարհացույց»-ը եւ, նույն է կրկնում. «Աշխարհ Ալբանիա, այսինքն՝ Աղուանք, յելից Կրաց աւ յերի Սարմատիոց առ Կաւկասով մինչեւ ի կապրիզ ծովն եւ զիայոց սահմանն առ Կուր գետով»⁴:

Այսպիսով, աղբյուրները վկայում են, որ ծովափիյա տարածությունները՝ Կուրի գետաբերանից մինչեւ Չող-Դաբրանոց, մտնում էին Աղվանքի մեջ, իսկ ներ Հանրագիտարանի հոդվածն ու քարտեզը դրամբ դրւու են բոլոր Աղվանքի սահմաններից: Այս պատճառով էլ Աղվանքի մեջ չնտնող ինքնուրույն (թե՝ պետություններ) են դարձել Արեւելյան Անդրկովկասն զարթեցնող Բագկանը, Խսրվանը, Չրվանը, Չուլը, Սագրուտքը, Թավասպաքը, Լեկը եւն: Մինչդեռ ցայծն հայտնի բոլոր աղբյուրների համաձայն՝ սրանք բուն Աղվանքի պետության կազմի մեջ մտնող ազգային միավորումների անուններն են: Ընդ որում՝ Չուլն ու Մագրուտքն է ոչ թե տարբեր երկրածանաեր են ցույց տվել, այլ նույն երկիր տարբեր անուններն են, առաջին ազգագավառի կենտրոնի առունուկ, որով եւ համայն ազգագավառն է կոչվել («Չուլայ երկիր»), իսկ երկրորդը՝ ցեղային միավորման անունը, որով դարձյալ կոչվել է երկրածանար:

«Աշխարհացույց»-ի բոլոր խմբագրություններում Բագկան-Բաղասականը մտնում է բուն Աղվանքի մեջ⁵: Սնան տեղադրություն հաստատվում է նաև հայ ուրիշ հեղինակների, ինչպես նաև օտարների վկայություններում: Այդ հեղինակները հաստատում են, որ Բագկան-Բաղասականը բուն Աղվանքի այն մարզն է եղել, որն անմիջապես սկսվել է Կուրի հոսանքից եւ Կասպից ծովի ակիմ տարածվելով՝ հասել Մագրեաց կա Չուլա մարզի սահմաններին: Իսկ Մագրեաց աշխարհը (Չուլ կամ Հարրան կենտրոնում) նույն բուն Աղվանքի ծայր հյուսիս-արևելյան մարզն էր, որի մասին Փ. Բուզանդի հաղորդած արժանահավատ տեղեկությամբ պարզվում է, որ նույն Չուլն էլ հենց բուն Աղվանքի մայրաքաղաքն է եղել Մագրեաց (=Աղվանից) Արշակունի բազավորության ամ-

բողջ ժամանակաշրջանում: Յայ պատմիքը թվարկում է բուն Աղվանքի տարածքում գտնվող ազգագավառների բնիկներին «...Յոնաց եւ փոխաց, Թավասպարաց, Շեճնատակաց, Խմախաց, Գարաց եւ Գդրաւարաց, Գուգարաց (Կարդալ՝ Գարգարաց- Բ. Ու.), Հշրաց եւ ճորաց, եւ Բաղանաց եւ Եգերսուամացն եւ այլոց», ապա հայունում, որ Մզաքթաց Արշակունի թագավորը սրանց բոլորին «միանգամայն ինքն իշխելը»⁷:

Մեր հեղինակը կոմկրետ տեղեկություն է հաղորդում նաեւ Մազքթաց Արշակունի թագավորում ենթակա երկրի հարավային սահմանի մասին. «Եկն անց ըստ իր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր. եւ եկն տարածեցավ գերկիրն Հայոց աշխարհին»⁸:

Սա այլ քանի չնշանակում, քան այն, որ Մազքթաց Արշակունի թագավորը տերն էր անդրկուրյան երկրին՝ Աղվանքին, եւ նրա իշխանությունը տարածվում էր աղվանական ցեղային միավորների («Յոնաց եւ փոխաց, Թավասպարաց, Շեճնատակաց, Խմախաց, Գարաց եւ Գդրաւարաց, Գարգարաց, Հշրաց եւ ճորաց եւ Բաղանացն եւ Եգերսուամաց եւ այլոց») վրա: Ֆիշտն ասած, Բյուզանդի այս տեղեկությունը նորություն չէ. աղվանական թագավորության տարածքում բնակվող այս ցեղերին թվարկել էր նաեւ Ստրաբոնը⁹, եւ երկու հեղինակների իշխատակած երնունիմների միջեւ կան միայն հնչյունական տարրերություններ:

Սակայն մեր Հանրագիտարանի թարտեզում Աղվանքի թագավորության սահմաններից դուրս են «Շեճնատակը», «Թավասպարը», «ճիղը» եւ այլ ցեղագավառները: Այստեղ Աղվանք-Ալբանիայի մեջ չի մտնում նույնիսկ մի այնպիսի ցեղային միավորում, ինչպես «Լընիքը», ոյը ոչ միայն Աղվանից թագավորության հիմնական բաղկացուցիչն է եղել, այլև գիտնականներից շատերը հետո այս ցեղանունից սերված են հաճարում «Ալբանիա» («Աղվանք») տեղանունը¹⁰:

Կարելի է Վերջին թյուրիմացության պատճառն էլ բացատրել: Ըստ Մովսես Դաստիարացու պատմության՝ 680-ական թթ. Խորայել եպիսկոպոսի օլիսավորությամբ Պարտավից բանագնացներ պիտի գնային Յոնաց երկիր: Նրանց ուղերքը պիտի անցներ Չողա կամ Դարբանդի դամով: Եվ ահա նրանք «Ի Պերոգապատ քաղաքի Վտարեալ անցանեն ընդ գետն մեծ Կուր: Դատեալ անցանին ընդ սահմանն Աղվանից եւ միջնեւ երկուտասան օր զային հասանեին ի քաղաքն Յինաց... եւ անտի զնացեալ անցանեին յաշխարհն ճրաց առ ստորոտով լերինն մեծի»¹¹ եւ սրանից հետո էլ երկար ու տառապալից ճանապարհ կորելով «Երեւալ ի վաղնցուց ի թագավորանիստն հաստմէին կայտնան յայն տեղի. ուր Վկայեց սուրբը Գրիգորիս... Անտի յետ աւուրց ինչ հասնեին ի դուռն Շողայ, որ է մերձ ի Ղարբանդ»¹²:

Այստեղից պարզ է, որ բանագնացները Պերոգապատ-Պարտավ քաղաքից զնում-անցնում են Աղվանքի սահման Կուր գետը, ապա մտնում Նիմաց աշխարհը, հետո ճորաց աշխարհը Կովկասյան լեռնաշղթայի ստորոտում եւ այսքանից հետո է, որ պիտի անցնեին Չողա դղնով («մերձ ի Ղարբանդ»): Այս բոլոր կատարիկը է Կովկասյան լեռնաշղթայից հարավ: Իսկ մենք գիտենք, որ բուն Աղվանքի հյուսիսային սահմանն անցնում էր այդ լեռնաշղթայի գագաթ-

նածրով: Մինչեւ քարտեզում, «ճիղը» տեղադրված է լեռնաշղթայի հյուսիսային լանջին, իսկ «լընիքը», թեպետ եւ հարավային լանջին, սակայն բուն Աղվանքից դուրս է տեղադրված: Միթե միայն հապիտուրանցու տեղեկության այն մասի հիմքի վրա, ուր ասված է. «անցանեին ընդ գետն մեծ Կուր: Դատեալ անցանին ընդ սահմանն Աղվանից», հետո միայն «հասանեին ի քաղաքը Լինելու»: Բայց չէ՝ որ հայտնի է նաև, որ Դաստիարացու (Կարանակատվացու) Աղվանքը Դայոց Աղվանքն է Կուրի այս ափին եւ այդ մասին հեղինակն իր գործի հետեւ առաջին հայ էցերից մեկում գգուշացրել էր, թե իր այդ Աղվանքը ընդորություն է հայոց Արցախը ու Ուտիշ նահանգների տարածքը հարանից զավանելով «ի գետն Երասխայ միջնեւ ցամուրն Դանարակեն» (Կուրի վրա)՝¹³: Այսօր վայ հայագիտական մտքի հանրագրությունը համուսանալիք Հանրագիտարանն իւսչաւն է խանուում այնպիսի պարզ բաներ, որոնք պատմագիտության համար հսկանալի ու հայտնի էր սրանից դեռեւս հարյուր հիսուն տարի առաջ¹⁴:

Քարտեզում Մեծ Յայթի Արցախն նահանգի հարավ-արեւելյան մասում, Անալյասի հարեւանությամբ է տեղադրված «Գարգարացվող դաշտը»: Աս ինքնին շատ բան է նշանակում, քանի որ գարգարները բուն Աղվանքի տերերից էին, եւ աղվանական ցեղախմբերի մեջ, ըստ Երեւույթին, նրանց վերապահված էր ոչ կուրորդական դեր: Դիշենք թեկուզ այն հանգամանքը, որ աղվաների համար Մերուպ Մաշտոցը գրեթե էր ստործել գարգարների լեզվի հիմնան վրա: Այս վաստան արդեն հուշում է, որ գարգարներն ու նրանց լեզուն Աղվանքի թագավորության մեջ ունեցել են ազդեցիկ նշանակություն: Եվ եթե գարգարացիների կամ համենայն դեպքում կամ համենայն դեպքում կամ համարձիք, ըստ որի արդարացները գարգարացիների կամ գարգարների են եղել: Այստեղից է ծնունդ է ստորև այն վարկածը, որի համաձայն, իբր թե, Արցախին (նաև՝ Ուտիշի) ընալիշներն աղվաներ են եղել, եւ հայերը Գրիգորյան-Լուսավորչական եկեղեցու միջոցով նրանց ներարկել են իրենց հոգեւոր աղբեցությանը, ապա ասիմիլացիայի ենթարկել:

Ահա թե մի հասարկ տեղամվան տեղադրությունն ինչ է բերում իր ետեւից: Բայց օրինական հարց է ծագում. աղբեցութական հնչ հիմք կա Գարգարացվող դաշտի այսպիսի տեղադրության համար: Ըստ Երեւույթին, Խորենացու հետեւյալ տեղեկությունը, որը գրչական սինալի պատճառով հետեւյալ տեսքն է ընդունել «Իսկ թագաւորն Տրդատ ամենայն Յայաստանոյ իշեալ ի դաշտն Պարգարացոց պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի...»¹⁵: Այստեղ եւ որուն այլ տեղ դաշտի տեղը ցուց չի տրված: Այս կոնկրետ տեղում պատճենագիտական հայտնի է այժմյան Լեռնային Ղարաբաղի գետակներից մեջի վրա:

Այս ենթադրությունը կատարում ենք հետեւելով Ս. Երենյանի բացատրության տրամաբանությանը: Նա է, որ Բաղասական դաշտը բացատրում է այսպես. «այժմյան Միլի դաշտը, ավելի վաղ շրջանում կը չըսկու էր «Գարգարացվող դաշտ»»: Բաղասական դաշտի այն մասը, որը գտնվում է Կուրի եւ Երասխային համար պետք է մի այլ տեղամուն Կարկառը¹⁶, որը պահպանվել է այժմյան Լեռնային Ղարաբաղի գետակներից մեջի վրա:

գետերի միախառնման եղանակունում, կոչվում էր Բեղամեծ (տես Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց, գլ. ԺԱ, Երեւան, 1961, էջ 203»)՝¹⁷ Ապա. «Գարզարացւոց դաշտ - այժմ Միլի դաշտ, Գարզար գետի հովտում», եւ «Գարզար գետ - այժմ Կարկար-չայ. Միլի դաշտում. սկիզբ է առնում Արցախի Դիզափայտ լեռներում»¹⁸.

Այստեղ որքան նախադասություն այնքան էլ սխալ կա: Միլի կամ Սուրեանի դաշտը երբեք եւ ոչ մի աղբյուրում չի կոչվել Բաղասական դաշտ, քանի որ այն գտնվում է Եղանակի ծախ ափին, իսկ Բաղասականը, ինչպես վերը տեսանք Կուրի ծախափնյակում: Կիրակոս ասում է Բեղամեծը ոչ թե Կուրի ու Երասիխ «միախառնման եղանակունում» էր գտնվում, այլ «ի մեջ երկուց քաղաքացն Պարտաւայ և Բեղլովանայ յաճրագոյն տեղից, զոր Բեղամեծն կոչեն»: Նախ սրանք տարբեր տեղեր են, ապա «ամրագոյն տեղիքն» ու «դաշտը տարբեր քաներ են: Եվ երրորդ Գարզար գտն չկա: Այն գետակը, որի մասին խոսվում է, կոչվել ու կոչվում է Կարկար եւ սկիզբ է առնում ոչ թե Դիզափայտ լեռներում (կա միմիշան Դիզափայտ գագար), այլ Ղարաբարայան լեռնաշղթայի այն նասում, որը կոչվում է Քիր:

Միանք, իմիջիայլոց: Քանի որ մեզ համար կարենորդ «Կարկար» - «Գարզար» - Գարզարացւոց դաշտ» սխալ համարությունն է, որպիսի թյուրիմացություն տեղի չէր ունենա, եթե նկատի առնված լինեն հայագիտության քննական պրատումները:

Ավելի քի հարյուր տարի առաջ Վենետիկի Միխթարյանները գրչագրերի քննական համադրությամբ եղրակացրել են, որ Խորենացու Պատմության մեջ «Գուրզարացւոց» քառան է գրչական աղավաղումների ենթարկվել ու դարձել «Գարզարացւոց»¹⁹: Որ սա ակնհայտ աղավաղում է, առավել ցայտուն երեւում է Ազգաթանգեղոսի Պատմության գրչագրերի ուսումնասիրությունից: Այս պատմության «Գուրզարացւոց»-ի փոխարեն գրիչները շատ հաճախ գրել են «Գուրզարացւոց» ձեւը²⁰: Սակայն մենք գիտենք, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Մեծ Հայքի հյուսիսային սահմանները Վերահակող բդեշին, իսկ այսպիսին եղել է «ուրերորդ իշխանն Գուրզարացւոց աշխարհին, որ միւս անուանեալ բժնաշխն»²¹: Եվ, վերջապես, քանատեր Շ. Դակորյանը համանման դեպքերի մանրակիլիտ քննությամբ ապօքել է, որ Կուրի ափին Վերաբերող վերոհիշյալ բոլոր տեղեկություններում «Գարզարացիք» ոչ մի տեղ չունեն, քանի որ այդ տարածքի տերերն են եղել գուգարները հայկական Գուգարը նահանգի բնիկները²²:

Այս բոլորի հետ միասին չենք կարող չիշիշել նաեւ այն երկու աղբյուրները, որոնք գարզարներին, իբրեւ աղբամական ցեղային միության ներկայացուցիչների, տեղադրում են բուն Աղվանքում: Առաջինը Ստրարոնի աշխարհագրությունն է, որի տեղեկության համաձայն գարզարներն ապրում էին Կովկասյան լեռնաշղթայի լանջերին, ամագոնուիկների հարեւանությամբ²³: Իսկ երկրորդը մեր, Աղվանից աշխարհի պատմությունն է, որը տեղեկացնում է, թե գարզարները հսկապես բնակվում են Կովկասյան լեռնաշղթայի լանջերին, եւ նրանց այն տեղ բնակության է տեղափոխել դեռևս Ալեքսանդր Սակեղոնացին («...գերութեամբն էր ածեալ Աղեքսանդրի Մակեդոնացոյն եւ նստուցեալ զմեծ լեռամբ»

Կովկասու գԳարզարան եւ զԿամիճնկի Յեփթաղսն...»)²⁴:

Այսպիսով, Կուրի ավագանում էր զտնվում Գուգարացոց դաշտու, որն աղբյուրներում, գրչական աղավաղումների հետնամբռով, հաճախ դարձել է «Գարզարացւոց դաշտ»: Յետեսապես, այն չի կարող հիմք հանդիսանալ Կուրի ավագանում գարզարներ բնակեցնելու եւ նրանց այդ բնակավայրը Գարզարացոց դաշտը կոչվելու համար: Այսպիսի վարկածին չի կարող ծառայել նաև Կարկառ անունը, որը ուսումնասիրողների կողմից վերոհիշյալ թյուրիմացության նմանությամբ, ընդունվել է իբրեւ Գարզար²⁵ եւ դարձյալ հարմարեցվել է հակառակամական վարկածին: Չի կարող այն պարզ պատճառով, որ «Կարկար»-ը լունիկ ժողովրդական արտասանությամբ երթեք չի հնչել «գարզար», իսկ լունիկանված միակ աղբյուրագիտական տեղեկության մեջ «Կարկար» է²⁶, որ և այնակում է «քարզարոտ տեղ», «քարակույտ», «միջնաբերդ կամ ամրոց»²⁷, որով, ըստ Երեւույրին, կոչվում է Յասան-Զալյաւանների բերդ-ամրոցներից մեկի, ապա եւ նրանց տիրույթներում հոսող գետակը:

«Կարկար» տեղանունը տվյալական է եղել հիմ հայերենում եւ տարածված լի նույնիսկ 16-17-րդ դարերում²⁸:

«Աղվանք» հոդվածում տարբեր ազգագալականներ ու քաղաքներ են համարվում Չողճ ու Դարբանդը²⁹: Նրանք, ինչպես նաեւ այդ անուներով պահակադրության տարբեր, իրարից հեռու տեղերում են դրված նաեւ քարտեզում: Առևայն «Աղվանից դուռ» հոդվածում նույնական են «Աղվանից դուռ», «Աղվանից դուռ», «Ճողա դուռ», «Ճողա պահակ», «Չողա դուռ» հորջորդումները³⁰:

Սա հիշեանտեղականություն է: Ընթերցողը Յանձնագիտարանում իրապարակված ո՞ր կործիքն ապաց հավատա: Նրանցից ո՞րն է հաստատվում աղբյուրագիտական նյութերում:

Յայտնի է, որ Չող, Չոր, նոր անունները հիմնականում պահանձնվել են հայկական աղբյուրներում³¹: Օրինակ, հայոց «Աշխարհացոյց»-ը հիշում է «...պարսկան Դարբանդա», այսինքն կապ եւ դրւուն քաղաք պահակին ճորայ»³²: «Պարսկան Դարբանդա», «դուռն Դարբանդա», «կապ եւ դրւուն Դարբանդա» նույն յանձնեն են: Երկրորդ դեպքում «Դարբանդա»-ին փոխարինում է «Ճորայ»-ը: «Աշխարհացոյց»-ը սրանք նույնացնում է, հաստատելով, որ Դարբանդի դուռն այն է, ինչ դուռն ճորա: Դատեսապես, միաւ է այդ երկու անուններով դուռ-պահաներ իրարից տարբերելը: Նրանք նույնն են: Բայց եթե նույնն են «դուռն Դարբանդա» եւ «դուռն Ճորա», նշանակում է նույնը ապաց էլ լինեն նաեւ Դարբանդը եւ Չորը, քանի որ պարհապ Կառուցված էր Դարբանդի հյուսիսային կողմուն նրա պաշտպանության համար, ինչպես նաեւ Աղվանքն ու Անդրկովկասը հյուսիսային վայրենաբարպ ցեղերի ասպատակություններից փրկելու համար: Եթե այդ պարհապ կոչվում է «Դարբանդա» եւ միաժամանակ «Չոր»-ը չաղութեանների լեզվով նշանակում է «ծոր»³³: Յթ. Աճառյանը առնչություն է տեսնում

Յետաքրքիր է, որ ստուգաբանության եւ հաստատվում է այդ երկու տեղանունների նույնությունը: «Դարբանդ» հետագա հորջորդում է կազմված «Դարբա» (ծոր) եւ «քանդ» (կապ) պարսկական քառամատներից: «Չոր»-ը չաղութեանների լեզվով նշանակում է «ծոր»³³: Յթ. Աճառյանը առնչություն է տեսնում

հայերեն «ծոր» եւ սանսկրիտ ու պարսկերեն լեզուների «dara» արմատների միջներեն՝ շամենայն դեպս, եթե կովկասից յաղնորցիների լեզվով տեղանունը կոչվել է «կապ Չորա», ապա այսոր է, որ եկվոր պարսիկները թարգմանելով այն պատր է դարձնեին Դարա-քանդ - Դարբանդ:

Սոհասարակ սխալ է, եթե Շամրագիտարանի հիշյալ քարտեզում Կասպից ծովի ամրող երկարությամբ տարբեր անուններով պահակ-պարիսապներ են շարժված: Դրանցից միայն մեկն ունի պատմական հավաստիություն Դարբանդի կամ Չորա (ճորա-ճողա) դուռը, «որ է ընդ մեծ իշանութեանն Աղուանից եւ Չոնեա»³⁵:

Շամրագիտարանի քարտեզում սխալ են տեղադրյալն նաև Փայտակարան նարզը եւ նրա կենտրոն Փայտակարան քաղաքը: Այստեղ նարզը փոփած է Երասխի աջ ու ձախ ափերով, եւ ձախափնյակուում կուրի ու Երասխի միջեւ է տեղադրյած Փայտակարան քաղաքը: Ծովագենք ասել, որ այս սխալը մեծ պատություն ունի եւ շատ հեղինակներ: Ինչպես արեւմտավորոպական արեւելագծեներին, այսպես էլ սովորական մի շարք գիտականների սխալեցրել է «Փայտակարան» եւ «Բայլական» տեղանունները նույնիկ ճանաչելու, գայթակղությունը³⁶: Եվ քանի որ Բայլականը հիմնավորապես տեղադրյալն է կուրի եւ Երասխի միջեւ, ապա զարմանալի չէ, որ Փայտակարան նարզը էլ տառածված է հաճարվում նրա շուրջը: Կ. Վ. Տրետյոց, իսկ նրան հետեւելու էլ վերջապես աղբեջանական հետազոտողներից ունան կարծում են, որ Փայտակարան նարզը ծավալվում է նաև կուրի ձախ ափին իր մեջ առնելով նույնիկ Ապշերոնի թերակղին³⁷: Եվ այսպես, սխալը հոյովվում է ու ծավալվում: Բայց ո՞վ է ասել, թե սխալը շատ կրկնվելով դաշնում է ճիշտ:

Մի առիթով ցոյց ենք տվել, որ այս տեղադրյությունները հակասում են Փայտակարանի նախն եղած եղակի աղբյուրագիտական հիմքին հայոց «Աշխարհացոյց»-ի երկու միանգամայն արժանահավատ տեղեկություններին³⁸: Նշել ենք նաև, որ «Աշխարհացոյց»-յան տեղադրյությունը ճիշտ ու հաճագամանալից բացատրություն է ստացել դեռևս Պուլաս Խնճիքյանից կողմից³⁹:

Ստիպված ենք այստեղ վերստին անդրադառնալ «Աշխարհացոյց»-ի տեղեկությունների ընթությամբ: Տրանցից առաջինն այն նախն է, որ «Փայտակարան յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ»⁴⁰: Ս. Տ. Երեմյանը սա քարզմանել է: «...Ուտիրից արեւելը, Երասխ գետի Վրա»⁴¹: Եվ հենց սա էլ հիմք է դարձել աղբյուրագիտական տեղեկությունը սխալ մեկնարաններու համար: «Սա Երասխաւ»-ը չի կարելի քարզմանել «Երասխ գետի Վրա»: «Առ նախդիրը գործիական հոլովկով գոյականի հետ որդիվեխս ումենում է հիմնականում «մոռ» բարի նշանակություն: Հետեւապես, «առ Երասխաւ»-ը պետք է քարզմանվեր «Երասխի մոռ»: Եւ այս «Երասխի մոռ»-ն էլ պետք է կոնկրետացվեր «Աշխարհացոյց»-ի մյուս տեղեկությունների օգնությամբ: Հէ որ Ուտիրի մասին գրված է «առ նախից կայ Երասխաւ, ընդ մեծ Արցախաւ և կուր գետոյ»⁴²: «Առ նախից կայ Երասխաւ»: «Երասխից արեւմուտք, Երասխից սկսած դեսկի արեւմուտք»: Եվ եթե Ուտիրի համար հյուսիսային սահման է եղել կուրը, նրա հարավ-արեւելան սահմանն էլ անցել է Երասխ գետով, ուրեմն եւ Երասխի ու կուրի միախանությունից ստացված անկյունն գրադեցրել է Ուտիրը: Այս իր հերթին կնշանակեր

Լրասիսից հյուսիս կամ արեւմուտք չի կարելի Փայտակարան վնատրել: Ղերես Դ Խոճիճյանցն էր քացարդել, որ «Աշխարհացոյց»-ի վերոհիշյալ տեղեկության նույնածածկ է միայն յարեւելեան կողմն Ռւսի նախագահին, այլ նաև Երասխանց... Եւ այսպէս Երասխ անցան ընդ մէջ երկողունց բարեւմտից ունելով գլուխի, իսկ յարեւելից զՓայտակարան»...»⁴³:

Այս տեղադրյությունը հաստատվում է նաև նույն «Աշխարհացոյց»-ի մի այլ միայնությամբ: Խոսելով մարզպանության ժամանակի իրողությունների մասին, «Աշխարհացոյց»-ի հեղինակը թվարկում է Ուտիրի ութ գավառները եւ Արցախի ուստմերկու գավառները, որոնք մտնում էին «Աղվանք» մարզպանության մեջ, ուստի հիշեցնում, որ այդ բանը գավառներն էլ ընդգրկում էին կուրի ու Երասխի միջնուն ընկած տարածքը «միշես ի խառնումն Երասխանի կուր գետ»⁴⁴:

Պարզ է, որ այսքանից հետո կուրի ու Երասխի միջեւ Փայտակարանի համար տեղ չպիտի ննար: Հետեւապես սխալվել են Շամրագիտարանի ընկերները Փայտակարան մարզաքը ու Փայտակարան մարզի մի նարը տեղադրելով Լրասիսի ու կուրի միջեւ:

Աղվանքին վերաբերող հոդվածներում տեղ են գտել բազմաթիվ թյուրիմաւորյուններ, որոնց ակունքը աղբյուրների ստույգ ու արժանահավատ տեղեկությունների նկատմամբ եղած արհանարիական վերաբերունքն է: Օրինակ, ինչ արժե այն հայտարարությունը, որի համաձայն, իր «Աղվանք» մարզպանությունը ստեղծվել է 387թ. (տես «Աղվանից մարզպանություն» եւ «Աղվանք» հոդվածները), երբ Արեւելյան Դայաստանի և Աղվանիքի բագավիրներն իրենց գյուղումը պահել են մինչեւ 428թ., իսկ նարզպանությունը նշանակում էր այդ բազմավորյունների զգոյւրյուն:

Աղվանից կարողիկությունը մեկ ստեղծված է համարվում 551թ., մենք էլ 609թ. (տես «Աղվանից Եկեղեցի»), եւ հայտարարվում է, թե «Աղվանից Եախսկությունը կենտրոն գտնվում է Ամարաս գյուղում» (անդ), երբ Ամարասն Արդարի կենտրոնական գավառ Յարանդում էր գտնվում, որը շիման ոչ մի կետ ուներ բուռ Աղվանից հետ:

Հանրագիտարանում տեղ է գտել նաև մի այսպիսի նախադասություն: «...Աղվանիրենը եղել է ուտիների հին լեզուն, որից էլ ծագել է ուտիերենը». Մայց ո՞վ է ասել, թե աղվանիրեն մեկ միասնական լեզու են ունեցել, որպեսզի այդպիսի լեզու էլ ճանաչվի պահելու համար:

Հականական քանակություն են կազմում աշխարհագրական այն միավորներն ու կետերը, որոնք սխալ-մխալ ցրված են քարտեզի վրա եւ ոչ թե տեղադրյած ըստ գյուղերուն ունեցող աղբյուրների ստուգվող ու ճշգրիտ տեղեկությունների: Արցախի արեւմտյան եղան հասնում է Զորագետն մոտերքը, երբ լուս բան ոչ մի ժամանակ չի եղել: Բուն Աղվանիքի բաղադր Յարին (արաբական սորյուներուն Սերիի) տեղադրյած է Արցախում, հավանաբար այժմյան Յոր լոյրիդի ամճամ հետ շիրոված լինելով պատճառով, երբ Յորը Վերին դարերին լ գյուղել Աղվանիքի Յոր կամ Յորը գյուղից գաղթածներից: Սյունյաց Նակորդան գյուղը տեղադրյած է Արցախի հարավային եղին:

Պատմությունը գիտի մեկ Գիս ավան, որը ստուգապես տեղադրյած է Ուտիրի համար, կուրի աջ ափին: Սակայն քարտեզում այն դարձել է Երկու Գիշ, տեղադր-

ճեմ են համարում «Չղղա», «Ենրա» եւմ:

32. «Աշխարհացոյց Սովուսի Խորենացոյ յաւելուածովք նպինեաց», Վենետիկ, 1881, էջ 27, U. S. Երեմյան, Յայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 102-103:

33. A. Хромов. Новые материалы по лексике языка ягтобцев. "Acta orientalia", v. XXX, Copenhagen, 1966, էջ 135: Ср.: А. Г. Новосельцев, В. Т. Пашуто, Л. В. Чечепинин. Пути развития феодализма. М., 1972, стр. 39, прим. 50.

34. Դր. Անդրանիկ Յանթբեն արմառական բառարան, Ղի., Ե., 1930, էջ 512-513:

35. Դագար Փարպեցի, Պատմութիւն Յայոց, Տփդիս, 1904, էջ 66:

36. Այս գայթակղությունից զերծ չեն մնացել նաեւ խոշոր այնպիսի խոշոր հայագետներ, ինչպես Ս. Աղոնցը եւ Յ. Մանդանյանը (տես H. Ածոնց, Արմենիա և շոջակա Խօստինակա, ԸՆ, 1908, էջ 220, 225): Այստեղ նույնական է համարվում Փայտակարան-Բաղասական-Բայլական: Տես ս նաեւ՝ Ս. Աղոնց, Բագրատունյաց փառքը. Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 61: Յ. Մանադյան, Թենական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ. ճաման Ա, էջ 311:

37. K. B. Тревер. Очерки по истории и культуре Кавказской Албании, М.-Л., 1959, 44-45; С. Ахмедов, С. Б. Ашурбекли. О датировке и назначении Гыз-гатасы в крепости Баку. "Известия АН Азерб. ССР", серия ист., 1974, № 3, стр. 30-40.

38. Բ. Ուլութարյան. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ. «Բանբեր Երեանի համալսարանի», 1971, № 1, էջ 177-178:

39. Անդ. հենա. Ղ Ինծինեաց, Սոտրագրութիւն հիմն Յայաստանեաց, էջ 315 եւ հոգ.:

40. U. S. Երեմյան, Յայաստանը..., էջ 109, Աշ. Արքահամյան, նույն տեղում, էջ 350, աշխարհացոյց..., էջ 33:

41. U. S. Երեմյան, Յայաստանը..., էջ 110:

42. Տես «Աշխարհացոյց»-ի հրատարակությունների վերը վկայակոչված էքրը:

43. Ղ. Ինծինեանց, Սոտրագրութիւն..., էջ 318-319:

44. U. S. Երեմյան, Յայաստանը..., էջ 105, Աշ. Արքահամյան, էջ 348:

ԿԵՎՈՐԿՈՎԸ ԵՎ ՅՈՒՐԱՑԻՆՆԵՐԸ ԻՄ ԹՈՂՈՒՆԵՐՈՒՄ

Առյուն թվի մարտի 21-ին գումարվում է Աղրեթանի կոմիլուսի Լեռնային Պարագաղի մարզային կազմակերպության պլենումը, որի թնարկմանը ներկայությամբ է եղել մի հարց՝ «Աշխատավորների խնտերնացիոնալ դաստիարակություն և հետազարդարական բողոքարկության վերաբերյալ լեռնային դարարադի մարզային լրասակցական կազմակերպության խնդիրների մասին»:

Տասնամյակներ շարունակ այսինքն սկսած այն ժամանակից, երբ աղրեթանական հակահեղափոխական-շովիմիստական տարրերի ճնշման տակ Լեռնային Պարարադի իր միաձույլ հայ բնակչությամբ կտրվել է մայր ժողովրդի վուշչա-քաղաքական միավորի նորիրդային Յայաստանի հանրապետությունից եւ կցվել Աղրեթանին, Լեռնային Պարարադի պաշտոնական միջցառումների մեջնորդություն «ինտերնացիոնալիզմ» նշանակում է անվերապահ սեր ու լիիրվագագույնություն (Եթե չասենք ստորագրաշրջություն) Աղրեթանի ու նրա ղեկավարությանը եւ քար լուսաբանը, անտարբերություն (հաճախ նաեւ բամբասանը ու հակակարանը ցուցադրական արտահայտություններ) Յայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ: Բացառություն չկազնեց նաեւ Պարարադի մարզգործիք ալենումի վերջին նախորդ, որն արդեն սովորական դարձած երեւույր դրսեւորեց մի այնպիսի ներկությամբ ու անհեթերությամբ, որ հրապարակված պաշտոնական գույք հանրութագրության մեջ անգամ աշը է ծակում կատարվածի խելացնորդությունը: Պատճումի աշխատանքին մասնակցած երեւույր կեկավալու աշխատողի միանգամայն հավաստի վկայությամբ նիստի սկզբից սինչեւ վերջը առատորներ հորդել են բամբասանը ու ցուցադրական հակալիսները Յայաստանի ու նրա նշալուրականության, հայ ժողովրդի ու ամեն մի նորկականի հանճեակ: Պարամարդկոնի առաջին քարտուղար Քորիս Կենորկովն իր գեկուցման մեջ Հայկական Խորիրդային Սոցիալիստական Հանրապետությունը հանարել է մի պլացղարմ, ուր, իբր, կուստակվում են իմ իմպերիալիստական շրջանների ու դաշնակցության վնասակար զաղափարները, ապա ներքաւանցում Լեռնային Պարարադ: Խեկ ելույթ ունեցողներից ոմանք (հատկապես հայրտակի կուլտնետության նախագահ Սուլեյման Ալամյանը) հայտարարել են, ու նախկինում կային անհեռացեա մարդիկ, որոնք փորձում էին Պարարադը հիացնել աղքատ ու ընչափաց Յայաստանին, որպեսզի Պարարադի հայերն էլ դու գնային սովին ու ծայրահեղ աղքատությամբ:

Ըստ վերոհիշյալ ընկերների հարորդած տեղեկությունների համանման գրաւարտչական հայտարարություններն ու անսրոդ հակահայկական-հակահայստանյան պրոպագանիդան կազմել են պլենումի նիստի եռթյունը: Դա ինչպես ասվեց, պարզ երեւում է նաեւ բերերում հրապարակված Ծոյթերից:

Քորիս Կենորկովն այսքանով էլ չի բավարարվել: Նոյն հարցը նա թնուրյան է ողել կուսակցական շրջկումների պլենումների նիստերում, մարդի սկզբանական կուսակցական բոլոր կազմակերպություններում, կոմերիտմիության նարզկոնի, շրջկումների ու սկզբանական կազմակերպությունների, արհմույունների մարզային խորիրդի, շրջնորդությունների ու տեղիներում նիստերում

(տես «Սովետական Ղարաբաղ» թերթի 1975 թվի մարտի 30-ի, ապրիլի 15-ի, 16-ի եւ այլ համարները): Այլ խոսքով նա իր բարձրացրած հարցի քննարկմանը նաև ակալից է դարձել Լեռնային Ղարաբաղի համարյա ամբողջ չափահան քննակշռությանը եւ, ըստ էլույան, ընդունված որոշումները պետք է ներկայացնի իրեւ Ղարաբաղի հայության միահանուր կամքի արտահայտությունը, իսկ բոլոր ժողովներում քննության կենտրոնում է եղել Լեռնային Ղարաբաղի տեղի հարցը»¹ Բ. Կետրկովի մեկնաբանությամբ, կուսաքաղկոմի պլենումը չարչեկամակների շուրջ ժողովից ժողովը ընդունված որոշումը կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար ընկ. Բ. Ս. Կետրկովի գեկուցման մեջ շարադրված դրույթներն ու եղրակացությունները, («Սով. Ղարաբաղ», 1975, ապրիլի 15):

ԵՇՈՆՎՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԵՂԻ ՀԱՐՑԸ

Մարզկոմի առաջին քարտուղար Կետրկովն իր գեկուցման (ինտերնացիոնալ դաստիրակության հետագա բարելավման) եւ նրան հաջորդող բոլոր նիստերի առանցքն է դարձել այն հարցը, թե «որտե՞ղ պետք է լինի Լեռնային Ղարաբաղի տեղը» (այս եւ հետագա մեջքերումները կատարվում են բառացի եւ քաղաքած են «Սովետական Ղարաբաղ» մարզային թերթի ս.թ. մարտի 23-ի, 25-ի ու հետագա համարներից), ապա այս հարցի շուրջն էլ կատարել է իր հակապատմական ու հակահայկական մարզանքները, որոնք մի ժայռով հասնում են Ղարաբաղի տարածքում կանգնած հայկական պատմական հուշարձանները, Ղարաբաղի պատմության հիմ ու նոր դեպքերը, 1918-20-ական թթ. բարու ու հակասական մթնոլորտը, մյուս ծայրով խեղաքյուրված պատկերացում են տալիս վերջին տասնամյակի ղարաբաղյան կյանքի մասին:

«Որտե՞ղ պետք է լինի Ղարաբաղի տեղը»: Չափ թե քիչ գրագետ մարզը կարող է մտածել, թե Ղարաբաղն անհայտ աշխարհ է կամ ինչ-որ ժամանակ կրկել է, եւ ահա Բ. Ս. Կետրկովը փորձում է գտնել ու որոշել նրա տեղը: Ոչ, այդպես չէ: Նա ուզում է որոշել Ղարաբաղի տիրոջ հարցը: Բայց մի՞թե դա էլ հարց է: Չե՞ որ բոլոր ժամանակներում ամեն մի երկիր պատկանել է նրան, ով ապրել է այդ երկրում: Եսկ Ղարաբաղում անհիշելի ժամանակներից մինչեւ այսօր ամենունց ապրում է հայ ժողովրդի մի մասը եւ, չնոռանանք, այն մասը, որն ուշ միջնադարի ամենածանր մշտավանջուն անգամ թիվկ հայկական պետական կագմագործում ունեցող միակ մարզն էր ամբողջ պատմական Հայաստանի տարածքում: Եվ խորհրդային շրջանում դարձալ ղարաբաղի բնակչության հիմնական ու գերակշռող մասն է կազմուն հայ ժողովրդը. 1923թ. ամբողջ բնակչության 95 տոկոսը, 1939-ին՝ 88 տոկոսը, 1959-ին՝ 84.5 տոկոսը, իսկ 1970-ին՝ 80.5 տոկոսը:

Ոչ, Բ. Կետրկովին անհանգատացնողը հարցի այս կողմն էլ չէ: Նա ուզում է պարզել, ցույց տալ Ղարաբաղի վարչական պատկանելիությունը եւ չի բավարարվում այսօրվա վիճակով, որ այն, իրեւ ինքնավար հայկական ազգային մարզ, մտնում է Աղրբեջանական ԽՍՀ սահմանների մեջ: Նա փորձում է պատմական եւս ցույց տալ ու ապացուցել Աղրբեջանի անկապտելի իրավուն-

ությունը այստեղ էլ նա, պատմական անառարկելի փաստերն ու փաստարդերը ուրիշ տակ տալով, պատմության փոշու տակից հանում է պատեհապատշաճ լուսնակով ժամանակին մոգոնված թթիկներ, դրանք իրար կցնցում, սազեցում առաջադիր նպատակին, առանց ամաչելու այն ահակրո կեղծիթից ու ախտափոր «տրամաբանություններ», որոնք չեն կարող թաքցվել նույնինկ գիտական պատրաստություն չունեցող մարդկանց աչքից: Բ. Կետրկովը հայտարարում է, թե միայն դաշնակներն են, որ ցանկանում էն Ղարաբաղը միացնել Խայստանին, որով նրանք, իբր, ուզում են հասնել իրենց դիվային նպատակին «Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը թշնամացնել իրենց դարավոր նորությունը»:

Նախ, ծագում է հասարակ ու շատ տրամաբանական մի հարց, հայկական նարզը Յայաստանին միացնելը, հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելը ինչո՞ւ ուետք է թշնամական գգացնունք առաջացներ հարեւան աղրբեջանական ժողովոյի մեջ: Ինչո՞ւ Բ. Կետրկովն այսքան չափ է պատկերացնում աղրբեջանական ժողովրդի: Մի՞թե Ղարաբաղի մարզկոմի քարտուղարի հասկացուությամբ հայերն աղրբեջանակների հետ բարեկամ կարող են լինել միայն Աղրբեջանի կազմում: Իսկ Աղրբեջանի կազմի մեջ չմտնող հայերը, ասենք երեւանի, Լեհնականի, Լոռու, Զանգեզուրի հայ բնակիչները. Աղրբեջանի ու աղրբեջանակների թշնամիներն են:

Բայց Բ. Կետրկովի հայտարարությունը կեղծիք է նաև զուտ քայլաբական տեսակետից, որպիսին են մարզիզմն իր ստեղծնան օրերից պաշտպանում է այն սկզբունքը, որի համաձայն «Առանց վերականգնելու յուրաքանչյուր ժողովոյի անկախությունը եւ միասնությունը, չի կարելի պատկերացնել ոչ միշտագույն պյուղետարիատի միասնություն եւ ոչ էլ ժողովուրդների խաղաղ ու պիտակցված համագործակցություն» («Կոմունիստական մանիֆեստ» 1893թ. խոալական հրատարակության համար գրված առաջարաբանից):

Ղարաբաղի հայ բնակչության միացումը Յայաստանին միայն եւ միայն պետք է նշանակեր հայ ժողովրդի միասնության պահուկում, դրանից հետո միայն կարելի էր պատկերացնել հայ ժողովրդի ու նրա հարեւան աղրբեջանական ժողովոյի «հսաղառ» ու գիտակցված համագործակցությունը»: Յայ ժողովրդի միասնության ստեղծումը չպետք է թշնամություն հարուցեր աղրբեջանի եղբայրների հոգում: Այլ Կերպ մտածել կնշանակի գրպարտել մի ժողովրդի, որն ահա վեցերորդ տասնամյակն է, ինչ մարզիզմի դրոշի տակ ակրում է իր սոցիալիստական կյանքը:

Յայ ժողովրդի միավորմանը, հետեւապես եւ Ղարաբաղը Յայաստանին վերամիանելուն են ծգտել հնապես հայ ժողովրդի բոլոր հալվածները, այնպես լի նրա ազատարար գավակները: Ղարաբաղի հայությունը նույնինկ մուսալիքի տիրահաջակ տիրապետության տարիներին երթեք չի ենթարկվել Աղրբեջանին եւ իր ազգային խորհրդի բոլոր տասնմեկ համագործամերում (1918-1920թ.) Վճռաքար արտահայտվել է Յայաստանի կազմում մնալու, իր մայր ժողովրդի հետ միասին պետական մեջ միավորի մեջ լինելու օգտիք:

Իր հակապատմական թեզը հիմնավորելու համար Բ. Կետրկովը վկայակո-

չուն է Ա. Ի. Միկոյանի 1919թ. մայիսի 22-ին ՈԿ(ր)Կ Կենտկոմին ու Վ. Ի. Լենինին հղած մի գործությունը, որի մեջ խնապես նշված է, թե «Դաշնակուները հայկական կառավարության գործակալները, ծզտում են համեն՝ Ղարաբաղի միացմանը Հայաստանին, բայց դա Ղարաբաղի բնակչության համար կնշանակեր գրկվել իրենց կամքի աղբյուր Բաքվից եւ կապվել Երեւանի հետ, որի հետ երբեք կապված չեն ենել» (ՍԼԻ-ի ԿԿԱ, ֆ. 461, գրու 45452, թ. 6):

Ակզերից եւեք ասենք, որ Բ. Կետրիկը խեղարյուրված է Երևայացրել Ա. Միկոյանի գործության բովանդակությունը: Այնուո՞ւ, Բաքուն ու Երեւանը իրար հակադրելուց առաջ, Ա. Միկոյանը գեկուցում է, որ «Ղարաբաղն ու Զանգեզուրը (ավելի քան երեք գավառների տարածքը), հենվելով հայ զիված գյուղացիության վրա, չի ճանաչում աղբյուրածանական կառավարությունը...» (նույն տեղում):

Պարզ երեւում է փաստաթղթի մեջ ներկայացված իրավանության ու Ա. Միկոյանի առաջարկության աղաղակոյն հակասությունը: Իրականությունն այն է, որ Ղարաբաղի աշխատավորությունը, հարեւան Զանգեզուրի հետ միահամուռ, զինված բարձրացել է աղբյուրածանական կառավարության դեմ, իսկ Միկոյանը գտնում է, որ այդ գյուղացիության կյանքի աղբյուրը Բաքուն է: Բայց այդ ինչպես ու է, որ Ղարաբաղի գյուղացիությունը գենք էր բարձրացրել իր կյանքի աղբյուրի դիմ: Այդ գյուղացիությունն էր ինեւը թողրել, թե նրա քաղաքական կողմնորոշման ժաման խոսր է անհեթեր ու կամայական:

Ա. Միկոյանն այս թթին ստորագրել է որպես ՈԿ(ր)Կ Բաքվի կոմիտեի անդամ եւ, ամենայն հավանականությամբ, եղբակացություն գրելիս կատարել է իր ամճիշապես դեկապարների հանճարարությունը: Այդ պարզվում է նոյն բովանդակության մի այլ գործությունից, որին նա ստորագրել է շուրջ մեկ տարի հետո, Ալբ. Յեղկոմի նախագահ և Նարիմանովի հետ միասին: Յազիվ թե Ա. Միկոյանի կենսագրությանը շատ թե թիվ ծանոր որեւէ մարդ կասկածի այդ արտակարգ ընդունակ գործիք բնավորության այն խոտելի գծի մեջ, որը ստիլուրայի արտահայտվել է հարմարվողականության ու ունեցած հեղինեղուկ սկզբունքների մեջ: Եվ այսօրվա պատմաբանը Ա. Միկոյանի խոսքերով չէ, որ պետք է վերականգնի այս կամ այն սկզբունքային երեւույթը պատմական խառը ժամանակների առունու: Մանավանդ, երբ այս դեպքում էլ կիսատ-պրատ ներկայացվում է Ա. Միկոյանի խոսքը երա եռությանը հակասող տեսակետներ կարկատելու համար:

Սակայն, անկախ այս հանգանանքից, իրեն ինտերնացիոնալիզմի դրոշակակիր համարող Բ. Կետրկովն այսօր ի՞նչ ղարվունքով եւ ի՞նչ տրամաբանությամբ է կուսակցական ամբիոնից իրար հակադրում Բաքուն ու Երեւանը, առաջնը հայտարարելով Ղարաբաղի հայության «կյանքի աղբյուր», իսկ Երկրորդը սուս մի վերացական անուն, որի հետ, իր թե, ղարաբաղի հայությունը «երբեք կապված չի ենել»:

Երեւանը ոչ միայն Հայաստանի մայրաքաղաքն է, այլև ամբողջ աշխարհի հայության համար մի սրբազն անուն, որը հպատակությամբ է լցում մարդկանց սրտերը: Այսօր Երեւանում է ապրում ծագումով ղարաբաղի այնքան հայ, որքան երբեք չի ապրել ամբողջ Ղարաբաղում: Ղարաբաղի հայության

հազարավոր զավակներ ուսում են առնում Երեւանյան ԲՌԽ-երում ու միջնակարգ մասնագիտական դպրոցներում եւ, վերջապես, ամեն մազան Երեւանում ու Երեւանամերձ փոքր ու մեծ քաղաքներում են ապաստան գտնում Ղարաբաղուն ու հարեւան հայաբնակ շրջաններում հանրավի հալածված բոլոր հայերը: Այս պայմաններում հայտարարել, թե Ղարաբաղը «երբեք կապված չի լույն» Երեւանի հետ, նշանակում է գրադիւ զրապատության:

Բայց արդյո՞ք որեւէ մարդի վարչական պատկաննելիությունը որոշելիս պետք է ելնել այն հանգամանքից, թե տվյալ մարզն անցյալում ինչ առնչության մեջ է եղել այս կամ այն հանրապետության նայրաքաղաքի հետ: Թե՞ այդ պատկաննելիությունը որոշելիս պետք է ելնել ուրիշ ավելի կարեւոր գործունեթից: Մարդկանության գործիքների հետն Ենթային Ղարաբաղի հարցում առաջնորդվում էին այս առավել Վճռական գործունեթուով: Անկողմնակալության դեպքում էին դժվար չէ տեսնել պահանջված արժանահավատ փաստաթղթերի ներք, որոնք այնպես գործիքորեն շրջանցում կամ պարզապես արհամարհում է Բ. Կետրկովը:

Իսկ այդ փաստաթղթերն ահա թե ինչ են պատմում:

1920թ. ապրիլին 11-րդ կարմիր բանակի գործերը կապիտալիստական լծից ապատագրեցին աղրեջանական ժողովրդին: Կրանց հաղթական երթը հասակ Ղարաբաղ, Ծուշի: Սոցիալգանձի որոշ բարձրացրած ղարաբաղիներն անհամբեր սպասում էին ամբողջ հայ ժողովրդի ագատագրությանը, որի համար հեռու-մոտիկ ճակատներուն խիզախտրեն մարտնչում էին Ղարաբաղի զավակները: Այս պայմաններում Ղարաբաղի հեղկոնը պետք է ենթարկվեր որեւէ կենտրոնի, եւ նրա համար այդպիսին նշակ արդեն խորհրդայնացած Աղրեջանի կառավարությունը: Սակայն շատ շուտով, նոյն 1920թ. նոյեմբերի 29-ին, խորհրդային կարգեր հաստատվեցին նաեւ ամբողջ Արեւելյան Հայաստանում: Եվ ահա այս լուրն առնելով հաջորդ օրն իսկ Աղրեջանի խորհրդային հեղկոնի նախագահ և Նարիմանովի էլ Արտաքին գործոց ժողով կոմիսար Յուսենովի ստորագրությամբ Հայաստանի հեղկոնին հղվեց հեռագիր, որի մեջ մասնավորապես գրված է: «Այսօրվանից Հայաստանի եւ Աղրեջանի միջեւ եղած սահմանային վեճերը հայտարարվում են Վերացված: Ենթային Ղարաբաղը, Զանգեզուրը ու Սախիչեւանը համարվում են Հայաստանի Սոցիալիստական Համարակատության մասը» («Կոմունիստ» հայերեն թերթ, 1920թ., դեկտ. 7, № 2):

Այս հեռագիրը, համապատասխան մեկնարանություններով, Աղրեջանի հեղկոնի նախագահ և Նարիմանովի կողմից, կրետ դեկարտուցիա, հրապարակվել է դեկտեմբերի 1-ին կարպարակված Բաքվի խորհրդի համելիսավոր նիստում:

Աղրեջանի հեղկոնի դեկարտուցիան իդեալական խորհրդի կողմից Միխայլովը, ՌՍԴ(բ) կենտրոնի կողմից Կամենսկին: Իսկ Ա. Գ. Օղջոնիկիծեն Աղրեջանի հեղկոնի դեկարտուցիան հաստատող մեծագույն պատմական երեւույթը: «Այստեղ ընթերցված այս ակտը մեծագույն կարեւորություն ունեցող ակտ է, պատմական ակտ, որն իր նմանը չունի մարդկության պատմության մեջ»¹:

Ն. Նարիմանովի հօշակած դեկլարացիայի առթիվ Բաքվի խորիրդի հանդիսավոր նիւթի ամունից հրապարակվել է հետեւյալ հայտարարությունը. «Բաքվի խորիրդի եւ Աղրբեջանի հեղկոնի հանդիսավոր նիւթը, բոլոր բանվորների և կադիմի գլխարժիականների կազմակերպությունների հետ միասին, արդաւարաւան ու բայխության ամենայն գագառությունը է խորիրդային հեղափոխության հադրանակը Հայաստանում, շնորհավորում եւ ամբողջովին հավանություն է տալիս ընկ. Նարիմանովի հօշակած պատճական դեկլարացիային. որու մուկընդիշու ի չիր են դառնում Հայաստանի եւ մուտքամանական աշխարհի միջև Եղած ազգային վեճերը, արյունահեղ պատերազմները եւ բաց անոս Անդրկոկասի ու ամբողջ Արեւելքի ժողովուրդների համար երջանիկ կյանքի նոր է»²:

Ուղղութեավ Հայաստանում խորիրդային կարգերի հաստատման եւ նրա տարածքային նվազագույն ամբողջության հաստատման վաստոր, խորիրդային Ռուսաստանի կառավարության կողմից և. Ստալինը հիեկ է հեռացիր արծանագրելով խորիրդային Աղրբեջանի արդարացի քայլ. «Դեկտեմբերի 1-ին խորիրդային Աղրբեջանը կամսպոր հրաժարվում է վիճելի գավառներից եւ հայտարարում է Զանգեզուրի, Սամիշեւամի եւ Լեռնային Ղարաբաղի հանձնումը Խորիրդային Հայաստանին»³:

Դեպքերը զարգանում էին իրենց ընական ու տրամարամական ընթացքով: Ամիսներ անց, Երկիր ներքին հրատապ հարցերը լուծելուց հետո, Խորիրդային Հայաստանի կառավարությունը անդրադարձավ Լեռնային Ղարաբաղին հրապարակելով հետեւյալ հրամանագիրը. «Աղրբեջանի Սոցիալիստական Խորիրդային Համբաւետության հեղկոնի դեկլարացիայի եւ Հայաստանի ու Աղրբեջանի Սոցիալիստական Խորիրդային Հանրապետությունների կառավարությունը նիշու եղած համաձայնության հիման վրա հայտարարում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմվանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորիրդային Համբաւետության ամբաժան մասը:

Հայաստանի Սոցիալիստական Խորիրդային Համբաւետության ժողովուների խորիրդի նախագահ Ալ. Մյասնիկյան (Ալ. Մարտունի),
քարտուղար Մ. Ղարաբեկյան

1921թ. հունիսի 12
Երևան»:

Թվում էր, թե Վերջնականապես լուծվում է հարցը, վերջ է տրվել հայ ժողովին մի խոչը հատվածի պատճական ճակատագիր վրա կատարված անարդար խաղին, ճանավանդ, Եղր հրամանի հետ միաժամանակ հայտնի էր դարձել, որ Աղրբեյրկրկոնի հատուկ կարգադրությամբ հունիսի 26-ին Թիֆլիսից Լեռնային Ղարաբաղ են ուղարկվել Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Մյասնիկյանը տեղուն կարգավորելու երկրածար Հայաստանի կազմի մեջ մտցնելու հանգամանքները:

Սակայն Եվլախ կայարանում Կարաեւը Մյասնիկյանին հայտնում է, թե Բաքվից կարգադրված է, որպեսզի իրենք Երկրություն գնան Բաքր Նարիմանու-

լու հետ հարցերը տեղում լուծելու համար: Մյասնիկյանը հրաժարվում է այդ ժողովաւտեսված ճանապարհորդությունից եւ նույն օրը (հունիսի 26-ին) հայուկ տուրիանդակի միջոցով Եվլախի Օրողոնկիծեմ գրում է, որ Լեռնային Ղարաբաղի հարցի ամենաշտապ ու աներկեցին լուծումն ունի վիթխարի կայսերական ունեցող քայլարական նշանակություն... Ղետագա ծգձգումը միայն հայութաբույր է մեր թշնամիների ծեռքում⁴:

Ամենայն հավանականությամբ, Կիրովն ու Օրողոնկիծեմ արթես տեղյակ լրի Ղարաբաղի հարցում Նարիմանովի դիրքի շրջելուն եւ հակատրամաքալույս վիճուները կանխելու համար նրանք հեռագրեցին Աղրը. Եղկոմի նախագահին: Այս հեռագրում արտահայտություն է գտնել Երկու աննկուն բոլշեվիկների անհանգստությունը Ղարաբաղի ու հարավից շրջանների հայ բնակչության ճակատագրի համար: Եղեագրում ասված է, «Հայաստանի հետ սուհմանների մասին բանակցությունների ընթատումը, Զանգեզուրություն իրադրության պայմաններում կատեղի ծայրահետ անձեռնոտու տպավիրությունը... Խնդրում ենք շտահ հարավիրե քայլություն (Աղրը. Կ(բ)Կ-ի) ժողովնորդի (Աղրը. ԽՄԴ) եւ լուծել Ղարաբաղի հարցն այնպես, որպեսզի վաղը հունիսի 27-ին հնարավոր լինի ավարտել բանակցությունները: Եթե հետաքրքինն եւ մեր կարծիքով, ապա այս հետեւյալն է, չշահ բոլոր բախումները վերջուական լուծելուն եւ հսկական բարեկամական հարաբերությունների հաստատելուն Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելիս պետք է առաջնորդվել այսպիսի սկզբունքով, ոչ մի հայկական գյուղ չպահի միացվի Աղրբեջանին, ինչպես եւ ոչ մի ճահմեղական գյուղ չի կարելի միացնել Հայաստանին»⁵:

Նույն օրը Աղրը. Կ(բ)Կ քայլությունն եւ Աղրը. Ժողովնորդի ընդունելու են որոշում այս մասին, որ համաձայն չեն Լեռնային Ղարաբաղը Հայկ. ԽՄԴ-ին վերադարձնել ենենով, իր թե, տնտեսական ու վարչական աննպատճակահարմարությունից, որ նույն պատճառով դեմ են նաև հայկական ու աղրբեջանական րանկավայրեց հանրապետություններին ըստ ազգագրական պատկանելության նեցելու սկզբունքին: Անմիջազն է Նարիմանովը հայտնում է, թե Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՄԴ-ին տրվելու դեպքում Աղրը. ԽՄԴ «Ժողովնորդի հրաժարվում է պատասխանատվությունից», քանի որ հակառակ դեպքում «Անք Աղրբեջանում ուրիշ կվաճանեցնենք... հականորդական հմտերին...»⁶:

Հայկանայի է, ուրեմն, որ Աղրբեջանում եւ նրա սահմաններից դրվում այն ժողովանակ գործում էին «հայկախորհրդային խմբեր», եւ վերջիններիս ճշշման տակ Աղրբեջանի կառավարության դեկավար հրաժարվում է Բաքվի խորիրդի համբխավոր նիստում հոչակած ու դրանից հետո էլ քանի-քանի անգամ հրավարական դեկլարական դեկլարացիայից եւ պահանջում Լեռնային Ղարաբաղը պահել Աղրը. ԽՄԴ կազմում սպառնալով հակառակ դեպքում պատասխանատվությունը դեմ ձգել իր կառավարության վրայից:

Այս էր Ղարաբաղի հարցի լուծման մնջ կատարված ճակատագրական շեղումը:

Դուլիսի 4-ին Աղրբեջանի բյուրոյի նիստում, բյուրոյի բոլոր անդամների (Օրողոնկիծեմ, Կիրով, Մյասնիկյան, Նարիմանով, Օրախենշվիլի, Սախարանի, Ֆիգատուներ, Սագարեյրյան) եւ հասուեկ այդ նիստին հրավիրված է. Մտավինի

մասնակցությամբ քննել է Ետնային Ղարաբաղի հարցը և ծայների մեծամասնությամբ որոշվել Ետնային Ղարաբաղը մտցնել Հայկական ԽՍՀ կազմի մեջ «կորոն» քվեռակել են Օրդոնովիթեն, Կիրով, Մյասնիկյանը, Ֆիզատոները, Նազարեթյանը. Օրախվելաշվիլին չի մասնակցել քվերակությանը, իսկ Նարիմանովի ու Մախարիձեն «դեմ» են քվեարկել⁷:

Սակայն այս որոշումից հետո և Նարիմանովը կատարել է հետեւյալ հայտարարությունը. «Սկասի առնելով այն կարեւորությունը, որ Ղարաբաղի հարցն ունի Աղբեջանի համար, անհրաժեշտ են համարում այն հետաձգել ՌԿ(Բ)Կ կենտկոմում վերջնականակեն լուծելու»⁸:

Ով շատ թե թիշ ծանրո է Արեւնտահայաստանի նահանգները թուրքերին նվիրելու եւ 1921-ի նարտին էլ թուրքերի պահանջով սահմիջեանն Աղբեջանին զիջելու գործում Ստալինի կատարած նենքապատիր դերը, չի կարող չժամանակածել, որ այս անգամ էլ նրա միջամտությունն էր Վճռականը, եւ Նարիմանովը հենց նրա խորհուրդուն էլ խատարեց իր հայտարարությունը: Նրանց պետք էր, լոկ ջնջել արդեն ընդունված որոշումը, մի պահ ու մի քայլ հեռանան նրանից... հաջորդ օրն իսկ իրականացնելու իրենց ապօրինի ու դիվային վճիռը առանց հարցը վերաբենարկելու եւ նոր քվերակություն կատարելու, Ետնային Ղարաբաղն Աղբեջանին պարզեւելու համար:

Եվ, հսկապես, հաջորդ օրն իսկ, առանց սպասելու ՌԿ(Բ)Կ Կենտկոմի քննարկմանը կամ գոնք նրանից ստացվելիք կարծիքին, առանց հարցը վերաբենարկելու կամ նույնիսկ քվերակության դեմելու, Անդրեկրկոնը «որոշում է» ըստառաջել և Նարիմանովի պահանջման ու Ետնային Ղարաբաղը թողնել Աղբեյի ԽՍՀ կազմում: Այստեղ արդեն սարգում է նաև նման որոշման հիմքը. «Ենելով մահմեղականների ու հայերի միջեւ ազգային խաղաղության անհրաժեշտությունից եւ վերին ու դաշտավայրային Ղարաբաղի տնտեսական կապից, Աղբեջանի հետ նրա նշուական կապից, Ետնային Ղարաբաղը թողնել Աղբեյի ԽՍՀ սահմաններում, տալով նրան մաղօքային լայն ինքնավարություն»⁹:

Չի կարելի մոռանալ շատ կարեւոր մի հանգամանք, որը, ըստ երեւությին, Անդրեկրկոնի բյուրոյի Ծիստում քննարկման են դրված նաև Աջարիայի, Արխագիայի ու Յարավային Օսերիայի հարցերը¹⁰: Դատկապես վերջին երկուսը շատ էին նման Ղարաբաղի հարցին. Աերքին ուժերն ու իրերի մրամարանությունը պահանջում էին երկու երկրամասերը թողնել Ուլսասստանի հանրապետության կազմում՝ ինքնավար հանրապետությունների իրավունքով, մանավանդ, որ Օսերիայի մեծ մասը (հյուսիսայինը) Ուլսասստանի կազմում էլ գտնվում էր, եւ այն բաժանելի իր հարավային կեսից՝ պետք է նշանակեր երկիրեղկել մի ժողովուրդ, որը սոցիալիզմն որդեգրվել է ազգային միասնության հասնելու հույսով: Սակայն Ստալինն ուզում էր, ինչ գնով էլ լինի. Իիշյալ նարգերը պահել Վրացական ԽՍՀ սահմաններում ազգային ինքնավարության շնորհումով: Յարցի լուծումը դուրսացնելու համար նաև մերժությունը լցորել էր ազգային ինքնավարության մասին մեծադրորդ հայտարարություններով, որոնց ավելի ազդեցիկ ուժ տալու համար սազ էր գալիս նաև Ղարաբաղը Աղբ. ԽՍՀ կազմում ազգային ինքնավարությամբ պահելու որոշումը: Ունահարվում էր այն հանգամանքը, որ հարեւանությամբ գյուրթյուն ուներ նոյն ազգի ավելի հզոր

հիավորը՝ Հայկական միութենական խորհրդային հանրապետությունը: Ունահարվում էին ազգագրական, մշակութային գործոնները, եւ, կերչապես, ազգի ու ժողովրդի միահամուռ կանցը, եւ ասպարեզ էր նետվում «տնտեսական կայուի» մոգոնված մի տեսություն, որն իրականում չուներ ոչ հիմք ու տրամաբանական բացատրություն:

Այսուղի չի կարելի չնշել նաև Ղարաբաղի հարցի վրա Ստալինի գործադրյած ճնշան մյուս շարժառիթը: Եթե Ետնային Ղարաբաղը պիտի վերաբիացվեր Հայաստանին ովկ այն պատճառով, որ այն հայկական մարզ է, հայ միահույլ բնակչությամբ, ապա ինչպես ս պետք էր վարմել Վրաստանի ԽՍՀ կազմում գտնվող հայկական շրջանների հետ, որոնք այս ժամանակ խիստ դժգոհ լինեն վիճակից: Ղարաբաղի հարցի լուծման հաջորդ օրը՝ հուլիսի 6-ին, Թիֆլիսի կուսակցական կազմակերպության ընդունութ ժողովում Ստալինը «սնծահոգաբար» անդրադարձ նաև այդ հարցին: Նա ասաց. «Կերչապես չի կարելի հաշվի չառնել Վրաստանի բնակչության ազգային կազմի յուրահատուկ պայմանները, որոնց հետեւանքով այդ բնակչության զգայի տոկոսն են լազմում հայերը, իսկ Թիֆլիսում՝ Վրաստանի մայրաքաղաքում, նույնիսկ աճրոց բնակչության նոտակրության կեսը, որը, անկասկած, Վրաստանին պարտապերեցնում է՝ անեն մի վարչածերի օրոք առհասարակ, իսկ սովորական ռեմիմի պայմաններում հատկապես պահպանել ինչպես Վրաստանի հայերի, այնպես էլ Յայաստանի հետ անպայման խաղաղություն եւ եղբայրական հանգործակցություն»¹¹: Ուրեմն, կոպտորեն խախտելով մարքսիզմ-լենինիզմի սկզբունքային դրույթները ազգերի ինքնորոշման իրավունքի նախնին, պահել իրենց տիրապետության ներքո եւ եղբայրություն ու իրավահավասարություն խաղալ՝ Վրաստանուն վիրահայերի. Աղբեջանում Ետնային Ղարաբաղի ու նյութ շրջանների շուրջ մեկ միլիոն հայերի հետ:

Այսպիսին էր դրույթը 1921թ., եւ այս պայմաններում լուծվեց (ասել է՝ բռնադատվեց) Ղարաբաղի հարցը: Վաղուց ժամանական է, որպեսզի մարդիկ հնանան, որ Ետնային Ղարաբաղը Աղբ. ԽՍՀ կազմուն է թողնվել ոչ թե կոմունիստական կուսակցության որեւէ մարմնի որոշումով կամ նարբական-լենինիզմի ազգային բաղաբականության թելայրանքով (չնայած հայտին է, որ կուսակցական բաղրաբազույն մարդիներն անգամ իրավասու չեն նման հարցեր լուծելու), այլ հայ ժողովրդի ազգային ու տարածքային միասնության երդպայլ հակառակորդ է. Ստալինի դաժան կամքով, որը 1921-ին արդեն մեծ փորձ ուներ այդ միասնության դեմ գործած չարության: Դիշենք նրա հեռագիրը Ետնինին հայ ժողովրդի հողային ու ազգային իրավունքների համար մարտմուղ Զիշերինի դեմ: «Ընկեր Ետնին,- գրել է Ստալինը, - եւ երեկ ինացա, որ Զիշերինն իրոք թուրքերին ուղարկել է մի հիմար պրովոկացիոն պահանջ կամի, Մուշի ու Շիրական նահանգներ թուրքերի հսկայական գերակշռությամբ) ազատման նախնին հոգուտ Յայաստանի:

Այս հայկական ինքսիրական պահանջը չի կարող մեր պահանջը լինել: Անհրաժեշտ է Զիշերինին արգելել հայերի նացինախտական թելադրանքով թուրքերին նոտաներ ուղարկելը»¹²:

Ստալինի այս հեռագիրն իր ոգով ու բովանդակությամբ կրկնում է մի այլ

իրողություն, որը «կապված է» Թալյար-փաշայի անվան հետ, 1915-ի Մեծ Եղեռնից եւ նրան հաջորդած հայկական ջարդերից հետո, երբ ամերիկյան դիվանագետներից մեկը Թալյար-փաշային հիշեցրել է հայերի բազմադարյան արդար իրավունքն իրենց ավանդական հորերին նկատմամբ: Թալյարը թուրքերն պատասխանել է. «Չարժն այդպես վիճել, մենք արդեն ոչնչացրել ենք հայերի երեք քառորդը: Նրանք արդեն չկան ոչ Բիթլիսում, ոչ Կանում, ոչ Էրզրումում»¹³:

Եթե Վաճի, Սուլշի ու Բիթլիսի նկատմամբ հայերի հավանականությունները «կապահանջատական պահանջ էին համարվում Ստալինի կողմից, որովհետու թուրքերն այդ մարզերում հայերի համեստ գործած նախօրիններով պահպանվել էին իրենց «հսկայական գերակշռությունը», ապա նոյն Ստալինը հայերի մեջորն էր համարում նաև նրանց «հսկայական գերակշռությունը» Ղարաբաղում: Այստեղ էլ նրան օգնեց «հակաբորհրդային խմբերի» թելադրանքով գործող և Նարիմանովը եւ Ղարաբաղի հարցը «լուծեց» Ալեքսանդրի օգտին:

Դժուարութիւն է, որ Բ. Կենորկովն ամեն կերպ ցանում է Լեռնային Ղարաբաղի վարչական պատկանության այսպիսի լուծումը համարել մարքսիստական-լեռնիմյան միակ ծիծուն ու արդարը:

Ղարաբաղի հարցի կենորկովյան մենանակությունը սահման ու տգետ է իր հիմքում: Հայուարարներով թե «Ալեքսանդր բարեկացուցիչ եւ ամրամանելի մասը կազմող Լեռնային Ղարաբաղի տեղի հարցն առաջ են քաշել նացիոնալիստական կուսակցությունները դաշնակցականներն ու նույակարականները, Կենորկովը փորձում է ծեւանալ համոզված այն բանում, որ դաշնակցականներն այրախոսով նպաստակ ունենին «Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը թշնամացնել իրենց դարավոր եղայրների հետ»: Այնուհետեւ նա շարունակում է «Մուսավարականներն իրենց հերթին ամեն կերպ փորձում էին իրահերել ազգամիջյան ընդհարություններ դիմելով նույնափիսի կեղլտու պրովկացին միջոցների»:

Ստացվում է, որ եթե Լեռնային Ղարաբաղը թողնվեր Հայաստանի կազմում, դա պետք է լիներ հարցի դաշնակցական լուծում, իսկ եթե տրվեր Ալեքսանդրին, դա էլ կիմեր մուսակարական լուծում: Կատարվել է երկրորդը, այսինքն Լեռնային Ղարաբաղի հարցը լուծվել է մուսակարական կարգով, եւ Կենորկովի գեկուցման մեջ հայտարարվում է «լեռնինան գծի հաղթանակ», որն, իր «լիովին ու ամրողովին հենվում է ազգերի եւ ազգային հարաբերությունների մասին լեռնինան ուսուութիւնի վրա»:

Բ. Կենորկովը, այսպիսով մուսակարիզմն ու լեռնինիգմը նույնացնում է երեւի առաջնորդվելով իր հովանավոր ու կառավար Յեղար Ալինի հանճնարարությամբ:

«13-ի» ՂԱՄՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԶԻՆ ՈՒ ՆՈՐ ՔՆԱԿԱՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՍԱՍԿՈՒԹՅՈՒՆԸ

Բ. Կենորկովն իր գեկուցման մեջ համառուն ջանում է հավատացնել, թե Ղարաբաղի հայության համար հարցի վերոհիշյալ լուծումը մի աստվածային

լուսրգե է եղել, որից անսահման գոհ է այդ հայությունը, որի դեմ ոչ մի տրությունց չի լսվել տասնամյակներ շարունակ, եւ ահա եկան «Բագրատ Ուլուբարյան» ու նրա հետամնաց, զաղակարապատս չհասունացած» հանախտիները լուրջելով Ղարաբաղի հարցը «մեկնարանել ազգային էղողզմի ու ազգային ուսիսանափակության արատավոր դիրքերից»¹⁴:

Սա ահավոր գրպարտություն է կամ առնվազն գործերի իրական վիճակից ուստիելյակ մարդու նոյորություն, որի դեմ կանգնում է Լեռնային Ղարաբաղի լուրջելու ամրող պատմությունը մկանած հարցի բռնադատումին հաջորդական օրենքություն:

Ուշագրավ է մի փաստաթուղթ, որը գրվել է 1923թ. հունիսի 13-ին, այսինքն Ղարաբաղի հարցի բռնադատումից ընդամենը երկու տարի հետո եւ Ղարաբաղի ազգային ինքնավար մարզի հոչակտումից չուրց երեք շաբաթ առաջ, փաստաթուղթի հեղինակն է Սուլեմ Շադրունցը, ինը բոլշևիկ, Ղարաբաղի հեղափոխական շարժումների եռանդում դեկավարներից մեկը, որը Ղարաբաղ էր ուղարկվել Խարբարությունը կազմակերպելու, ընթացքի մեջ դմելու համար: Երկու տարի լուսում փորձից դատելով եւ ստավիճան անկասեցնելի վճռի դեմ այլ ճանապարհ չգտնելով Շադրունց առաջարկում է Ղարաբաղի փրկության միակ ելքը: «Ես գտնում եմ, որ, ինչպես Ղարաբաղում, այնպէս էլ Զանգեզուրում ազգային հարցի ճիշտ լուծման համար եւ այդ երկրանախի (Ղարաբաղի ու Զանգեզուրի) տեսանակն վերածնորի նպատակով անհրաժեշտ է Ղարաբաղի լեռնային մասը Զանգեզուրի հետ միասին առանձնացնել իրեւ մեկ ինքնավար միավոր... Ուրված փաստերը... բավական փայլուն խոսում է այն մասին, որ այդ երկրանալի բոլնեւ Ալեքսանդրի կազմում այն վերաբերմունքի պայմաններում, որ եթե է զարդ, չի կարենի: Դրա համար էլ ես կարծում եմ, որ այդ ինքնավար մարզը կետը է ամիջապես կապված լինի Անդրքողկոմիստրի հետ»¹⁵:

Այս առաջարկության համար Ս. Շադրունցին կտարել են Ղարաբաղից:

Շուրջ քառասուն տարի հետո Ստեփանակերտի ավտորազայի աշխատող-լեյտր միութենական կառավարության ու ՍՍԿԿ կենտկոմին գրած իրենց դիմունում շարադրելով մարզի տնտեսության անմիտթար վիճակը հայ աշխատավորության ազգային ու կուլտուրական իրավունքների բռնադատման ուսկալոր փաստերը, պահանջում էին Լեռնային Ղարաբաղը վերամիացնել Խորհրդային Հայաստանին, իսկ եթե այդ անհնարի է, ապա Ուսուսաստանի Ֆեղդրագիային:

Ուրեմն, Ղարաբաղի փրկության իինմահարցը տասնամյակներ շարունակ, լուսնիս ատակինյան բռնադիրության ժամանակներում, միշտ էլ տանչել է ինչպես նրա հայ բնակչությանը, այնպէս էլ ամրող հայությանը: Անտեսելով անեն տեսակ բռնություններն ու պատմմենքը մարդիկ ընդկզում էին հակահակական, հականարդկային կամայականության դեմ: Այդ պատճառով էլ տիրահոչակ 37 քվականը Ղարաբաղում սկսվել է 1921-ին եւ չի ավարտվել 37-ով:

Ինչպես Կենորկովի գեկուցման մեջ, այնպէս էլ պայմանի ամդամեների ելույթը ներում խիստ խոսքեր են ասված «Բ. Ուլուբարյանի ու նրան համախտիների» և ասցեին: Ասում են այլ պայմանի նիստում այդ խոսքերը կոնկրետ բռվանդակություն են ունեցել: Թերթերում, սակայն, հախուն մեղադրամի բնույթը ուսենա:

Բայց ի՞նչ են արել Ուլուբարյանն ու նրա համախոհները, ո՞րն է նրանց մեջքը, որի դեմ ծառացել է Բ. Կերպելը, եւ նրա գոպարտությունը եռանդագին կրկնում ու պաշտպանում են Ելույթ ունեցողները:

Այդ մասին համգամանորեն շարադրված էր գործս նախորդ էջերում, եւ ընթերցողը չի կարող համոզված չլինել, որ արցախից հայ կոմունիստները, մարդկի հիմնարև-ծեղնարկությունների մի խումբ աշխատողներ, պարզաբն կատարել են իրենց սրբազն պարտքը սեփական ինքնավար մարզի ու նրա ընթեայ բնակչության համեստ, եւ գործի ընթացքը առաջին քայլից մինչեւ վերջինը ենցել է այս երկրում ընդունված ու գործոն օրենքների սահմաններում, առանց նրանցից մազաշակ իսկ ծովելու:

13-ի նամակն ստորագրել են Բագրատ Ուլուբարյան՝ գրողների միության մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար, Լազր Գասպարյան-«Սովետական Ղարաբաղ» մարզային թերթի խմբագիր, Մերգեյ Շաքարյան-մարզկենտրոն Ստեփանակերտի քաղութեատի գործկոմի նախագահ, Գրիգոր Ստեփանյան-մարզային ռադիոհալորդումների գլխավոր խմբագիր, Արման Բարզայան-Մտեփանակերտի № 2 տովովի դիրեկտոր, Արտեն Սուլքանյան-Սուսի Հայումյան անվան կոլտնտ. Նախագահ, Ադր. Գեր. Սովետի դեռաւտառ, Գուրգեն Գարբրիելյան-կուլտուրայի մարզային վարչության պետ, Արկադի Մանուչարյան-մարզի շենքաշրջության պետ, Թողդան Զանյան-բանաստեղծ, Ալբերտ Սեյրանյան-Մտեփանակերտի Ելեկտրատեխնիկական գործարանի դիրեկտոր, Սարգիս Դովիկաննիսյան-մարզային ռադիոյի պահագիր, Միքայել Կորգանյան-Ադր. ՍՄՌ ժող. արտիստ եւ Մերգեյ Գրիգորյան-Մտեփանակերտի շին. Վալուշության գլխ. ինժեներ: Նամակը հասցեագրված է եղել ՍՄԿ4 Կենտկոմի նախագահությանը թնկ. Լ. Ի. Բրեժնևի, Ա. Ն. Կոսիգինի, Ա. Ի. Միկոյանի անունով: Նամակում հանգամանորեն շարագրվել է մարզի տնտեսական ու կուլտուրական վիճակի քննությունը, ցույց են տրվել ինքնական այն արգելվենքը, որոնք խատթարում են նարզի առաջընթացը հատկապես շշուվել է Ալբերտանական հանրապետության ղեկավարների դատապարտելի վերաբերությունը Պարաբարի հայկական ազգային մարզի առանձնահատուկ պայմանների ու պահանջմունքների նկատմամբ: Նամակում շարադրված առաջելի փաստեր խոսում են այն մասին, որ այդ Վերաբերմունքի դեմ մարզի կոմունիստներն ու աշխատավորները պապարում պայքարում են տասնամյակներ շարունակ, որ հանրապետության եկամուկարները փոխվել են ու փոխվել, իսկ նրանց շուրջնիստական վերաբերմունքը Պարաբարի հնքնավար մարզի պահանջների տնտեսական ու կուլտուրական զարգացման խնդիրների հանդեպ միշտ է մնացել և նույնը: Այդ պատճառով է նամակի հեղինակները եղանակը կազմակերպել են, որ միակ եղջ ստեղծված վիճակից այն է, որպեսզի Լեռնային Պարաբարի հայկական ինքնավար մարզը վերանայվի հարեւան Հայկական ՍՄՀ-ին:

Նամակը Սովորված է տարել Բ. Ուլուբարյանը: Ենիշ է, նրան չի հաջորդվել հանդիպել այն դեկավարներին, որոնց անմիջապես ուղղված է եղել նամակը: Սակայն գրուցել է Լ. Ի. Բրեժնևի ու Ա. Ի. Միկոյանի օգնակամների ու Կենտկոմի կուսակցական մարմինների բաժնի աշխատողների հետ, որոնք, ծանրա-

նորով նամակի բովանդակությամբ, նրան հայտնել են, որ նամակում շարադրվում է փաստերը, որոնք իսկապես անհանդուրժելի են, անպայման ընթության լրացնելին, եւ կարվեն հանապատասխան կարգադրություններ: Պարաբարի Յարագալի հարաբեկանի հետ վերանայնելու առաջարկության վերաբերյալ է նրանք ասել են, որ դա միանգամայն իրավացի է ու արդար, սակայն կուսակցության կենտրոնական առաջընթացը նաման հարց լուծել, քանի որ տերիտորիալ նույնափիփ կուտյուններ կան նաև ուրիշ հանրապետությունների միջեւ, եւ Պարաբարի մասին պայունը հանելու կնշանակի կրօքը բորբոքել այդ հանրապետություններում...

Իմնականում սրանով է փակվել են գրույցները:

Էայտնի է, որ Ալբերտանի դեկավարները ոչ միայն անմիջապես տեղեկացնելու նամակի բովանդակությամբ, այնու կարգադրություն են ստացել անհապատճեն մերացնելու նամակում շարադրված թերությունները: Ալբերտանական նոյն մինիստրությունների ու գերատեսչությունների դեկավարները մեջը յուղու խուելից, երբեմն էլ խումբ-խումբ զալիս էն Ղարաբաղ, «ծանրանում» գործուի ու իրերի վիճակին, խստումներ տալիս, եւ վերադանում: Դրամ էլ հայության հանրապետության Մինիստրությի նախագահի ստորագրությամբ կարգադրությունը Լեռնային Պարաբարի ինքնավար ուսուցի տնտեսական ու մշակութային զարգացումն ապահովելու համար պահանջվելու 42 միջոցառումների մասին: Այսուղի պարզապես նամակի բովանդակությունն էր վերաշարադրվել 42 կետի ծեռով:

Այլ բան է, որ այդ 42 կետերի մեծ մասը մնաւել այսօր էլ մնում է չկատարված, ինչպես որ չի կատարվել Ադր. ԿԿ Կենտկոմի ու Մինիստրությունների խորհրդի ամս որոշումը, որը ԽՄԿ4 Կենտկոմի հարկադրանքով ընդունվել է 1962թ. Ստեփանակերտի ավտորեզայի աշխատողների դիմունից հետո, մարզի աշխատավորության աշքին թող փելելու նպատակով (տես «Սովետական Ղարաբաղ» լուրի 1962թ. հուլիսի 20-ի համարը): Կարեւոր այն է, որ «13-ի» նամակի բնականական բոլոր դիտողությունները դարձել են Ալբերտանի կառավարության դեկավարի հրապարակված փաստաթղթի հատուկ կետեր: Նշանակում է ևս ընդունելու է, որ իրավացի են եղել դիմունները, եւ ինքը պարտավորություն է ուսանենել վերացնելու արված բոլոր դիտողությունները:

Սեպտեմբերի նեսերին Ստեփանակերտ ժամանեց Ադր. ԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղար Պ. Ս. Ելիստրատովը, որը մարգկոմ հավաքեց նամակի հեղինակներին եւ, ներկայանալով իբրև ՍՄԿ4 Կենտկոմի կողմից նրանց հետ խոսելու համար լիազորված պաշտոնյա, հայտնեց, որ Կենտկոմը բաժնում է նամակի սկզբունքառությունը, համոզված է, որ միշտ էլ վերջ կվերացվեն այն-տեղի բացահայտված բոլոր թերությունները, իսկ ինչ վերաբերվում է վերջին առաջարկությանը (Պարաբարը Դայաստանին վերանայելու մասին), ապա այս առաջմն քննարկման չի դրվի. Քանի որ ծրագրվում է տեղինել նոր սահմանադրություն, որի կապակցությամբ, համաման ուրիշ մի շարք հարցերի հետ միասին, վերանայվելու և նաեւ այդ հարցը:

Այս է «Բ. Ուլուբարյանի ու նրա համախոհների» նամակի պատճեռությունը: Թվում է պարզ է եւ այն վերաբերմունքը, որ նամակին ցույց են տվել կուսակցական դեկավար մարմինները:

Մի տարի հետո, 1966թ. ամռանը, արցախահայությունը վերստին բարձրացել էր իր ազգային ինքնորոշման, իր քաղաքական իրավունքների պաշտպանության համար: Հուրց 50 հազար ատորագրություններով համախոսական դիմումներ հասան երկրի Գերագույն Խորհուրդ, ԽՄԿԿ Կենտկոմ ու Մինհարդ ների Խորհուրդ: Նման ըդթեր էին զնացել նաև Երեւանից, Դայաստանի տարբեր շրջաններից, Խորհրդային Միության զանազան քաղաքներում բնակող հայերից:

Երկրի դեկավարներն ուշադրություն դարձրին աշխատավորական զանգվաճներ, ամբողջ հայության կամքի այդ բուօն ու միասնական արտահայտությանը: Եվ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը 1966թ. օգոստոսի 8-ին ընդունեց որոշում, որով համեմարդությունը էր Միլորդացանի ու Դայաստանի դեկավարներին (Ասրբեցանից Ախունդով, Ալիխանով, Խվենդեռով, Դայաստանից Քոչինյան, Մուրադյան, Զարուբյանյան) համատեղ ցանքերով ընել Ենթային Պարարագող Դայաստանին վերամիացնելու հնարավորությունը եւ իրենց առաջակուրյունները ներկայացնելու ԽՄԿԿ Կենտկոմ հարցի վերջնական լուծման համար:

Օգոստոսի 10-ին այդ որոշումը ես տեսել ու կարդացել եմ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանի առանձնասենյակում:

Եթեի ոչ որ ի վիճակի չկինի պատկերացնել այն խելագար Երցանկությունը, որ այդ օրն ինձ էր պաշտոն: Դավատում էի աշքերիս, սակայն եւ վախենում անգորույն բախտից, որը մեզ միշտ թիկունք է դարձրել:

Մենք Երկար խստեցինք անելիքների, ծեռնարկելիք միջոցների ու յուրաքանչյուրի պարտականությունների մասին: Քարտուղարը շատ էր լավատես եւ արդեն ծրագրած ուներ առաջիկա կարծ ժամանակում Պարաբարի համար, այդ գործված ու զրկված աշխարհի համար իրականացնելիք վիթխարի միջոցառումներ: Ասում էր, «Սեկ տարվա ընթացքում Զորից Ստեփանակերտ Երկարգիծ կանցկացնենք, եւ Արցախը կվրկվի շնչահետք լինելուց»:

Պայմանագրությունը, որ երկու ու ուստ Գորխոււն հանդիպել ինքն ու Ղարաբաղի կուսակցական մարզկոմի քարտուղար Մելքոնյանը եւ պայմանագրվելն առաջիկա անելիքների շուրջ: Քոչինյանը հանդիպած էր, որ գործի հաջործությանը մնեց օօժամուակություն Ալինի, եթև մարզի դեկավար կազմակերպությունները (մարզկոմ, դեպուտատների մարզինը) որոշումներ ընդունեն արտահայտելով վերամիավորման իրենց կամքը:

Ես քառ Ստեփանակերտ եւ Մելքոնյանի հետ պայմանագրվեցի իր ու Քոչինյանի հանդիպման համար:

Մելքոնյանը, իհարկե, գիտեր կենտկոմի քարտուղարության որոշման մասին, մենք ու առաջ Ելիստրատովն էր զանգել եւ առաջարկել, որ մարզկոմն ու մարզխորհուրդը հավաքվեն, ըննեն վերամիավորման հարցը եւ որոշմամբ արտահայտեն իրենց վերաբերունքը:

-Ես ասացի «Կուսակցություն ինչպես որ հարցը լուծի, մենք համաձայն կլինենք, - նա այսպես հաղորդեց Ելիստրատովին տված իր պատասխանը:»

Մելքոնյանը Գորիսից վերադարձավ որոշած լինելով վճռական որեւէ քայլ կատարելուց հրաժարվել:

Ուուր պայմանագրվել էիր, որ հանդիպենք ես ու Քոչինյանը, - ինձ այսպիսս լուսաւորեց նա:- Սակայն Գորիս եր եկել Մինհարդ ների խորհրդի նախագահ Շահնշահ Սուրայանը: Յնարավոր է, որ Թոշինյանն այնքան էլ չի հավատում գործի հասցողությանը: Այս դեպքում նեմը ինչպէ՞ս կարող ենք մարգարին կազմակերպությունները հարվածի տակ դնել:»¹⁶

Երեւանն ապրում լր «վերենից ստամալիք» պարզենի ցնծությունը: Սակայն և գործ էր կատարում, նախապատրաստվում էր նրա բերելիք հոգենդին:

Ես չեմ նորանում Գերգիի Տեր-Պագարյանցի ու Բաղդալ Սուրայանի խանդական մասնակցություն այն օրերի եռուգետին: Առաջին Սովորվածում, բարձր ուսուցունեության մեջ ունեցած իր բարեկամների հետ սեռ կապեր ուներ եւ գիտեր հարցին առնչվող յուրաքանչյուր շարժմանը: Խոկ Սուրայանը նստմտում էր լոր անելիքները, համարյա ամեն օր կապված էր Արցախի հետ (մեր միջնորդ արդյունք Դայկարամ Աւբամազյանն էր, որ իր պարտականությունը կատարում էր բարեկամինի եռանդով):

Գործողությունների հետագա բնթացքը, սակայն, դասավորվեց ընդունել և որիի դրական լուծման: Պատմութեան նմ, որ Աղրեցանի կենտկոմ են զնացել, «ապացուցել», որ Ենթային Պարատաղը միայն Աղրեցանի կազմում կարող է կյանք ունենալ. հակառակ վարդում կապստամբի աղրեցանական ժողովուրոց եւ, որ աննակարեւորն է խորհրդային իշխանության դեմ թշնամաբար կտրամադրվի մահմեղական Կրիսկը: Դայաստանի դեկավարները ցավալիրեն ընթացան միայն դեպքերի և նետից: Այսինքն եթե աղրեցանացները բողոքով, սպառնակիրներով ու սասգնապի աղաղակով էին գործում Մասկվայում, իրոք, ստիպված պիտի լինելու արդարանակ հակառակորդի լաիշը մեղադրանքների դիմաց:

Ինձ հայտնի է, որ Ախունդովն ու իր գործակիցներն այս անգամ եւս օգտվել ենք Ա. Միկոյանի ծառայությունից: Նրա եւ հատկապես Սուլյովի սադրանքաւուն են օգտագործել լուծման հրաշաճ հեռանկարով բացված հարցը ունենալու մասին:

Դայտի է այս բոլորի վերջը:

Աղրեցանի հաղթանակած դեկավարները (Ախունդով, Ալիխանով, Խսկենյակով) պարտված Ղարաբաղի հայտարարեցին խաչակրաց արշավանք, որի արուահամությունը դարձան մարզի հայության նկատմամբ պարերաբար նորուրող նոր, ամենանորկայի չարագործությունները:

Խնչպես 1965-ի դեկտեմբերին, այնպես էլ կենորկովյան միջոցառումների մեջ «13-ի» գործունեությունը զնահատավում է իրեւ սոցիախստական ազգերի նախակեցության վերաբերյալ լենինյան քաղաքականության դեմ ուղղված նայությանից, ազգային էգոիզմի դրսեւորում եւ այլն: Վերը նշվեց, որ տվյալ հարցում Կեւորկովն իրար հետ շփոթում է լենինյան քաղաքականությունն ու մուռանալարիցն:

Ի դեպ, Լենինյան Աղրեցանի կազմի մեջ մտցնելը միշտ է Կեւորկովի պես և մեկնարանել նաեւ Աղրը. ՍՍՀ դեկավարները, ընդհուպ մինչեւ ։ Ա. Ալիեր. Ավելի ծիշտ, Կեւորկովը կրկնում է վերցներին նրանց վերացական հայտարարություններին կցնցելով հենքանիանար «փաստեր»: ։ Ա. Ալիերը սրինակ, Պ. Ա. բարարուի ինքնավարության 50-ամյակին նվիրված միտմնգում ունեցած իր ճ.

ուում Լեռնային Ղարաբաղն Աղրբեջանին տալը հաճարել է հարցի միակ ճիշտ ու լեռնինյան լուծումը, որով «Վ. Ի. Լենինը եւ կոմունիստական կրտսակցությունը նեծ հոգատարություն են ցուցաբերել Սովետական Աղրբեջանի եւ նրա անքաժան մասը կազմող Լեռնային Ղարաբաղի վերածննդի ու սոցիալիստական ծաղկման մասին» (sic!!! տես «Սովետական Ղարաբաղ», 1973, նոյեմբերի 24, նո. 25):

Սակայն հայտնի է, որ Լենինը ոչ իրականում, ոչ էլ տեսականորեն չէր կարող խրախուսել Լեռնային Ղարաբաղն Աղրբեջանին հանձնելու հակամարքսիստական քաղաքական փաստը: 1920թ. հետեմբերի 2-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն հեռագրել է Լենինին հայտնելով, որ «Երեք Աղրբեջանը հայտարարեց Նախիջևանը, Զանգեզուրը եւ Լեռնային Ղարաբաղը Սովետական Հայաստանին հանձնելու մասին...»:

Ականատեսների վկայությանը՝ այդ լուրջ շատ է ուրախացրել Վ. Ի. Լենինին: Դեկտեմբերի 12-ին Ս. Տեր-Գարբինյանին ու Աս. Մարմանին ընդունելով Կոնֆլում, գրուցի ժամանակ Լենինը իիշել է նաև տերիտորիալ վենցիր բարեհաջող լուծումը: «Դուք Աղրբեջանի հետ վճռեցիր վիճելի տերիտորիաների հարցը»: «Այս, իւշ, ասել է ընկ. Տեր-Գարբինյանը, - սովետական Աղրբեջանի հետ մենք հեշտորեն լուծեցինք Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի հարցերը» (Ասքանազ Մրավյան, Դոդվածներ եւ ծառեր, Եր., 1963, էջ 222):

Լենինը չեղ կարող կողմնակից լինել մի ժողովրդի նույն քաղաքական դրոշի տակ երկիրնելում: Ազգերի ճակատագրի մասին լեռնինյան տեսության հիմքը դրվել է ամեն տեսակ Ծնշման մեմ, ամեն մի ազգի ու ազգության իրավունքների ու նահարարությունների դեմ անզիջում պայքարի բովում: Դեռևս 1903թ. Կ. Ի. Լենինը հայտարարում էր, որ սոցիալ-դեմոկրատներն «իրենց ծրագրում դնում են ոչ միայն լեզվի, ազգության կատարյալ իրավահավասարություն եւ այլն, այլև յուրաքանչյուր ազգի ինքն իր բախտը տնօրինելու իրավունքի ճանաչում» (Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, Ե., էջ 588):

Ղարաբաղի հայության բախտը 1921-ի հուլիսի 5-ին տնօրինելու են Սուտակինն ու Նարիմանովը ընդունել այդ նույն հայության կամքի, ընդունելու նրա անունից խոսող հայ գործիչների ծանությունը: Մա լեռնինյան ազգային քաղաքականության խախտում է եւ ընդհանուր ոչինչ չունի այդ քաղաքականության ոգու եւ եռության հետ:

Լեռնային Ղարաբաղը ինքնավար մարզի իրավունքով Աղրբեջանական ՍՍՀ կազմում թողնելը սկզբից եւեր հակասության մեջ է եղել լեռնինյան ազգային քաղաքականության հիմնական սկզբունքների հետ: Դեռևս 1913թ. ՌՍԴ(Բ)Կ խորհրդակցության ազգային հարցի գնով ընդունած բանաձեւում Լենինը գրել է. «...անհրաժեշտ է... մարզային լայն ավտոնոմիա ու միանգամայն դեմքանական տեղական ինքնավարություն ինքնավար ու ավտոնոմ մարզերի սահմանների որոշումը կատարելով իր հայ տեղական բնակչության կողմէց տնտեսական ու կենցաղային պայմանների, բնակչության ազգային կազմի եւ այլնի հաշվառման հիմնա վրա» (Լենին, հատ. 19, Ե., 1950, էջ 530-531): Այսուհետ խոսքը վերաբերվում է կապիտալիստական հասարակությունը, ուր բնադրատվությունը կիս ազգերի, հատկապես ազգային փորդամասնությունների իրա-

լունքները: Սոցիալիստական կարգերի օրոք ազգերի ինքնորոշման հարցում տառապել վճռական գործոն պիտի դատնար ազգային կազմը տնտեսական ու լինզարային շահերի հետ միասին: Այս արթիվ ունենք Լենինի ուղղակի ցուցունի թնադատելով լեհական սոցիալ-դեմոկրատների այն տեսակետը, որի համաձայն սոցիալիզմի օրոք, իբր, ազգը «ունենալու է միայն կովտուրական ու լուգական միավորի բնույթը» եւ ոչ տերիտորիալ ամրողություն, այսինքն որ սոցիալիստական ազգերի տերիտորիալ բաժանումը «կարող է տեղի ունենալ միայն արտադրության պահանջմունքներով», Վ. Ի. Լենինի լեհական սոցիալ-դեմոկրատների այս դիրքը համարում է մարքսիզմի ծաղրանկար: Նա գրում է. «Յի «Էկոնոմիստներ», մարքսիզմը ծաղրանկար դարձնելով, բանվորներին ուղղությունուն էին, թե մարքսիստների համար կարենորը «միայն» «տնտեսական» է: Նոր «էկոնոմիստները», հայտնի չեն, թե ինչ են կարծում, - այն, որ հայդական սոցիալիզմի դեմոկրատական պետությունը գոյություն է ունենալու տական սահմանների («զգացությունների կոնվենցիան» նման մի բան առանց կուրքի) թե՞ այն, որ սահմանները որոշվելու են «միայն արտադրության պահանջմունքներով»: Այդ սահմաններն իրականում որոշվելու են դեմոկրատուններ, այսինքն հանաձայն բնակչության կամքի ու «համակարանքների» (Լենին, Երկեր, հ. 22, Ե., 1951, էջ 436):

Ուրեմն, տնտեսական գործներին ու ազգային կազմին գումարվեց նաև յուսկության կամքը, նրա «համակարգի» գործնը: Դիմնականում այս սկզբունքներով է առաջնորդվել կոմունիստական կուսակցությունը ուղեատական կրթիքի ազգերի ու ազգությունների վարչական միավորները կազմնելիս: Դարձույ այս գործներին ենթադրանքով են կատարվել հետագա վերանայուններն ու վերակառուցումներն ազգային վարչական միավորների տերիտորիալ բանավունքները մեջ, քանի որ սոցիալիզմն առավել լայն հնարավորություններ է բնակչություններ ինչներ վերց ու արդարացի եղանակով, առանց տիած բարդությունների լուծելու համար: Դրա լավագույն ապացույց կարող են համարված այն վերածեավորումները, որ ներ երկրի դեկապարություն է կատարվել յուրաքանչյուրուր կոնկրետ դեմքունք ընդառաջելով այս կամ այն ազգի տարրեր հասկածների միավորները կատարուած են գոտումներն: Դրանք են. Արեւելիս եւ Արեւմտյան Ուկրաինայի եւ Արեւելյան եւ Արեւմտյան Բելոռուսիայի վերամայացումները, Կլայպեդայի մարզի վերամահացումը Լիտվական ՍՍՀ-ին, Լավաշինում Պահանտանի կազմի մեջ մտնող Բռաստանը կրցանի վերամիտումը Ուգրեկական ՍՍՀ-ին, նախկինում Ուգրեկական ՍՍՀ կազմի մեջ եղած Ասլվերգինյան տափաստանի վերամահացումը Տաղիկական ՍՍՀ-ին, Դարձու այս միջոցառումները հիմնականում նաև ուղղեցի ամրապնդելու սոցիալիստական ազգերի տերիտորիալ եւ երմիկական ամրողությունը, բնական ու տնտեսական կամ ուղղովուրդունը:

Բ. Ա. Կետրկովը եւ նրա պես մտառելուն աղմկում են այն մասին, թե, իբր, Լեռնային Ղարաբաղի անջատումն Աղրբեջանից կնշանակի լեռնինյան ազգային քաղաքականության խախտում կատարված «ազգային եգորիզմի եւ ազգա-

յին սահմանափակվածության արատավոր դիրքերից»: Սակայն ինքը Լենինը, լենինյան ազգային քաղաքականության հիմնադիրն ու խոշորագույն տեսաբանը, ծիծաղում էր ազգերի միջեւ եղած թիժի կապերի վրա, դրանք համարում էր անմիջապես խորսակելու, վերացնելու ներակա կապեր: 1914թ. Լենինը գրով է. «Դայտին է, որ 1905թ. Նորվեգիան անջատվեց Շվեդիայից հակառակ շվեդական կավածատերերի տարարյուն բոլորների, որոնք սպասում էին պատերազմով... Եվ ինչո՞ւ: Արդյո՞ք այսախիք անջատումից վճառվեց ժողովուրդը, վճառվեց՝ ն կուլտուրայի շահերը. կամ դենուրատիայի շահերը, բանվոր դասակարգ շահերը:

Ամենեւին... Այդ երկու ...ժողովուրդների թանի կապի խզումը նշանակում էր տնտեսական կամավոր կապի ուժեղացում, կուլտուրական նոտիվության ուժեղացում, կոխադարձ հարգանքի ուժեղացում: Շվեդական եւ Նորվեգական ժողովուրդների ընդհանրությունը, մոտիկությունն իրականում շահեց անջատումից, որովհետեւ անջատումը հանդիսացավ թանի կապերի խզումը»:

Չի կարեի մտածել, թե Լենինը կողմնակից էր միայն նորվեգական ու շվեդական ազգերի միջեւ եղած թանի կապի խզանքը: Ոչ, նա վճռարար դեմ էր բոլոր ազգերի միջեւ եղած ամեն տասակ թանի ու անբական կապերին, այդ ազգերից մեկն ու մեկի շահերը ուսնահարոր կապերին: Դրա համար էլ գրել է նաև. «Ամենուրեք, որտեղ մենք ազգերի միջեւ ուղին կապը ենք տեսնում... անպայման եւ վճռականապես պաշտպանում ենք ամեն մի ազգի իրավունքը քաղականական հիբնորոշվելու, այսինքն անջատվելու:

Պաշտպանել, բարոգել, ոնդունել այդպիսի իրավունք նշանակում է պաշտպանել ազգերի իրավահակասարությունը, նշանակում է ընդունել թանի կապերը, նշանակում է պայքարել որեւէ ազգի ունեցած ամեն տեսակ պետական արտոնությունների դեմ, նշանակում է նաև զանազան ազգերի բանվորների մեջ դաստիարակել դասակարգային լիակատար համերաշխություն» (նույն տեղում, էջ 270):

Կերը վկայակությած լենինյան դրույթներից ելենով չի կարելի չնկատել, որ Լենինյին Ղարաբաղը Ադր. ՍՎՀ կազմի մեջ մտցնութերը չեն առաջնորդվել մարդքանց-լենինիզմի սկզբունքներով տնտեսական գործոնով, երիշկական կազմով եւ բնակչության կամքի ու «հանակրանքների» հաշվառումով: Արհանարկել է նույնիսկ առաջին հանգամանքը տնտեսական գործոնը, չնայած հարցի լուծմանը որեւէ ուժ տալու համար հորինվել է մի այնպիսի անհրական հիմք, ինչպիսին «Վերին ու հարթավայրային Ղարաբաղի տնտեսական կապն է»:

Ավելորդ չենել, որ տվյալ դեպքում ոտնահարվել է նաև ամբողջ հայ ժողովրդի. Յայկական սովետական հանրապետության անկապտերի իրավունքը: Եթե 1921թ. մարտի 16-ի սովետա-ուլուրքական պայմանագրով բուրքերի տիրապետության անցած հայկական այն նահանգները, որոնք նախընթացին միշտ էլ գտնվել էին Ռուսաստանի սահմանների մեջ, ապա տրամարանական եր, որ հարգվեին գտնել Յայաստանի պատմական, երիշկական ու տնտեսական իրավունքը ներքին հորինվել վրա: Չէ՞ որ առանց Ղարաբաղի ու Նախշենամի Յայաստանը տեր էր մնում լենուն ու աներին մի այնպիսի տարածության, որի վրա ամենար պիտի լիներ ատեղեն առաջնակարգ գյուղատնտեսություն:

Այսպիսի պայմաններում Լենինային Ղարաբաղը Յայկական ՍՎՀ կազմո, Ժողովուրդ կունենար ոչ միայն քաղաքական վիթխարի նշանակություն (աշխարհի բարու ժողովուրդները կտևանեն, թե ինչպես սովետական կառավարությունն ու սովոր վճռով պաշտպանում է հյուծված ու արնաքամ Յայաստանի իրավունքը), այլև սովետական իրավահակասար ժողովուրդների ընթացքում հայ ժողովուրդը կստանար տնտեսական գարզացման արավել նպաստավոր հիմքում: Ղարաբաղի բարեբեր հողը, նրա բնական ու հանքային հարստությունները, որոնք ահա ավելի քան կես դար օգտագործվում են անխման, անտիրաբարությունուն:

Ոյս դեպքում չպետք է մոռանալ նաև Լենինային Ղարաբաղի հարցի շուրջ տուելծված այն ծանր ու անհասկանալի ծխածեկույթը, որը չեր կարող պատճի երեխ երկու հարեւան ժողովուրդների բարի դրացիական հարաբերություններին, նրանց կրծունիշտական կազմակերպությունների իստերնացիոնը ավանդույթներին եւ մասնավորապես Անդրկովկասյան գորու ազգային լուսնարաբերությունների կարգավորման գործում սովետական իշխանության լուսնացած վիթխարի դերին: Անդրկովկասի աշխատավորների համար, հատկապես Ղարաբաղի հայության համար տանջող մի առեղծված էր մնում կատարվածը: Ի՞նչ էր պատահել: Չէ՞ որ Ադրենազին ու Յայաստանի կառավարությունները իրատարակել են դեկարտացիաներ, որոնց համաձայն Լենինյին նույնաբար, որպես գերազանցություն հայարձնական նարզ, մեկրնիշիշտ պետը է ուղարկներ Յայկական ՍՎՀ-ին: Կոմունիստական կուսակցության ականավոր ղեկավարները ողովուներ են այդ միջոցառություն իբրև է պատմական վիթխարի նշանակություն ունեցող մի ակտ, որն իր հավասարը չունի ժողովուրդների եղբայրության փոխհարաբերությունների պատմության մեջ: Յա ժողովուրդը երախուացիստությամբ է ընդունել այս բոլորը: Դգործ չեր նաև աղբեթեական ժողովուրդը: Յամենայնդեպս, Բարձի Սովետի հանդիսավոր նհատի եւ Ադրբեյջանի ներկորմի դեկարտացիայի արծագանքները խոսում են այն մասին, որ աղբեյցանական ժողովուրդը հարցել է Յայաստանի սովետական հանրապետություն անկապտերի իրավունքը Լենինյին Ղարաբաղի վրա: Իսկ այսքանից հետո հարցն ինչո՞ւ ստացավ հակառակ լուծում: Եվ այդ էլ թիւ էր, հետագայում Դարաբարջ Յայաստանին վերադարձնելու մասին ամեն խոսք կամ իշեցում ուղևություն էր իբրև էլ շամանացական արարք, հակասակութական, հակահնտերուցիստական այլն: Իսկ սա ոչ միայն անտրամաբանական, այլև վարկառեկիշ էր մի կուսակցության համար, որն իր դրոշին գրել է բոլոր ազգերի ու ժողովուրդների իրավունքների պաշտպանությունը:

Յետեւապես, Լենինյին Ղարաբաղի հայություն ճիշտ լուծմանը նաև պետք է նողովրդի աշքում ավելի բարձրանար Կոմունիստական կուսակցության հեղինակությունը:

ԼԵՌԱՅԻՆ ՊԱՐԱԲԱՐ ՏՏԵՏԱԿԱՆ, ՄԾՎԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻճԱԿԸ

Երբ Ռուսաստանի նոր միջնորդությունը որոշակի ծեւ ու կերպարանը էր ստացել, եւ սպասվում էր, որ այն գործ էլ կղանան, միանգամից սրափվեց, եռամբով աշխատանքի լծվեց նաեւ ԵԱՀՆ-ը: Նրա՝ Մինչևի խմբի դեկավարն ու տեղակալը (Յան Ելյունին, Մուսքեր) իրար հերթ չտալով այցելեցին Բարոյ և Երևան, բարեհաճեցին զնայ նույնին Ստեփանակերտ, նոր բանակցություններ վարեցին. արտահայտեցին իրենց գոհունակությունը Ռուսաստանի ծերանարկությունի նվատմամբ: Նորից խորհրդադողովներ ու եռանդուն քննարկությունների հավաքվեցին Վիեննայում ու Ստորապուրդուն... Արդյո՞ւնքն ինչ: Եթես այն, որ նաեւ ջանքեր են գործադրում ԵԱՀՆ-ի ու Ռուսաստանի դիրքերը իրար մերժեցնելու համաձայնեցնելու համար: Սակայն իրականում գործ են ճգնաժամին ու նրա բիկունքում գործող թուրքիային հնարավորություն տալով խափանելու խաղաղություն հաստատելու նաեւ այս փուլը:

Աղրբեջանի պրեզիդենտ Ալիեւը նորից կառավարական բարձր մակարդակի համբաւումների արշակի ելայ՝ շրջելով իրանից մինչև Սաոււյան Արարիա, եւ ամենուրեք քննարկությունների կենտրոնուն էր դարաքայան բարդություն: Թուրքիայի դեկավարները, զգոհացած ԵԱՀՆ-ի ու ՄԱԿ-ի ժողովներում ծեռարկած խարդավանքներով, հիմա էլ գորաջոկատներ առանձնացրին: Ղարաբաղ ուղարկելու համար: Դայտնի է հայկական կողմի, մանավանու ԼՂՀ դեկավարության կտրուկ մերժողական վերաբերմունքը թուրքիայի ամեն տեսակ միջնորդության համեմա: Դա էլ արդեն վերջնականապես բացառում է թուրքիայի մասնակցությունը հակամարտության կարավորման գործին: Սակայն վարչապետ Թանոսու Չիլլերի պահանջով՝ արձակուրդում գտնվող իրենց խորհրդարանը պիտի հավաքվեր եւ որոշում ընդուներ՝ Ղարաբաղ զոր ու զարդելու մասին (իբր, թուրք գործի այսօրինակ տեղաշարժների համար պարտադիր է խորհրդարանի որոշումը: Ուրեմն, թուրքիան էլ ծեւացնում է, թե օրինական զորք ունի): Այս լուրն առնելով՝ Ռուսաստանի պրեզիդենտի հատուն հանձնարարությունների (տվյալ դեպքում՝ ղարաբայան հակամարտության) գծով դեսախան Վաղիմիր Կազիմիրովը հումսիս վերջին բռավ Անկարա, իհարկե, իհանգարելու թուրքիայի այս նոր գոռեհիկ միջամտությունը:

Թե հետո ինչ բանակցություններ են կարել ուսւ ու թուրք դիվանագետները, դա իրենց գաղտնիքն է: Բայց, ահա, սրամից հետո էր, որ թուրքիայի գիծը վաճ ուղարկել գլխավոր շտարի պետ, բրիգադի գեներալ Պահան Գյումեշը ժա-

ռամեց Բարոյ, վակ դրսերի ետև գրուց ունեցավ Յելյար Ալիեւի հետ (հուլիսի 7-ին), ապա, Բարվի ու Մուկովյան հեռուստալրագործների վկայությամբ, հայտարարեց, թե Թուրքիան իր բարեկամ նրկիր Աղրբեջանին այնքան գիմուժ կուղարկի որքան պետք լինի նրան:

Եթուարբերի է, որ սրամից անմիջապես հետո, հուլիսի 8-ին էլ, Ռուսաստանի պաշտպանության նախարար գեներալ Գրաշովը՝ «բացվեց»՝ վճռաբար և այսունեղով, թե Աղրբեջանուն իր կարտորագույն շահերն ունի նաև Ռուսաստանը, որն այնուղի կմտցնի եւ իր սեփական գործերը, եւ միասնական պաշտուանական համագործակցությամբ իրար հետ դաշն կնքած ԱՊՀ երկրների հաղաղականությունը:

Աղրբեջանի լրատվության մարմինները հուլիսի 12-13-ին, ոտ ու ծեռ ընկած, հայտարարում էին, թե Թուրքիայի գեներալը չի արել այն հայտարարությունը, որի մասին իրենք մի քանի օր առաջ սանձարձակ հապատությամբ բըրեւարություն էին:

Այս խաղին սովոր ենք, ահա, ավելի քան վեց տարի: օսմանյան բուրքն ու ողբերգանցի թուրք միշտ երազում են եւ երազելով փորձում են ստեղծել այն ուղղը, ուրիշից կարող են ինչ-որ բան փողոնել Ռուսաստանի աչքից հեռու, կամ որով կաշառված ներկայացուցիչների բնիքի մթնոլորտում: Ի՞նչ կիննի այս անուն:

Չնայած թիզ չէ նաեւ եղածը. շուրջ երկու ամիս կատարյալ իրադադար էր, ուսորդիկ (արցախահայ կամայիք, որովհետեւ բոլոր տղամարդիկ ճակատում են)՝ լուրջատնեսական աշխատակամբներով զբաղվեցին, իինա էլ բերք են հավատում: Իսկ բնիքը մի մեծ զորույշում ունի. Օրա հետ առնչվողին բվում է, թե հետո էլ պիտի չինի հանգիստ-խոհուն աշուն, որին Էլ հետեւելու է ճերմակ բարդացույունը...

Բայց մի՞թե քաղաքական ու դիվանագիտական մեքնայի անիվը նորից լուսությի եւ՝ իր հետ տամելով նաեւ ժողովոյի հերոսական ջանքերի արոյունը, տերությունների քաղաքական մթնոլորտում բացված այն երանելի բացւածքը, որից արդարության լույս է ցոլանում:

Ապրենք, տեսնենք՝ հետալով, թե արդարությունը կիազիթ գոնե այս անուն:

15 հուլիսի 1994 թ., Եղվարդ

ՄԻ ԺՈՂՈՎՐԴԻ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ԱՐՑԱԽԱՐԱՅՅՈՒԹՅՈՒՆ

Նորից Աղբեջանը եռօրյա հայկական նախնիք կազմակերպեց: Այս անգամ կարգապահ գորբերը կես ժամվա ճանապարհով հեռու չէին, որ ուշանան երեք օրով կամ երեք ժամով: Այս անգամ ամեն ինչ կատարվեց, նրանց բոռանալիք աչքերի առաջ, հանրապետության նայրարադարձում. նի հանրապետություն, որի մի ծիփաների՝ առաջին մեծավորից մինչև շարքային չարագործի հանդեպ խեղճանում, աստծո գանձներ են դարձնում գորբերն ու նրա իրամանատարները, երկրի պետական այրերը, ազգերն ու ազգությունները: Թե չէ, ինչով քացարենք աշխարհի ամենակոր տերության սահմանների անպատճի ոչնչացումը նրանց կողմից եւ այդ սահմանների բացումն ու տոնական գորգի առև նրանց առաջ փեսէր պետության բարյացականությամբ:

Նոր եղենի համար պատճառ հայրայթողներին ուղղություն էր տալիս եղանակի գործոնը: Նախ առաջին ժողովրդական ճակատից երկու հոգի մտել են բարքարանակ Ավանեսովների բնակարան, առաջարկություն արել... Այս Ավանեսովներն էլ անկոչ հյուրերին կացնով են դիմավորել: Եվ ահա այդ անհյուրընկալ վերաբերմունքն է, որ հայերի դեմ ուրիշ է համել ինտերնացիոնալ մարդարարի մուտքաման բնակչությանը:

Դեռ տեսամ չի կազում, քանի որ անկոչ հյուրեր ոչ Ավանեսովների ծննդյան տոնը չնորիհավորեն լուսակարան խումբ կեսզիշերին, ոչ էլ հանգստյան տան ուղեգիր առաջարկելու...

Եվ վերստիճ ասպարեզ քաշվեց Արցախ:

Ծուտով կլրանա երկու տարին, որ իր ուսերից դեն է նետել հանրապետության լուծը, ոչ մի կերպ, նույնիսկ երկիր կառավարության նոյնընթիւ 28-ի որոշումից հետո, մոտ չի գալիս, որ վիզը դմի հարազատի յժմ տակ: Սա ի՞նչ բան է, ինչպէս կարելի է համուրածել, որ Սումգայիթից ու նրան հետեւած մեծ ու փոքր ջարդերից հետո, կենտրոնի այնքան նպաստախոսություն որոշումներից ու փափուկ միջմորդություններից հետո անգամ համարձակվում է մոտ չգալ...

Ուրեմն, Արցախն է պատճառ:

Մրան հակատայն այնքան դժկար չէ, քանի որ հայսնի են անցյալ ջարդեր իրենց ելման կետերով. 1918 թ. աշնանը մուսավաթական կառավարությունն արցախահայությանը հակատության առաջարկություն արեց եւ ներժուատանալով՝ կազմակերպեց Բարձի եռօրյա եղենը. որին զոհ գնացին բարգարան 30000 հայեր: Դրանից երկու տարի էլ չեր անցել, որ առաջարկությունը կարգն էր պատճառ այն պատասխանը պատճառ դարձավ, որպեսի նարդի 21-23-ին, այսինքն՝ դարձալ երեք օրվա ըմբացքում աղբեջանցիներն ու օսմանները եղայրական համագործակցությանը բափեն Ծուշվա 35 հազար հայերի վրա կրտսեն եւ մնացորդացն էլ քշեն աշխարհի շորս կողմերի վրա:

Իսկ Սումգայիթը: 88-ի փետրվարի 20-ին Արցախի Մարզխորհուրդն ընդունել էր իր բաժանման որոշումը: 26-ի առավոտյան հրատարակվեց կառավարության ենկապարի ուղերձը, որ խոստառում էր ուշադրություն դարձնել որոշմանը: Դենց այս ուշադրության խոստումն էլ բավական եղալ, որ դիվութիւն

աղբեջանական կողմը եւ աշխարհին պարգևեր մի Սումգայիթ՝ իր վարքի խորհրդանիշը:

Բայց արդյո՞ք Արցախն է եղել իշխված վայրագությունների բուն պատճառն ու շարժադիրը: Եթե այս, ասպա ինչո՞վ բացատրենք բոլոր այն վայրահաշուրյուններն ու եղերական կոչերը, որոնք աղբեջանական թերաններից ենում ին այն ժամանակներում, երբ հարաբերական Արցախը բնիրի մեջ էր լինում, իսկ նրա հիմնահարցը՝ այնպես քնած, ասես արթնացում չի լինելու:

Արցախն իր լծից դեռ չեր բաժանվել, եւ նրա ցավի ամենահեռատես տեսքը անգամ մշուշների մեջ էին տեսնում գալիք ճանապարհը, երբ հարեւան «Լորայրական» երկրի ու գրական շրջաններում հայոց ջարդի կոչեր էին հնացած՝ արձագանք տալով կուտակցական նամուլի էջերում: Դեյտար Ալիեւը հանրապետության ժողովրդական բանատեղը Ռասուլ Բզային տցիալիստական ուշխատանքի հերոսի կոչեան էր արժանացրել ինըց այդ կոչերի համար եւ ևս քարգագրեց, որ հերոսի կոչման հրամանագիրն ու հայկական ջարդի կոչ պարունակող այսպես կոչված, այնքը հրապարակվեն համբաւետական թերթերի միջնուուն օրվա համարներում: Եվ այդ «պունտու» խոսք էր զնում Արցախի Դորի դարի առաջին կեսի իշխան Սահմանադրության մասին ու Պարտկաստանի խորքերից եկած այն Բարեկի մասին, որին հայ ու արար հետինակները ներկայացնում են որպես «մարդախողիսող զազամի», արյունուշու ու խարդախ բռնավորի: Բարեկն Արցախն ասպատակել է. Այսունիցի Մարտենաց վանքում սրախողոսոյ արևի 15 հազար անպատճական մարդկանց: Ալ-Մուտքադասին տեղեկացնում է, ու Բարեկը երբ նոր երկիր էր նվաճում, իշխանավորին կապուտում էր եւ նրա աշքերի առաջ կենտուտ գործ կատարում նրա նոր, բրոջ ու կնոջ հետ:

Եվ ահա Արցախի իշխան Սահմանադրության մասին է այս բարբարության, կապուտած ուղարկում Բաղդատի խալիֆին՝ պատժի արժանացնելու:

Շատու նզան պարսիկ Բարեկին դարձրել էր աղբեջանցի, հայտարարել իր ազգի ժողովրդական հերոս (ասաւ, տեսնեն ով է քո ժողովրդական հերոսը, լիսեմ, թե ով ես դու ինքը): Եվ այսպահն էլ բավական չի համարելով, Բարեկին դարձրել էր նաև Արցախի տերը. իսկ Սահմանադրությունն ու հովանավորությունը վայելած մի ապերախտ, որը հետո, իր դավադրությանը պիտի Բարեկին կալանավորած հանձներ խալիֆին:

Շատու նզան չեր բավարարել նաև Սահման ոչ այնքան ցայտուն հայկական ամունք: Նրան կոչելով Սմբատ՝ «պունտ» կրկներգերում մոլեգնած գործուն էր.

Դիմա էլ կամ նրանը,
Ապառու են այդ սմբատները,
Այդ անկու շները,

Դայրենիքի համար կոփի գնացող բաջեր,
Զարդեցեք նրանց, անխնան ոչնչացրեք:

Սումգայիթի ու Բաքվի, Կիրովաբադի ու Խոջալու մարդասպաններն այս կոչն իրենց ականջներում ունեցել են 1981-ից: Բայց մի՞թե այդքան ուշ, 81-ից շետք որ 60-ականների սկզբին, երբ Արցախի հիմնահարցը դեռևս խոր թմբիրի մեջ էր, ինչպես շերմագործը բռժուի մեջ, հանրապետության մի ուրիշ ժողովունական քանակի մասնաւոր էր այս ժամանակը: Այս ժամանակը Աղրբեջանի գրողների միության քարտուղար Նարեկ Նազարյանը, փառաքանում էր Շուշվա հայկական կրտսրած՝ հայտարարելով, թե այնտեղ է իր ազգը ճանաչել հայկական թշնամուն («Շուշվա ճանաներին»):

Աղրբեջանական հայատյացությունը ոչ երեկ-մեկել օրն է ծնունդ առել, ոչ էր այսպես կոչված, խովհանական տարրերի մեջաշնորհն է: Այս միշտ է հարեւան հանրապետության գաղափարական կյանքի եւթյունն է եղել, իսկ ապէի ժիշտ՝ գոյություն է ունեցել որպես պետական քաղաքականություն:

Էղկ Վերջին երկու տարում է, որ բացվել, տարածվել է իր ամրող վայրագույքը ու անպարագիծ ընդորկումներով:

Միայն հավկութերն ու կարճամիտները կարող են չտեսնել ու չհասկանալ Արցախի ու Յայատանի շրջափակման նողկալի եւթյունը եւ հուսալ, թե փոխգիտումների ճանապարհով հնարավոր կլինի հասնել փոխըմբռնումը եւ խաղաղ դրացիության:

Քոնությունը, գլուխ հանելուն պես, պիտի պատճեն: Այս պարզ ու հանրահայտ ճշմարտությունը չ' ին հասկանում երկրի դեկավարները: Պետական գործադիակուների տված գոիները, ուստի զինվոր նահատակների արյունը կրացեն նրանց աչքերը եւ ուղղախոհության զարթոնքը ցույց կտա, թե ով է ու ինչպատճեն:

Հազ է, ակադեմիկոս Պրիմակովը Բաքր է զնացել: Կտեսնի պատճենական ճանատագերերի նկատմամբ իր քանահրական վերաբերմունքի արյունուտ արդյունքը: Բաց աչքերով կնայի ինտերնացիոնալ Բաքվի իրական պատերին, կլինի Սումգայիթում, Երեկի Մաշտաղ էլ կտանեն...

Երանի թե կարճատեսի մոլորությունից տուժողը միայն ինքը լիներ: Բարձրատյաններում անծիտ վճիռներ են հանում, եւ տուժողը միայն ժողովուրդն է լինում: Անպաշտապան քաղաքացիներին Բաքվում են ջարդել, եւ ռազմական դրություն է մոցվում սոսկ Արցախում ու հարավից շրջաններում:

Եվ դեռ այսրանից հետո էլ ես հույս չեմ կորցնում: Զգիտեմ՝ իմ անուղղելի լավատեսությա՞նն են պարտական, թե՞ իրողության ու նրա շարժիք ուժերի հմացությանը, որ միշտ հավատացել են եւ այսօք էլ հավատում եմ Արցախի աստղին: Սույնիսկ 1965-ին, երբ մարզի տասներեք անհնազանների դեմ կանգնած էր ամրող Երկրի «խավարի քագավորությունը», երբ կենտրոնի «ֆինքսները» նրանց ընդվզումի խոսքերն ու պաղատաճի մրնունջները բանի տեղ չդնելով՝ հանձնել են Աղրբեջանի դեկավարության դատին, սա էլ դատաստանի իրավունքը հանձնեց մարզային հաճկատար ներին:

Եվ սկսվեց մի դատաստան, որ շատ էր նման ճիզվիտական հավատաքնության:

Այս նոյնիսկ այն ժամանակ, այն հավատաքննության ժամին եւ նրանից հետո էլ ես հավատում էի, որ ծագելու է Արցախի աստղը, գալու է փրկության

լուսաճառագ օրը: Իսկ նրանց մասին, որ ստոր եռանդով դատապարտում էին տասներեցին, մտածում էի, թե շատ էլ մեղք չունեն, քանի որ իրենք չեն դատող-ները, նոյնիսկ իրենք չեն, նրանք բերաններով ու դժվար կերպարանքներով լսություն են ռազմական կոմունիզմից մինչեւ բրեժենյան բամանության թեմելը՝ բառատւնինգ տարվա կրթարան անցած ենիշերիները: Այս ժամանակ «մանկություն» խորհմաստ բառը չկար, եւ մենք ենիշերու մեջ էինք տեսնում ազգային սկզբների դեմ սուր ու մանիք բանեցնող անփրատ-անուղեղ արարածներին:

Աղդպատ էր այս ժամանակ, իսկ իիմա ի՞նչ է պատահել: Արցախը փշրել է յուրանատուն տարվա իր կապանքները, եւ նրա թիվունքում կանգնած է մի ամուռոց հայություն՝ Երեւանից մինչեւ արտասահմանները:

Դունվարի 9-ին Կենտրոնի ու Բաքվի ներկայացուցչները Ստեփանակերտի ողանավակայանից ետ դարձան, գնացին իրենց տեղերը, որովհետեւ մարզը լինդունեց նրանց առաքելությունը: Չընդունեց եւ չի ընդունի նաև վաղը, մյուս որը, հավիտյան:

Երբ ժողովուրդը հասկանում է իր ագատության գինը եւ պատրաստ է նահատակության, նրան ծնկի բերելը դամում է անհնար: Առավել եւս, եթե այդ ժողովուրդի ամունն է արցախահայություն:

ԵՐԲ ՎՐԴԱՄԱՐԴՎՈՒՄ Է ՔԱՍԱՂԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Անցյալ տարվաւ վերջում մեր ընթերցողներին հասավ «Դայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» գրքի երկրորդ հրատարակությունը: Նուա հեղինակներն են անվանի պատմաբաններ Գ. Խ. Սարգսյանը, Թ. Խ. Հակոբյանը, Ա. Գ. Արքահամյանը, Մ. Գ. Ներսիսյանը, Կ. Ս. Խուղարդյանը, Ս. Տերեմյանը, Խարազիրն է Մ. Գ. Ներսիսյանը, որին օգնել են Թ. Ն. Առաքյալյանը ու Գ. Ա. Գայոյանը:

Վերջին տասնամյակներում ԳԱ Պատմության իմաստությի լույս ընծայած 8-հատորյակի եւ Երեւանի պետական համալսարանի 4-հատորյակի կողմին այս հրատարակությունը խրախուսելի պարտականություն ունի ընթերցող լայն շրջաններին ներկայացնելու հայ ժողովրդի պատմությունը մեկ եւ այն է ոչ մեծավալ գորով: Նեղինակները երեխ իրենց խնդիրն իրականացնելու երկու ճանապարհ են ունեցել: Կամ հանրանատչելի շարադրել հայոց պատմության կարեւորագույն դրվագները, կամ էլ՝ նրա շղթայի բոլոր օղակները, որ նշանակում է՝ ամեն ինչից մի քիչ: Եվ նրանք ընտրել են երկրորդը, սակայն տեղ-տեղ խուսափել են ավարտներից: Դրա շնորհիվ է գորում ընդարձակ ու պատշաճ մեջնաբանություն են ստացել հելլենիստական ու Արշակունյաց շրջանների Դայաստանը: Ավարայիր Ժակատամարտը, Արեւելյան Դայաստանի միացումը Ռուսաստանին... Այս շարին թերեւս հնարավոր լինի ավելացնել երկու-երեք թեմաների եւս: Մյուս բոլոր դեպքերում հեղինակները խստիվ առաջնորդվել են «ամեն ինչից մի քիչ» սկզբունքով, որի պատճառով էլ գիրքն ընդիմանուր առաջարկություն է բոլոնում:

Ցավակիրեն այս սկզբունքից ամենաշատը տումել են մեր նյութական ու հոգեւոր մշակությունից բնագավառները, գրականությունը ու արվեստը: Մի խոսքով՝ մեր ազգային մեծագույն հայարտությունը, որի մասին խստելիս հաղորդել սոսկ տեղադրվական տվյալներ՝ լավագույն դեպքում նշանակում է ոչինչ չասել, իսկ իրականում՝ ստեղծել վանո՞ր տաղոտուկ: Օրինակ՝ հայ կառուար ընթերցողին (մի երկու տարի առաջ գիրքը լույս է տեսել նաեւ ուստեղեա)՝ ի՞նչ պիտի հաղորդեն այսպիսի կաղապարները՝ «Զարարոնցը 7-րդ դ. հայ ճարտարապետության գլուխգործոցն է», Գրիգոր Նարեկացու «գլուխգործոցը՝ «Մատյան ողբերգության» ծավալուն պիտօն է». Ռաֆֆու «գլուխգործոցը՝ «Սամբել» պատմավեաք, հայ գրականության լավագույն երկերից մեկն է...»: Կամ եթե թեզ ուզում են համոզել, որ Սայաթ Նովան ծնվել է Յաղաստում (՝ու ստեղծել է հիանալի բանաստեղծություններ», Ալ. Թամանյան):

Այսպես է ամենուրեք, եթե չհաշվենք Գառնիի հեթանոսական տաճարը, որը փրկվել է Գ. Խ. Սարգսյանի կարծի, բայց շատ բան ասող խոսքի շնորհիվ:

Ես, իհարկե, այս կարգի իմ դիտողությունները կարող են հրապարակ չհա-

նել, քանի համոզված են, որ մարդիկ այսպես գրել են եւ այսպես է գրելու են... Բայց երբ կա ամենակարեւոր ասելիքը, պարզապես անհնար է շրջանցել մի թերություն, որն այս մեր պատմագիտական գրականության համար դարձել է անհարահարելի համաճարակ: Սարդիկ մոռանում են, որ «պատմությունը» «պատմել» բառից է կազմված եւ նախապես էլ ունեցել է իր հովանավոր մուսան:

Այս գրքի առաջին հրատարակության (1972 թ.) առիջ ժամանակին դժգություն ալիք է բարձրացել մեր նուավորականության շրջանում: Մեծ դժվարությամբ այն արձագանքի արժանացաց նաեւ պարբերական մասնություն: Սարդիկ իրավացիորեն դժուում էին, որ ընթերցող լայն զանգվածներին հասցեացրված մի գիրք հայ ժողովրդի ու հայերենի ծագման եւ նախական պատմության հարցերը ներկայացնում է այն սխալ հայեցակետով, որը միայն արեւելացես ի. Ա. Դյակոնովին է եւ պաշտպանվում է լոկ հայ մի քանի ուսումնահրոդեւիր կողմից:

Երկու տասնամյակ առաջ ի. Ա. Դյակոնովը հրապարակել էր հայոց լեզվի եւ հայ ժողովրդի ծագման իր տեսությունը, որի տևյունը հետեւյան է: Իբր, մ.թ.ա. 12-րդ դ. Ակգրին Փոքր Ասիայի արեւելյան շրջաններում հայութել է հայկեզու նուշկ ցեղը, որը մինչեւ Ուրարտուի պետության կործանումը (մ.թ.ա. 7-րդ դ. Վերջը) իր գոյությունը է քարշ տվել այս շրջաններուն, որպեսզի ժամանակ առ ժամանակ, բահանցելով ուրարտական պետության տարածքը՝ իր քաղաքական ու երնիկական ազդեցությունը սփոփ նրա բնիկների՝ ուրարտների, հումբների, ուրումների եւ ուրիշների վրա, կազմավորի հայոց լեզուն ու հայ ժողովրդը (տես Ի. Մ. Դյակոնօ, Պրեմիստորիա արմատական հարօն, Երևան, 1968, հատկապես էջ 230-237 և հոգ.): Տեսության հեղինակը չոր ասում, թե իրեն որտեղից է հայունի, որ նուշկերը խստել են հայերեն, երբ աշխարհին ևս յստի չ է մի քան նրանց խոսած լեզվից, որեւէ հատուկ անուն նրանց գործաներից, որեւէ փշրամք նրանց հոգեւոր ու նյութական մշակությունը: Դյակոնովի համար կարեւոր այն էր, որ նշանական նուշկներուն նուշկերն ապրել են լուսատագրական պատին նրանց թերեւ ներս եւ դարձնել հայաստեղծնան հեղինակներ: Քերելն էլ կուտարված էր համարում Ուրարտուի բազավոր Արգիշտի Ա-ի եւ նրա հաջորդների ծերով, չէ՝ որ ըստ սեպագիքի՝ երերունին կառուցելուց հետո նա հարավային գավառներից 6600 գերիներ եր այստեղ փոխադրել (հիշյալ գիրքը, էջ 233): Ուրեմն՝ այս գերիներն են եղել հայերենի կրողները, որոնք ըմբնելով Ուրարտուի կենտրոնը՝ մերանի դեր են կատարել Ուրարտուից Դայաստան ուստանլու համար:

Տեսնում եք՝ ի՞նչ հրաշեմեր կարող են կատարվել հենավուրց պատմության խորթերում, եթե, իհարկե, հետազոտողը ցանկանա:

Դյակոնովի եւ կուրորեն նրան կրկնողների «Մեսությունը» խիստ քննադատության ներարկեցից հայագիտության կողմից: Սովորման հայոց պատմության նոր շրջանի ճանաչված մասնագետ Գ. Գալոյանը փորձեց նրանց ցուց տալ, որ անբնական ու անտրամաբանական են այս «Մեսության» բոլոր հիմքերը, եւ չի կարելի հայ ժողովրդի ու հայոց լեզվի ակունքները հաստատող աղբյուրագի-

տական որոշակի-իրական փաստերը թողած՝ կատարել գուշակություններ, որոնք հակասում են ոչ միայն այդ փաստերին, այլև սովորական տրամաբանությանը:

Այսքանից հետո Դյակոնովը վերստին հանդես եկավ իր «տեսության» պաշտպանությամբ եւ վերջին անգամ էլ կշտամբանքով սկսեց դաս տալ անհամացող հայ ընդդիմախոսներին: Մի թե դուք չեք հասկանում շատ հասարակ մի բան,- զգել է Ի.Ս. Դյակոնովը: - Եթե ես նախահայկական ցեղը բերում են դրսից, դա ոչ մի չափով էլ չի ոտանահարում հայ ժողովրդի շահերը, բանի որ հետագայում նրա հետ ծովագա են համարում ուրարտներին, խութեներին, խօթերին, լովիացներին: Ետք եաւ այս էլ նշանակում է՝ հայն է տերը այդ իին ու քաղաքակիրը ժողովուրդների ստեղծած մշակութային հարստությունների (տես «Պատմաբանական համեմեն», 1983, № 4, 149-178, եղբակացությունը՝ 177-178-րդ էջերուն):

Դյակոնովը չի կարող շինանալ, որ ճիշտ այս եղանակով թուրքերն են իրենց տերը համարում այն ամբողջ քաղաքակրության, որ հազարամյակների ընթացքում ստեղծվել է այժմյան Թուրքիայի լայնածիր տարածքում: Նրանք ասում են ճիշտ է, մենք դոսից ենք եկել, բայց այստեղ նեզ ենք ծովել բոլոր տեղաբնիկներին, դարձել նրանց բիոլոգիական ժառանգորդները. ուրեմն՝ տերը նրանց մշակութային եւ ուրիշ ամեն տեսակ հարստության:

Այս, սա է թուրքի «տրամաբանությունը», որով նա ուրը է դրել Փոքր Ասիայում, զանգվածային քարերով ու բանությամբ տիրացել այդ երկրին ու նրա վրա եղած ամեն ինչին:

Բայց հայ ժողովրդին ինչպիս է վերագրվում այսպիսի բարոյականություն: Ո նց թե հայը եւս դոսից գալով՝ Ուրարտուի թիվկաներին ծովել է իր հետ եւ դարձել տերը նրանց ստեղծած քաղաքակրությունների:

Եվ այս աղաղակող անհեթեթությամբ ոգեսորված՝ թուրք Միմեն Վեֆան էլ հայերի ծասին Անկարայում մի ստամատյան թիսեց՝ այն սկսելով այսպես. հայերն են երկրագնդի առաջին ցեղասպան ազգը. «... Նրանք Փոքր Ասիա են եկել Քրիստոսի ծննդից առաջ 7-րդ դարի վերջին, գրավել են ուրարտացիների հայրենիքը եւ բնակչությանը ոչնչացրել:

Ահա թե ինչ արձագանք կարող է ունենալ մի «տեսություն», որը հայագիտության անդամանում տիրություն ամոր մի շարք ընկերների եռանդում ջանքերով տարածվում ու ծաղկում է՝ չնայած նրա հակապատճական եւ հակագիտական եղանակամբ:

Գրախոսվող գրի վրա սկզբից հսկ տիրական է եղել հիշյալ «տեսության» շումը: Այստեղ եւս հայոց լեզվի ու հայ ժողովրդի կազմավորումը տեղի ունեցած էր համարվում Ուրարտուի կործանումից հետո, դրսեկ մուշկերի եւ ուրումների թերած նախահայերնի հիմքի վրա (տես 1972 թ. հրատ. էջ 42):

1972-ից հետո պատմագիտության բնագավառում, ինչպիս ասում են, շատ ջուր է հոսել: Յատարակներ են բազմաթիվ այնպիսի մյութեր. որոնք ճակատագրական, պարզապես հեղափոխիչ, նշանակություն պիտի ունենային հայ ժողովրդի ծագման եւ վաղնջական պատմության հարցերը լուծելու համար:

Խեպա շուրջ մեկ տասնամյակ է, ինչ գիտական մամուլի էջերում լույս են տեսանուն հարցագրույցներ ու ընդարձակ հաղորդումներ անվանի արեւելագետներ լո. Վ. Գամկերելիների ու Վ.Վ. Խվանովի այն ուսումնամասիրության մակեն, որով հնդիվրապական մայր լեզվի հայրենիքը է համարվում Հյուսիսային Միջագետքը, Արևելյան Անատոլիյան եւ Յայկական քարձորավանդակն ընդգրկող տարածքը: Խոր 1984 թ. էլ տպագրվեց այդ ուսումնամասիրությունը երկու հատորով: Յեղիսակեմերն այստեղ բազմակողմանիրեն ըննուի են հմագիտության, լեզվաբանության, մարդաբանության ու զանազան ուրիշ գիտությունների կուտակած հարուստ նյութերը եւ ավագուցում, որ հիշյալ տարածքն է եղել հմերեվրապական մայր լեզվի ու նրա ժառանգմերի նախահայրենիքը, այստեղ են ծովուալիրվել, ապա տարբեր ուղղությունների վրա շարժվել բոլոր այն լեզուները, որոնք պատկանում են հմերեվրապական ընտանիքներն: Եյուղագործան ժամանությունը էլ համարվում են մ.թ.ա. 5-4-րդ հազարամյակները:

Գրի բազմաթիվ էջեր նվիրված են հմերեվրապական մայր լեզվից անջատված այն ծյուղին, որը կազմել են հմերեվրաններնց, հումարենը եւ հայերենը լուս Տ.Վ. Շամքրության, Վ.Վ. Խանով, Ամաօւերօւուչեան յայկ և առաւերօւուինեան, էջ 898 եւ հոգ: Ուրեմն, այստեղ, Յայկական լեռնաշխարհում է ծնվել ու զարգացել հայերենը և դա ապացուցվում է նաև տեղանուններով, հայերենի բարապաշարի մեջ եղած փոխառություններով, որոնք հիմնուելի են արեւաներից են կատարվել վաղնջական ժամանակներում: Գիտականները հատուկ ուշադրություն են դարձնում խեթական աղբյուրներում ու թ.ա. 2-րդ հազարամյակից հայտնի Յայսսա տեղանվան վրա՝ համոզված, որ լուս «ասսա»-մ տեղանվանական վերջածանց է, իսկ հայոց ցեղանուն: Եվ այս համոզմությն էլ ամրապնություն է Եփրատի վերին ավագանում եղած Յայի ու թ.ա. 16-րդ դ.), ինչպիս նաև Սալմանասար Գ-ի (858-824) արձանագրության մեջ Կարբեմիշի, Նահրիի ու Խատուի հարեւանությամբ հիշված Յայանի քաղաքների հիշատակություններով (նույն տիպում):

Գրքը հրատարակության համանունք է Եղել 1979 թ.: Դրանից հետո Վ.Վ. Խվանովը հենց մեր հանրապետության մամուլում («Պատմաբանական համենես», 1983, №4) հրատարակեց էրլայի (հինարեւայան քաղաք-պետություն այժմյան Միրիայի հյուսիսում) սեպագրերը, որոնք մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին բազմաթիվ անգամներ հիշում են հայոց իրենց ցեղանուն ու տեղանունը: Ըստ առ և Արմանի համանիշների հետ միասին եւ Ազգի կամ Ալզի կելիքրանվան հետ սերտորեն կապված: Եթե նկատի առնենք, որ Ազգի-Ալզին էլ հաջորդ հազարամյակի Յայսսա-Յայըն է՝ վաղուց բացատրված պատմագիտական կողմից, ապա ինչպիս չընդունենք գիտականի համոզիչ անդուն ուրիշ մասին, որ հայ ժողովրդի ակունքը գտնվել է իր բնաշխարհում հայ ու Յայը (Խայաս) անուններից անբաժան, եւ հակապատճական-հակագիտական են լույսը այն հորինվածքները, որոնք նպատակն է հայ ժողովրդին հեռացնել իր լույս ակունքից:

Ուրեմն, հայ ժողովուրդն իր հայերեն լեզվով, որպիս ինքնուրույն միավոր, գոյություն է ունեցել մ.թ.ա. 3-րդ հազարամյակում եւ այն էլ հայկական քարձուալիդակի այն մասում, որը հաջորդ հազարամյակի ինքանական աղբյուրնե-

րում հիշում է որպես Յայասա-Յայը պետություն՝ տարածված Կանա լճի ափերից մինչեւ նորոխի ավագանը: Երկրորդ հազարամյակի վերջերին նույն երկրի մասին տեղեկություններ են հաղորդում արդեն ասորեստանցիները՝ այն կոչելով Նախի, որ նշանակում է «գետերի երկիր»: Եվ այս Նախի - «գետերի երկիր» է, որ հաջորդ պատմաշրջանում (9-7-րդ դդ.) ասուրական աղբյուրներում կոչվելու էր Ուրաշուռ (Արարատի ասուրական հորդորոշումը). բնիկների սեպագրերում՝ Նախի. Բիահնա, «Աստվածաշնչում» եւ հայկական ավանդության մեջ՝ Արարատյան թագավորություն:

Պատմական զարգացման այս շրջայից կարելի՞ է եզրակացնել, թե բոլոր ժամանակներում Յայասուռի կորիգր հանդիսացած պետական կազմավորումը՝ գոնին Յայասայից մինչեւ Արարատյան թագավորությունը, հայկական չի եղել եւ այն պետք է հօսս ցնդեր, որպեսզի դրանից հետո միայն հայերը դրսից զային, ստեղծեն իրենց այտությունը, սեփական քաղաքակրթությունը եւն:

Դա կիսներ մոլորություն, ոչ մի կերպ չբացատրվող արհամարհանք արդին հրապարակի վրա գտնվող աղբյուրագիտական նյութերի եւ նրանց հիման վրա կատարված արդար եզրակացությունների նկատմամբ:

Բայց, ահա, գրախոսվող գիրքը երկրորդ անգամն է լույս տեսել՝ անբաժան իր հին սիսալների թերից: Դարձայ հայ ժողովրդի ու հայերնեն ծագումը կապվում է մ.թ.ա. 12-րդ դարում ինչ-որ անհայտությունից Փոքր Ասիայի արեւելյան մասերում հայտնված մուշկերի եւ ուրում-ուրումնացիների հետ (էջ 18): Դարձայ մի բուռ զարթեցվածներն են, որ Յայաստանը հայանելու առասպելական դեր են կատարում (էջ 31): Դարձայ Յայասա-Յայի բնիկները եւ առհասարակ, «հայ» անվանը մ.թ.ա. 3-րդ հսկարանյակից հայտնի ցեղն ու նրա հետ առնչվող ամեն տեսակ տվյալները հեռու են մնջվում մեր ժողովրդի հին պատմության ոլորտից: Յայասա-Յայի բնիկների մասին ասում է. «Ըստ հասունամունքների տվյալների, նուաճ հավանաբար խոսել են խեթերեն-լուսիերենից հարազատ հնդիկովական լեզվով»: Բայց ինչո՞ւ այդպես, եթե հիմքը «հայկանարին» է: Խև թե որեւ նշանակրություն է տրվում «վկայված հասունամունքների տվյալներին», ապա չէ՝ որ նրանցից ամենակարենութը՝ երկրի անունը՝ Յայասա է, որ նշանակում է հայի երկիր: Դարձայ թարթ լուրյուն մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վավերագրերում հիշատակվող հայ եւ արք-Արմանի անունների վերաբերյալ: Կարծես այդպիսի թարթ ոչ տեսել են, ոչ լսել:

Դիշվում են «իրանալեզու տարրը», «նախարարեվելական ցեղերը», ապա եւ արդիւմ է այսպիսի եզրակացություն. «Թվարկված երևակեզվական տարրերը այս կամ այն չափով ու ծեռով մասնակից են դարձել հայ ժողովրդի առաջազնանը» (էջ 20): Եվ այնպես է թվում, թե խոսքը խոհանոցային որեւն միջոցան մասին է, երբ մի կարսայի մեջ են լցվում տարբեր մթերքներ, որոնցից յուրաքանչյուրը իր համն ու այլեւայլ առանձնահատկությունները պիտի պահպան նի ստանալիք ամբողջ համակարգում:

Իմիջիայլոց, չի կարելի ասել, թե քննադատությունը չի զգաստացրել զրոյի հեղինակներին, նույնիսկ ԳԱ հայագիտության բնագավառի տարբեր օգնակներին: Եթե առաջին հրատարակության մեջ «Յայ ժողովրդի կազմավորումը» ենթագլուխ դրված է եղել Ուրարտուից հետո, ապա այստեղ տարվել է նրանից

առաջ, սակայն ըստ երթյան, անհմաստ ու աննպատակ, որովհետեւ, եթե հիմա ի հայ ժողովուրդը կազմավորված է համարվում Ուրարտուից առաջ, ապա ու իր էր եւ ինչու էր գրավված Ուրարտուի միջանկյալ ու պատահական գոյության երեք դարերի ընթացքում:

Ակաղենմահայի հայագիտական երկու տարբերակներում եւս «տեղաշարժ» էր կատարվել. «Լրաբերը» քննություններ եր սկսել հայ ժողովրդի ու հայերնի նազգան հարցերի շուրջը: Երևա ունեցան ճանաչված արեւելագետներ Օ. Շիլլիկովը, Գ. Կլըշկովը եւ ուրիշներ: Բայց որովհետեւ նրանք խոսքները մեկ սրած մերժում էին «մուշկերի տեսությունը» եւ պաշտպանում հակառակը.... մենարկումը դադարեցվեց:

«Պատմաբանասիրական համեսեց» 1983-ի իր 4-րդ համարում հ.մ. Դյակուլովին լայն տեղ էր հատկացրել՝ ամենայն ճանրամասնությամբ ներկայացնելու քանից համեմված իր տեսությունը, անսքոր ամբարտավանությամբ ոտքի տակ տալու ընդդիմախոսների ամեն տեսակ դիտողությունները: Եվ թեպետ լուս եղություն տեղակլորված էր «Բանավեճի» բաժնում, այդպես էլ հետագայում ոչ ոք հնարավորություն չատացավ վիճարկնու հեղինակի աղաղակող սխալ-մերը, նրա անարդար հարձակումներն իր ընդդիմախոսների, նույնիսկ Երեւանի համալսարանի վրա, բանի որ հակառակ տեսակետի տեր լինելը հանդիսի լուսական կողմից դիտվում է որպես աղաղակլորություն:

Եթե փորձես այս բոլորի պատճառը որոնել, անմիջապես քո դեմ կկանգնի անհաղութողական վերաբերմունքը քննադատության հանդեպ նաև այդ վերաբերմունքի արդյունքը՝ գիտական վեճի բացակայությունը հայագիտության նևրոլում: Խև սովորական ականավոր գիտականներից մեկը՝ ակաղենմիկոս Դիտրիփ Լիխաչյովը, վերջերս կենտրոնական մամուլում իրավացիորեն հայտառեց, թե գիտության բնագավառում անաշառ վեճի բացակայությունից կարող են առաջանալ անեն տեսակ ախտեր: Դրա համար էլ նա խորհուրդ էր տալիս կյանքի կոչել, ամենուրեք իրավունքը ու պաշտպանել գիտական արողջ լինը՝ առանց նկատի առնելու կոչումները ու պաշտոնները:

Դեռևս իմագերորդ դարում հայ պատմագիտության սպասավորին առաջ տորդել է մի իմաստուն կարգահատությունը ժողովրդի պատմությունը հյուսելիս «յաւուրու գաներեալսն... չնուազեցնել գեղեալսն, այլ զբնաւու ողախոնի զգուշությունը բերել ի յայտութիւն» (Ղազար Փարպեցի. «չնդած բաներ չավելացնել, ույածները չնվազեցնել, այլ ամեն ինչ ասպարեզ համել ողախոնի զգուշությունը»):

Ուղիղ տասնինգ դարերի քննություն թունած սույն կոչը թարմ է այսօր, այդպիսին կլինի վագոնը եւ հավիտյան:

ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻ ԽՈՐՃՈՒՐԴԸ

Դեպքերը զարգանում են կայծակնային թափով. երեկ առավոտյան այս նոր թերն սկսել է ի հնչող չափով հուսաբեր մի նորությամբ. «Վերջապես Բարգում արտակարգ դրություն հայտարարվեց»: Ստածում էի, թե ահա, վերջ կտրվի գազագած աճրդի վայրագործուներին: Այսօր արդեն «արտակարգ» սովորական է հնչում և ոդում թեւածում է նրա շունչը. Վեզիրովը գահընկեց է արվել:

Հայաստանի գերագույն խորհրդի նախավերջին նատաշրջանի աճրիննից նրան կոչեցին զավառական բալագանի դերասան: Դակիմից է այդ որակում ավելի ճշգրտեցին՝ խեղկատակ է:

Խևական խեղկատակ, որը եթե թեմում կամ փողոցում ժողոված փամաշ-աշխների առաջ միայն իր դերն է կատարում ավել կամ պակաս հաջողորդյամբ, ապա աճրդի գլուխն անցնելով, այն էլ աղրբեջանական ամբոխի, որն իր գլխավրիին է հետեւում, ինչպես տոտենց-ցեղապետին.- կարող է դառնալ չարից, սեփական ցեղը տանել ստույգ ադեսների: Եվ այդ նորաթուս խեղկատակ-ցեղապետը, որ իր առաջին խկ թեմնին համընկնում էր իր շրջապատում կուտակված նաձուսից ու ողջախոհությունից մեզ բաժին համել, քաղաքական խեղկատակությունն ավարտեց ամենաանմանուս ու ամենաանփառունակ մի գործունք. իր ազգը ջիհանի եր տարել Բարգում մնացած հայ անօգնական ծերութների ու պառավների դեմ:

Արեւելքի մեջ ու ամենաինտերնացիոնալ քաղաքի ավելի քան երկու հարյուր հազար հայերից միայն սրանք էին մնացել, շորջ երեսուն հազար, հիմնականում տարեց ու անօգնական նարդիկ, որոնք երեւի հոյսները դրել էին մարդկայնության ամենաառարական օրենքների վրա եւ, Հայաստանի ադեսներով ժամարաթու վիճակն ավելի չզարգացնելու համար, որոշել էին իրենց կյանքն ավարտել այստեղ, ուր աչք են բացել, ուր իրենց եռանդուն ջանքն են դրել մեջ ու փոքր կենսագործումների մեջ:

Խեղկատակը բռունքրվելու կոչերով, ծեռքը յարաղանի պես առաջ մեկնած՝ խուժանին տարակ անպաշտպան հայերի նրա: Նամուսով հերոսակու, ցեղակիցներին հերոսացնելու եղակի առիք եր հայտնաբերել:

Մինչ այդ է նույն կոչերով հարավային պետական սահմանն էին պատռել ու ոչնչացրել՝ Արարատի փեշերից, մինչեւ կասպիականի ափը: Պատռել էին, Ասրաւատականում հարազատության ցուցեր էին խաղում պարսիկ անձանու ու զարմացած բազմությունների առաջ՝ խկ Անկարայում համագործակցության դաշներներ էին կարում թուրքերի հետ՝ ի տես եւ ի գորչացում խորհրդային երկիր մեծավարների (ահա այս ու այսրան ենք մենք, եւ մոլորություն է մեզ ու աստծուց մերժված հայերին մի հարթության վրա դնելոյ):

Թուրքական դիվանագիտությունը՝ հեծած թռնության ու ռազմական բիրտուժի վրա հաճախ է ապացուցել իր շահավետությունը թրբության համար եւ, բնականաբար, միջազգային լայն ճանաչում ունի: Նրա դափնիներից բաժին կարող է հասնել նաև աղրեջանական տարբերակին, որը, օրինակ, 1918-21

թվականներին խոշոր նվաճումներ ունեցավ հայկական նորելուուկ, դեռ քայլեր ժինացող եւ, մանավանդ, անպաշտպան դիվանագիտության դեմ. Մակայն կերպն երկու տարում ային-բարիրով-վեզիրովյան քաղաքականությունը երկու արմակի սայթաբում կատարեց, ասես իր առաջ նպատակ է դրել սեփական տունը բանդել:

Սախ՝ Սունգայիին ու մնացորդաց դուրս քշելու Աղրեջանից: Բնականարար, սրան էլ հետեւեց հայաստանակ աղրեջանցիների զանգվածային տղափոխությունն Աղրեջանին: Յիշենք, որ Յայատանի ռազմավարական կարեւորագույն հանգույցների վրա՝ Սահսիւմ, Շարուրում, Միշանում, Վարդենիսի ու Նոյենքերյանի կողմերում նստած, նրանք միշտ էլ հենակետուր են նույն նուսավարական ու օսմանաբորդական հայասերդ ծրագրերի իրականացման համար: Յիմա նրանք չկան, եւ սա կատարվածի անտեսանելի կամ երկրորդ հատակն է, որ պիտի խեղի թուրքական իին ու նոր ծրագրեր փայլայողներին: Սակայն հենց միայն տեսանելին ինչպես էլ մեկնաբանվեր լուսավորյան եւ ապաշտոնական վարի ու վերի օնակների կողմից, - աշխարհը ճամաչուց քաղաքակրթական զղամի հազար անդամներին նույն մոր ալիքի զարկվելով հանդերձ, միիրավ տերը դարձավ իր փոքրիկ, սակայն միատարր հայերնիք:

Երկրորդ Վեզիրովի բանակը հարձակվեց Աղրեջանի նայրաբաղում ուսացած վերջին երեսուն հազար հայերի վրա, եւ, դարձալ աճրոջ աշխարհի ուրիշ առաջ, կատարեց վայրագություններ, որոնք միահամուտ դատապարտվում են ոչ միայն քաղաքական մարդկության, այլև երեկ-մեկել օրն իրենց վայրենությամբ հրածեշտ տված ազգություններն ու ցեղերը:

Ո՞ր է Բարձի հայկական նախնիրի հեղինակների նպատակը: Կախեցնել արցախահայությանը եւ երկրի ղեկավարությամն է համոզել, թե Արցախը կարող է գոյություն ունենալ միայն Աղրեջանին՝ կազմում: Բայց չէ՝ որ կատարվեց նիշտ հակառակը: Արցախահայությունը տեսավ, որ իր հետ ունեցած անփառունակ քայլություններից հետո աղրեջանական հրոսակները սեփական ժողովորդի աշխին «հերոսանութ են» Բարձում մնացած հայ անպաշտպան ուսուավների ու անմեղ ճանուկների արյունը բափելով: Խկ երկրի ղեկավարությունը: Կողմերից որեւէ մեկի հարդանակի երդվալ այդ հակառակորդը տեսավ ու չի կարող հասկացած չլինել, որ Աղրեջանում եթե որեւէ անհնար բան կա, ուս հայ մարդու ապրելն է, ուրեմն անհնար է նաև հայեական ու հայաբնակ Արշակի գոյությունը նույն Աղրեջանի բռնագծված սահմանների մեջ:

Այն ո՞ր խելագարն է, որ այս անմենից հետո արցախահային ասելու է՝ արի. Ռարբի ու նրա շրջանների քո արյան թշնամների հետ առ եւ տուր արա, սունեն՝ քո շարքերից ղեպուտատ ընտրիր նրա Գերագույն խորհրդի համար, որ մարգային ղեկավար աշխատողին Բարու ճանապարհիր եւ հետո սպասիր. ու նա տուն կվերադառնա գլուխն ուսերին:

Երկու տարի է, որ Աղրեջանի բռլոր պաշտոնյաները, աճրոջ Աղրեջանը՝ իր առաջին ղեկավարներից մինչեւ Աղջամի բազարի մուտքի մոտ շարված դիւսչիները, - շրջափակման մեջ են առել Արցախը՝ որոշած լինելով սովոր:

կանքների, համաճարակների միջոցով բնաշնչել իր ազգային ինքնորոշումը հոչակած հայությանը: Առաջման նրանց ծերեցից այդ է գալիս, դեռևս այդքանի հմարավորություն ունեն: Փորձիր Արցախը նորից քաշել նրանց լժի տակ... Անհնարի է պատկերացնել այն դիվային օյինները, որ նրանք պիտի խաղան: Դա արդեն մեր խելքի ու երեւակայության բանը է: Երենք, մենք էլ լոկ հրեշավոր չա- րագործությունների մեջ անմրցակից, անգերազանց հրենց տաղանդը կարող են ցույց տալ, թե ի հնչի ականատես կիխնեն խաղաղության քարոզելով ագ- գամիջան բորբոքված հրդեհները նարելու ջատագովները:

Են ապ հիշում են վեցիրովյան խելկատակության առաջին ցուցադրու- թյուններից մեկը, որից հենց այն ժամանակ էլ նզրակացրել էի, թե մեր կյանքն իր շատ կողմներով բաւագանի ներկայացում է, որովհետու, շրջելով Սայաթ-Նո- վայի ինաստուրյունը (սերը սեր կու բերե), պիտի ասենք՝ խելկատակությունը խելկատակություն է բերում:

Ավարտվել էր կուսակցության 19-րդ կոնֆերանսը, եւ նրա պատգամավոր Արդուահման Վեցիրովի հետ հարցազրույց էր ներկայացնում համամիութե- նական հեռուստատեսության երիտասարդական խճագրությունը: Վերջին հարցը մոտավորապես այս էր. «Ի՞նչ եք նուածում Լեռնային Ղարաբաղի հնք- նավար մարզի հիմնահարցի մասին: Արդեն ամբողջ երկրով մեկ հայտնի է մարզի հիմնահարցի փետրվարյան որոշումը, որով պահանջվում է արդարամտորեն լուծել շուրջ յոր տասնամյակ շարունակ մարզի հայ բնակչության անհանգ- տություն պատճառած հարցը»:

Եվ ներ ճակատին բավականաչափ կնճիռներ ցուցադրելով՝ ծերենքն աջ ու ձախ բափահարեց Վեցիրովը:

- Դուք չեք կարող պատկերացնել, թե մեզ՝ հանրապետության դեկավարնե- րիս, որքան խոր անհանգստություն է պատճառում այդ հիմնահարցը. - ասաց նա: - Խելազես մարզի կյանքում անցյալ տասնամյակներին կուտակվել են բազմաթիվ կանոնադրություններ, որոնք չեն գտնել իրենց լուծումը, իսկ այժմ, վերա- կառուցման հզոր լույսով, մենք պարտավոր ենք լուծել եւ անպայման կլու- ծենք: Օրինակ, այսպիսի բան. մարզի աղբբեջանցի բնակչությունը մինչեւ հի- մա մայրենի լեզվով մարզային իր բերքը չի ունեցել: Ու, պատկերացրեք, թե դա ինչպիսի դժգոհություն կարող էր առաջացնել...

- Պատկերացնում եմ, - խելկատակի ջրերն ընկած՝ համածայնեց հարցա- զրույց վարողը:

Եվ հեռուստադիտողն էլ պիտի եզրակացներ, թե արցախահայությունը ինք- նորոշման իր վծիռը հանել է մարզի տաս-քսան հազար աղբբեջանցիների հա- մար մարզային թերթ ծեղք բերելու նպատակով:

Վեցիրովը չհասցրեց մարզային աղբբեջաններն թերթ ստեղծել, սակայ- ն Շուշիում հեռուստակենտրոն բացեց: Կարծես Բարվից հորդացող հակահայ- կական վայրահաչությունները թիւ էին, մի ճորակ թերան էլ այստեղ տնկեց, որպեսզի ծունկը հայկական հաղորդումներին սեղմի ու աղտեղություններ քա- փի հայության հասցեին:

Վերին կառավարությունը հավելյալ չորսամյակ չորսամյակ պատկերա-

տուրի էր բաց թողել բողոքի ծայն բարձրացրած հայությանը լուցնելու համար: Խայությունը դեռեւս այդ միլիոնների երեսն էլ չի տեսել, իսկ ադրբեջանական դրույթը եւ հայերից հապա պարպակած Շուշին այդ միլիոնների հետ ջուխտու- ինստ են խաղորմ:

Բայց եթե մտածենք, որ Վեցիրովը միայն մի դեր էր խաղում. իր դերը եւ լուծ, չարաչար սխալված կիխնենք: Նա խաղացնում էր նաեւ, այն էլ ինչ մարդ- լանց, ինչ օդակներ ու հաստատություններ: Եսկ նրանց, որ չէր կարող խաղաց- նել, ինչպես կարողանում էր շարքից հանել կամ վերացնել:

Յշենք, թե ինչպես վերացնել լուծեց կուսակցության Ղարաբաղի մարզկու- նոր. հենց միայն նրա համար, որ շարքից համեմ մարզկումի առաջին քարտուղար ներիկ Պողոսյանին:

Շարժումն ստեղծել էր իր առաջնորդին, որի բարձր արժանիքների մասին պատճությունն անպայման կտա իր վծիռը, եւ այն կիխնի հիացումի ու երախ- տագիտության խոսք:

Երբ տեսան, որ շարժումն անխալ առաջ է գնում նաև առաջնորդի շնոր- հիւ, որոշեցին սրան շարքից հանել: Բայց ինչպես: Այն ո՞վ է, որ օրինական համապարփու, այսինքն՝ մարզկումի այլենումը պիտի աջողացնի Յենիրիկ Պո- ղոսյանին ազատել տայ քարտուղարի պատականություններից:

Նման դեպքերում առան եւ՝ իր ականջի հետեւ կտսնի: Այդ գիտեր Վեցի- րովը եւ որոշեց քարտուղարին վերացնել մարզկումի հետ միասին: Եսկ թե ինչ տեղի ունեցավ դրանից հետո, այդ էլ տեսան ոչ թե մեր, այսպես կոչված, ռեգի- տում, այլեւ վերակառուցվողը. իր թե արդարության ու ժողովորակարության համապարփ բռնած երկրի բոլոր ծալքերում: Գերագույն խորհրդի ու նրա նա- խագահության նիստերում, զանազան պաշտոնական ու ոչ պաշտոնական ասուլիսներում Արցախի դեպուտատների հոսքերը, եթե դեպուտատներին եւ սույնասարակ, բովանդակ երկրին ցույց տվին, թե ինչ է նշանակում եւ ինչից պի- տի հանգի արցախահայության պայքարը, ապա վեցիրովներին էլ պիտի հան- գութ լինենին, որ իրենց դեմք ելած ուժը ոչ թե մարզկումի քարտուղարի կամ նույ- նիսկ մարզկումի ու մարզիստիրիդի մեջ է, այլ այն մեծ ու արդար, հզոր ու ան- խելի ճշմարտության, որին լոված է ողջ արցախահայությունը:

Բայց համագումաներից գործողության արդար ծրագիր կազմելու համար պետք է ունենալ բավարար խելք եւ մանավանու առողջ քարոյական սկզբունք- ներ, որոնք, ինչպես հետագա դեպքերն ապացուցեցին, ցերեկվա ժամերին ան- գամ ճրագով պիտի փնտութիւն վեցիրովյամ բալագանում: Ավա թե ոչ, մի թե Գե- րագույն խորհրդի նախաշրջանում Արցախի մարզը վերացնելու ցնդած պլան- ներ կգտնին կամ հանրապետության գիտական ու զ գիտական հասարակայ- ությունը կլծեն մի այնպիսի հիմար ծրագրի, որի նպատակն է ապացուցել արցախահայության եկամուտությունը, ուրեմն եւ իրենց իրավումը՝ նրան դուռ լցելու իր մարզի տարածքից:

Որոշել էին, ուրեմն պիտի քշեն եւ դա սկսեցին Բարվից:

Դարձայ խելքի բան է, Վեցիրովն ու յուրայինները չհասկացան եւ չհասկա- ւուր է գնացին իրենց համար ամենակործանարար բային. Բարվում նոր գե-

հեն սարքեցին անմեղ, անպաշտպան հայության համար: Դրապարակներում նորից մորթութեցին ու իրդեմի ճարակ դարձրին իրենց գոհերին: Եվ եթե մինչ այդ Արցախը քանի անգամ որոշել էր բաժանվել օտար նիշավայրից, որ Աղրիջանը է եւ Վերամիավորվել հարազատին՝ Յայաստանի հանրապետությանը, ապա իրենք բացեցի անմեղ ու անպաշտպան հայերի արյունը հեղեղով՝ մեկընթիշտ հաստատեցին այդ որոշումները: Իրենց գոհերի արյամբ հաստատեցին:

Այինի ու Վեզիրովի պնակալեզմերից մենք, ներողություն արտահայտության համար՝ գրող Մաքսուդ Իրրահիմբեկովը. «Դրուժքա նարողով» հանդեսի «կլոր սեղամի» շուրջ ելույթ է ունեցել եւ իր այդ խոսքը հրապարակեց նոյն հանդեսում ու իրենց հանրապետության թերթերում: Զիա Բումիարովից փոխառնելով այն զառանցանքը, թե Սումգայիթի հեղինակներն իրենք հայերն են ենել, սա էլ իր ընթերցողներին ուզում էր հավատացնել, թե զարիկուրելի խաղը միայն նպատակ է ունեցել՝ աշխարհի առաջ բարձրացնել հետեւյալ արյունությարը. «այդ ծաղկում մարզը կարելի» է բողնել այն հանրապետության կազմի մեջ, որը բնակեցված է արյունաբրու մարդասպաններով ու բնացողներով»:

Բնական ու արդար հարց է անշուշտ: Սակայն երկիր տերերն այնպես էլ չըստուն տվին: Խոկ «արյունաբրու մարդասպաններն ու բնացողները», հավանաբար դրա մեջ արհամարհանք տեսնելով իրենց արածի հանդեպ, հիմա էլ կազմակերպեցին Բաքվի նախարարը՝ մկտելով քաղաքի կենտրոնում, երկառուդային կայարանում չորս հայ ճարդու կենդանի-կենդանի վառելով:

Մաքսուդ Իրրահիմբեկովը դեռ չի որոշել, թե այս անգամ ինչպես կամ ինչով պիտի բացատրի հայերի «ինքնանահատակության» զարիկուրելի պատկերները: Սակայն ցեղակիցներն արդեն հարայ-հրոց են գցել, թե խորհրդային զորամահավորումները Բաքու են նույն հայերին պաշուալնելու համար: Դերքական մի սուտ, մանավանդ՝ չկատարված մի բարեգործություն, որ անտեղի վերագրվում է այդ զորամահավորումներին:

Եթե զորերը Բաքու են նույն մի ամբողջ շաբաթ անարգել զործված նախաճիրից հետո այնտեղ այնքան հայեր մնացած չեն ենել, որ կարիք ունենային զինական պաշտպանության: Զորերը Բաքու ուժը են դրել լոկ այն ժամանակ, երբ սանձազերծված խուժանք, ռադիո և հեռուստակենտրոնը ծեռը զգելով, պաշտած է եղել կուսակցության կենտրոնի ու մնացած վարչական շենքերը, եւ պետական հեղաշրջումը դարձել է ժամերի հարց: Ուրիշ խոսքով՝ զորերութաղը են մտել ոչ թե հայերին, այլ խորհրդային իշխանությունը փրկելու եւ պաշտպանելու համար:

Ինչո՞ր է: Կատարվել է այն, ինչ պետք էր սպասել ծավալված իրադարձություններից: Դանրապետության ամբողջ տարածքում, Լաշին-Ֆելքաջարի քրդարանից մինչև Լենգրուանի թափշաբանկ դաշտը, լեզգիների Կուսարից մինչ էտ հայկական Արցախ, սանձազերծված շովիմիստական մքննոլորտը, վերջին շրջանում դրոշի վրա բարձրացված սուվերենության ու անջատումի զառածանքները. ինչ խոսք, խեղկատակի առաջնորդությամբ պիտի հասցնեին պիտի հասցնեին:

Հիմա այս բոլորը ետեւ են մնացել, եւ խեղկատակը բեմից վրանդամ է արդեն: Այսպիսի պահերի համար պատմությունը երկու ծանրակիշու հարց է պատրաստել՝ ո՞վ է մեղավոր եւ ի՞նչ անել:

Առաջինի պատասխանը որպան էլ պարզ ու հասկանալի, դժվար է որոշել՝ միայն խեղկատակն է վրանդամ բժնահարթակից, թե՝ պիտի փակվի նաև բարագանը: Յիշենք, որ երբ ևախիցեանից արեւմուտք, Արարատի փեշին աղքբեյանական բաշիրողւմները ուժը տակ էին տախս խորհրդա-բուրքական սահմանը, Անկարայում բուրք մեծավորների հետ համագործակցության (ու զիտունը էլ ինչ տեսակ) պայմանագրեր եր ստորագրում Աղքբեցանի Մինիստրների խորհրդի նախագահ Մութալիբովը: Խոկ այսօր նա ինքն է Կենտրոնի աշխին լուսակելի այն ուժը, որ դրվել է լօն մի կողմին, որպանցի սայլը ցեխից համի:

Ո՞վ է մեղավոր: Երկու տարվա դաշը փորձը ցույց է տվել, որ այս հարցի ճշուարիտ, արդար ու վճռական պատասխանը չի ասվելու: Լրատվական նարծիների հաղորդումներն ու պաշտոնական նախնական հայտարարությունները դարձյալ մեզ նախապատրաստուն են դրան:

Ծուռ բերան է լինում, չլ, որ աղավաղում է ամենապարզ, ամենահասարակ լուսիմսկ միավանկ բառը: Երկու տարի շարունակ մենք այդ բերանից էինք լուսում իշշալ հարցի եւ նման ուրիշ հարցերի պատասխանները:

Ուրեմն, ծուռ բերանին բողնոնք իր հայ խեղաթյուր պատասխանը եւ խորհենք այս պահին մեզ համար ամենակարենորի մասին, ի՞նչ անել:

Չումենալով Վերջնական ճշճարտություն ասելու կամ որեւէ համճարարական տալու ոչ մի հավակնություն, ես իմ բաղադրական պարտք եմ համարության մայս միացնելու բոլոր նրանց, ովքեր գտնում են, որ մենք այսօր պետք է միակամ ու միահամուր պայքարենք վերջին ամիսներին ընդունած որոշումների կենսագործման համար: Ուրեմն, ոչ մի քայլ հետ, որովհետեւ նախուսըց կամ գիշումք հավասար պիտի լինի դաշանապատքյան, որն ստեղծված իրավիճակում ազգային ինքնանապանության է հավասար:

Ես հավատում եմ ներ ժողովրդի հավերժությամբ: Այդ պատճառով էլ հանողված եմ, որ պատմությունը չի ների ներ այսօրվա որեւէ թերացում կամ ճակատագրական սխալ: Սերունդները հպարտությամբ պիտի հիշեն Արցախի, որա հյուսիսային մասի՝ Գյուլիսատանի ու Գետաշենի պաշտպանների խիզախ համառությունը: Ինչպես եւ զիտի հանդուրժեն Զարդախուլու պարապումը նախ որա իսկ բնակչությունը, առաջին հերքին նրա մեծ զավակի ու զորապետի կողմից: Այս պահին ինքնանապատիւումը որքան էլ ժամանակավերեալ, չի կարելի լիիշել ու չիշիցնել, որ հենց նա անսալու Շեյդար Ալիեւի նենակապատիւ հորդություններին, դեռ մեծ փորձությունից առաջ, բայց միեւնույն է, հավերժական բնուրյան պես աստծու տրված մեր կրսնքում, առաջինը լրեց հայրենի արձվարույնը, որպանցի իր կիսանդրին կանգնեցվի ոչ թե այնուեղ, այլ ինչ-որ «ինտեր-ռուսիանայ» Կիրովաբարություն: Արձանն այդ, հայրենի պահանում կանգնելով, լուրջը պիտի դեմ տար աղքբեցանական նոյնանդությանը եւ: Ինչպես վայել է փառապանծ զորահրամանատարին, պիտի զիլավորեր հայրենակիցների ինքնառապանական ոգորչություն... սակայն չկար, կոչ ու հրաման արձակող չդար-

ծավ... Եկ հիմա պարզված մեծ ավաններից ու աննշան շենքից հետո Գետաշեն է դարձել վերջին պատմեցը ջարդարար հորդաների առաջ, Գետաշենը եւ գնտաշենիները, որոնք իհն մելիքական անզիջում բախումներից ի վեր մեր ազգային հնքնությունը պաշտպանող ու հաստատող կրակներում թթվագած՝ նորից ապացուցեցին, որ իրենց համար աշխարհի ուրիշ կենտրոն չկա, քան այն, որի վրա իրենք են աներեր կանգնած:

Միշտ է փառավորվում, երբ հաղորդագրությունների կցկուուր ու խեղված տողերի շարուում համեկարծ փայլատակում է մշատ մի տեղեկություն այն մասին, թե պաշարված Գետաշենին կամ Մանաշիտին օգնության է հասել աշխարհազրը, եւ ասպատակիչ խմբնը զիշապատառ փախնել են մեր միասնական ուժերի առաջ: Այդպես Դավիթ բնիկ ու Մխիթար սպարապետի հնքնապաշտպանական կոչիվներին հարեհաս էին լինուում մելիք Ավանի քաջերու ու Եսայի Յասան Ձալայան կարողիկոսի նվիրակները: Այդպես է գրվել Հալիծորի ու Եռարլուրի, Մեծ ու Փոքր սղնախների հայրենապաշտպան կորիվների հերոսակեար:

Այս, այդպես, մեր հավաքական ուժի եւ համերաշխ հոգեբանության միասնությամբ:

Չինի այնաևս, որ մենք, դաս չառած մեր սեփական պատմության տիսուր էջերից, կրկնենք իհն սխալները եւ փառավոր Հալիծորի կողոքին ստեղծենք մասեւ նրա անփառունակ ու վատշվեր տեսակը: Դրա տագնապահարուց ուրվականը չի կարելի չտեսնել մեր շուրջը, երբ կատարվում է ժողովրդի տարբերային ուժերու աջ կամ ծախ տանելու, երկրորդական ու երրորդական նշանակություն ունեցող խնդիրների վրա մղելու փորձեր, երբ անհանդուժողականության, դաժանության եւ ռազմական կոնունիզմի այլազան վերապրուկներով են ուժեկցվում, իբր թե, մեր հասարակության հնքնամաքրման ուղղված միջոցառումները:

Չիմա դեպքերը զարգանում են վայրէյաններով, եւ հետ չմնալու կամ չվրապելու համար պետք է առաջնորդվել գերճզգիտ գգացողությամբ: Իսկ ամենից կարենորը՝ միաձույց ու համերաշխ ազգային հավաքականությամբ, որ միշտ եւ մեր լրսավոր նախնիների առաջին քաղծանքն է եղել:

1990թ., հունվար

ՅԱԶՈՂՐԴՆ ԻՆՉ Է ԼԻՆԵԼՈՒ

Անցյալ ծմրանը, երբ նոր սեփականության ներկայացուցիչներն իրենց բանն ու գործը թողած, ամեն տեսակ գրկանքներից տանօվող ժողովրդին ուղում էին հասկացնել, թե ինչ իրեշավոր աղետ է եղել այն նախկին իշխանությունը, մտերիմներից մեկը, այսպես կոչված, երկխոսության ժամանակ վախվորած չուրջը նայելով, ասաց: «Գիտ ս, նախկին իշխանության ու պանց տարբերությունը որն է: Այս, որ նախկինը ժողովրդի մի մասին գնացքներն եր լվանում, տանում հեռու, դժոխային տեղեր, որպեսզի մնացածներն զգուշաւան... Իսկ սրանք միջոցներ չունեն, զույկ են փոխադրական ծախսերից, որ սեսզի տամնեն-հեռացնեն եւ այստեղ են կյանքը դժոխը դարձում: Չե՞ս տեսակում, եղածը թիւ են համարում եւ ամեն նոր օրը խոստանում են նոր գրկանքներ, առավել ծանր վիճակ, անվերականգնելի գրաբերություններ», հարցրի, որ ինչո՞ւ է չորս կողմը նայում, հիմա գոնե չեն հետապնդում այդպիսի խոսքերի համար: «Այդ էլ կլինի,- հանգտացրեց: - Սրանց կեցվածքից, հարայ-հրոցից լատելով՝ այդ էլ պիտի տեսնեմ»:

Այնօր ՀՅ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը լսելիս այս խոսքը լիիշեցի: Խելապես որ, դժոխը կատարյալ դառնալու ճանապարհին է:

Լեւոն Տեր-Պետրոսյանը ներկայացրեց իր՝ «Եւ գիտնականի, եւ քաղաքական գործի, եւ ժողովրդի մանդատ ունեցող համրապետության նախագահի» խոսքը, որի վրա շատ էլ դժվար չէ ցույց տալ, թե որքան հեղիեղուկ, չկապացված ու հակասական են գիտնականի նոտերը, սայթաքուն ու, մեղմ ասած, անհեռանկար են քաղաքական գործի կատարած ու ծրագրած քայլերը եւ, մասսավանդ, ինչպես սխալ է ըմբռնվում, ուղղակի չարաշահվում է ժողովրդի մանդատությունը:

Բայց ի՞նչ է պատահել, ինչո՞ւ այսքանը ժայթքեց միանգամից: Պատահել է լուխագահի ու դասակիցների համար ամենաանսպասելին ու ամենավլանայական գործությունը ներկայացնելու մեջ համարական անօրինական գործարք է, մի այնպիսի չափություն ու առաջ կանգնած անհետաձգելի խնդիրները, համերաշխության են եկել, ուղեղեղ Ազգային դաշինք, որի մեջ ընդգրկված են, ՀՅՀ-ից բացի, մեր բոլոր լուսակցությունները ներկայացնող պատգամավորական խնդիրը:

Սրանց էլ գեղեցիկ բան, որ խորհրդարանի առաջին լուրջ հաղթանակը լոիտի համարել:

Բայց ոչ, դա գեղեցիկ է սովորական տրամաբանությամբ: Իսկ ՀՅ խմբակության եւ բացարձակապես նրա սկզբունքների վրա գործունեությունը կարգավորող նախագահի համար դա անօրինական գործարք է, մի այնպիսի չափություն, որի համար պետք է ցրել Գերագույն խորհրդությունը: Դակառակ դեպքությունների աշխատանքանական փոքրամասնություն կազմող ՀՅՀ-ական թեւը հրաժեշտ ուղիտ տա մինչեւ այժմ ունեցած այն դերին, որի մենաշնորհն էր տիրապետություն դահիճում է, դրսում, պաշտոններ բաշխնելիս ու կամայական որոշումներ ընդունելիս:

Եւուն Տեր-Պետրոսյանի ելույթն էր հիմնական մասսով Արցախի հարցին և վերաբերում Գոնում է, որ այն լուծել կարելի է միայն խաղաղ ճանապարհով, քանակցությունների սեղանի շուրջ, որովհետեւ մենք թույլ ենք, և ուշեր կողմն ևս դիմադրությունը շարունակելուն, մեր ազգի թշնամիներն են, ուզում են մեզ տանել կործանման: Բայց մենք չենք մռացել ու շատ ժամանակ առաջ բատերական հրապարակում ցուցադրված այն մերկայացունը, որին ինքը՝ մեր նախագահը, խելակորույս ամբոխին վանկարկել էր տալիս «Մի-ա-ցում, մի-ացուն» եւ «Պայ-քար, պայ-քար մինչեւ վերջ»: Ի՞նչ է, այն ժամանակ մենք ուժեղ ու անպարտելի ենք եղել և ու՞ր ենք բոլորներ: Թե՞ այն ժամանակ ինքը որոշած է եղել մեր ազգը կործանման տանել եւ հիմա ես է կանգնել այդ չափ մտքից:

Ելույթը, կարծես, հատուկ նպատակ ունի իրար դեմ լարելու, կովի ու արյունահեռության վերածելու ոչ միայն կուտակությունների. այլև մեր ազգի տարրեր հատվածների ծիծեւ, հատկապես Արցախի ու Յայաստամի ծիծեւ, թե չէ, մարդ, այն էլ հանրապետության գերագույն դեկավարի պարտականությունն ունեցող, ինչպես սիրել բույր ազգի մի հատվածին, ժանրագույն ողբերգության մեջ գտնվող հատվածին, հրապարակավ հայտարարել ամբողջ ազգի «չափազանց ժամը իրավիճակի», «զրկանքների, կորուստների, մեր սոցիալական ծանր իրավիճակի», «զրկանքների, կորուստների, մեր սոցիալական ծանր կացության հիմնական պատճառը» եւ սպառնալիքներ կարդալ նրա այդ վիճակից համելու համար պատեսաւ զարկվող մարդկանց խմբերին հենց իրեն՝ այդ հատվածին: Գոնե հիշի, որ իր եւ դասակիցների վերելքն ու ամեն տեսակ հաջողություններն այդ հատվածի շնորհենքն են:

Ես չիտեմ՝ մեր նախագահը դիվանագիտական կամ ռազմավարակական ինչ նկատառումով հրապարակեց արցախյան ինքնապաշտպանական ուժերի քանակը: Երա համար, որ սարսափեցնի աղբքեցանական ավագականքներին, թե էլքիբեյին ասի՞ մեր յոթ հազարն ինչ մի ուժ է քո յոթ միջիննոց կրվազան իշալիի դեմ. Առո գորահավաք ես արել, նիմագամից վրա տուր եւ հողմացրիվ առա:

Ամեն պարագայի. առնվազն գարմանալի է նախագահի դիվանագիտական այս քայլը: Չնայած առաջին անգամը չինք տեսնում, ու այլեւս գարմանալի ոչինչ չկա: Ձե ք իշշում Գյոյքաչովի ու նրա բանդայի հետ ունեցած զիշակություս առձակատումը, Արցախի հարցի լուծնան բանալիների փնտրություն, Վաշինգտոնում, Ըույնին Յարավային Ամերիկայի երկուներում: Աղբեքանին օգնության վազող Թուրքիայի ռեխին տալով ռուսների հետ խսկական «քաղաքական երկխոսության» նստելու, նրանց հետ գաղտնի ու բացահայտ հարցերը լուծելու փոխարեն, գնաց. Փարիզում դատապարտեց Ուսուսատանի դեկավարությանը (Երևանի որովհետեւ Ամերիկայից էր գալիս. Եւ իրեն շատ էր ու ժեղ գգում):

Սրանք եւ սրանց նման շատ փաստեր նորից հաստատում են, որ մենք դեռ գտնվում ենք Դեր. Ղեմիքյանի պատկերած դիվանագիտական մակարդակին, այսինչի բացերեանությունը ենք անում, որ լսողն էլ կկարծի, թե աշխարհի առաջին խորամակն ենք:

Վերջին ժամանակներում Եւուն Տեր-Պետրոսյանի վարած արտաքին քա-

ղաքականության մեջ նի առանձնահատուկ տեղ է գրավում Թուրքիայի հետ վարելիք հարաբերությունը: Ընդ որում ինքը նոռացել է եւ ջանում է հայուսան էլ մոռացնել տալ այն անենց, որ նա ունեցել է թուրք երեւույթի հետ: Նոր հարաբերությունները, դրանցից ջրի երես ելած փաստերը տափս են հաստատելու, որ թուրքը մնում է թուրք: Բայց, միեւնույն է, նախագահի իր ընտրած ուղղությունն ունի եւ այս ելույթում էլ փորձութ է այն արդարացնել անցած կատարությամբ:

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱՐՅԱՆ. - Եւնային Ղարաբաղը հենց սկզբից, շարժման սկզբից նախապատրաստվել էր շատ ծանր կացության, որովհետեւ գիտեր, որ դա այդքան էլ հեշտ լուծելի խնդիր չէ, եւ ինչպես Ադրբեյջանի տիրակալները այդպես էլ Վերին կառավարության ներկայացուցիչներն ամեն ինչ ամելու են, Ղարաբաղին ստիպելու, որ առանց նահը լուծելու, վերադառնալու իր նախ-կին կացության և նախկին վիճակին: Դրա համար էլ նախապատրաստվել էր Ղարաբաղը: Ղարաբաղյան շարժման դեկավարները գիտեին, որ իրենց առաջ կանգնած է, ինչպես բյուրուկրատական պատճեշը, այնպես էլ ամեն նի ներենա-յություն, որ կարող է գործադրվել նրա շարժումը խափաներու, ժողովրդին նեղ կացության մեջ դնելու նպատակով: Դրա համար էլ, նրանք պատրաստ էին ամեն մի գոհաբերության: Դուք գիտեք, որ հենց շարժման սկզբնական շրջա-նում բավական մարդիկ կալանքել են, կալանքի են ենթարկվել, վկոնվել են Ղարաբաղի տարածքից, ինչպես նախորդ տարիներին ու տասնամյակներին, սակայն դա չի կասեցրել նրանց կանքը, ոչ մի երերում չեն ապրել իրենց վճռա-կանության մեջ եւ շարունակել են իրենց գործը, շարունակել են իրենց ժողովր-դին զլխակորել տանելով դեպի այսօրվա վիճակը:

Շատ դժվար է, իհարկ Ղարաբաղի կացությունն այժմ, որովհետեւ ամբողջ երկու տարվա շրջափակումը մարզի աշխատավորության նյութապես բալոր աղբյուրները սպառվել են: Պատկերացրեք, ոչ միայն նրանք կասեցրել են մար-զի զարգացումը, այլև ոչչացրել են մույնին ունեցած հենարավորություններն ել: Ադրբեյջանական պալազակախնբերն անընդհատ հարձակումներ են գործում զյուղերի վրա եւ ոչնչացնում զյուղերի ունեցած հարստությունները: Գողու-րյուններ են կազմակերպում ներ կոլխոզների, կոլտնտեսություններից ոչխար-եր եւ հոտեր են տանու: Նրանք զինված են, իսկ Ղարաբաղի հայությունը զի-նարափ են արել: Խլել են նոյնինկ որսորդական հրացանները: Դուք պատկե-րացրեք այս պայմաններում մինչեւ ատամները զինված ավագակախնբերն ի նշ հնարավորություններ ունեն այստեղից տանելու այն, ինչ որ ուզում են: Եվ, այնուամենայնիվ, շարժումը շարունակվում է, մարդիկ հանողված են, որ ան-

պայման պետք է հասնեն իրենց նպատակին:

Պատշերացուք 180 հազար հայ են գրանցված Ղարաբաղութ եւ մի 20-25 հազ. էլ զարքականներ, որոնք պատրաստ են նահատակության: Ես չփոխեմ, հնարավո՞՞ է, որ Խորհրդային Սիությունում 180 հազար նարդկանց նահատակության ենթարկել եւ դա աշխարհը, առաջավոր մարդկությունը հանդուրժի: Ինձ թվում դա անհնար բան է: Պետք է Սփյուռքի մեր հայրենակիցները հայ կաման կազմակերպությունները եւ առաջատար մարդկության լավագույն ներկայացուցիչներն իրենց ծայրը բարձրացնեն այս անարդարության, այս խայտառակ դրության վրա եւ պահանջն, որպեսի հարցը կամ լուծվի կամ, այնուամենայնիվ, ստեղծվի մի վիճակ, որի մեջ հայ ժողովուրդը: Ղարաբաղի հայությունը ոչ մի կապ չունենա Արդրեցանի հետ: Ինչո՞ւ չպետք է ունենա: Դուք երեխի իրադրությանց ծանոք եք, տեղեկություններն, այնուամենայնիվ, մեզ հասնել են, մեծ մասամբ: Նրանք կոտորած արին Սունդայիրում, Եղեռն կազմակերպեցին Բարփում: Բարփի հայությունը կամ ոչնչացվեց կամ արտաքսվեց: Հայի եւ ադրբեջանցու միջեւ ոչ մի հարաբերություն չի կարող լինել, բայց նրանից, որ մենք տեսանք՝ կոտորելու, ջարդելու եւ անմարդկային հալածանքների ենթարկելու քաղաքականությունը:

Դիմա դուք պատկերացրեք այդ բանից հետո, եղ են դեպքում, եթե ենտեղ գործ է կար, եղ բանը կատարվել է: Ծործեք դուք Արդրեցանի տիրապետության տակ դնենու կամ նրանց լին տակ քաշելու նորից Ղարաբաղի հայությունը, են ժամանակ կտեսնեմ մի տարվա ընթացքում ինչպես նրանք կոտորեն ժողովրդին, եւ ինչպիսի բռնություններ, մարդկության պատմության մեջ չինսած, չտեսնված, չեղած հալածանքներ: Վայրագություններ կզործադրեն նրանք այդ ժողովրդին ծնկի բերելու, ոչնչացնելու համար, որովհետև նրանց պետք է Ղարաբաղը՝ առանց ղարաբաղոցիների, առանց հայերի, իրենք տեսել են, որ հայերն իրենց համար չարիք են, նրանք ուզում են եղ ժողովրդին լին ու ժննել վե իջ քանել նրա կենսական կյութերը, իսկ նրանք չեն ենթարկվելու, ուզում են ազատություն, ուզում են իրենց սեփական բախտի տնօրինությունը: Այդ պատճառով էլ ուղղակի հիմնարդություն կլինի, խելազարություն կլինի ստիպել, որ Ղարաբաղի հայությունը նորից մնա Արդրեցանի կազմում: Աղդեզանի լին ենթակա:

«Ազատ օր».- Դեպքերում այս իրողության լույսին տակ, ինչպե՞ս կը պատկերացնեք դուք Հայաստանի եւ Արցախի ապագան:

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱՐՅԱՆ.- Ապագան դժվար է, որովհետեւ այս վերջին շաբաթների, նույնիսկ օրերի ընթացքն այնքան կատակված ներով հարուստ է, այնքան ուղղակի աննախատեսելի, աննախադեմ է, որ մարդ չի էլ կարող իմանալ, կամ որոշել, կամ էլ գուշակել, թե վաղն ի՞նչ է լինելու: Տեսնում եք, օրինակ, ո՞նց կարծիք է պատկերացնել, թե համեստ մի հանրապետություն Խորհրդային Սիությունից դուրս է եկել եւ իրեն անկատ է հայտարարություն: Այսպիսի բան անհնար էր պատկերացնել: Ո՞նց կարող էր պատկերացնել, թե, որինակ, մի խորհրդային հանրապետությունում Ենինի արձանը ուժի տակ են

ուվել, ջարդել, ինչպես որ Թիֆլիս-Վրաստանում եղավ. կամ օրինակ, նույնիսկ այս շրջափակումը, կարելի՞ էր, ինարամդ՞ ի էր պատկերացնել, թե մի երկրում, մի երկրի ներսում, այս երկրի ենթակա ճարգը, կամ մի հանրապետությունը շրջափակում է, իր ճանապարհները փակում է եւ թույլ չի տալիս, որ հարեւան համբաւաբետությունը, հարեւան ժողովուրդը որեւէ բարիքից օգտվի: Ուզում են այդ կենսական բարիքներից զրկել եւ խեղդել: Այսպիսի բան հնարավոր չէր պատկերացնել, բայց իհնա՞ կա: Ուրեմն մենք դժվարությամբ, մեծ դժվարությամբ կարող ենք պատկերացնել, թե վաղն ի՞նչ է տեղի ունենալու, վաղն ի՞նչ է կատարվելու: Եվ, այնուամենայնիվ, այս բոլորի առկայությամբ, այս կամխատեսելի իրագործությունների մեջ անզամ կարելի է մի բան պատկերացնել: Դա ժողովուրդը պետք է իմբն իրեն պահի: հայ ժողովուրդը Հայաստանում, հայ ժողովուրդը Ղարաբաղում, որովհետեւ Ղարաբաղի թիկունքում ամրող հայությունն է կանգնած եւ թույլ չի տա, որ Ղարաբաղը կամեն, իսկ հայ ժողովուրդի թիկունքում կանգնած է աշխարհի բոլոր ծագերում ապրող հայությունը, այնուամենք եւ առաջապետ մարդկությունը: Վերջին հաշվով իհնա մարդկային խիլճն արքուն է ամեն տեղ: Ինձ թվում է այդ իհնիցը կիուշի մարդկությանը. որպեսզի նա ճիշտ քայլերի դիմի. մի ազգ, մի այսպիսի քաղաքակիրք, իին պատմություն ունեցող ազգ, պահելու են, ապագային հասցնելու համար:

«Ազատ օր».- Կը փափաքի՞ք դուք եւս պատգամ մը հղեն:

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱՐՅԱՆ.- Այս: Իհարկե, ես թիջ ծանոք եմ, թիջ տեղյակ եմ Ալիութի կացությանը, Սփյուռքահայ մեր հայրենակիցներին եւ, հատկապես, կազմակերպությունների փախհարաբերություններին, բայց այս թիջ ծանոք լինելով էլ եւ, այնուամենայնիվ, տեսնում են կազմակերպությունները շատ չեն կապված հյար հետ ու իհար դեմ մղած պայքարի ճանապարհով ավելի են հեռանում: Ես չեմ կարծում, թե անհամերաշխությունը միակ ճանապարհն է, որ պետք է բռնել եւ շատերն էլ բացատրում են այսպես եթե մենք իրաք լույսինք, մեր Սփյուռքը վաղուց վերացած կլիներ: Ես բոլորովին այդ կարծիքին չեմ, չեմ կարծում, թե անհամերաշխությունը ճանապարհ է մեր ազգային լոյությունը պահելու համար: Ես կցանկամայի, որ մեր կազմակերպությունները Սփյուռքում եւ, կազմակերպություններ արհասարակ, բոլոր միավորումներն իհար հետ ուղղակի մի շղթայի օդակներ դարձած լինեն եւ որովհետեւ բոլորի նպատակն էլ մեկն է՝ ազգապահպանությունը, իսկ մենք ծեռք-ծեռք լոված պետք է գործենք, որպեսզի •այդ նպատակն ավելի հեշտ ու ավելի հայող իրականացվի:

15 մարտի 1990թ.
Դումաստան, Արենք

ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆԻ ԴՏ*

1. Լեռնային Ղարաբաղը (1923 թվականից՝ Լեռնային Ղարաբաղի հնքնավար մարզը) գրադեցնում է կենտրոնական մասը ին Շայաստանի ծայր-արեւելյան այս նահանգի, որ կոչվում է «Արցախ» և տարածված էր փոքր կովկասյան կամ Ղարաբաղյան լեռնաշրջայից Մինչեւ Արարս գետի հոսանքը և Սեւանա լճի արեւելյան ափից մինչև Կուրի ու Արաքսի միախառնման վայրը։ Ընդարձակ այս տարածքում վաղնջական ժամանակներից ի վեր բնակվում էր հայ մարդը, որ ուներ բնիկ հայկական հշխանություն, եւ սա կ համահայկական պետականության համբեա ուներ պարտականություն Երկիրը պաշտպանելու արեւելքից եկող վտանգներից։ Այս «վաղնջական» բարը ես օգտագործեցի իր խևկական ու խորագույն հմաստով, որովհետեւ «Արցախ» անունը սեպագիր աղբյուրներում հիշատակված ունենք մ.թ.ա. 8-րդ դարից՝ հետեւյալ կապակցությամբ։ Արարտյան թագավորության զահակալ Սարդուրի Բ-ն այն առել է իր Երկրի սահմանների մեջ։ Գետագա դարերում Արցախն արդեն պիտի հիշատակվեր իբրև Շայաստանի հիմնական սյուն նահանգներից մեկը, որ ունի ուրույն առանձնահատկություններ։ Օրինակ, հույն մեծ աշխարհագետ Սարարնը (մ.թ.ա. Ա դ.- մ.թ. Ա դ.), այն հիշելով որպես Մեծ Շայքի հայազնն ու հայախոս նահանգներից մեկը, տեղեկացնում է, որ պատերազմների ժամանակ հանուն է մեծաքանակ այրուծի։ Խոկ մեր հայրենի պատմիչ Եղիշեն (Ե դ.), ուրույն տալով արցախյան գնդերի հերոսական նախակցությունը հակապարկական ապատամբությանը, նշում է, որ Ավարայրի ճակատամարտից հետո հայոց գլուխի մնացորդներն ու ավատական տեսերի Երևայացուցիչներն այսուղև կից պաշտպանվում պարսկական պատժարշավըներից, որովհետեւ Արցախը լեռնային բերդերի, խորունկ անտառների մի Երկրի է, ինըն էլ ընդարձակ մի քերու։

Ասափի, որ զրավոր պատմությունն այս երկրածավաց գիտու որպես Դայանա-
տան, հայր Երկիր: Բարեբախտաբար. այս առքիկ պահպանվել են ոչ միայն
հայկական աղբյուրների տվյալները, այլև օտար հեղինակների այնպիսի վկա-
յություններ, որոնցով Կարելի է ցուց տալ նահանջի անհասոն հայկականու-
թյունը Վերոհիշյալ Վաղնջականությունից մինչև 18-րդ երկրորդ կեսը, եղբ այս-
տեղ ուոք է դնում ու բնակություն հաստատում առաջին ոչ հայը: Փանակ ցե-
ղապետը՝ ջուզվոր Թուրքական սարքածալը իր ցեղի մի բեկորի հետ: Բնակություն
է հաստատում՝ օգտվելով Մրցախ-Ղարաբաղյ տեր մելիքների, զավառական
այդ հշխանապետների, ներքին երկպառակությունից: Եվ, ահա, այս պահից կ
սկսվում է մի անհաջող պայքար բնակալական իրավունքների ծգտող եկադրու-
թե տեղացի, հայրենի հողի ու ջրի տեր հայության միջների պայքար, որ ծգուած
մինչեւ այսօր:

Φωνώακιν ήνδρεσσήν, ήρρετο ρωημαρωκάκιν ποιει, ηγένεστε έτει Λαρωμαρωηή της, οοζηρη
πότερη ήνωντας: Ήσακινήν έντρα ρήκουντροιν Αγρικούλκαστρού φυρα ζερητζιναντριερούν
ποιεντροη Παρουσήριο αρρενωπόν έτοι, ηρ έντραν αγιοτη σταρη ήρι λιουσακιαλή, ήνωντα
ήριωντοινρρετο έτοι ερεζηρηρησσήν οστιστρ στηρωακαλιεργάν δρητριεργάμρ.

Փանակն այնպես էլ չկարողացավ տեղադի դառնալ, որ եթ սատեց, նրա դիմումը հարաբեկ է առաջարկվում: Այս գործում առաջարկվում է նրա դամբարանը: Բայց միևնույն է, նրա որդի Երրահիմք պիտի ժամանակ է առաջարկվում: Այս գործում առաջարկվում է Պարսից շահը: Մինչեւ 1813 թվականը, եթե Գյուլխատանի պայմանագրով Պարարազն անցավ Ռուսաստանին, եւ Ռուսաց կայսրը վերացրեց ինչպես իր գինակից հայ մելիք-ների, այնպես էլ միայն խարդավանքներ նյութած խանի իրավունքները:

2. Ես մի առանձնակի գորովաճք ունեմ Արցախ-Ղարաբաղի քաղաքական պատմության հանդեպ: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ Ղարաբաղն, ինչպես մեզում են ասում, իմ ծննդյան ու սննդյան տեղին է, ինձ համար ամենասրբագույն վայրն այս աշխարհում, այլ որովհետեւ նրա պատմությունը լի է հայոց ազգային քաղաքական կյանքին չուր ու փայլ տվող մեծագործություններով: Դիշենք, թեկուզ, ինձգերորդ դարը, երբ դարասկզբին Վերացել էր Ստեղծական միասնական պետությունը. Արցախը ուժի կանգնեց, ստեղծեց փոքրիկ մի թագավորություն՝ մեր ժողովրդական ավանդույթներում, եւս իր հետաքրքիր Կենսագործությունն ունեցող Կաչագան Բարեպաշտի քաջավորությունը եւ մերծավոր հայկական նահանգներում եւս եռանդագին գործեց հարեւան քնատիությունների ասիմիյատորական քաղաքականության դեմ: Կաչագան Բարեպաշտը, ժամանակի Հայաստանի բոլոր ականավոր նուածողներին գործի լօելով, ստեղծեց «Սահմանադրության կանոնական» եւ, իր թագավորության աշխարհիկ ու հոգեւոր առաջնորդների համաժողովում հաստատելով այն կիրառության դրեմ: Այդ սահմանադրության բնագիրն այսօր էլ պահպանվում է եւ հրաշալի պատկերացում է տալիս վախճանադարյան հայկական քաղաքական ուսուցիչ-տնտեսական հարաբերությունների մասին: Պատկերացնո՞ւմ եք, ինձգերորդ դար եւ «Սահմանադրությին կանոնական»: Իսկ որտե՞ղ է այս թևաբակությունը ու հաստատվել: Արքայի Ազգին ամառանոցում՝ այժմյան Սարտակերտի շրջանի Ղաստակերտ գյուղում, որ գտնվում է Թարթառի ափին: Եւ ուր այժմ ներխնապաշտպանության ուժերն են ճակատ տալիս նորօրյա ասպատակիչների դեմ:

Վաշագան Բարեպաշտի հետնորդները եւս հիշատակության արժանի շատ դորձեր են կատարել: 8-րդ դարում, եթե աճրող Անդրկովմասը տիրել-բռնել լին արարական բնավորները, Արցախը փորձում էր անկախ մնալ եւ Սահմանային ու Եսայի Արու-Մուսե իշխանների զիսավորությամբ պարբերաբար առպատճանում էր, հեռու վաճում բռնակալներին:

Իններորդ դարի վերջին, Երբ Բագրատունյաց սպարակվետական տոհմին հաջողվեց Վերականգնել հայոց միասնական թագավորությունը. Արցախի տեր Համամ Բարեպաշտն ինը ճանաչեց Բագրատունի արքայի գերազանցությունը՝ ամեն եթեա աջակցելով, որ հզոր ու անխոցելի մնա համազգային պետական մարդինը: Այս ժամանակից արդեն Արցախի տերերն իշխաններ էին կոչվում: Նստած իրենց զահանիստ Խաչեն ամրոցում, Թարթառ գետի ափին: Բյուզանդական կայսր ու պատմիչ Կոստանդին Ծիրանածինն է վկայում, որ իր պետությունը սերտ կապեր է ունեցել Արցախի իշխանության հետ եւ գիր հեղեկա-

ծրարի կրա նշել է՝ «Խաչենի իշխաններ, Հայաստան»:

Մենք՝ արցախցի-դարաբարցիներս, մի առանձնակի հպարտությամբ ենք հիշում Արցախի 12-13-րդ դարերի իշխանների ազգային գործերը։ Կախուանց մեծ իշխանը, որ 12-րդ դարի վերջն նստում էր Հաթերը ամրոցում, ոչ միայն հերոսական մարտեր էր նղում իր իշխանության սահմաններում երեւացած սելչուկ-թուրքերի դեմ, այլև Սխիթար Գոյ վարդապետին թթենլ, նստեցրել էր իր ապարանքում, դրանքի նա գրի «Հայոց դատաստանագիրը»։

Պահպանվում է մեր ազգի քաղաքական-մշակութային կյանքի այս հանճարեղ հուշարձանի հեղինակային ծեռագիր օրինակը՝ հենց Գոյի հիշխառակարանով, որն իշխանն ու հետագաներին պատվիրում է անշեղորեն առաջնորդութեան պատվիրանին՝ «Դատաստանագրի» պատվիրաններով։

Ես չեմ կարող չիշել նաեւ Վախտանգ իշխանի տիկին Արգուխարունին, որը, ապրած լինելով անուսնու մահն ու երկու զավակների նահատակությունը, քուրքաց դեմ մղվող պատերազմում, Հաթերից թիւ վեր. Դադի վանքի համալիրում հարազատների հիշատակին կառուցեց Սուրբ-խաչ հրաշալի տաճարը, ապա իր դատեր հետ վարագույներ գործեց Արեւելյան Հայաստանի համար. յա բոլոր նշանավոր վանքերի համար: Եվ ականատես պատմիչ Կիրակոս Գամձակեցին նրա մասին էր գոել, թե ծեռագործմերը տեսնող մարդիկ «օրինութիւն տային աստուծոյ, որ ետ կանանց հմաստութիւն ոստայնանկութեան եւ համար նկարակերտութեան»:

Եվ իման դեռ մարդիկ էլ կան, որ զարմանում են, թե այս ինչ հրաշքների են ընդունակ Հաթերի բնակիչները՝ կին թե տղամարդ: Հիշո՞ւմ եր. անցյալ տարի կանայք հարձակվել, պատանդ էին վերցրել աղրեջանակական օմօնի Վայրագություններին աջակցող ռուս զինվորների մի դասակ եւ ստիպեցին, որ նրանք վերադարձնեն հայ գերյաներին, չափափորն իրենց անօրինակությունները: Իսկ այս տարի տղամարդիկ Հաթերից ծորը գերեզման դարձո՞ւ աղրեջանական գործի ու նրա բերած գրահատեխնիկայի համար:

Այս քաղաքական կյանքին վերաբերող իմ խոսքը երկարում է, բայց չեն կարող չանդրադառնալ նաեւ մի կարեւոր հանգամանքի: 12-13-րդ դարերը Հայաստանի ու շրջակա քրիստոնյա աշխարհին, ապագայի առումով, առաջարում էր հարցեր, որոնց լուծմանը միայն կարելի է գոյատել եւ նոր քայլել գցել համաշխահային պատմության մեջ: Թուրքն իր Կոլցան ու Ալթայան հեռուներից եկել, այս կողմերում տնկեց էր դարձել, իր կամքն էր թելադրում, ռուս ու անհանդուժող տիղակայի կամքը: Կարոլիկ աշխարհն էլ մյուս կողմից իր պատուհան դարձել հայոց եկեղեցու եւ հայկական ազգային իմքնության համար: Յայությունը պետք է որոներ ու գտներ իր ազգային կյանքի, իմանդրության ու գոյատեսումի կերպը: Եվ, ահա, այս ժամանակ էլ, 12-րդ դարի վերջին քառորդում, Գիհգոր Տուտենորի խաչենեցի վարդապետը հայրենի եկեղեցուն ժամապարհ է ցուց տալիս, ասում է դիմեցնք «քրիստոնեությանը պատուեալ մեծափառ եկեղեցուն Ըսուզաց», եւ հավատում է, որ կարելի է ստանալ «պատաշ» շան ի նոցանել»:

Արցախ-Դարաբարդի իշխանները, (15-րդ դարից հետո էլ՝ նրանց մանրա-

զած, գավառային իշխանությամբ օժտված մելիքները) քաջ գիտակցում էին, որ մահմեդական նվազողներով շրջապատված Հայաստան աշխարհը չի կառող միայնակ դիմակայել չարիքին, պահել-զարգացնել իր հոգեւոր արժեքները, իր ազգային իմքնությունը: Եվ ունկնդիր դեռեւ 12-րդ դարում արցախցի վարդապետի հնչեցրած խորհրդին՝ հայացքները դարձնում էին դեպի Ռուսաստանը: Յայության անունից Ռուսաց արքունիքը հասած առաջին գիրը 1671թ. Գանձասարի կաթողիկոս Պետրոս Խանձեցին է հետեւ խնդրելով հովանավորություն հայ ազգի կրա, քրիստոնեական-եղբայրական օգնություն: Յետազաւում Գանձասարի կաթողիկոսների ու Դարաբարդի մելիքների այսպիսի նամակները դարձան սովորական, եւ Պետրոս Մեծն իր վերջին հրովարտակներից մեկու գրեց. «Օհօյ արմանեցի նարօք ասունութիւն տային աստուծոյ, որ ետ կանանց հմաստութիւն ուստայնանկութեան պատվիրանին՝ «Դատաստանագրի» պատվիրաններով»:

Մրանից տասնամյակներ հետո թուրք ցեղապետ Փանահը, օգտվելով մելիքներից մեկի: Մելիք-Ծահնազար Բ-ի ծառայությունից, սողոսկում է Դարաբարդի կենտրոնը: Այս գործադրի մասին ժամանակակիցների շատ վկայություններ կան: Ահա նրանցից մեկը, որ գրվել է որում մեծ գրուապար Ալեքսանդր Մուլորովի ծեռօքվ. «Մելիք-Ծահնազար... իր հայենիքի այս դասաճանը, Փանահին՝ Դարաբարդի սահմաններում երեւացած բոչվոր մահմեդականների ու չափնական մասի այդ պետին, հրավիրել է, նրա ծեռը տվել իր արքալու Ծուշի բերդ ու իր հսկ սղնախով հանձեր դարձել նրա հաստակեց»:

Փոխհարաբերություններն ու խոստումները տարեցտարի չերմանում էին, կլնկերտանում, եւ 18-րդ դարի վերջին, երբ Դարաբարդի հայությունը խնդիր ուներ դիմակայել ոչ միայն Պարսից ու Օսմանյան քռնատիրություններին, այլև իր երկիրը սողոսկած եւ Ծուշիուն քուն դրած խանին, Ռուսաց կայսրությունը պարտավորվում է օժանդակել հայոց թրիսական ապաբարին եւ օգնել Վերականգնելու նրա հիմանավորությունը: Այս առիթով եւս պահպանվել է մեծաքանակ վավերագրեր: Ահա նրանցից երկուուր: Ահա նրանցից 1883 թ. ապրիլի 6-ին արքունիքի երկրորդ մարդը՝ հշիան Գրիգորի Պոտյումկինն իր ազգային եւ հայակային գործերի հրամանատակ գեներալ Պավել Պոտյումկինն տվել է հետույալ գրավոր հանձնարարությունը, «Ծուշի խան երահիմին պետք է տալլայել, քանի որ սրանից հետո Դարաբարդ պետք է կազմի հայկական անկախ, Ռուսաստանից բացի ոչ որի (չենթարկվող) մարզ: Պուլը այնտեղ գործադրեցել ը ամբողջ զգուշաց, որպեսզի այս նոր մարզը կազմակերպվել ժողովրդի հանդարձներուն ծեռուկ: Արա միջոցով է, որ հայկական մնացած նույն նահանգամերն էլ կամ կիեւեւեն նրա օրինակին, կամ մեծ թվով կզան Դարաբարդ»:

Նույն այս հարցի կապակցությամբ Գրիգորի Պոտյումկինը գրավիր տեղեկացրեց նաեւ կայսրուիհի Եկատերինային՝ հաղորդելով իր ազգականին գրած առանձիկ բովանդակությունը եւ վերջինից կատարելիք կարեւոր հետեւթյունը. Դարաբարդում կազմակերպվելիք հզոր պետության գլուխ կամգմած կիմի մկրեների մեկը, որի ջանքերով հայական մյուս նահանգներն եւ կազմառարդին, կմիանան այդ իշխանությանը: Ուրիշ խոսքով՝ Դարաբարդ կդարձնա ապա-

գա հզոր հայկական պետության կորիզը: «Այսպիսով,- Եկատերինա թագուհուն հիշեցնում էր Գրիգորի Պոտյումինը, նարզը, որ կազմված է հայ ժողովրդից, կտրվի ազգային վարչության և սրանով Ասիայում կվերականգնվի մի քիսոտ՝ նեական պետություն՝ համաձայն Զեր կայսերական մեծության խոստումների, որոնք իմ միջոցով հաղորդված են հայոց մեջիբներին»:

Արքունիքի խոստումները ոգեւորել էին Ղարաբաղի հայության բոլոր խավերին, որոնց հազարավոր ներկայացուցիչներ, աշխարազորից, շարքայից զինվորից մինչեւ ամենարածը սպաները, ռուսական բանակների հետ էլլու Այսրկովկասը նվաճելիս, բոլոր ու պարսիկ մրցակիցների դեմ մղված բոլոր պատերազմներում: Ըսլի բերդի պաշտպանության ղեկավար, գնդապետ Ռեպուլս գլխավոր հրամանատարությանն այսպիսի զեկույց է ներկայացրել: «Հայերի վերաբերյալ... պարտօն եմ համարում բացատրել, որ նրանց ծառայությունն արժանի է ամենայն ուշադրության, քանի որ նրանք բոլորն էլ գործել են գերազանց խիզախությամբ, դիմակայել բազմաթիվ հարձակումների, թշնամուն դրուս վանել մեծագույն կորուստներով...»:

Իսկ Ղարաբաղի հայությունից սերված գորապետները՝ գեներալներ Վալերիան Սահարովը, Արշակ Տեր-Ղուկասովը եւ ուրիշներ, ուստի զինվորության փարզն էին դարձր պահում բազմաթիվ ծակատամարտերում:

Եվ ի՞նչ եղավ այս բոլորի վարձատրությունը: Առուսաց արքունիքը կատարեց իր մեջ խոստումը: Չկատարեց, Ղարաբաղը Ուսուատանի հովանավորության տակ անցնելով՝ անմիջապես զրկվեց տեղական իշխանությունից՝ մեխրական կարգից, իսկ մեկ դար հետո, երբ Անդրկովկասի տեղում դարձավ խորիշ դային իշխանությունը, Լենինը ու Ստալինը թուրքերի հետ սիրահաղեր անելին Ղարաբաղը նվիրեցին Աղրբեջանին: Եվ գիտե՞ք, այս առթիվ 1921 թ. հուլիսի 8-ին գրած որոշման մեջ ի՞նչ էինք և նշվում բնակչության 95 տոկոսը հայերի կազմված մարզի այսօրինակ նվիրաբերման համար: «Ենթու նահմերական ների ու հայերի միջեւ ազգային խաղաղության անհրաժեշտությունից»:

Ուրեմն, հարկ էր երերազարանյա հայկական մարզն իր բնիկ հայ բնակչությամբ հանդերձ պարզենել մահմեդականներին, որպեսի նրանք հաշտ մնային հայերի հետ, այսինքն՝ բոլոյ տային, որ հայ ժողովուրդն ապրի այս պետի տակ:

3. Տարածված է մի մոլար կարծիք, որի համաձայն՝ արցախ-ղարաբարայան ազատագրական շարժումը նորագույն մի երեսուր է, գորեաչովյան «Վերակառուցման» ծնունդ: Ժամանակակից Աղրբեջանի բարարական ու զիտական շրջանակներում էլ նրա համար հորինել են դրսի ինչոր հարուցիչներ՝ դաշնակցական, հայաստանյան, ուղանիսկ աղանձնագանական երանգներով: Սակայն հայտնի է, տարբեր առիթներով էլ հրապարակել են անհամար վակերագրելու որոնք հաստատում են, թե մելիքական ազատագրական պայքարից հետո, նոր շրջանում այդ շարժումն սկսվել է 1918 թ. ամռանը եւ շարունակվում է մինչեւ այսօր: 18-ի մայիսի վերջին Բաքումի բանակցություններով հիմք դրվեց Այս կովկասի երեք հանրապետությունների ստեղծման, եւ այսուղե ծնվոր, առաջի անգամ պատճական ասպարեզ նետվող Աղրբեջան հանրապետությունը Թուրքիայի պարտադրանքով պետք է տեր դառնար հայկական Ղարաբաղին:

Ղարաբաղի հայությունը, տեղեկանայով այս ոտնձգությանը, ընդվզեց, զինվեց, քաղաքական ու ռազմական ամեն միջոց գործադրեց՝ պաշտպանելու իր ինքնավարությունը: Նախ զինված հաճախապահանական զորամասերը տեր դարձան մարզի բոլոր գավաններին, եւ կենտրոնական հրամանատարության միջոցով պահեղվեց պաշտպանական ցանցի ամրողությունը: Ապա ստեղծվեց Ազգային խորհուրդ, որն ավելի քան երկու տարի հանդիսացավ մարզի ինքնուրույն իշխանությունը: Սուսավարական Աղրբեջանը եւ նրա կողմից կաշառված անզիխական ու ֆրանսիական դիվանագիտական ներկայացուցչությունները պարբերաբար Յայոց ազգային խորհրդից պահանջում էին հպատակություն հայտնել Աղրբեջանին: Եվ Ազգային խորհրդի նախաձեռնությամբ հրամիշված մարզի հայ բնակչության 11 համագումարներն ամեն անգամ ներժում էին այդ պահանջը՝ արձանագրելով իրենց անկուտրելի կամքը: Ինելու նայր Յայաստանի հետ, պաշտպանելու ազգային ինքնուրույնն ու անկախությունը:

- Աղրբեջանի պատմաբանները պնդում են, թե համագումարներից մեկը համաձայնություն է տվել մարզը նտցնելու Աղրբեջանի սահմանների մեջ: Ի՞նչ հիմքեր կան այդպիսի պնդումի համար:

- Ըստ եռիքան ոչ մի: 1919 թ. օգոստոսին, երբ բոլոք-աղրբեջանա-քրդական ավագակախմբերից փրկություն չկար, եւ առջեւում Փարիզի խաղաղարար ժողովն էր, Ղարաբաղի հայության 7-րդ համագումարը որոշեց բանակցությունների գնալ Աղրբեջանի կառավարության հետ, ժամանակավորապես, «մինչեւ Ղարաբաղի հացից լուծումը խաղարարար կոնֆերանսում», լոյալ դիրք պաշտպանել, ժողովուրդը փրկել քննություններից ու կոտրություններից: Սակայն կարծ ժամանակ անց աղրբեջանական իշխանությունները վերսկսեցին հակահայկական վայրագությունները, եւ արցախահայության 8-րդ համագումարը վճռաբար հայտարարեց, թե նարզի միակ փրկությունը նրա անկախությունն է, այդ անկախության համար մինչեւ վերջ կը պել:

Խորհրդային իշխանության առաջին տարում եւս, մինչեւ 1991 թ. հուլիսի 5-ին կոմկուսի Անդրեկրիստի ընդունած որոշումը՝ Ղարաբաղի հայությունը հրաժարվում էր ներարկվել Աղրբեջանի իշխանություններին: Իսկ որոշումից հետո մարզի բնակչության մի գգալի մասը պարտիզանական պատերազմ էր մնում: Յաղորութիւ շրջանի հումի գյուղի հերոս զավակ թեւան Ստեփանյանի գյավուրությամբ պարտիզանական խմբերը շարունակ հանգիստ չեն տալիս մարզի նվաճողները պարտիզանական հանդիս: Իսկ երեսնական բվականներին, եթե խորհրդային երկրի որիշ Կայրերում մարդիկ զանգվածային բռնությունների էին ենթարկվում հակահայկական գործունեության կողմէ կայսերական կամ դրա ուրվականի համար, սպառ շաբաթում ուղանիսկ աղանձնագանական երանգներով: Սակայն հայտնի է, տարբեր առիթներով էլ հրապարակել են անհամար վակերագրելու որոնք հաստատում են, թե մելիքական ազատագրական պայքարից հետո, նոր շրջանում այդ շարժումն սկսվել է 1918 թ. ամռանը եւ շարունակվում է մինչեւ այսօր: 18-ի մայիսի վերջին Բաքումի բանակցություններով հիմք դրվեց Այս կովկասի երեք հանրապետությունների ստեղծման, եւ այսուղե ծնվոր, առաջի անգամ պատճական ասպարեզ նետվող Աղրբեջան հանրապետությունը Թուրքիայի պարտադրանքով պետք է տեր դառնար հայկական Ղարաբաղին:

ներ տվեց այն մասին, թե Բաղիրովը քանի՞քանի դարաբաղցու է ոչնչացրել կամ Միջի քեզի միայն նրա համար, որ նրանք ուզում էին իրենց հայկական մարզը տեսնել մայր ժողովրդի պետության կազմում:

Այս ցանկությունը, կամքը, պայքարը դադարեցի՞ն հետագա տարիներին: Եթե՞ք: 1948թ. ԼՂ մարզի մի շարք մշանակվոր մտավորականների, որոնց շարքում եւ բանաստեղծ Բոգդան Զանյանին, գրականագետ Արտո Ավագյանին, բնագետ Խորեն Բալայանին եւ ուրիշների, տաճանակրության քեզցին նրա համար, որ այդ մարդիկ Դարաբաղը Դայաստանին միացնելու գործություն են ծավալած ենել:

1962թ., երբ Խորշչչովյան ծննահայտն էր, ես ինքը կազմակերպեցի մի նամակ-համախոսական՝ ուղղված միութենական դեկավարությանը: Նամակն ստորագրած չուրց 400 ստեփանակերտցիներ պատճում էին մարզի հայության տօնտեսական ու մշակութային կյանքի ողբերգական վիճակը՝ պահանջելով մարզը վերադարձնել Հայաստանին, որը հնարավորություն կտեղի դրությունը կտրուկ փոխելու, մարզը հանելու տնտեսական ողորմելի հետամնացությունից, հայ բնակչությանը՝ ստրկական վիճակից:

Այս նամակը ինչ-ինչ պատճառներով խլացվեց, եւ մարզում ծավալվեցին հակահայկական նոր բռնություններու ու հայածանեմներու: 1965 թ. ես նորից կազմակերպեցի մի համախոսական, որին ստորագրեցին արդեն 13 դեկավար աշխատողներ: Համախոսականն ինքս տարա Սոսկվա, հանձնեցի ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարի օգնականին, Մինհստրոների խորհրդու ու Գերագույն խորհրդի նախագահություն: Երկու ամսվա համար բանավարությունների շնորհիկ Լ. Բրեժենևն օգնականների միջոցով հայտնեց, որ համձնաժողովը կուրդարկի Դարաբաղ, որպեսզի հարցը տեղում քննի, պարզվի ժողովրդի կամքը... Հանձնաժողովը Դարաբաղ եկավ Բաքվով, եւ երբ տեղ հասավ նրաներկայացուցիչներն այնտեղ իրենց այնպես էին պահում, ասես Բաքվուն թւպատվել, դարձել էին նոյեռանդ նուսուլճաններ: Այսքանից հետո ավելորդ է ասել, թե ինչպես նոր արշավանք սկսվեց 13-ի ու նրանց համախոների, ժողովրդական կամքն արտահայտողների դեմ:

Հետագա տարիներին եւս չեմ դադարել այն ժամանակներուն հնարավոր ու անհնար եղանակներով մղված պայքարը ինքնուրուցնության, աղբեցանական բռնությունից ազատագրվելու համար: Անհնարին ասում եմ, որովհետեւ եղել է նաեւ այնպես, որ ժողովուրոր ենթակա սադիստական գլւանքների ու տառապանքների, 1967-ին ինքն է եկավ հրապարակ, տրորեց աղբեցանական պահանջների բանդան ու երեք չարագործների էլ Վայեց խարույկի վրա: Մրանից հետո էր, որ Աղբեցանի խափի բարձած Հեղյան Ալիեւը դաժան պատժարշակ սկսեց մարզի հայության դեմ, որպեսզի հետագայում, ինը վերջերս, հպարտությամբ հայտարարեր, թե իր գահակալության տասնտարիներին Դարաբաղի բնակչության կազմում հայության տոկոսն իշեցրել է տաս տոկոսով...

Այսքանից հետո կարելի՞ է հայտարարել, թե դարաբաղյան ազատագրական շարժումը «վերակառուցման» ծնունդ է կամ նոր երեւուր:

4. Համաշխարհային պատմության, նարդկային համակեցության համար,

նանավանդ, եթե նկատի ունենանք պաշտոնական աշխարհը, եական դեր են ունենում կիրխարի չափանիշները: Խակ Արցախ-Դարաբաղից... 1965 թ. ԽՄԿԿ Գերագույն Խորհրդի նախագահ Անաստաս Միջոյանի գլխավոր օգնականը, կարդալով իմ տարած նամակը, բավական կարենից էր դարձել, խոստանում էր իր ամեն տեսակ օգնությունը, մենք էլ հարց տվեց: «Խնչքա՞ն է մեր մարզի բնակչությունը»: Ասացի՝ «160 հազարից մի թիվ պնդիմ»: Ազգբուժ կարծեց՝ լինալ է լսել, հետո ճշգրտեց, լրջացավ եւ քրի տակ մոթմորաց: «160 հազարից մենք մի գիշերում փակ վագոններով այս ու այնտեղ ենք փոխադրում»: Եվ դրանից հետո ինձ հետ խոսում էր կոտրված եռանդով:

Բայց բաղաբակից աշխարհը երեւի թ բնակչության թվի կամ մարզի բնական ռեսուրսների վրա չպիտի սարքի իր վերաբերությունը: Հիշում եմ 88 թվականի տար օրերի արծագանքը շվեյցարացի հասարակական մի գործչի խոսքի մեջ: Ունեն Խեցին էր: «Խօօօս Արքայի» (1988, N 16) հանդեսի աշխատակցի հարցին պատասխանել էր, թե «Ենոնային Դարաբաղի բարդությթի լուծումը, անկալիկ, կիարտացմնի մարդկության փորձը»: Խակ որ չըլումի՞: Այս էլ ապացուց կլիմին, թե մարդկությունը որքա՞ն հեռու է կատարելությունից: Չովհաննեսն այնպես լավ գտներ, որ «Չեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար, Ու հեռու է մինչեւ մարդը իր ճամփան»:

Ինչ վերաբերում է նախկին Խորհրդային Միության ուրիշ ժողովուրդների ազգային-ազատագրական շահժումներին, որոնց համար մեր որոշ ընկերների կարծիքով, Դարաբաղն ահազանգ եւ ուղեցուց եղավ, ապա չգիտեմ՝ դա որքա՞ն իրավացի է: Մենք պարզապես վաղ արթնացանք, որովհետեւ ինչպես տեսանք, իսկի չեմ էլ քննել: Եվ իիմա ամեն ժողովուրդ, հատկապես «զարկված ու զրկված» փոքրերից յուրաքանչյուրը, իր ցավն է մօնչում: Եվ զարմանալին այն է, որ խլությունը, հատկապես նեծ ու հզոր տերությունների խլությունը, համաճարակ է դարձել, բռնել է բոլորին:

5. Ինչպես ամեն մի դժբախտություն, այնպես էլ ազգային ճնշումը, ինքնատիպ է, հեռու միօրինակությունից ու կաղապարայնությունից: Տրանից փրկվելն է անտր է լինի տարրեր եղանակներով: Ես տեսել եմ թուրքական յարադանով կիսված Կիպրոսը: Ահա որքան ժամանակ է, Յարավալավիայի տարածումը են ժողովուրդները քրեպում ազգամիջյան խժժություններից: Ճիշտն ասած, այստեղի նախն տվյալներն այնքան կցկտուր ու աղավաղված են գալիս, որ դժբար է որոշակի եղանակացության հանգել: Բայց այդ կցկտուր տեղեկությունների մեջ ամեն անգամ գգում ենք թուրքական ցեղի ներկայությունը, եւ դրանից էլ պարզ է դառնում, թե ինչու: Թուրքիան պատեպատ է զարկվում, մյուս նահեղականները պատրաստ են մեծ ըմկնել, մեր շրջապատում Թուրքիայի նվազով պարող Անդրիկան իրեն չվայելող քայլեր է կատարում: Ուրեմն, այստեղով դարձայ լ թուրքն է անցել...

Ավելի մոտիկ տարածներում՝ Գագառլիայի, Յարավային Օսեբիայի, Արխագիայի եւ ուրիշների ցավերն են: Ես հավակնություն չունեմ դեղատումներ առաջարկելու: Բոլոր այս բարդություններից յուրաքանչյուրն էլ պիտի լուծել, փրկել ցավից ու տառապանքից, մեկին զրավոր մի որոշումով, մյուսին՝ փոխիա-

ճաճայնությանը... որին՝ այնպիսի վիրահատությանը. որը փրկության միակ նկարող կարող է լինել:

Ես ժամանակին կարծում էի եւ այսօր եւ աներկբայրեն այն հանողմանն եմ որ Պարաբաղի բարդույթի լուծման ամենահարմար ծեւը եղել է Արկադի Կոլտ կու կոմիտեն:

Մարզպան էր Կոլյսկին: Խոկ մարզպանությունը Յայտառանին ժանոթ է հինգերորդ դարից: Այն ժամանակ մարզպանը պարտականություն ուներ հավաքելու արքունիք հարկը, խոկ Կոլյսկին եկել էր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն Սորբեանից բաժանելու: Ինը շատ լավ հասկանում էր խնդիրը և միայն դա պիտի կատարեր: Մեր անհեռատես կոմիտեականները չխաչացան եւ, ամբոխիմ իրենց ուժը ցույց տալու համար, գործի լծվեցին, որ «Մոսկվայի դրածոյին» հեռացնեն Ղարաբաղից: Գորբաշչովին էլ այդ էր հարկավոր իր հայանապատ «սխալն» ուղղելու համար: Ասաց՝ աղբբեցանցիք չեն ուզում, ուուր չեն ուզում, ել Կոլյսկուն ինչի՞ պահենք այստեղ: Եվ այսպես Ղարաբաղը գտնեցին միա խորխորած, որից դուրս գալու համար բավական չեն մինչեւ այսօր բափած ջանքերը, կրած զրկանքները, տփած զնիերը...

6. Յշնա Պարաբղում ծանր դրույթում է: Ամենածանրը նրա ամբողջ պատմության մեջ: Որովհետեւ նրա հողին քաց կրվով երեք տեր չի դարձել ոչ մի թշնամի: Իսկ այսօր Ծահումյանի շրջանում, Մարտակերտի շրջանի մեծ մասունք եւ Յաղորդի լեռնային գյուղերում նստած են աղքեցանական ավազակախմբերը, եւ նրանց դեկավարությունն էլ ամեն օր հիփորտում է, թե իր բոլոր ուժերով պիտի կրվի, մինչեւ որ ճարզում ոչ մի զինված հայ չմնա: Իսկ պատմությունից հայտնի է եւ այս վերջին հիմնա տարում էլ ամբողջ աշխարհին ցույց տվին, որ իրենք չզինված հային հոշոտում են, սպանում, նոյնիսկ խորովում ու տուռ: Տէ՛ որ Սունգայիքի ու Բաբկի սպանողների ժամանակ այս վերջինն էլ կենել:

Ինչ վերաբերում է ապագային, ապա այն պետք է լուծի ամբողջ հայ ժողովը: Դիշո՞ւմ եք ոռու զրոյ Սերգեյ Գորոդեցկու խոսքը՝ հրապարակած 1919թ., երբ Ղարաբաղը էլի կովակննոր էր, քայլ կարողանում էր պաշտպանվել սովորական գեներերով իր դժմ եկած հրոսակներից: Հիմա զանգվածային ոչնչացնան գեներեր են գործում, եւ նրա դժմ ոչ միայն թուրք խուժանն է, այլև հավատակիցներն ու երեկով եղբայրության երդում ուստողները: Գորոդեցկին առաջ էր քաշել այսօրվա հայոց փորձիկ հայրենիք մեծ խորիուրդը: «Միաձոյլ լինելով ազգագրորեն, հետեւապես եւ լեզվով՝ Ղարաբաղը դարձել է Յայաստամիք բերդապարհսպը, նրա արեւելյան պատշ: Այդպիսին էր նա անցյալում, այդպիսին է եւ այսօր, այդպիսին է լինելու հավիտյան, քանի որ Յայաստամիք միրտը դաշտն Արարատյան, անհնար է պաշտպանել, առանց տերը լինելու Ղարաբաղի»:

Այս պարզ ու մեծ ծշնարտությունը հասկացել է Եւ հասկանում է ամբողջ համայնքի վրա: Թող հասկանած նաև նրա նոր դեկապարտությունը, որն իր գահակալությամբ միայն ու միայն դարաբաղյան շարժման է պարտական: Յականա նա եւ գործի այնպէս, որ պարզ լինի, թե ողջ հայությունը Դարաբաղյուն այսօր

Ապաշտպանում է իր ապագան, իր գոյության իրավունքն ու գրավականը:

7. Քարավանավիճանում Քայաստանը քախտակից երկրներ են: Սերբերն ու հայերը մի ճակատագրական ընդհանորություն ունեն՝ ազատագրական պայքարը բոլոր բռնավորների դեմ: Եվրոպայում այդ պայքարի առաջանարդությունը սերբ հայուսներն են եղել, քայլ ունենին սպավոն իրենց գինակիցները: Քայկական բարձրավագնակլում՝ մենք էինք, որ, դժբախտաբար, միայնակ պիտի նարաենինք ռոօպական արեսի ունեն:

Ես մի առանձնակի սեր ունեմ սեր ժողովրդի համբեաց, որովհետեւ ճանկուոց կարդացել եմ նրա հրաշալի էպոսի թարգմանությունը Յովիաննես Թումանյանի ոսկե գրչունքը: Սեր Սասունցի Դավթի անս ին հարազատն է դարձել իշգախ Մարկոս: Խոկ հետազայտմ, երբ ծանոթացել եմ նաևս սերերի Կոստյոլի պատմությանը, այս արծվաբույնն ինձ համար դարձել է այնպէս հարազատ, ենակն ին Առաջարկը:

1992, одни из них
— в Европе

လမ်းစဉ် ၁၂၁

* Դաշտին չէ, թե ով է կարել այս հարցագրույցը։ Զկան նույնիսկ հարցերը։ Անվանի գիտնականի արխիվում պահպանվել են ճիշյն տրամադրված լոթ հարցերի առաջական նմունուր (ծան.-հրատ)։

ԻՆՔՍԱՐԱԹՎԱՉՐՈՒՅՑ

Վերջերս պարբերականները հարցազրույցներ շատ են իրավարակում:

Նրանցով վարակված՝ ես էլ փորձեցի իմ սեփական պատասխանները տալ մեր այս օրերին օղում թեւածող հարցերին, եւ ահա թե ինչ ստացվեց:

- Մեր անկախության մասին:

- Ես չգիտեմ՝ շարքային, սովորական ամերիկացին պատկերացում ունի՞ իր անկախության մասին: Ամերիկացին, անգլիացին, ֆրանսիացին, կանադացին...

Մեր պատկերացումն իր վրա քաշած ունի ջղային մի երես, որ բարի տառնում առնելիս անգամ ցնցվում է ու ցնցում, որպեսզի անմիջապես գոռանք՝ անկախություն, բա հ՞նց: Խևկ ոճանք է՝ ի՞ր՝ հա, տվեք հենց այսօք, այս վայրկանին:

Ամերիկացին կամ ֆրանսիացին կարող է իմանալ կամ չիմանալ իր անկախության տեղը, ունենալ չունենալը, ինչպես որ առողջ մարդոց չի գտում իր սրտի գոյությունը: Խևկ ես՝ հայ մարդ, հայի ճակատագրի կողոք, պիտի ասեմ, իհմա շատ տարածում, պարզապես օղում ամենուրեք թեւածող մի խոսք. այն ո՞վ է, որ չենչչում իր ժողովրդի, խևկ եթե պետություն ունի, նաեւ իր պետության անկախությունը: Շունեցողը պետք է պայքարի ունենալու համար, ունեցողը պաշտպանի այն որպես մեծագույն սրբություն: Ուրիշ բան, որ տարբեր են լինում այդ անկախության մակարդակները տարբեր ազգերի, անգամ նույն ազգի տարբեր պատճաշրջանների համար: Եվ հաջողության են համում այն ազգերը (իմա՞ նրանք դեպի անկախություն առաջնորդող անհատներն ու հոսանքները), որոնք երբեք չեն վերանում իրենց միջավայրից ու շրջապատից, սեփական ուժերի ու հսարակությունների իրատես գնահատումից... Ապա թե ոչ, կարող է ստացվել այն վիճակը, որից մեծն թումանյանն էր գգուշացնում: Սովորաբար փոքր գլուխներն իրենք են մտնում մեծ զաղափարների մեջ... Ես տեսակ մարդիկ ոչ թե առողջ դատում են, այլ դուրս են տալիս եւ, հավատալով, որ իրենք զաղափարի գինվորներ են, իրենք իրենց տաքանում են ու դառնում են վտանգավոր եւ մինչեւ անգամ դաժան եւ գարշելի արարաններ...»:

Մեր խորհրդարանի այս տարվա, կարծեմ, մարտի սկզբների միստերից մեկում մի պատգամավոր (թերեւ ազգանունը Հակոբյան էր) համարորեն պահանջում էր, որ իրեն խոսելու իրավունք տան: Տիին, հետո էլ գցուշացրին.

- Միայն դուք եք այդպես մտածում, խոսեք, թող մեր կարծիքն է արձանագրեն:

(Ես այստեղ միայն ասկած խոսքերի բովանդակությունն են հիշողությամբ վերականգնում եւ ներողություն են խնդրում հնարավոր անհամապատասխանությունների համար):

Այս հիշեցումն ինձ զգաստացրեց. նարդին ինչ տարօրինակ մտածողության տեր է, որ խորհրդարանում մեն-մենակ է ննացել իր կարծիքի հետ եւ դեռ անհրաժեշտ է լի համարում այն հաղորդել ամբողջ հնարապետությանը:

Եվ նա բացատրելու պես ասաց, որ մեր այսօրվա հնարապետությունը, նրա

դեկավարությունը մեր ազգի ճակատագրի համար պատասխանատու, նրանով շահագրգության յուրաքանչյուր նարդ, բոլորն առանձին-առանձին եւ միամարդար պարտավոր են, մինչեւ Հայաստանը Միություն կոչված համակեցությունից դուրս բերելը, քննած-պարզած ունենալ երեք շատ կարեւոր հարց.

Ինչպես եւ ի՞նչ միջոցներով է կազմակերպվելու մեր ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքը (ավելի պարզ՝ ազգն իրեն իմշաւե՞ս է կերպելու), ինչպես եւ ապահովելու մեր հնարապետությամբ պաշտպանությունը, հնարապետություն իմշաւե՞ս է կատարելու վրկալան իր պարտականությունը կործանման եզրին հասցված Արցախի հանդեպ:

Պարզ, դաժան, դառը հարցեն, որոնց պատասխանը տալուց հետո միայն մենք հնարապետություն կունենանք դեպի առաջ կամ աջ ու ձախ քայլ գծելը:

Բայց մի՞թե այս հարցերը խորհրդարանում լոկ այն Հակոբյանին են անհնագուտացնում: Ամինար է դրան հավատալ: Հավատացնողը պիտի ծեռ քաշի կամ խորհրդարանից կամ ինըն իր գլխից:

Եվ ասեն ինչո՞ւ:

Սույն օրերին մեր հնարապետության վարչապետությունից դուրս գալով ծեռք բերելիք դժվարությունների գինը հասկանալի դարձնելու համար բերեց միայն մի թիվ: Այսօր մեր հնարապետությունը մտնող գագի համար, - ասաց, - մենք պարտավոր պիտի լինենք վճարել 450 միլիոն դրամը: Միշանը՝ միայն գագի համար, որը ոչ հաց է, ոչ միս ու կաթ, եւ օգտագործելիս էլ այնպես է քում, թե չկամ եթե կա մի անտես, նրեւությական բան է:

Մինչդեռ կան եւ դրանից առավել կարեւոր, կենսականորեն շատ ավելի անհրաժեշտ բաներ, ինչպես հացը, մսամթերքը, կաթամթերքը, մեր խոճուկ տնտեսության կյանքն ապահովելու համար հայքայթելիք տեխնիկան, հումքը, գնազան մթերքներն ու միջոցները:

Ուրեմն, գոնե հաշվել կարողանանք:

Իսկ խորհրդարանի անդամները հաշվե՞լ են:

Կռիասարակ, իհմա մեր անկախության հեռանկարը մի գինովություն է բերել մարդկանց, որ անջատում է շրջապատից, իրականությունից, դարձնում անհաշվենկատ ու անհեռատես կամ ընդունակ է դարձնում արարթների, որոնք հավասար են ամլոցության: Քանի թամբ անգամ լսեցինք, թե կարեի է քաղցած էլ գնալ անկախության: Եվ եթե սա կազեց խորհրդարանից, ապա հեռուստատեսության աշխատակիցների կազմակերպած հարցությունների ժամանակ վարզապես անգիր արած, ամենատարածում երգը դարձավ եւ շարունակում է թեւածել ռադիոյում, հեռուստակերպանին ու թերթերի էջերում:

Մեկը չկա այսօրինակ թեթևաճտությանը դեմ տա թեկուզ ամենապարզ հարցը՝ ի՞նչ է նշանակում քաղցածի անկախություն, եթե հայտնի է, որ քաղցածի վերջը կամ իսկական վերջ է, կամ մուրացկանություն:

Պատգամավոր Հակոբյանի երկրորդ հարցին, այսինքն՝ թե Միությունից անջատվելով ինչպես պիտի ապահովենք մեր մեկուսացած հնարապետության պաշտպանությունը, պատասխանելու համար պիտի վկայակրչեն ինք բարեկամ Ռաֆայել Եշխանյանի՝ վերջերս հրապարակած մի հոդվածի շատ իրա-

տեսական խոստովանությունը: Ասում է. «Մենք մի երկու ֆիդայական խումբ ունենք եւ մի պետական խումբ, որոնց գենը ամենապարզութակն է, այսօրվա համար գրոյի հավասար»:

Չեմ կարծում, թե Միությունից բաժանվելով միանգամից դառնալու ենք ժամանակակից սպառազիմությամբ փայլող մեծաթիվ բանակի տեր: Սեր այսօրվա բանինաց գիմճառայողներից մենքը՝ մայոր Աշոտ Պետրոսյանը գտնում էր, որ «**Ալանց բանակի հմարավայր չէ ամենախ հանրավեսություն հմանել**» («Հայաստան», ս.թ. մարտի 8): Յիմնել եւ ոչ թե պահել: Յիմնել, որ նշանակում է՝ անկախություն հոչչակող ծեռքի տակ պետք է բանակ ունենա: Իսկ այդ խելոց գիմփրականն զգուշացնում է նաև առաջիկայում բանակ ունենալու անհեռանկարությունը: Ասում է. «Ենք առայժմ չխոսենք բանակի նախն, որը ներկա վիճակում՝ դրամական, տնտեսական, կաղրային չքավրության պայմաններում. անհնար է ստեղծել: Դժվար է նույնիսկ պաշտոնական մեկ գումը ստեղծել»:

Իսկ մեր հավերժական թշնամիները, որ մեր շուրջն են եւ իրենց հակահայկական ծրագրերից ոչ հրաժարվել են, ոչ էլ դա թաքցնելու տրամադրություն ունեն, իենց մեր անկախության էլ սպասում են: Նրանք մեր որոց անկախականների վերջին գրույցներում գանձնելի կամ իենց մեր բարեկամությանը կարուած բարեգործների կերպարանը ունեն: Բայց, կարծես իենց խոսքները թերաններում թողնելու համար. Ենյոդար Ալիեւը վերջերս իրենց Գերագույն Խորհրդի նիստում հոփորտաց, թե Ղարաբաղն իրենցն է ու իրենցը: Բայց իրենք դրանով բավարարվող չեն, քանի որ 1920 թ. այսինքն՝ մուսավարի բոլշևիկանալու պահին, Ադրբեյջանի ունեցել է 118 հազ քառ. կիլոմետր տարածություն, դրամից է, որ հատել, խլել, խորհրդային Հայաստան են չինել, եւ հիմա իրենց պարտըն է այդ խվածք եւ վերադարձնել, վերակագնել Ազդրեցանի ամբողջականությունը:

Ի միջի այլոց, այս իրեշավոր գառացանքը նորություն չէ եւ գալիս է մուսավարի շրջանից: Ուրեմն Տեր-Սինասայանն էր գօռշացնում, թե Ադրբեյջանի թուրքերն իրենց հիմնական գրադիւնը՝ խաշնարածությունը զարգացնելու համար ծրագրած ունեն տիրապեսություն հաստատել ոչ միայն Ղարաբաղի ու Լեռնային Գանձակի շրջանների, այլև Մելամի լին ավագանի, Ղարալազագի, Զանգեզուրի, Լոռի, Դիլիջանի, Ալագյազի, Ախալքալակի լեռներուն մեզ: ... Ոչ միայն Ղարաբաղը, Գանձակը, այլև ամբողջ Հայաստանը պետք է զոհաբերվի խաշնարածներու ապահովության:

Ալիեւն ու ընկերները իրենց հիմնական գրադիւնը խաշնարածությունը չեն համարում, իբր մտել են քաղաքակիրը ազգերի շարքը, սակայն հայերի հետ ունենալիք հարաբերություններում առաջնորդվում են խաշնարածի ախորժակով ու բնագիներով:

Յիմնա դաշնանը երրորդ հարցին, որ Արցախին է վերաբերում: Դայ ժողովրդի այսօրվա ամենակարեւոր, ամենաանհետածգելի, ամենաճակատագրական հարցին, քանի որ մնացած թուրք հարցերի լուծումը, նույնիսկ երկրաշարժի գոտու վերակառուցումը, կարող ենք առժամանակ հետաձգել: Շատ գր-

կանքների ենք դիմացել, դրան էլ կղիմանանք... Իսկ Արցախն այլեւս չի սպասում:

Եվ այս պայմաններում Միությունից դուրս գալով՝ մեր կառավարությունը նպատակ ունի ի՞նչ միջոցներով կամ ի՞նչ եղանակով գոնե օգնել Արցախի հարցի լուծմանը: Առաջմ պարզ է մի բան. Ադրբեյջանը մնում է Միության կազմի մեջ եւ նրա կողմից իր, այսպես կոչված, ամբողջության պահպանությունն ու պաշտպանությունը կարող է ապահովված համարել: Կմնա իր համրապետության ներսում՝ Արցախը հայարափ անել այն եղանակներով, որոնք իրենց արդարացրին հանրապետության մյուս հայաշատ շրջաններում ու Բաքվում:

Պարզ է նաև, որ մեր մի երկու ֆիդայական խումբ ու մի պետական խումբ գորությամբ Արցախ փրկելու մասին երագել իսկ չպիտի կարողանամք:

Այսօր մեր Մինհատրմերի խորհրդի նախագահին հարց էին տվել, թե Միությունից անջատվելոց հետո դուք ի՞նչ կարող եք անել Արցախի փրկության համար: Եվ նա, առանց ետին նորի, ասաց՝ Միության մեջ գտնվելով ի՞նչ ենք անում, որ մտածներ դուրս գալու հետո անելիք մասին:

Ուրեմն, արդեն բավական է փակ դռներ ծնծնեք, չենք կարող, չենք լուծի:

Մենք չլուծենք, հակառակորդն է լուծելու, կամ, թերեւս, արդեն լուծված է համարում, որովհետեւ դրսից թերված ուժերին կախարդել-քարացրել է, տիրել մարզն արտաքին աշխարհի հետ կապող միակ գծին՝ ողանավակայանին եւ մտածում է, թե Միությունից բաժանված Հայաստանի աջքի առաջ էլ հայարափ կանի Արցախը: Կանի, ինչ զնով էլ լինի, դրա հանար վայրագության ի՞նչ միջոցներ էլ պահանջվեն:

Այսքանից հետո դժվար չէ պատկերացնել իրական վիճակը... Եվ դժբախտ ժամանակագրի աղաղակը՝ ի լուր ապագա դարերի. «Ի թուականիս Հայոց այսինչ, ի ժամանակս չարանուն տիեզերակալի Ռուզաց Գորգաչով կոչեցելոյ, ի նախագահութեան Հայաստանի հանրապետութեան Լեւոն Տեր-Պետրոսյանի, վարչապետության Վազգեն Մանուկեանի եւ հայրապետութեան Վազգեն Ա վեհականի, անողորմ թուրքին նվիրաբերեցին անառիկ ու դրախտային աշխարհ Արցախական...»:

ՅՈՂԵ ՈՉ ՈՔ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՉԻ ՏՎԼԻՄ

Փետրվարի 20-ին կլրանա Արցախյան շարժման 12-րդ տարելիցը: Այս կապակցությամբ «Հայոց Աշխարհ»-ը սկսում է հրապարակումների շարք, որը կներկայացնեն շարժման ակունքներում կանգնած Ղարաբաղյան հիմնախնդրի սկզբանավորման առնչված մարդկանց տեսակետները:

Ղարապարակումների շարքը սկսում ենք պատմաբան, գրող, հրապարակա- խոս ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒՄԱՐՅԱՆՆ հետ հարցագրույցով:

- Պոն Ուլումարյան, Արցախյան շարժման 12-րդ տարելիցն է մոտենում: Դուք կանգնած եք եղել այդ շարժման ակունքներում: Ի՞նչ հիշողություններ ու- նեք, ինչպես սկսվեց, ըստ Ձեզ, ամեն ինչ:

- Դիմա, երբ ասում են, թե Ղարաբաղյան շարժման սկիզբը 1988-ն էր, ես եւ զարմանում եմ, եւ չեմ ընդունում:

որ ամեն ինչ տեսմում էր եւ գիտեր, թե այդ ամենի վերջն ինչ կլիմի: 57-ի աշ-նանը մեր մարզկոմի բյուրոյի հաշվետվությունը լսեցին Կենտկոմի բյուրոյում: Այն ժամանակ ես ել կայի մեր բյուրոյի կազմում: Գրիգորյանի հաշվետու տվյալական զեկուցումը մկրից իսկ դադարեցրին, հարձակումներով դատափետեցին բոլորին՝ մեր գործունեությունը բացատրելով իր նեղ ազգայնական, որը միայն մեկ նպատակ ունի՝ մարզը բաժանել Աղրբեջանից եւ միացնել Հայաստանին: Եվ կարծ ժամանակ հետո ել կալի Ախունդովը եկավ, Գրիգորյանին հանեց աշխատանքից, տեղը նշանակեց Տիկուայ Շահնազարովին, որը նախնական, մի տասնամյակի չափ, աշխատել էր Նախիջևանում եւ հիմնական պարտականություն էր ունեցել այդ երկրամասի վերջնական հայաբափումը:

Դիմա ո՞վ է մնում այն կոնֆերանսից, որը վերածվեց բուռն պոռեկումի՝ ընդդեմ Աղրբեջանական դեկավարության դրանոյի:

- **Ուրեմն, պետք է ուղղենք մեր պատկերացումը շարժման նախաբայերի մասին. 50-ականներին են եղել դրանք: Իսկ 60-ականներին այն աղոքն ուրիշ ընթացք է ոնեցել, ուրիշ ընդորդում ու հնչեղություն:**

- Պատկերացրու ոչ մի ուրիշ, եղել է շարունակությունը, նույնիսկ առանց ընդմիջնան: Որոշ ժամանակ այն անցել է ընդհատակ: Բայց մի՞նչեւ մարզային հավաքներին թից է պատահել, որ ընդհատակը վերստին գլուխ բարձրացմի, ժայթի եւ դաշնա հանրության հանակրանքի առարկան: Մարզային կուսակցության կոնֆերանսում ճակատամարտ եղավ Աղրբեջանի կուսակցության Կենտկոմի երկրորդ քարտուղար Սեմիշասանու հետ: Ստեփանակերտի շինարարները մի բազմամարդ հավաքում Շահնազարովին ու նրա հրավիրած հանրապետական դեկավարություն տվյալներին տվին գաղափարական մի այնպիսի ջարդ, որին պիտի նախանձեն 80-ականների ամենախիզախ հանրահավաքները... Այսպես որ ժողովրդի պատասխանական կամքը միշտ էլ մարտական վիճակում է գտնվել: Ինարկել, նաեւ հակառակ թեւը, որ մեր պատմության խայտառակությունն է, նրա անցնցելի սեր թիքը:

- **Ի դեպ, գոյապայքարի այդ 60-ականների շրջանը չէի՞ք բնուրագի:**

- Դժվար է բռուցիլ խոսքով բնորոշել այդ շրջանը: Դրան գուց թե մի ուրիշ անգամ կանորադառնամք: Իսկ մինչ այդ էլ շրոտով լույս կտանի ին մի գիրքը, որ նվիրված է արցախյան գոյապայքարին՝ 1918 թ. նայիսից մինչեւ 1988-ի փետրվարի 20-ը: Այնտեղ, կարելի է ասել, սպասիչ, անսքո՞յ խոսք է գնում 60-ականների իրողությունների մասին:

- **Ուրեմն, շուտով բախտ կունենանք առաջին աղբյուրից ճանաչելու այն օրերի հերոսներին ու ապիկարներին:**

- Դերսուները... շատ բարձր է հնչում: Այն, տարիների նացառողմերն իրենց հերսու չեն կաթում ոչ այս ժամանակ, ոչ էլ հետազոյն: Այս վերջին շրջանում է, որ հանրահավաքներում մի երկու կարգախոս պարացած անրաներ իրենց եւ հերոսներ են համարում, եւ նաևուժու առաջըալներ՝ պահանջելով համապատասխան հատուցում, որից ել քանի մեր ազգի տունը:

- **Ուրեմն, 60-ականների ամեն ինչը կիմանանք գործից: Իսկ ինչպէ՞ն եք տես-**

ՎԱԶԳԵՍ ՄԱՅԱԿԱՍԱՅԱՆԻ ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑԸ

ԲԱԳԻԱՏ ՈՒԾՈՒԲԱՐՅԱՆԻ ՀԵՏԸ

ՆՐԱ «ԱՐՑԱԽԵԱԾ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՏԱՐԳՐՈՒԹՅՈՒՆ» ԳՐԸ ԵՌԻՉ

- Պ-Ծ Ուլուբարյան, ե՞ր եւ ինչպէ՞ն ակսվեց ծեզ համար 1988-ի փետրվարի 20-ը: Այսպես եմ ուզում համեմ ծեր նոր գրքի ակունքին:

- Այդ գիրքը երկու ակունք ունի, մեկը նյուտից բավական հեռու, բայց եւ իրարով այսմանակիրված, որի համար էլ կարելի է երկուսին անդրադառնալ: Առաջինը 1918 թ. նայիսին է. Սարդարապատի մեր ճակատագրական հաղթանակին հաջորդած օրերը, երբ ընդունվեց Բարումի հայ-թրօքական, այսպես կոչված, հաշուության պայմանագիրը, որով մուրբանից ճնշմանը նորաստեղծ Աղրբեջանին տրվեց Արցախը՝ նոր աղբյուններում կոչված նաև Լեռնային Դարաբաղ: Այս լուրը հասավ Արցախ, ժողովրդը իսկուս ուժի եկավ, սկսեց իր անհավասար, անգիտու պայքարը, որ շարունակվում է մինչեւ այսօր:

Երկրորդ ակունքը 50-ական թվականների մկրներում է, երբ գիտակցական կյանք մտնելով՝ որոշեցի ինձ նվիրել Արցախական աշխարհի կենսագրությանը՝ գեղարվետական, պատմագրական եւ ուրիշ ամեն տեսակ, նաեւ վճռեցի մասնակցել նրա երազելի կյանք կառուցելուն եւ պայքարել նրա ճակատագրի համար: Այնպես որ 88-ի փետրվարն այնքան էլ 88-ի փետրվար չի եղել, այլ շատ կարեւոր ուրիշ ժամանականիշերի շարունակություն, որը, բարեբախտաբար, լավ ու հաջողակ ընթացք ունեցավ զարգացման փուլերուն:

- Դուք հավատացյալի նվիրունով եք գրել «Արցախյան գոյապայքարի տարեգործություն», ես կատեմ՝ օրագրությունը: Նախանձելի եռանու, աշխատասիրություն եւ համբերություն էր պետք 850 էջանոց այդ մեծագործի աշխատություն զլուխ եւրեկու համար: Դա ինչպէ՞ն հաջողվեց:

- Ես այստեղ շատ կարեւոր են համարում նվիրվածությունը: Զահել օրերին հանընկած լիներ, կովի դաշտում կլինեի: Բայց հառաջացած տարինս ու առողջական, ավելի ծիշտ՝ վատառողջ վիճակս դրա հնարավորությունը չին տալիս: Մնում էր զի անցկացնել նրա պայքարը, ժողովրդական մաքառումի անօրինակ, աննախադեպ հերոսապատումը, որ եղել է ամեն օր, ամեն ժամ, Աստուծությունը պայմաններում: Իսկ իրական աշխատասիրությունն ու համբերությունը շատ պետք եկան վերջում, երբ գրի անցկացրած երեք-չորս հազար էջ պետք է սեղմեի, հասցնելի գրի ծավալին: Որովհետեւ այդ ծավալի տպագրությունն անգամ կապված էր նեծամնէ հժվարությունների հետ: Կրծատումներ, սեղմումներ շատ են եղել. չեմ կարծում, թե դրանցից չի տուժել ամրողությունը: Սակայն դեպքերին, իրողություններին ծանոթ ընթերցուներն ատում են նման բարձր չեն եկասում, եւ դրանից մեծմանում է անհանգստությունը. մտածում եմ, որ ապագայի պահանջկուտ-քննադատ-ընթերցուը լիակատար կամ ամբողջական պատկերացում է ստանալու գոյապայքարի այս հատկածի մասին:

- Գրի առաջին իսկ էջերից «Վեր է հառնում» ԽՄԴՄ դեկավար Գորբաչովի՝

Նոր օրերի այդ Շատելվորտի, կերպարը: Որտեղից այդքան ատելություն մեր ժողովրդի նկատմամբ: Մի՞թե նա որեւ հիմք ուներ:

- Լավ եք նկատել, Հայաստանի առաջին համբավետության օրերին անգիտացի մի Շատելվորտ կաշառված Աղրբեջանի նուսավարական կառավարությունից փորձեց Արցախը գլխովին նվիրել Աղրբեջանի թուրքին: Համանանա «առաքելություն» ուներ նաև Գորբաշովը, որ որոշել էր Արցախի հետ նույն խալն անել: Նա ես կաշառված եր՝ ինչպես Աղրբեջանից, այսպես է Թուրքիայից: Դիշում եք Թուրքիայի պրեզիդենտ Թուրդուք Օզալը 91-ի մարտին եկավ Մոսկվա: Բարվու զնաց: Բարվից դեռ չեղ թռել Մոսկվա, Գորբաշովը հրապարակեց մի հայտարարություն, որով հաստատում էր, թե Արցախ-Ղարաբաղն Աղրբեջանին է, և ավելորդ է դրա շրջոց ամեն մի գրույց: Օզալը Մոսկվա հասավ, նեկ միկարդ դուլար պարզեցեց Գորբաշովի ԽՍՀՄ-ին, իհարկե, իբրև վարդապետություն Արցախի համար: Եվ վերադարձավ՝ իր միակ ու ամենակարեւոր խնդիրը կատարած: Այսպիսի նվիրաբերություններ, ամկասկած շատ են եղնել: Մենք միայն այս մեկին ենք տեղյակ:

Գորբաշովն ուներ թշնամնի ուրիշ, ոչ պակաս իհմնավոր պատճառ. ինքը հօչակել էր երկրի վերակառուցումը եւ հաջողությամբ իրականացնում էր այն, ինչպես պնդում էին մերձավոր շողովորմերն ու երեսպաշտերը: Արցախն էլ հավատացել էր Վերակառուցման առթիվ մթնոլորտոց լցված ստերին, ազատ ինքնորշման մասին, ժողովրդավարական արդարությունների առթիվ տարածված կոչերին: Դավատացել էր ու որոշել իր արդար, ցերեկվա լույսի պես մաքուր ու պարզ կամքը՝ միանալու մայր Դայաստանին, ազգի մեծ մասի ունեցած պետական միավորին:

Մկրտիչ Գորբաշովին թվում էր, թե մի «իհմնավոր» խրատով կամ զգուշացման ապառակով կարգի կիրավիրի, խելքի կրերի այդ լեռնցի կողքահաստերին: Տեղի ունեցավ Աղդամի ու Բարդայի շրջանների արշավը Ստեփանակերտի վրա, եւ ոչ մի օգուտ. արշավն սկսողներն իրենց թակ կերան-ընկրկեցին: Նետո կազմակերպվեց Սումգայիթը՝ հավանաբար, ոչ առանց Գորբաշովի իհմացության, գուցեց նույնիսկ նրա հանձնարարությամբ: Դա եւս ես չափահեց արցախիներին, որոնց դեմ արդեն պիտի գործադրությին ավելի դաշտն ու հրեշավոր միջոցներ:

Այստեղ պետք է հիշեցնեմ մի լրացուցիչ հանգամանք եւս, որ գրքում ցույց է տրված ամենայն մանրամասնությամբ. մեր հայաստանյան դեկավարներն, ասես հատուկ ծրագրով, Գորբաշովին օգնում էին՝ իր թունավոր ժանիքները խրելու այն ժամանակ դեռեւս անպաշտապան մեր մարմինը: Պիտի հիշենք, օրինակ, որ նույն չարահուշ 91-ին, երբ արդեն պարզ ի պարզո երեսում էր ԽՍՀՄ փլուզման հասունացումը, եւ խելքոր նարդիկ ջանում էին հնոտորն օգտվել այդ փլուզումի փաստից եւ ըստ այդմ դասավորել իրենց ազգերի պապան: Մերոնք կառչել էին կոմկուսի շենքերից ու մնացած հարստություններից, ուզում էին նվաճել դրանք: Մեր աշալուրը ու խելքոր հայրենակիցները, տասնեւով այն մեծ անխսորժությունը, որ դրանց էր սպասավում, եկան, խրոհուրդ տվին ծեռապահ մնալ, սպասել: «Տեղեր,- ասացին,- դուք Արցախ ունեք, գգույց եղեք: Յե-

տո էլ կարիք չկա շտապել, չ” որ փլուզումն արդեն պարզ է. կարիք չկա նրա տակն ընկնել»: Այս խորհրդին ականջ դնող չկար: Երեւի մտածում էին, թե լավ են բռնել Գորբաշովի եղյուրմերը, մի լավ քափ կտան, կցախչախտեն: Շարունակեցին, եւ չուշացավ նաև պատասխանը. Գորբաշովի կարգադրությամբ ԽՍՀՄ զորքերն ու օմոնի հրոսակները մտան Գետաշենի ենթաշրջանին: Օդային օճակողություններն ու բազմատեսակ հրետակոծությունները, զորքերի ու ներքին զինուժի խուռներամ գրուները մի քանի օրվա ընթացքում ամայացրին հինավորուց, հերոսական Գետաշենի ենթաշրջանին, անզեն, անպաշտապան բնակչությանը կողոպտեցին, կոտորեցին, մնացորդներին դուրս քշեցին հայրենի օջախներից, դարձրին փախստական:

Դաջորդն արդեն Շահումյանի շրջանն էր, իհմ Գյուլիստանը, որը եւս պիտի ծաշակեր նույն ճակատագիրը, որովհետեւ զայրացնել էր մահվան գալարքներին մեջ զտնվող Գորբաշովին ու նրա չարագործ իշխանությանը:

- Շարժման սկզբանական փուլում, երբ որ Գորբաշովն անսահմանափակ իշխանություն ուներ, խորհրդային անպարտելի կոչված բանակը մեր դեմ ուղղելուց զատ նաև հոգեբանական ճնշման միջոցներ էր ծեռնարկել: Վեցըներ, թեկուզ, զանգվածային լրատվության միջոցները: Եվ ինչպես էին դրանք մեզ հունից հանում՝ ամենազգացմունքային մարդուց մինչեւ ամենահավասարակշիռ քաղաքական այրը: Ո՞րն էր դրա նպատակը:

- Նախորդ հարցի պատասխանը, Կարծեմ, պատասխանն էր նաև այս հարցին: Սակայն ավելացնեմ նաև, որ Գորբաշովը կարծամիտ մարդ էր, անընդունակ հասկանալու այն վճռական դիրքորոշումը, որի վրա արցախյան գոյապայքարն էր հեցած: Դայերն ու հայ դատի պաշտապան հայրուրավոր մարդին նրան բացատրել, իրը, հասկացրել էին, որ այս երկիրը հայկական է՝ յուրաքանչյուր պատարելի կնքված հայաշունչ, հայադրոշ հուշարձաններով. հայի արյունով ու արցունեղով. քրտինքով ու աղոթքով: Միշտ ծեւացրել է թե ընդունում, հարգում է այդ ծշմարտությունը... Բայց երբ պատասխան խոսր պիտի ասեր, այդ երկիրը դասմում էր երկու եղբայր ժողովուրդների հայրենիք, որտեղ հայն ու աղբերձանցին զարերով ապեն են կողդ-կողդի: Եվ պատահական չեն որ վերջին շրջանում լայն շրջանառություն ուներ մի իհաստարությոր, որն ստուգում ցույց էր տալիս, թե այդ չարագործ թուրքական ծագում ունի, հայրն էլ մի թուրք է, շատ նման իրեն՝ Գորբաշովին, ախոր ճակատին դրած Աստուծության մեջքություն:

- Գիրքը մի պատերասրահ է, որտեղ շատ արժանվուն ներկայացված են արցախյան խնդրին առնչվող բազմամարդ հանգույցներ ու հարաբերություններ, պետություններ, քաղաքական շահեր, միջազգային աւտաներ, քաղաքական կազմակերպություններ, գործիչներ, մեր ժողովրդի իհական բարեկամներ եւ այլն: Ասացեք, խնդրեմ, ինչպես է կարողացաց անցնել այդ լարիինթությունը, որանքազի չեղողեք, չնոլորդվեք, խուսափեք հնարավոր անծշություններից: Գրքում այնքան շատ են ծեր մեկնաբանությունները, գնահատականները եւ մի խսորվ անհատական նոտեցումները:

- Տարեգուրությունն իսկապես ծանրաթե՛նված է բազմաբանուակ նյութերի

ծալ-ծալ նստվածքներով: Բայց որովհետեւ այդ նյութերն ստեղծվել են ամեն օր, այն բժախնդիր բարեխսդությամբ, որ իշխող է մեր պատմագիտության բնագավառին, դժվար թե թյուրիմացություն սպոդի կամ հնարավոր դաշտնար որեւ խճողում: Ես կարող եմ հավատացնել նաեւ, որ, այսպես կոչված, հերոսներից կամ գործող անձերից յուրաքանչյուրը տերմ ու պատասխանառուն է իր արած-չարածի, ասած-չասածի, այսինքն՝ ոչ ոք չի ազատվի իր կատարածի համար պատասխանառու լինելու պարտականությունից... որ այժմ գուցե տեսական, հարաբերական նշանակություն ունի, իսկ ապագայում, կամ ինչպես ասում են, ահեղ դատաստանի օրը, դիանով է ներկայանալու:

Նկատի ունենամք, որ «անհատական նոտեցումներ» կոչվածները շատ էլ անհատական չեն, այսինքն՝ իմ անձնականը չեն, այլ հասարակական միջավայրի արտահայտություններ են, համապատասխանում են քարյական այն չափանիշներին, որոնցով մեր ազգն է առաջնորդվել դարեր շարունակ, եւ այսօր է առաջնորդվում՝ առանց խորի խարարումների:

- Ինչպես եք պատկերացնում Արցախի խորի Վերջնական լուծումը: Դամանարդկային մեծ կարգախոսների հետևող կազմակերպությունները միաժամանակ խոսում են եւ ազգերի հնքնորոշման իրավունքից, եւ այսպես կոչված տարածքային ամբողջականության օրինականությունից: Ո՞ւմ է ծառայում պատրադրությունը: Ո՞ւմ շահերն է պաշտպանում այն:

- Հավ է այդ հարցը տվիք: ազգի հնքնորոշման իրավունք եւ երկրի, պետության տարածքային ամբողջականություն: Մեր շատ թե քիչ խելանիւ դիվանագետները քանի՛ց ապացուցել են, որ այդ երկու սկզբունքներն իրաց չեն հակասում, տարածքային ամբողջությունը պետք է պաշտպանել արտաքին վտանգներից եւ ոչ թե ներսից անջատվողին, ինքնորոշման իր իրավունքից օգտվել ցանկացողին: Բայց Արցախն Աղբեքանի ամբողջությունից դուրս էր գտնվում 1990-ի գարնանից ի վեր: Քիչ՞ ո՞ւ եք՝ այդ թվականի ապրիլի 3-ի ԽՄՀՄ Գերագույն խորհրդի հրամանագրով կարգ էր սահմանվում անկախացող ու Սիրիյունից դուրս եկող համբաւետուրությունների համար: Դանրապետությունը կարող էր դառնալ անկախ եւ ինքնուրույն տնօրինել իր բախտը: Բայց նաման իրավունք ստանում էին նաեւ անկախացող-բաժանվոր համրապետության ներփական ազգային նիհավորումները: Սիրությունից Աղբեքանի բաժանվելու պահին անկախացել, նրանից անջատվել է նաեւ Արցախը, կազմել Լեռնային Ղարաբաղի հանրապետություն, միջազգային գործող օրենքներով կառուցել իր պետական միավորը...

Տապոք, Վերջին տարիների պետական ու դիվանագիտական միջոցառումներում Արցախի իրավունքներն, իբր թե, պաշտպանող քաղաքացի ու դիվանագետ այրերը, բերանները ջուր արած են եղել, կամ էլ գինըները տված պարապ գրուցներին, անտեսել են իդավանակն արդարացնող, Արցախի պետական սուբյեկտը միջազգային օրենքներով պաշտպանող կարգ ու կանոնը:

Սեր հանրապետության պրեզիդենտ, Լեռն Տեր-Պետրոսյանն իր վերջին (երանի դա վերջինը լինի) հոդվածում ոչ առանց հայարտության նշում է, թե տեղի է ունեցել այնքան էլ ոչ ցավակի մի իրողություն. մենք Աղբեքանին տանու

ենք տվել վերջին տարիների քարոզչական պատերազմը: Եվ իմաստուն պատճառաբանություն է անուն իր հանգստության համար, ասում է. «Ո՞րն էր պատելի նախընտրելի՝ պահել Ղարաբաղը եւ կողմնել քարոզչական պատերազմը, թե՝ կորցնել Ղարաբաղը եւ փայլուն հաղթանակ տանել քարոզության ասպարեգում»:

Նախ ասեմ, որ այստեղ մեր պրեզիդենտը մի բացահայտ բյուրիմացություն է իրանցնուն իր ընթրոցուղմերին, քարոզության ասպարեզում մենք տվել, դա չի նշանակում «պահել ենք Ղարաբաղը»: Քարոզության մեջ տանուլ տալ այն է, որ անկարող ենք եղել քաղաքական ու դիվանագիտական շրջանակներին ցույց տալ, թե Ղարաբաղը մերն է օրինական կերպով, առանց այլեւայլության Սակայն այն փաստորեն կորցրել ենք, այսինքն՝ դա այն վիճակն է, որ իհմա կա եւ իշխող է քարոզչական ասպարեզում: Այսօրինակ վիճակով էլ կարելի՞ է հայարտանալ: Այլ բան է, թե նախապես մեր ազատագրած-ինքնուրույն ու անկաս պետություն դարձած Արցախի իրավունքները բացատրած պաշտպանած լինենք նաեւ վերջին տարիների քարոզության բնագավառում: Ուրիշ խոսքով՝ իրականացրած լիներ «Արցախ-Հայաստան կազմակերպության անդամների համար պահանջը, որ արտահայտում էին իրենց հրապարակային ելույթներում ու բաց նամակներում, եւ դա էլ այնպես սահմանականությունից համում էր պրեզիդենտին ու նրան շրջապատող անգործ գործիչներին»:

Քարոզության ասպարեզում տանուլ տված լինելով՝ պրեզիդենտը իհմա էլ գտնում է, որ մենք անզոր ու խեղճ ենք, պետք է Արցախ Աղբեքանին հանձնենք ինչ-ինչ փոխզիջումների ճանապարհով, որպեսզի մեր հանրապետությունը ստանա բարեկեցիկ կյանքով, եվրոպակարի ապրելու:

Անմիտ, բուք, անհեռատես մարդիկ անզամ տեսել ու հանոզվել են, որ Աղբեքանում հային սպանում են: Ուրեմն Արցախը աղրեքանական սպանդանոցին տանք, որպեսզի մնացած Հայաստանը ապրի Եվրոպակարի»:

Այս է մեր նեկավարի բարոյական մկրտունքը:

«Կանչ», 29 հուլիսի 1998թ.

ԶՐՈՒՅՑ ԳՐՈՂ ԵՎ ՊԱՏՄԱԲԱՆ ԲԱԳՐԱՏ ՌԻՀՈՒԹՅԱՆ ՉԵՏ

Դարց.- Նախ փորձենք ճշտել Բագրատ Ռուբերյանի տեղը մեր հասարակական-մշակութային կանոնու: Ո՞վ է նա, պատմաբան, թե՝ գրող; Թե՝ երկուսը միասին: Նրանք միմյանց խանգարո՞ւմ են, թե՝ լրացնում:

Պատասխան.- Ես ինձ չեմ համեմատում մեր գրականության մեծերի հետ: Նրանք հասուատ ու ամիսախտ են իրենց տեղերում ու միայն կարու են ու պետք է օրինակ լինեն հասարակ մահկանացուների համար: Ասենք, Ռաֆֆին ու Լենի: Գրող են ու պատմաբան, երկու բնագավառներում է ատեղծել են կոթողային երկեր, որոնցով հապատանում ենք այսօր: Ֆիշտն ասած, մենք այսօր այն չափանիշներով չենք առաջնորդվում, ինչ որ իրենք ունեն: Օրինակ, Ռաֆֆին. ինքն իր փառահեղ պատմվածքների համար արդեն անհամեմատելի փաքի արժանացած, գրել էր «Խամսայի մելիքությունները» ուշ միջնադարյան Արցախի հշխանությունների մասին եւ ամենից շատ այդ գրքով էր հպատանում, դա էր համարում իր գլուխ-գործոցը: Ասում էր՝ մինչեւ այդ գիրքը մեր ազգի պատմությունն ավարտվում էր Կիլիկյան Լեռն վեցերորդ թագավորի մահով, որովհետո նրա մահից հետո մենք այլևս չենք ունեցել պետական հշխանություն: Եվ այդ գրքով ցույց տվի, որ ոչ միջնադարում ունենալ ենք այդ պահին: Արցախի լեռներուն պահպանվել են մելիքությունները՝ մերկած մեր միջնադարյան քաջազուն հշխանական տներից...

Դժբախտաբար ամսահ Ռաֆֆու այս խոսքերու ուղենիշ չեն դարձել մեր հետագայի պատմագիտության եւ, առհասարակ, հայագիտության համար... Նոյն նիսի վերջին ժամանակներս հրապարակվում են իրենց մասնագետ համարող մարդկանց գործերը, որոնք պնդում են, թե Կիլիկյան Լեռնի մահով զնովել է մեր պետական գոյությունը եւ 20-րդ դարի սկզբին մենք մեր պետականությունն ենք վերականգնեն: 6 թե 5 ու կես դարերի փոշիների տակից:

Իսկ Լեռն «Մելիքի աղջիկը» վեպի եւ բազմաթիվ ուրիշ գրական, հրապարակախոսական, ուղեգրական գործերի հեղինակը նաև, գուցե եւ առաջներին պատմաբան է: Այդ նա է, որ մեր պատմաբառներից ամենից շատ եւ ամենից լավ մեր ժողովրդի ամբողջ պատմությունը սովորեցրել է հայ ժողովրդին. նրան դարձել տերն իր պատմության: Եվ սա խանգարե՞լ է նրան՝ լինելու նաև գրող կամ Ռաֆֆու գրող լինե՞լ Յ է խանգարել պատմագիտական աշխատամքին: Երբեք:

Ռաֆֆու կամ Լեռի գրական գործերն ավելի հավաստի են ու ազդու, որովհետեւ գրողներին օգնական են եղել նրանց պատմագիտական հմտությունն ու լայնախոհությունը եւ պատմագիտական գործերին էլ փայլ են տվել, եթե ուրիշ բան էլ չինի, նրանց խոսքի պատկերագիրությունը եւ այլ այսօրինակ անհրաժեշտ անթեր:

Ես գրական գործերով եմ սկսել իմ բեմը: Լույս են տեսել վեաեր, վիպակներ, պատմվածքներ: «Թարթառ» վիպակն արժանացել է միութենական մրցանակի եւ թարգմանվել շատ լեզուներով: Գրել եմ նաև պատմագիտական ու-

սումնասիրություններ, որոնք մեծամտություն չհամարեք, շատ ընթերցողներ են ունեցել: Օրինակ «Զրուցարան» երկաստորոշակը, որի նյութը մեր բազմարյան պատմությունն է եւ ազգային մշակույթի գարզացման ընթացքը. Երկու անգամ լոյս է տեսել խոշոր տպագրանակներով... Ուրեմն պարզպուն է, որ ոչ գրողն է խանգարում պատմաբառնին, ոչ էլ պատմաբանը՝ գրողին, պարզպես նրանք պետք է համերաշխ աշխատեն՝ իրեւն մի կուռ ամբողջություն...

- Այսօր իմը՝ վ գրական Բագրատ Ռուբերյանը:

- Ինչով որ գրազաքած էր մինչեւ այսօր: Դրան էլ գումարած հուշագրություններ: Ես բախ եմ ունեցել սերտորեն առնչվելու հայ եւ ուրիշ ազգերի շատ նշանավոր, հետաքրքիր մարդկանց հետ, նրանցից պահպաննելու հետաքրքիր ու բազմազան իշխողություններ: Որոշել են դրանք հանձնել քրիստոնեական մատուցում, որ կարողանան ավարտին հասցնել:

Դուշագրիներից մեկն ասել է՝ զողոները մեծ նամամք սկսում են հուշ գրել այն ժամանակ, երբ այլնես ոչինչ չեն հիշում:

Ես դեռ հիշում եմ եւ կարծում եմ, որ ժամանակն է սկսելու:

- Եթե պատմագիտական գործունեությունը հիմնականում նյութ է ունեցել Արցախը եւ հարեւան հայաշխարհը: Նետաքրքիր է, եթե արցախից պատմաբան չիմնենք, մեր հայրենիքը աշխարհագրական ո՞ր հատվածը կընտրեիք ձեր ուսումնասիրության համար:

- Դարձյալ Արցախական աշխարհը: Նախ, որ, ինչպես մեր պատմահայր Մովսես Խորենացին կասեր, «քազում գործք արհութեան գտանին գործեալ յաս աշխարհին», ապա եւ՝ որ «արհութեան բազում գործերը» մեծ մասամբ գրի չեն առնված ներելի ու աններելի պատճառներով: Քիչ առաջ խոսեցի Ռաֆֆու գրքի մասին: Այստեղ, իհարկե, մելիքության պատմությունն է՝ 16-18-րդ դարերում, մինչեւ ուսական տիրապետության հաստատումը, որով եւ վերջ տրվեց մելիքական վարչությանը: Բայց չէ՝ որ 16-րդ դարից առաջ եւ, այստեղ նախարարական իշխանություն է եղել, որով եւս մեր ժողովուրդը պետք է հպարտանա՞ իբրեւ իր պատականական կենդանի վկայություն, որը եւս ուրացվում էր պատշտանական պատմագրության կողմից:

Իսկ ուսումնասիրել, ցույց տալ չեր կարելի, որովհետեւ Արցախական աշխարհը բռնազարքական գտնվում էր Աղրբեշամի կազմում, ուսումնասիրել նրա պատմությունը, նշանակում էր պահանջել այն, զրաղվել ազգայնական, դատապարտելի գործունեությանը:

60-ական թվականներին, իբրեւ թեկնածուական գիտական թեզ, ես պաշտպանել էի Արցախի պատմությունը ինազում ժամանակներից մինչեւ 10-րդ դարը: Աղրբեշամից գրպարտարդերով հեղեղելի էին կոչումներ շնորհելու Միութեան հանձնաժողովը, պահանջում էին դիսերտատանութեան դաստապարտել իբրեւ եղբայրական հանրապետության դեմ ուսնագույն անողի... Ցավակն այն էր, որ նոյն մեղադրանքով, թերեւ մի քիչ ավելի լայն սահմաններում, դիմումներ էին գնացել մատ ։ Յայասուանից:

Սուսկվայում գործին խանվեցին ժամանակակի երկու խոշոր հայ գիտականներ, որոնք նաև ազգային պատմությանը ոչ մի կապ չունեն հայագիտության հետ, աղադեմիկոսներ Արտեմ Ալիխանյանը ու Անդրամիկ Իռափյանը, եւ հարց

լուծվեց բարեհաջող:

Հաջորդ տարիներն էլ, եթե մեր Ակադեմիայի պատմության ինստիտուտում պիտի Արցախի պատմության շարունակությունը ուսումնասիրեն, ստիպված եղա գրադարձ «կոնտրուբանդով», գիտխորհին իմ աշխատանքային թեման ներկայացրի այսպես. «Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում»: Թեման հաստատելուց հետո այն ժամանակվա տնօրեն Գալյուս Գալյոյանը կանչեր գրուց եւ ընծիծաղով ասաց.

- Կարո՛ւմ ես՝ շիամկանց՝ խորամանկությունդ, որ Արցախի փոխարեն խաչենի իշխանություն ես գրել:

Ես պատմախանեցի, որ լավ է, եթե համարական լով են թեման հաստատել, չէ՞ որ սկզի տեղերում հենց միայն Արցախ անունը խորսնեցնում է:

- Գնա ճշմարիտ պատմություն գրիր, - գրուցք փակեց Գալյոյանը, եւ համարաց, որ ամեն տեղ էր արդարամիտ ու ճշմարիտ պաշտպան մարդ կա, եւ կարելի է գրծ կատարել:

Իսկ դրանից հետո ինչքան գործ կատարվեց՝ Արցախի պատմության ամբողջությունը, Արցախի պատմական հուշարձանների ուսումնասիրությունն ու հրապարակությունը, Արցախի տերերի պետական-դիվանագիտական փոխհարաբերությունները Ռուսաստանի հետ, որը պատմական ժամանակաշրջանում Արցախի ճակատագրի պարիվերումները եւ վերջին է՝ Արցախի մղած անօրինակ գոյապարհար տարբջությունը...

Այսպես է լինում, որ մեկ էլ տեսար, մարդ մեծամտացավ ու ինքնազմայլանքի մեջ ասաց. «Պարզվում է, որ այնքան էլ զուր չենք ապեն!»:

Իսկ ինչո՞ւ է գրադպում այսօր Բագրատ Ռուբորայանը:

- Պարա են:
- Դուք՝ պարա՞պ:
- Յենց նոր ավարտել են ամենակարեւոր գրեթեից մեկը՝ այսպես կոչված, Աղվանից եկեղեցու պատմությունը, եւ ինծ հանգիստ են տալիս:

- Դա Գանձասարի կարողիկոսության պատմությունն է:

- Եթե կարողիկոսի նատավայրի անունով կոչենք, շատ տեղանուններ պիտի շարվեն՝ Պարտավ, Բերդակուր, Գանձակ... Յա եկեղեցու ընդհանուր պատմության հեղինակները, նույնիսկ Սաղաքիա Զամինյանը եւ ուրիշներ, որ բարեհինդ մարդիկ են եղել, գրել են հայոց հավատի անբողջական պատմությունը՝ նրան հյուսելով նաև կարողիկոսության ճյուղավորումները՝ Միսր Կիլիկիայում, Աղթամարը անտես են արել Աղվանից կարողիկոսությունը. ըստ երեւութին, այն քյուրիկանցության պատճառով, որ այդ կարողիկոսությունը ճանաչել են ոչ հայ, այլ արվանների հայրապետություն...

Իսկ «Աղվանից»-ը մի՞թ չի նշանակում «Աղվանների»:

- Այս դեպքում բոլորովին էլ ոչ եւ ասեմ ինչու: 4-րդ դարի վերջում, Յայատակի միամնական թագավորության բարձունով՝ Պարսից թռնապետությունն Արեւելան Յայաստանում տառեցել էր մարզպանություններ, որոնցից մենք մեջ էին մտնում հայկական Արցախը, Ուտիք մահանգները եւ բուն Աղվաններ՝ աղվանական ցեղերի երկիրը: Այս մարզպանությունն աղբյուրներում Աղվանից էր կոչվում առավել մեծ բաղկացուցիչ՝ Աղվանքի անունից: Այսպես էր, որ հետա-

գայում միայն հայկական, հայաշունչ Արցախի եւ Ուտիքի եկեղեցների միասնական ղեկավարությունը, որ 6-րդ դարի կեսից սկսած կարողիկոսական գերակայություն ուներ, նոյնպես կոչվեց «Աղվանից»: Ըստ կարծ ժամանակ հետո, 7-րդ դարում արդեն, արարական տիրապետության հաստատումով, Արցախ, Ուտիք հայկական աշխարհը բաժանված էր աղվանական ցեղախմբերի երկրից, հնքնուրույն վարչական միավոր էր այլեւս, Նորանշահիկ հայագուն նախարարական իշխանության ներքո, բայց դարձալ կոչվում էր Աղվանը: Դրա համար էլ այս ժամանակներից սկսած աղբյուրները գիտեն երկու Սղվանը՝ կուրի աջակինյակի կամ հայկական Սղվանը եւ ձախակինյակի կամ բու՛ Սղվանը: Ուտիքի եւ այս հայաշխարհի եկեղեցին էլ կոչվում էր Աղվանից եկեղեցի: Աղվանից կաթողիկոսությունը, որն իր կազմակիրման օրերից հսկ գտնվելով մեծնայն թայոց եկեղեցու գլուխ, ենթարկվելով է ջղիածնի Սայր աթոռի վեհաբետությունը, կատարել է վիթխարի հայապահապան ներ ինչպես Արցախում եւ Ուտիքում, այնպես էլ Այսրկովկասի արեւելյան ու հյուսիսային շրջաններում, հսկ ուշ դարերում՝ նաև Ռուսաստանում, նոյնիսկ Ռւելախնայի, Լեհաստանի ու հայրական գաղրավայրերում:

Սիա մեր եկեղեցու այս թենի գործունեությունն է, որ դուրս է մնացել պատմաբանների, հայ հոգեւոր մշակույթի գարգագման ընթացքն ուսումնասիրությունների ուշադրությունից: Իսկ մենք պատրաստվում ենք նշելու հայոց եկեղեցին պետական ճանաչելու 1700-ամյակը...

Վերջին երկու տարին իմ գործն է եղել Աղվանից եկեղեցու, որա հետ նաև Արցախ-Ռուսիք հայաշխարհի մշակութային յուրահատուկ կյանքի ուսումնասիրությունը, որով կարծում եմ, լրացնում է հայագիտության բնագավառի մի խոշոր քացը եւ, անրողանում է հայ եկեղեցու ընդհանրական պատկերը...

- Քիմա մի ուրիշ հարց տամ. այսպիսի հանդիպումների ժամանակ լրագրող-ներն ավելի շատ ի՞նչ հարցեն են տալիս:

- Քիմա ոչ միայն նման համբայումների ժամանակ եւ ոչ միայն լրագրողներ, այլև ով պատահի, ծանրու-անծանրու, գիտի, որ Արցախի բախսուկ ապրոյ, շահագրգիռ մարդ եմ, մի գլուխ այն է հարցնում, թե ինչ է լինելու, ինչով պիտի ավարտվի այս բարդություրը: Ես էլ, որ նոյնիսկ 50-60-ականներին, երբ Աղրբեշանն իր գրանք դրած ումեր Արցախը եւ այստեղ ապահոված էր տիրապետությունը, այս ժամանակ անզանը՝ ինքս հավատառությունը է, որ Արցախը մերս է եւ մերց պիտի լինի, ազատ ու անկախ, այնքան մերը, որ թուրքի շունչը երթե նրան չըսվի... Քիմա, երբ այնքան գոհերի, կորուստների, աներեւակայելի ու գերմարդկային հերոսության գնով իսկապես մերս ենք դարձել, ապահովել պետական անկախ ազատությունը, ի՞նչ պիտի ասեմ. իհարկն, Արցախը մերն է այսօր, մերն է լինելու վաղը, ապագայում, հոր-հավիտյան: Քիմա միայն խոսկցություններ են զնում, եւ անհատներ կան, անդեմ, ազգային ու մարդկային կերպարանքը կորցրած անհատներ, որոնք պատրաստ են զիսացավանքից ազատվելու համար Արցախը զիսատեսե, այն նետել Աղրբեշանի բերանը: Բայց մի՞թ են նրանք ինելի չպիտի գան, չպիտի զգաստանան այթան, որ գոնեն հայկանան, թե այս դողովուրդը չի հանդիւրծի նման ազգայավությունը, շարագրությունը...

Յետո էլ, ինչո՞ւ ուրիշ ամեն պարագայի հանրաքվեն են համարում նման հարցի արդար լուծման միակ եղանակը: Միջազգային ո՞ր կազմակերպություն է, որ պիտի հրաժարվի հանրաքվեով հարցը լուծելու ճանապարհից:

- Իսկ իհմա ի՞նչ հարցի կցանկանայիք պատուախանել:

- Եմա ինձ համար աշխարհում յոթքուղանի մի հարց չկա, եւ դա Արցախի հարցն է: Այն է, որ գիշեր-ցերեկ ինձ հետ է, ինձ բրբում-տանջում է եւ համոզված եմ, որ այն ուրիշ բան չէ նաեւ աշխարհասկյուռ մեր ազգակիցների համար: Եվ այստեղ արդեն ոչ թե կուգեի պատասխանել որեւէ անորոշ, անկերպարան հարցի, այլ կուգեի հարց տալ ամեն մի հայի, մեր ազգի յուրօնչյուր անդամի՝ դրւ պատրա՞ս եւ Արցախի համար կատարել քր ծեռքից եկածը, հնարավոր ու անհնար անեն ինչ, որպեսզի Արցախը մնա հայ մարդու հողն ու տունը, հայրենիքը, հայ ժողովորի հերոսության ապացույցն ու անեղջ դրոշը:

- Մեր հաղորդումը սկիութքահայության համար է, ի՞նչ կուգեիք ատել նրան:

- Կերչին ժամանակներին բացվել է արտասահման տանող ին ճանապարհը, եւ համախ եմ համիպում սկիութքահայության հետ: Համիպում եմ ամեն անգամ, նորից նոր համոզվում, որ այն ապրում է դժվարագույն մի կյանք: Ենց միայն հայ մնալը, այո՛, հայ մնալը մեծ ազգերի, կլանող-ծովողների այն խառնարանում, որ նրանք են գտնվում: Եվ նրանք ոչ միայն հաղորդարում են այդ գերմարդկային դժվարությունը, այլև ապրում են հայրենիքի, Մայր Յայաստանի ամեն մի տարութերում: Իսկ վերջին տասնամյակին աղետոյա Յայաստանի եւ իր ազատության համար ամհավասար պայքարի ելած Արցախի համար նրա արածը վեր է ամեն մի գովեստից, չի չափի նարդկային սովորական որեւ չափանիշով: Աշխարհում գոյություն ունի՞ այսպիսի մի ուրիշ ազգ: Եկա եւ, ըստ երեւոյթին, չի կարող լինել: Չկա ու չի կարող լինել: Դրա համար էլ ես հավատում եմ, որ մենք երբեմ ազգովին նեկտեղվելու ենք, այդենք միասնական, մեր փառավոր կենսագործյանք հպարտ եւ մեր ապագայի վրա կստահ ու հավատավառ:

- Ի՞նչ տրամադրությամբ, ի՞նչ խոհերով եք հրաժեշտ տակիս 1997-ին:

- Ինսուլյոր եւ մանավանդ նրա երկրորդ մասն Արցախի շուրջ ստեղծեց մի խանճիճաղանց, որից դժվար թե բան հասկանան հաստակ մահկանացուները: Ամեն ինչ սկսվեց Յայաստանի պրեզիդենտի հողվածով, որի երթյունը զարմանահրաշ էր, ասում եր՝ լրջացիո ով հայ ժողովուրդ, եւ Արցախական աշխարհ պիտի հանձնեն Ադրբեյջանին: Նա գիտի, որ Ադրբեյջանում հային սպանում են եւ Արցախն այդ սպանդանոցը նետելու ծրագիր է փայկայում: Ենա ո՞վ կարիք ունի լրջանալու եւ խելքի գալու, որ հայ ժողովորդին չնդի հրեշավոր եղենագործության իր զավակների ճակատագրի դեմ:

Այս հարցն է ինձ բրբում 1997-ի մայրամուտին եւ միակ երազանքս է, 98-ը դաշնա 88-ի սկսված ճակատագրական գոյապայքարի հաղթական ու երջանիկ վերջաբանը:

«ԳՐԵՐԻ ԱՃԽԱՐԴ» ԹԵՐԹԻ ԹՂԹԱԿԹԻ ՂԱՔԱԳՐՈՒՅՑԸ Բ. ՈՒԼՈՒԲԵՅՅԱՆԻ ԴԵՏ

1. «ԶՐՈՒՑՎԱՐԱՆԻ» Ա հատորը բավական բախտավոր եղավ. նրա մասին ցերով խոսքեր տպագրեցին մեր տարբերակները, քննարկումներից մեկը հադրույթով համբաւետական հեռուստատեսությամբ... Դայրենի եւ սփյուռքահայ ընթերցողներից ստացել եմ բազմաթիվ նամակներ, որոնք բոլոր հեղինակներին պատասխանելու հնարավորություն չունենալով՝ հղում եմ շնորհակալությունս ու սրտագին մաթեանըներս:

Ընթերցողների այս բարյացական վերաբերունքը ես հակված են բացատրելու ոչ միայն գրի արժանիքներով: Մեր ընթերցողը ծարավի է ննան գրույցների, որոնցում գիտական միտքը ու գեղարվեստական խոսքը համերաշխվելով՝ ընթերցողին հաղորդում են մեր ազգային կենսագրության, համաշխարհային պատմության ու ծշակույի կարեւորագույն դրվագները: Ես, օրինակ, մեծագույն բավականությամբ եմ ընթերցել Լեւոն Յախներոյանի գրույցները մեր լեզվի մասին, աստղաֆիզիկս Գրիգոր Գուրզայանի գրույցները տիեզերական օրենքների ու դրանք հայտնագործողների նամակն: Ինձ երջանիկ կիամառի այդորինակ ամեն մի նոր հրատարակությամբ: Ձ՛ե՞ որ, մերջապատ, մեր գրավոր խոսքի համար դիտես 5-րդ դարում սրբեջամաս է եղել այսպիսի սրբազն ու անխափս օրենք՝ «գգենեցկագիր յարմարումն պատմութեան» (պատմության գեղեցկաշեն շարադրանքը):

Ինչ վերաբերում է նոր լուս տեսած Բ հատորին, ապա նոր գնահատականը ինքը չպիտի տան: Ես միայն կցանկանայի, որ այն եւս արժանանար առաջինի բախտին...

2. **Ա հատորը ցատ երթյան պետք է ընդգեր մեր ամրող պատմությունը՝ հմազոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը: Սակայն դեպքերն ավարտվում են Սարբապարտի ճակատամարտով:** Կա ունի՞ որեւէ բացատրություն:

Այդ հարցը ժամանակին ծառացել էր նաեւ հրատարակիների առջեւ: Ծառացել ու զայրացրել: Այն ժամանակ ես ծշմարիտ պատասխանից խոսափել եմ, իսկ ինձն ձեզ կրացանցրեմ: Եղք գիրքը ներկայացրել էի հրատարակության (1983 թ.) մեր պատմության ետսարդարապատյան դրվագների մասին (օրինակ, դաշնակցության ստեղծած հանրապետության, սովետական կարգերի հաստատման, կոլտնտեսային շինարարության, անհատի պաշտամունքի գործած ավերածությունների եւն) ես ունեի իմ տեսակետերը որոնք տարբերվում են պաշտոնական շրջաններում ընդունվածներից: Անմտություն կլիմեր գրք մեջ ներկայացնել տեսակետեր, որոնք այն ժամանակ պիտի համարվեին ունենագործության իր զավակների ճակատագրի դեմ:

Ուրիշ է այժմ, երբ մեր կուսակցության կենտրոնական կոմիտեն պահանջում է նորագույն պատմությունը շարադրել ամենայն ազնվությամբ: Պահանջում է սուս-փուս վարկածներից ազատել նույնիսկ նույնական հեղափոխության իմաստավոր կատարության պատճառով պաշտոնական շրջաններում ես պարտավոր կատարածական տալ իհրեւ այլախուն:

խության պատմությունը:

Եվ եթե խոսր լինի «Զրուցարանը» վերահրատարակելու մասին, ապա ես հնարավորություն կունենամ մեր պատմության նորագոյն շրջանի դրվագները եւս ներկայացնել, եւ այնուեւ կիխնեն իմ տեսակետները՝ վերակառուցման արդարադատության ու հրապարակայնության սկզբունքների հետ համերաշի:

3.Պատմությունը գրվում է ոչ միայն գրավոր աղյուրների հիման վրա, այլև հնագիտական բազմազան նյութերի, նյութական մշակույթի, ճարտարավետության, ժողովրդի կենցաղի, բանակուլտուրյան եւ այլ բնագավառների ընծոռած տվյալներով։ Ես գրի սկզբում հետեւել եմ նաև եվրոպացի մեծ մտածողի սկզբունքին՝ մեր լեզուն մեր պատմությունն է։

Պատմական իրականության պատկերն ամբողջանում, համեմատարար անխալ ու անթերի է դառնում այս բոլոր բնագավառների տվյալների խորագիրն ու սույնասիրությամբ։

Սեր պատմությունն իսկապես կողոպտվում է աջից ու ձախից, նույնիսկ ներսից։ Ներսից, երբ հայրենի նամնագետներն են օտարում մեր ազգային պատմության ու մշակույթի հանրահայտ փաստերը։ Դրսից ասում են՝ Գանձասարը հայկական ճարտարապետական հուշարձան չէ, ներսում էլ էրերունից են հրաժարվում, կամ պնդում են, թե «Ուրարտուն» «Արարատ» չէ, որից էլ ծայր են առում բազմաթիվ անհեթերություններ։

Դիմա կարծես մթնոլորտը պարզվում է, եւ իր իրավունքներին տեր է դարնում արդար ճշմարտությունը։ Ինչպես իին ու միջնադարյան, այնպես էլ նոր ու նորագոյն պատմության ու մշակույթի բոլոր իիննահարցների վերաբերյալ։

4. Վյո, պատմությունը մի ամենդղող օրինաշափություն ունի. քաղաքակրթության հիմքերն ավետող, ազգերի գարգացման բնականն ընթացքը խարսող պետությունները կործանվել են. հիշենք Ասորեստանը, Խազարիան. Միջնադարյան իրողություններից սեղուկ բուրքերի ու թաքար-մնողների տիեզերական տերությունները։

Դակառակը. ճարդկային քաղաքականության առաջընթացին բերած նապատմերն են, որ անմահություն են պարգետել ազգերին ու նրանց քաղաքական կյանքին։ «Յանկացած պայմանները» երեւի թե այնքան էլ վճռական նշանակություն չունեն։ Չէ՞ որ «ցանկացած պայմաններում» է մեր ժողովություն ծառայեց քաղաքակրթությանը եւ ստեղծեց իր ազգային ինքնուրույն ու ինքնաշխատից դրոշը ու մշակույթի անանց գանձերը։ Դրանցով իսկ ապահովելով իր անմահությունը։

5. Ես ոչ մի շրջանարաժանում չեմ կատարել։ Եվ առհասարակ պարագ գործ կլիներ հայոց մշակույթի պատմության համար օրինաշափություններ փնտրելու։

Սեր մատենագրությունը մատչելի կատարելիության հասավ 5-րդ դարում, միասնական պետության կորստից հետո։ ճարտարապետության այդ աստիճանը եղավ 7-րդ դարում, դարձալ քաղաքական շատ անմիտքար պայմաններում։ Սյութական հ՞նչ հիմքեր կային մեր հայրենների, խաչքարի ձեռագրական արվեստի լավագույն օրինակների ստեղծման համար։ Սեր նշակույթի բազմադարյան պատմությունն առհասարակ հերթում է սովորական տրամաբանու-

թյան եւ այսպես կոչված, օրինաչափության։

Բ գրի սկզբում իսկ ես իմ խնդիրն եմ համարել «ցույց տալ մեր ժողովրդի մշակութային կյանքի դասերը. նրամբ առանձնահատկություններն ու արժանիքները եւ աշխարհի քաղաքակրթության ճատուցած արժեքները» միշտ սկզբունք ունենալով մեր վաղմիջնադարյան հանրահայտ կարգախոսը՝ «չեղած բաներ չավելացնել, եղածները չնվազեցնել, այլ ամեն ինչ երեւան հանել ողջախոհ գգուշությամբ» (Ղազար Փարավեցի)։

Երանի թե գրմե մասսամբ կատարված լինի իմ երազանքը։ Երանի թե ընթերցողն այս գրի մեջ իմ աչքերով տեսնի իմ տեսածները, իր հայագրով ցուցադրի, քննի իմ ցուցադրածները։ Իսկ եթե նաև վիճելու լինի ինձ հետ, ապա նրա համար միայն, որ այդ վեճից հասնի ճշմարտությունը։

Եիմա եթե դուք այլեւս հարցենելիք չունեք, ես ինքս ծեզ մի հարց տամ։

- Խնդրեմ։

- «Գրքերի աշխարհը» ե՞րբ է պայքար մղելու մեր գրքերի տպագրության որակի համար։

Իհարկե, ես տեղյակ եմ թերթի մի շաբթ ելույթներին, որոնցում խոսել են սրբագրական սխալների ու քափթափածության դեմ։ Այստեղ խոսքս տպագրական որակի մասին է, որի համար պետք է ճակատամարտ տալ ամեն համառում։ Սի տեսեք, թե ինչպես է լույս տեսել «Զրուցարանի» Բ հատորը։ Դրա կազմին նայեք, թղթի որակին։ Կողերն ասեն ոչ թե կտրել, այլ գայլի բերանից են փախցրել։

Ես այն համոզման չեմ, թե մեր տպարանները գիրքը գեղեցիկ ու ճաշակով տպագրել չգիտեն։ Պատահում է՝ զնուիր թղթի վրա, շրջակազմ ու բարետես լույս է տեսնում մի բան, որն անենանտին թղթի վրա մեքնագրելն անզամ ավելորդ շոայլություն պիտի հանարվի։ Բա սա՞ ինչպես է լինում։

Կարծում եմ՝ թերթը պիտի մեծ գրույց բացի այսօրինակ հարցերի շուրջ, այնպիսի գրույց, այնպես անգիտում, որպեսզի նրանից հետո իրատարակչությունները կայուն սկզբունքներ մշակեն տպագրության գնացող գրի պղիծուածիական հատկանիշների վերաբերյալ, եւ տպարաններն էլ իրենց պատահանատու զգան դրանք անթերի իրականացնելու համար։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դայլկան մշակույթի արձաքե դարը.....	3
Պատմական ճշմարտությունը եւ նրա նոր վավերագրերը.....	5
Գիս.....	10
Խաչքարի արցախյան դպրոցը.....	12
Արցախյան աշխարհի պատմական հուշարձանները.....	16
Գոյապայքարի վավերագիրը.....	18
Խոջալուն.....	23
ՀՂԻՄ Կազմավորման մասին.....	25
Շոշի ու Շուշիի պատմական ակունքները.....	27
Երբ նորորությունը ներկայացվում է որպես գիտության նոր խոր.....	34
«Մաշտոց» գրքի լույսն ու ստվերները.....	37
Դայոց պատմության աղբյուրները.....	44
«Էրաբեր» հանդեսի խճանքությանը.....	51
Որքան կարեւոր է հրատարակությունը, նույնքան ցավալի են նրա վրիպակները.....	54
Կենորկով եւ յուրայինները՝ իմ թողումներում.....	65
Դայոց Արեւելից կողմանց երկու Տիգրանակերտները.....	111
Շուշին հայության բնօրուան.....	114
Ինչպէս երավ, որ Լեռնային Դարարաղը արնվեց Սովետական Արդրեշամի սահմանների մեջ.....	121

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀՐԱՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մի՞թե այս անգամ է.....	138
Դայոց նոր պետականության 75 տարին.....	144
Երկու շաբաթ Աբենքում եւ կիպրոսում.....	150
Ազգի կենսունակության գաղտնիքները.....	167
Արցախյան հարցի սկզբնավորումը.....	170
Մտեփան Ալաջացյանի հետ (նրա ուշացած 70-ամյակի առթիվ).....	175
Մեզ հետ տանում ենք ծեր ցավն ու վճռականությունը.....	178
Պետություն կառուցելու ճանապարհին.....	184
Ուս լրագրողը Շահեն Սեղրյանի մասին.....	190
Վիրավոր օգնության սպասող Ամարասը.....	192
Զորավար Իվանյանի ինքնահատուկ սիրանքը.....	197

Դուսաստանի խաղարար միջնորդության նոր տարբերակը.....	199
Մի ժողովուրդ, որ կոչվում է արցախյահայություն.....	212
Երբ արհամարհվում է քննադատությունը.....	216
Փորձության օրերի խորհուրդը.....	222
Յաջո՞րդն ինչ է լինելու.....	229
Ասոված մի կանչեք, երբ անարդար եք.....	237
Մեր գինամշանը մերը պետք է լինի.....	243
Քորդորված վեճի ու կռվի մեջ ո՞վ էր մեղավոր.....	247

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅԹՆԵՐ

Մեկ ժողովուրդ ու մեկ գրականություն («Երեկոյան Երեւան» թերթի հարցերին պատասխանում է գրող, պատմաբան Բ. Ուլուբարյանը).....	258
«Դայոց աշխարհ» թերթի թղթակից Յ. Կայազանի հարցազրույթը Բ. Ուլուբարյանի հետ.....	263
«Ազատ օր» թերթի հարցազրույթը Բ. Ուլուբարյանի հետ.....	267
Հարցազրույթ Բ. Ուլուբարյանի հետ.....	270
Ինքնահարցազրույթ.....	280
Դոդը ոչ-ոք ստորագրությամբ չի տալիս.....	284
Հարցազրույթ Բ. Ուլուբարյանի հետ.....	287
Զրույց Մեր հայրենականի հետ (70-ամյակի կապակցությամբ).....	293
Բ. Ուլուբարյանի հետ՝ «Լեռնային Պարարադի հանրապետություն» թերթի թղթակից Յաշա Բաբայանի հարցազրույթը.....	300
Կ. Մնացականյանի հարցազրույթը «Արցախյան գոյապայքարի տաղեգություն» գրքի շուրջը.....	305
Զրույց գրող եւ պատմաբան Բագրատ Ուլուբարյանի հետ.....	310
«Գրեթի աշխարհ» թերթի թղթակից հարցազրույթը Բ. Ուլուբարյանի հետ.....	315

ԲԱԳՐԱՏ ԱՐԾԱԿԻ ՌԻԼՈՒԲԱՔՅԱՆ

ՓՈՐՉՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻ

ԽՈՐՃՈՒՐԴԸ

Խմբագիր՝ Վահրամ Բալայան
Սրբագրիչ՝ Արիս Գրիգորյան
Համակարգչային շարվածքը՝ Թամար Դարությունյանի
Լուսինե Բաղդասարյանի
Բելլա Մինասյանի
Եջաղունը՝ Լուսինե Բաղդասարյանի
Կազմի ծեւավորումը՝ Ալվինա Առատամյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84/16:
Ծավալը՝ 20 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պյուս» իրատարակչության տպարանում
Դ. Դակորյան, 25
Ստեփանակերտ-2010